


408

2
4-30

29 JUL 2009



ՄԱՏԵՆԱՇԱՐ Հ.Յ. ԴԱՇՆ. Կ.ՊՈԼՍՈՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ. ՔԻԻ 2

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԿՐՕՆ.

Ե Ի

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի նձ է ԿՐՕՆԸ.— ԿՐՕՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԲՆԱՇՐՋՈՒՄԸ.— ԲՆԱ-
ՇՐՋՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՆԱԽ ՔԱՆ ԴԱՐՎԻՆ.— ՄՕՆԻՋՄ ԵՒ ՄԱ-
ՏԷՐԻԱԼԻՋՄ.— ԴԱՐՎԻՆ ԵՒ ԴԱՐՎԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— ՏԵՍԱԿ-
ՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ.— ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒԻԸ.— ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԵՒ ՅԱՐՄԱՐՈՒՄ.— ՆԷՕ-ԼԱՄԱՐԿԵԱՆՆԵՐԸ.— ՏԻԵՋԵՐՔԻ ԾԱ-
ԳՈՒՄԸ.— ԱՍՏԻԱԾԱՇՈՒՆՉ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ.— ԿԵԱՆՔԻ ԾԱ-
ԳՈՒՄԸ.— ՆԱԽԱՄԱՐԳԸ.— ՄԱՐԴՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ.— ՑԵՂԵՐՈՒ
ԾԱԳՈՒՄԸ.— ԵՋՐԱՓԱԿՈՒՄՆ՝

Տպագր. «ԱԶՍՏԱՄԱՐՏ»ի

Ե. ՊՈԼԻՍ

1912

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ներկայ գրածքը ընդարձակումն է հրապարակային մի դասախօսութեան, որ մենք արել ենք 1906 ազատաւունջ, անմտանայի բւականին, թիֆլիզի մէջ, մեր մի խումբ ուսումնաւոր մտաւորականների հրաւերով:

Մեա մէջ տեղ կը գտնեն — հիմնական փոփոխումներով ու աւելումներով — նաեւ մի շարք յօդւածներ, գրւած 15 տարի առաջ, համալսարանական նստաւորի վրայ եւ հրատարակւած կովկասահայ հանդէսների մէջ: Տասնեւհինգ տարւայ մեր գիտական, նոյնիսկ անուշոյն, քաղաքական գրականութիւնը, տարաբախտաբար, ոչ մի շօշափելի վաստակ չի ունեցել այդ տեսական, փիլիսոփայական խնդիրների աշխարհում — եւ այսօր բնում է միանգամայն այժմեական՝ առաջադրելու այդ խնդիրների վերաբերեալ տեսութիւններն ու վարկածները մեր վերածնող Հայրենիքի ուսումնասենչ երիտասարդութեան:

Առաջին անգամն է, մանաւանդ, որ ԿՐՄՆԻ փափուկ եւ ուշագրաւ պրօքրէտը, գրեցիկի մէջ ամփոփուած, յոյս է բնկնում մեր ազնախիկ տեսական գրականութեան մէջ: Այդ իրողութեան հանդեպ՝ չենք բացցնել մեր բնական մտաւորութիւնը, չենք անգիտանաւոր դժուարութիւնները, որոնք պայմանաւորուած են նրա լիարժեք փափուկութեամբ՝ իսկ:

Նրէ ճիշտ է, որ մարդկութեան մտաւորական տարրերը հետքահետք բոքափում են կրօնի երբեմն հզօր ու բռնաւոր յուճը, ունկրկրելով գիտութեան ու բանականութեան հեղինակաւոր ձայնին, ապա ճիշդ է եւ այն՝ որ ԶԱՆԳՈՒԱԾՆԵՐԻ աշխուժ կրօնը շարունակուած է մնալ, իբրեւ մեծագոյն արքայութիւններից մէկը, — եւ այդ՝ արքայութեանը պէտք է մօտենալ... զգուշութեամբ:

Անգամ մտաւորապէս բարձր, մշակուած դասակարգերի մէջ հազուադէպ չեն անհասներ, որոնց համար տակաւին պարզուած չէ կրօնի մեծ կենսիւր եւ որոնք դեգերում են յաւիտե-



3870-89

[Բ]

նական խուզարկումների ու մտումների մեջ՝ հանդէպ սիեգե-
րական անբավանցելի առեղծուածների, բնութեան, արարչա-
գործութեան անհաւելի խորհուրդների, նրա առաջին պատճառի
և վերջին նպատակի (causes finales), հանդէպ արեգնային
վիթխարի և ներդառնակ համակարգութեան, կեանքի և
մտքի ծագման պրոբլէմի, նիւրբի և ոյժի յաւերժական
խաղերի, մարդկային հանճարի խօյական քափերի, մարդկա-
յին գիտակցութեան — և մանաւանդ **ՆՆԹԱԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՆ**,
(subconscience) — հրաշալի քոնիչների, երազի, նիպնօզի,
հեռագրի (télépathie) և հագար ու հագար այլազան գայտնի-
ների, որոնց առջեւ պիտի կրկնենք բերես յաւիտեանքին Ին-
ժուա Ռեյնօնի յուսանաս բացականչութիւնը. Ignoramus et
ignorabimus! (չենք գիտեր և չք պիտի գիտեանք):

Մեսաֆիզիկան *) և կրօնը — երկու սահմանակից ուշ-
խառններ — յանախ և շփոթում, նոյնանում իբրևո հետ. ա-

*) Métaphysique — Բնագանցարանութիւն:

Ֆիզիկայի ստորկան բնութեան երևոյթներն են. Մեսաֆիզիկայի ա-
ռարկան է՝ սցսպէս կոչուած անդրերևոյթային աշխարհը. սցսինքն այն
բոլորը, ինչ որ մտում է թագնած՝ ճանաչելի երեւոյթների ետեւը,
այն բոլորը, ինչ որ ենթակայ չէ փորձի, մտաչելի չէ մեր զգայորանք-
ներին, քննելի չէ, մէկ իտարով, մարդկային սովորական կարողութիւննե-
րով: Ինչ է տիեզերքի սկիզբն ու վախճանը, ինչպէս է առաջացել նիւրբ-
շարժումը. ինչ է այդ նիւթի ներքին էութիւնը, ինչպէս է ծնունդ
տա ել կեանքի ստաջին սարմը, բշիջը, ինչպէս է ստղմաւորել ու-
ղեղի մէջ այն խորհրդաւոր և Տրաշալի կարողութիւնը, որ կոչ-
ւում է միտք, գիտակցութիւն... Ինչ է բնութեան էությունն
թագուն արտօմաթ, ինչու է նա ստեղծագործել և ինչպէս է
ստեղծագործել այն անվախճան շարանը կենդանի էակների, որոնք ստ-
տիճանաբար կառնորեղգործուելով, բարդանալով յանգել են ի վերջոյ
— մարդուն: Ինչ է գաղտնիքը այսպէս անուսնուած բնական ընտրու-
թեան, որ ծանուցել է Չարլզ Դարվինն ինչու է բնութիւնը այդպիս
ընտրումը ինչու է արարչագործութիւնը այդ ձեւով, այդ ուղղութեամբ
ընթանում... Եւրոյն Եւրոյն Աճա մեսաֆիզիկական, բնագանցական ինդեր-
ներս նրանք բոլորը խուստիւսմ են փորձից, լողում են առեղծուածութիւն
անպայտութեան անեզր սվկեանի մէջ...

Պարս'պ Տարցեր՝ որ դնում են մեսաֆիզիկ-ֆիլիսոփաները և
ձգտում են լուծել à priori, սցսինքն աւանց փորձի օգնութեան, ստեղ

ուօքինը շատ յանախ ալքիւր է վերջինի... մարդը — նիւրբ է
աւաւած — Էայեա մեսաֆիզիկական արարած է. բնագանցական
մարգանքները կարգում են նրա մօտ մի անդիմադրելի հոգեկան
պահանջ:

Երբ մարդկային միտքը յոգնում է անվերջ ու ապարդիւն
խուզարկումներից, անգոր լուծելու փորձի ու բանականութեան
հանապարհով սիեգերական այդ խորախորհուրդ առեղծուած-
ները, նա ի վերջոյ կանց է աւնում մի գերագոյն, սկզբնական
ու երեւակայական պատճառի վրայ, նա բնորոշում է մի նախ-
նական շարժիչ, մի խրան, մի հսկայ և խօյական նարսարա-
պետ, մի "արարիչ" — և շալիս է նրան այս կամ այն անու-
նը, նայած իր մտակազմին, իր կրքութեան աստիճանին, իր
հոգու և հաւնումաճի բեյադրումներին: Մին անուանում է
այդ "արարիչ-Ասումուն" յաւիտեական ՌՅԹ, միւսը՝ ՆԻԹ,
միւսը՝ ՌՅԹ-ՆԻԹ, Սուբսանց, միւսը՝ ԻԿԵԱ, գաղափար...
այդպէս են աւաջարել այլ և այլ փիլիսոփաներ ու մեսա-
ֆիզիկներ, սկսած Դեմոկրիտից ու Պլատօնից մինչեւ Սպինօզա
և Զեգել:

Ուրբները պատկերացնում են այդ գերագոյն Արարչին
ՄԱՐԳԱՆՄԱՆ Ենովայի պատկերով, որ բազմած երկնային
աննաասների բաժնուկներում միահեծան կառավարում է սիե-
զերքը, միջամտում է շարունակաբար անցներին, ասեղծագոր-
ծում ու բնագնում է յաւերժօրէն... ստեղ իր կամքի ու հնա-
հանոյքի ամենագոր հրամայականներով:

Այդ կոպիս պատկերացումից հետո չէ և բխսոնեուրեան
աշխարհամայացիք:

Եւ անա ուսանք (զանգուածները գրեթէ ամենուրեք) աս-
ւածացնում ու պաշտում են այդ երկնային, երեւակայական
նարսարապետին. որ «ամենագետ է, ամենակարող, անեղ է, ան-
ժամանակ, հայր անսկիզբ և անվանակ», ուրբները ասուա-
ծացնում են մեսաֆիզիկական, բնագանցական էութիւններ —

մարդ, գաւտողութեամբ, զուտ, (անագարտ) բնականութեան սարերք-
ներով:

Պարս'պ Տարցեր, այո՛, անխմանալի, անլուծելի... որոնք, սակայն
պիտի շարունակեն զբաղեցնել և ասանչել մարդկային իմացականու-
թիւնը...

Ոյժ, Սուրբասնց, սիեգերական Իդեա, Բանականութիւն — ուրիշները աստուածացնում ու պաշտում են բարոյական գերագոյն առաքինութիւնները՝ ձեմարսութիւն, Բարութիւն, Սեր, Արդարութիւն, Մարդկայնութիւն, ուրիշները, վերջապէս, պաշտամունքի նիւր են դարձնում Գեղարուեստը, Վսեմը յախճեական Գեղեցկութիւնը . . .

«Կրօնի» սահմանները, այդպիսով, ձգւում են, յայնանում անվերջօրէն, եւ այդպէս դասերով կարելի է համարձակ յայտնաստել, որ չի կայ այս աշխարհում ԱՆԿՐԾՆ ՄԱՐԳ :

Որքան յանախ այդ կրօնը սոսկ զգացումի խնդիր է . . . որքան անգամ ամենամոլեգին արեչխասն անգամ հոգեկան մի սագնապի մեջ, բնութեան մի խօյ կասաստօֆի, վերիվարումի հանդէպ, կամ մի չկնաղ ու փոքրեկոս երաժշտութեան կոմակների սակ՝ համակում է կրօնական, միսիկական ճամադրութեամբ, զգում է եւ ապրում է իր հոգու իարեերի մեջ աներեւոյք «աստուածութեան» հմայիչ ներգործութիւնը եւ պատաստ է ծուկն չոհելու, երկրպագելու . . . երկրպագելու՝ ոչ անպատեհա Քրիստոսի Աստուծուն, ոչ Մովսէսի Ննովպին, ոչ Էրանմային ու Վիւնային, ոչ Օրմուզդին ու Անրմանին . . .

Կեցե՛ք այդ վիթխարի, երկնադառնակ պատարագը Բեւեռլեւնի Իններորդ Սիմօնի մեջ, ականջ դրե՛ք սիեգերական ջառի այդ աղիտում մեռնցներին, շղրայագե՛ժ գահավիժող այդ փոքրեկին . . . Գնացե՛ք աչքելու նոյն գոս փոքրեկը բնութեան ազատ գրկի մեջ, լեռների գագաթներին, ամպրոպի, կայծակների եւ հսկայ հեղինդասների սթրասպոս յորձանկներում . . . Գնացե՛ք լսելու Հռօմի Ս. Պետրոսի Մալք-Տանարում գաղական Lamentazione-ի արսանիկի սիւմը, այդ ողբածայն, մահահրաւեր դողանջը, այդ յացող եւ յացացնող երաժշտութիւնը . . . Դո՛ւրս ելե՛ք պնտելից եւ մե՛ք Սիփսեան մասուրը, դիտեցե՛ք Բուօնարօսի հսկայասիւղ որմնակարը, «Վեջին Դասաստե՛կ» հանճարաւունջ սոսկումները, խորասուզեցե՛ք բնութեան եւ արուեստի այդ դիւրիչ ներդառնակութեան մեջ, ասրեցե՛ք այդ վսեմ յոյգերը, այդ անեղ, սասանեցուցիչ սպաւորութիւնները, — եւ դու՛ք չե՛ք կարող չը համակել նոյն կրօ-

նական ճամադրութեամբ, նոյն կախարհիչ, միսիկական շունչով, դու՛ք չե՛ք կարող չըզգայ, թէ ինչպէս վայրկեան առ վայրկեան կերպարանափոխւում է ձեր էութիւնը, վերանում է աստիճանաբար, բարձրանում է դէպի յաւեհ հորհրդաւոր ԲԱՅԱՐՉԱԿԸ, դէպի յաւեհ Անշափելին ու Անմեկնելին, «Նրկնայինը», «Աստուածայինը» . . .

Այո՛ — եւ իրաւամբ հաղափակիք մարդկութեան առաջապեմ հաստուածները հրասարակել եւ կրօնը՝ իբրեւ մասնաւոր, անհասական խղճի գործ, եւ իրաւամբ Հ. Յ. Գաւնակցութիւնը մեցրել է նոյն յոլւածը իր կուսակցական ծրագրի մեջ : Նա յարգում է բոլոր անկեղծ կրօնական խուզակումները, բոլոր անկեղծ հաւատալիքները : Բայց նա չի մոռանում այդու հանգե՛րձ՝ որ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱ ԿԱՅ, ամենաբարձր, ամենավսեմը, որից դու՛րս «չի՛ք փրկուքիւն», որով միայն ընթանում են դէպի ջիւնջ նեմարսութիւն եւ դէպի նեմաթիս հաղափարութիւն : Նա չի մոռանում, որ կրօնը իր ժամանակակից ձեւերով, զօգնելով, սքսեմներով արե՛ինի պէս ծանրացած է ժողովուրդների գիտակցութեան վրայ, խարտերով ամենուրեք նրանց հորմալ, բնականոն առաջխաղացութիւնը : Նա չի մոռանում, մեկն չե՛նք մոռանում կախապաշարումների ու սնապատեղիքների այն հսկայական լեռը, որ մեր եւ գրացի ազգութիւնները բարձր են սալխ գարերից ի վեր մի բուր, ստուկ անգիտակցութեամբ, որպէս մի սեռակ անե՛ծք, պատեհյա, որ շարունակ բուճաւում է նրանց մճաւուն ու բարոյականը : Նա չի մոռանում, մեկն չե՛նք մոռանում, որ կրօնը, բոլոր կրօնները, այն սոսկալի եւ նարակող ափիօնն են, որով իշխող եւ ունեւոր դասակարգերը — ազնուականութիւնը, կղերը, բուրժուազիան — յախճեցօրէն սնուցանում են ժողովրդական զանգուածներին, որպէսզի աւելի եւս բրացնեն նրանց ծառայական բնագոյր, աւելի եւս կռեն նրանց սքրկական շղրաները . . .

Այդ անաւոր պատեհապ դեմ ՊԵՏԲ է մաքաւել : Մե՛քերի եւ հոգիների վրայ ծանրացած այդ բռնաւոր մղձաւանջը ՊԵՏԲ է ջրուել . . . կամաց-կամաց, աստիճան առ աստիճան :

Առանց մտաւոր եւ հոգեկան ազատագրութեան՝ չը կայ նրա մարտի քաղաքական ազատագրութիւն:

Առանց գիտական մաքրագործող դաստիարակութեան՝ չկայ նշանակաւոր առաջադիմութիւն:

Թո՛ղ, ուրեմն, գիտութիւնը դառնայ հրապուրիչ նշանաբանը հայ նորաբողոք սերունդի:

Թո՛ղ այսուհետեւ հնչէ մեր խեղդուկ մթնոլորտի մեջ գիտական, քննադատական մտքի շեփուրք. բո՛ղ նա գայ փարատելու այն գոեհիկ աւանդապատճառութեան մառախուղը, որ գլխաւոր պատճառն է աւելեւեան անշարժութեան...

Ներկայացնել ԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ կրօնի մեծ, բազմակենիտ խնդրի մեջ, ցոյց տալ կրօնական զարաւոր եւ օլիոսիոսի հանդէպ՝ գիտութեան եւ աստուածաբանութեան խորունկ հակադրութիւնը, — այդ է գրեցիկիս նպատակը:

Մ. Վ.

Վ Ե Ե Ե

Ապրիլ, 1912 թ.

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԿՐՕՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԲՆԱՇՐՁՈՒՄԸ

Կրօնական ընկալը, նրա աղբյուրները. — Երկիւղ եւ պատկառակց. — Մարդ եւ կենդանի. — Էթիկոսոփոսի լուկտր. — Բնապաշտութիւն. — Նախա-մարդը սիեզերիի հանդէպ. — Վսեմը. — Կանն, Եօպեմուտեք, Հաւտանն. | «Ողբներ» ամենուրեք. — Վայրենիին եւ երազը. — Վայրենիին եւ մահը. — Անդրշիրման գոյութիւն. — Նախնիներէ պաշտամունքը. — Չերթեր Սպիւստ. — Մեռելների ուրուականներ. — Կախարչութիւնը. — Անկրօնի ժողովուրդներ. — Կրօնական հասարակութիւնը աստիճանաբար ներքանում են. — Ներկայ կեանքի անդրադարձումը հանդերձեայ կեանքի մեջ. — Գոթիք եւ արքայութիւն. — Միաստամտրեան ծագումը. — Արեւի պաշտամունքը. — Երկնային միապետութիւնը, իրեն անդրադարձումն երկրաւոր միապետութեան. — Մարտի քորիան կրօնի հանդէպ. — Ճշմարտութիւն եւ քաջշնչ. — Էնկիդի քանակը. — Կառուցիկ եւ միասնիցիզմ. — Մոսիսիական միաստամտրիւն. — Եհօվա. — Քրիստոնէութիւն. — Գոգլ եւ բարոյախօսութիւն. — Հաւատ եւ սեր. — Լուդվիկ Ֆոյերբախ. — Հայր, Մրդի եւ Մարդ Հոգի. — Աստուածամեծի եւ սուրբերի պաշտամունքը. — «Մարդ-Աստուած»:

Ի Ն 2 Է Կ Ր Օ Ն Ը

Մենք կանգնած ենք ընկերարանութեան ամենաբարդ կիճուի հանդէպ:

Ի՛նչ է «կրօնական զգացումը»... Այդ խորհրդաւոր եւ բոտերեւոյթիւն անմեկնելի ոլոր, որ կախարդել է մարդու հոգեկան աշխարհը վայրենութեան ամենաճին ժամանակներից մինչեւ նորագոյն քաղաքակրթութեան օրերը, այդ միատիկական գորութիւնը, որի ձգտման նպատակակէտք թւում է Անշափելին, Անճանաչելին, այդ հոգի, անգիմազրկի բնազդը, որի հիմնական տենչն է, թափանցել երեւակայական աստուածութեանց զաղանթները, հաշտել նրանց հետ, հացիկ նրանց գութը... մի իրողութիւն՝ որին վկայ են եղել աշխարհի բոլոր ծարերում, անթիւ տաճարների կամարներից ծխացող

ատրուչանները, հագարաւոր ծէսերն ու արարողութիւնները, թափօրներն ու աղօթքները, սրնք դառն ու ցաւագին ճիշտութիւններն են սլացել, սուանց, աւազ, մի նշանակեց անգամ ամուքելու մարդկային թշուառութիւնն ու տառապանքը... Ինչ են այդ ստուածները, որ դարեր շարունակ այնքան աւրին խմեցին ու չկտացան. ինչ են այդ բաղձագան դաւանանքներն ու սրտաւառութիւնները, որ տակաւին ծանրացած են ազգերի վրայ, մեր այս անբախտ աշխարհի մէջ, որ սուանց այն էլ հեծում է խաւարի եւ սորիութեան ճիւղաններում. Ինչպէ՞ս արդեօք բացատրել կրօնական բնազդի այդ ծանր, ողբերգական բնոյթը...

Կրօնը, ինչպէս եւ հասարակագիտական ամէն մի խոչոր իրողութիւն. ունեցել է երկար դարերի բնաչը՝ ուժեղ լեզու: Նա կրել է մի շարք կերպարանափոխումներ, զարգացել է, ինչպէս ամեն ուրիշ երեւոյթ, սկզբնական սթարգ վիճակից դէպի աւելի եւ աւելի բարդ վիճակ: Նրա սկիզբը փնտրելու համար պէտք է իջնել մինչեւ վայրենութեան հին, անյիշատակ օրերը:

Այդ հետաւոր շրջանի մասին մենք կարող ենք գէթ մտաւոր գաղտնար կազմել, ուսումնասիրելով ներկայումս երկրագնդի այլ եւ այլ անկիւններում ցիր ու ցան սպրոզ վայրենիներին:

Մենք պէտք է իջնենք գուցէ նոյնիսկ աւելի վար... մինչեւ մարդկութեան նախնիքները— անասունները: — Ինչո՞ւ ոչ: Մարդկութիւնը բնական շարունակութիւնն է անասնութեան եւ մարդաբանութիւնը (antropologie) շարունակութիւնն է կենդանաբանութեան:

Դարվիճական թէօրիան վաղուց արդէն ջրել է այն կոպիտ ստատիկները, որնք պաշտպան ունենալով աստածարանների մի դասակարգ, ձգտում էին սակզծել մարդու համար միջոց, ասանձաշորհակ դիրք արեղերական արարչապարծութեան մէջ, անդունդ էին ձգում մարդկութեան եւ անասնութեան միջև...: Մարդը բանական արարած է, կենդանին անբան, մարդը կրօնական էակ է, կենդանին անկրօն, մար-

դը բնդունակ է սիրոյ, անձնազոհութեան, կենդանին դուրկ է այդ բոլորից, եայն եայն:

Այդ անդունդը հարիււր է սուօր: Մարդկային եւ անասնական աշխարհների միջեւ տարբերութիւնները էութեան մէջ չեն, այլ աստիճանի: Թէ բանականութիւնը եւ թէ հոգեկան բարձր արտայայտութիւնները (որոնցով չեն փաղում բոլոր մարդկային հասարակութիւնները), սէր, կարեկցութիւն, նոյնիսկ անձնազոհութիւն— յատուկ են նաեւ կենդանական աշխարհին: Ինչո՞ւ չ'ենթադրել, որ կրօնի զգացումը եւս իր թագուն, սաղմային դրութեամբ գոյութիւն ունի նաեւ անասունների մէջ:

Դարվին որոշ փորձեր է արել այդ կեթաղութիւնը հաստատելու համար: Շունը տնտում է գետնին փոած հովանոցը քամու հարածներից օրօրելիս... եւ վայելցած գէւ-դէն է նեւում ու հաչում է կատաղութեամբ: Նա զգում է բնազդօրէն, որ մի օտար ու չար սգի մտել է իր տիրոջ հովանոցի մէջ, շարժում է այն եւ նա հաճում է, սրտեղի գուրս քչէ այդ անարկու ոգին:

Նոյն շունը չի պաշտում արդեօք իր տիրոջ, սրտէս մի ամենակարող ոյժ...:

Եւ ինչ է կրօնական զգացումի սկզբնապատճառը, եթէ ոչ երկիւղը: Երկիւղը՝ միացած պաշկառակի, հիացմունքի հետ:

Այո՛, երկիւղածութիւն անցալտ խորհրդաւոր ուժերի սուղեւ— անա թէ ինչն է սրաչարկ մշանջնապէս մեր հետաւոր նախնիքներին եւ մղել նրանց դէպի սղիւայ սրտաամուքները: Կրօնը, ասացինք, լալն իմաստով պէտք է բմբունել: Մարդս նախ քան պաշտելը Քրիստոսի եւ Մանէզի ստուածներին, երկար դարերի բնթայքում պաշտել է բովանդակ արեղերքը, լեւներն ու անասունները, պաշտել է հնչաւոր ու անչունչ ասարկաներ, պաշտել է կենդանիներին, պաշտել է վերջապէս իր նմաններին:

Ինչպէ՞ս գծել կրօնական էւօլուցիան: Նա կամեաւոր թափով ու նման ձեւերով չի բնթացել երկրագնդի այլ եւ այլ

կողմերում: Եւ այդ հանգամանքը դժարացնում է դասակարգումի (classification) եւ ուսումնասիրութեան գործը: Հաստատելիքների եւ սխառմանների անվերջ այլազանութիւն՝ մարդկութեան պէս-պէս հասումների մէջ... Եւ ինչպէ՞ս նրանք խճողում, հիւսում են իրար հետ, յաճախ անհնարին դարձնելով՝ նկատելու նրանց մէջ յաջորդականութիւնը: Աւելացրէք, որ այդ այլազան հաստատելիքների շղթայակցութեան բարդ պրօբլէմով դեռ համեմատաբար քիչ են գրազուցել գիտնականները: Դեռ քանի մութ խորչեր կան յուսարանելու: Եւ դեռ քանի՞ հիմնական խնդիրներ կան, նոյնիսկ արժարժողների մէջ, որ տակաւին մնում են վիճելի: Մինչեւ օրս կրօնագէտ հեղինակութիւնները համաձայնութեան չեն եկել անգամ առաջնադասը հարցի մէջ՝ թէ ի՞նչը համարել կրօնական էւօլիցիօնը ելակէս, սկզբնական շրջան:

Որոշ դասակարգում, այնու ամենայնիւ, պէտք է սահմանել թէկուզ եւ փոքր ինչ բունագրօսիկ: Մենք կը ծանրանանք չորս գլխաւոր շրջանների վրայ, որոնց անուններն են՝

- 1.— Անիմիզմ (Animisme կամ Physiologie) որ նշանակում է բնապաշտութիւն:
- 2.— Մեռելիքների պաշտամունք (Necrolatrie)
- 3.— Բազմաստեղծութիւն (Polythéisme)
- 4.— Միաստեղծութիւն (Monothéisme)

Թերեւս պակաս մեղանշէինք առարկայական ճշմարտութեան դէմ, եթէ քաշէինք էւօլիցիօնայի աւելի կարճ ու բնականուր գիծ. բնապաշտութիւն-բազմաստեղծութիւն-միաստեղծութիւն, որովհետեւ, ինչպէս կը տեսնենք, բնապաշտութիւնը եւ մեռելիքների պաշտամունքը չեն կարող դիտուել, իրրեւերկու իրար յաջորդող շրջաններ:

Անիմիզմը չուկեցն է կրօնական էւօլիցիօնայի, — այդպէս է սնդում անգլիացի ճանապարհորդ-գիտնական Տայլօր, այդպէս են հաստատում եւ շատ ուրիշ կրօնագէտներ: Անիմիզմ կամ բնապաշտութիւն, բնութեան պաշտամունք: Դա շրջանն է կրօնական ամենաբիրտ հաստատելիքների, որ յատուկ են մարդկութեան երկխոսական հասակին:

Վայրենու կամ նախամարդու համար ամբողջ բնութիւնը նշաւորում է: Ուր կայ շաբժում, այնտեղ կայ կեանք, կան իր նման նշաւոր էակներ, նման իղձերով ու ձգտումներով: Զուրը հասում է, քարը սրկուում, գլխուում է մայրից — ոչ թէ սրտը օրէնքների զօրութեամբ, այլ սրովհետեւ նրանք հոգի ունին եւ կամք շարժելու: Փոթորիկ ու անձրև, քամի, սրտս ու կայծակ — բոլորն էլ հոգի ու մարմին են աւնում նախամարդու երեւակայութեան մէջ:

Թշուա՛ն (Նախամարդը)... Իր անմիջական կարիքների տորուկ, մերկ ու կիսաքաղց նախարխտութեամ էր տիեզերական անմայր բարիւրկնիթուում, կրում էր չըջապատի բոլոր հարւածները, առանց հակադրել կարողանալու, փախչում էր զարգանդած դիշաօլիզ դազաններից, կծկուում, գայարուում էր կայծակի հանդէպ, փոթորիկի, սրբազանի միջոցին վազում էր լեզապատտոս, առանց յետ նայելու, տարւած սարսափի միանձեման զգացումով... Նրան թւում էր թէ ինքը տիեզերական շէնքի կենտրոնն է եւ թէ տարերքի բոլոր խողերը իր անձար անձնաօրութեան դէմ են սղղուած: Այդ տարերքը — մերթ ժպտուն ու բարերար, մերթ անարկու եւ կործանիչ...

Կրօնի զգացումը առաջ է դալիս վայրենու մէջ, սրպէս մի տեսակ հոգեբանական անհրաժեշտութիւն: Որքան խորճըրդուոր եւ ճնշող է նրա համար տիեզերքը: Եւ միթէ միայն վայրենու համար: Առայցինք արդէն, որ քաղաքակիրթ մարդուն եւս յաճախ պաշարում է տիեզերական վեհութեան կամ վեհի (Le Sublime) հօգը զգացումը... Դա այն վայրկեանն է, երբ մարդը տիեզերական հոյակապ ուժերի հանդէպ զգում է ինքզինքը՝ ընկճւած, թշուա, ողորմելի: Դա այն վայրկեանն է, երբ մարդկային գիտակցութեան մէջ դողտրում է ամէն գործունէութիւն եւ երբ միմիայն երեւակայութիւնն է նկատական թուիչքներ գործում...

Վեհի աշխարհում, ասում է Կոնտ, մեր զգայական կարողութիւնը յաղթանարում է եւ Գերզգայնականն է վեր բարձրանում: Մենք մեզ զգում ենք անսահման կերպով փոքրացած:

«Երևակայեցէ՛ք, ասում է Եօպէնճաուէր, մենաւոր մի տարածութիւն, անասման հօրիզօնով, անմարդարնակ առանց կենդանիների ու բոյսերի... լերկ ժայռեր միայն... մեր կամքը տագնապի մէջ է. ամայութիւնը մի դարձուրելի կերպաքանք է առնում եւ մեր արամադրութիւնը դառնում է ողբերգական... Կամ թէ երևակայեցէ՛ք մի տեսարան, ուր բնութիւնը մրրկայոյզ շարժման մէջ է, սեւ սպառնալի, փոթորկաչունչ ամպեր, մերկ եւ հսկայ ապառաժներ, մոնչացող ու փրփրադէզ ջրեր եւ կատարեալ ամայութիւն... մեր կախումը, մեր կուր թշնամի բնութեանդ դէմ եւ այդ կուր մէջ մեր խորտակում կամքը ցայտուն կերպով հանդէս են գալիս մեր աչքերի առջև...» (*)

«Փիչերային խոտովիչ լուսութիւնը— ասում է մի այլ փիլիսոփայ, Էդուարդ Փօն Հարտման, խօսելով նախամարդու կրօնական զգացումների մասին— գիչերային խոտովիչ լուսութիւնը առաջացնում է մարդու մէջ դող՝ անցայտ վտանգի հանդէպ. երկիւղի անորոշ զգացումներ սրաչարում են նրան եւ երբ վերտախն լուսանում է, նա զարթո սրտով ողջունում է յոյս, ուրախ՝ որ այս անգամ եւս ճաճանչող արեգակը յաղթից խաւարի չար ուղիներին...»

«Բայց բնութեան տեսարաններից անեղագոյնը փոքրիկն է... Երբ արեգակի խանձող ջերմութիւնը յանկարծ բռնում է սեւ ամպի զանգուածներով, երբ ցերեկայ պայծառութիւնը տեղի է տալիս գիչերային աղջամուլջին, երբ ամպերի կամարներից կայծակը շանթեր է արձակում, օդը պատտաւելով եւ վայրկենարար բովանդակ երկինքը լուսավառում է եւ պատում հրեղէն ծովով, երբ որտաման անբնդհատ մոնչիւնը, բազմապատկեալ լուսների արձագանգով տկանջ է ճայթեցնում. երբ երկնային կրակը բռնկեցնում է ծառերի բները եւ ճարակող բոցի նման լափում արօտատեղերն ու կուտական անտառները. երբ բոցում են երկնքի սահանքները եւ ամպային ուկիանը անհամար հեղեղատներով գահալիծ-

ւում է դէպի երկիր, աւեր ախելով նրա մակերևոյթին,— այն ժամանակ մարդ-էակն զգում է իրեն սուկի քան երբ եւ իցէ հնչին ու անզօր. նա սարսուռ է երկնային ուժերի վսեմութեան ու գերազանցութեան առջև: Զո՛ւր եւ կրակ... արդտեղ արտայայտում վսեմը իր բարձրագոյն կարողութեան մէջ»... (*)

Ինչպէ՛ս չ'ազդէ այդ բոլորը նախամարդու խղճուկ եւ խողան ուղեղի վրայ, որ դեռ հեռաւոր գաղափար անգամ շունի թէ ինչ ասել է բնութեան օրէնք: Ինչպէ՛ս չ'ը խոնարհի նա այդ ահաւոր տարերքի առջև, որ նոյնիսկ քաղաքակիրթ մարդու վրայ ստիւումն է ազդում...

Հիւսիսային Ամերիկայի հուրիկ մի ցեղի առաջնորդ— պատմում է Սիր Զօն Լիօրթօկ— մի օր սարսափած փոթորկի մոլեգնութիւնից՝ վեր թռաւ տեղից եւ ձեռքը երկնցնելով, ծխախոտ առաջարկից որտու՛մին, աղերսելով, որ բէ...

Այդ եւ նման միլիօնաւոր փատտերը բերում են մեզ կրօնի պատճառի ու նպատակի վերաբերմամբ— նայն անհրաժեշտ եզրակացութեան, որին յանգում է Ֆօլերբախ իր «Կրօն»ի մէջ.

«Մեր կախման զգացումը— ահա կրօնի հիմքը, այդ կախման ոչնչացումը— ահա նրա նպատակը»:

Կախման ոչնչացում... Եւ դրա համար են նպատաւոր տարիներից ի վեր հնչող աղօթքներն ու արարողութիւնները, դրա համար են կառուցեալ միլիօնաւոր վիթխարի տաճարները երկրագնդի բոլոր անկիւններում, դրա համար են մարդկային անթիւ ողջակէզները, որոնց թանկագին արեան շիթերը մնում են իրրեւ յաւիտենական անջնջկի արատ՝ կրօնաւոր մարդկութեան խղճմտանքի վրայ. դրա համար են առնապատներում ու մուպ խուցերում դարերից ի վեր կատարեալ այնքան ողբերգութիւնները, ճգնաւորական, սուգախական ինքնամտրակումները... Դրա համար են, մի խօսքով այն հազար ու հազար հնարքները, այն անվերջ ու ամօթալի

(*) Schopenhauer, Die Welt als Will und Vorstellung (Աշխարհը որպէս կամք եւ պատկերացում)

(*) Ed. Von Hartmann. Das religiöse Bewusstsein der Menschheit (Մարդկութեան կրօնական գիտակցութիւնը)

կատակերգութիւնները, որոնցով մարդը, այդ մշտահաղած երեխան, մտել է շարունակ յարաբերութեան մէջ՝ երեակաշա- կան աստածութեան հետ...

Այդպէս ուրեմն, նախամարդու հասկացողութեամբ, բնութեան մէջ ամէն ինչ ոգի է: Մի տեղ բարի ոգիներ են պաշտում, մի այլ տեղ՝ բարի և չար հաւատարապէս, մի եր- րորդ տեղ՝ պաշտում են միայն չար ոգիներին, արամարանե- լով, որ բարիները աւանց այն էլ բարիք կը գործեն: (*)

Եթէ մեր վայրենի նախնիքները դիտում էին չրջապատող բնութիւնը, իբրև ոգիների, աղատ կամքով օժտւած էակնե- րի մի վիթխարի ամբողջութիւն. — դրա պատճառն այն է որ այդ բնութիւնը միշտ ևւ ամէն տեղ ցոյց է տալիս փոփոխա- կանութիւն, մտամօրֆօղ:

Եթէ արեգակը մնար միշտ մեխւած երկնքի մէջ տեղը— ասում է Ֆօլերրայս— երբէք նա չէր բորբոքի մարդկանց սրտում կրօնական զգացումի հօրը. բայց նա իրիկնաղէմին անհետանում է հօրիզօնի տակ, տեղի տալով գիշերին՝ իր խա-

(*) Անիմիստական (բնագաղտական) հաւատալիքների մի աւանդի տեսակն է ֆիսիքիզմը, որը թերագրում է վայրենուն՝ ամէն մի աչքի բնկնող աւարկայ դարձնել մի տեսակ ամենակարող, հմայիչ թալիսման, ֆիսիք նրա մէջ ենթագործար բնակւում է ոգին, որը իր քրմահաճ կամ- քով վարում է մարդկանց ճակատագիրը: Վայրենին աստածացնում է նրան, քայց եւ արձամարձանքով գէն է շարտում, երբ նա չի կատա- րում այդ վայրենու ցանկութիւնները: Այդպէս, օրինակ, ապակիի կամ խեցեղէն անոթի մի փոյտն բեկոր, կամ մի պսպղուն կրճակ՝ աֆրիկա- կան նեգրի համար դասնում է արտակարգ կարողութիւններով օժտւած մի թալիսման, որ իւրաքանչիւրը, եթէ պատէ իր մարմնի վրայ, ազատ կը մնայ չարքերից ու քաճքերից, կամ ուրիշ խօսքով, կ'ոչնչացնէ իր կախումը բնութիւնից: Որքան ասարածւած են այդ կապիտ հաւատալիք- ները նոյնիսկ մեր ժողովուրդների մէջ:

Ոմանց կարծիքով, ֆէտիշիզմը բնագաղտական հաւատալիքների հա- մեմտարար դարգացած ձեւն է, քանի որ ենթագրում է դերդգայնա- կան ոգիների գոյութիւնը ֆէտիշ-ասարիաների մէջ, — մի բան, որ պա- հանջում է մարդկային ուղեղից՝ վերացնելու, արտարակիօն անելու մի յոյսնի կարողութիւն:

ւարով ու սարսափներով: Երբ նա վերստին ծագում է աւա- ւօտեան, մարդը բերկրանքով ծունկ է չարում նրա առջև:

Բնութեան երեւոյթների համատարած փոփոխութեան մէջ՝ վայրենին իր թօյլ ուղեղով աշխատում է գտնել որոշ խմատ, արամարանութիւն. նա աշխատում է որոշ խմբումների վերա- ծիկ չրջապատող իրերն ու երեւոյթները: Նա տեսնում է եղ- կինքը, մերթ ջինջ, աստղազարդ, մերթ ամպերով վարա- գութւած. նա տեսնում է, թէ ինչպէս արեգակ ու լուսին, մոլորակներ, արջալոյս ու փայտակ, անձրև, մառախուղ՝ երե- ւում ու աներևութանում են մշտնջենաբար, և նրա ուղեղը եզրակացնում է այդ բոլորից, որ բնութեան երեւոյթների մէջ կա զուարթում, երկուրթիւն, որ ամէն բան իր թագուն, չար- տայայտւած կողմն ունի: Նոյն միտքն են ներշնչւած նրան եւ մահացած կենդանիների ու բոյսերի մնացորդները:

«Ամէն բան երկու վիճակ ունի» — մտածում է վայրենին: Նա տեսնում է իր սուերը եւ հաւատում է նրա սուերկայա- կան գոյութեան: Նա լուծ է արձագանգը եւ սրովհետեւ չի կարող այն ֆիզիկապէս բացատրել, հաւատում է, որ դա ինչ որ թաղնւած մի էակի ձայնն է, որ չի ուղում երեւան գալ: Ամէն տեղ երկութիւն: Նա տեսնում է երազ: Երազի մէջ թափառում է այս ու այն կողմ, որում է, կուում է: Եւ աւաւօտեան արթննալով, հաւատում է, որ խկապէս սրակ է, կուել է: Երեւակայականն ու իրականը չիփօթւում են նրա գլխում. նա խորում է եւ գալիս է այն եղրակացութեան, որ իր մէջ երկու «ես» կայ. մինը բաժանւում է միւսից, հե- ւանում, նորից վերադառնում:

Խղճուկ միտք եւ աճագին երեւակայութիւն...

Ուրիշ բաներ էլ արտադրում է այդ երեւակայութիւնը: Վայրենին սիրում է նաև անձնաւորել (personnifier) բնութեան ուժերը, նայնացնել կամ մարդու կամ կենդանիների հետ: Կայծակը — վիշապ է, որ կըւում է, գալարում է կամ թէ անող, որ երկնքի բարձունքներից գահալիքում է դէպի իր սրբը: Արեգակը — ներս է սակիփայ սպառազնութեան մէջ:

69-0-85

նա հալածում է գիշերային խառարը: Սա անհրապուհօրձիկովի (մարդակերպ աստածութեան) տարտամ հասկացողութիւնն է, որ յետոյ կը տեսնենք իր զարգացած ձևի մէջ:

Անթիւ ժողովուրդների զիցարանութեան մէջ — ասում է Տալլոր — լուսին և արեգակ համարում են կենդանի էակներ՝ այր և կին, կամ կըբայր ու քայր: Անհաշիւ են անձրևի պատճառների մասին հնարած ստատիկները: Իսկ քանի աւապներ կան լուսնի խառարան մասին: Հարաւային Ամերիկայի հնդիկ մի ցեղի մէջ տիրում էր այն կարծիքը՝ որ հրակայ հներ հալածում են լուսնին. վերջապէս վրայ են համուծ և պատռտում, արիւն է հոսում վերքերից, լուսինը գառնում է կարմրագոյն: Եւ հնդիկները ազիտղորմ ճիշերով հաւար էին կոչում, նետեր էին արձակում դէպի երկինք՝ իբր թէ դեւերին քշելու համար: (*)

Այդ նախապաշարմուքը չի վերացել ասիական, նման հաւատալիքներ մինք զանում ենք և մեր ժողովուրդների մէջ: Ո՛վ չի տեսել երբ ևս իցէ, թէ ինչպէս մեր գաւառնւորում, նոյնիսկ գաւառական քաղաքներում, լուսնի խառարան միջոցին երեկոյեան մեծ ու փոքր հրապարակ են նետում, մետաղեայ թէֆչիներով և սնհարին մխոր են բարձրացնում, «դեւեր են քշում»: (**)

Չեմ ծանրանում բազմատեսակ մասնաւոր պաշտամունքների վրայ — լեռների, անտառների, լճերի, բոյսերի, կենդանիների կայն. մի երկու խօսք միայն կենդանիների պատեամունքի մասին: Յայտնի է թէ որքան տարածւած է եղել նա աշխարհի բոլոր ծայրերում: Աֆրիկայի մէջ աստածացնում էին կոկորդիլոսին, բորենիներին, օձերին և այլն: Օձերի պաշտամունքը համաշխարհային է, ասում է Լեօբրօկ: Պաշտում էին տեղ տեղ և մազէոր: Նա ընդունակ էր իբր թէ պատճառել զանազան հիւանդութիւններ, նա սարսափ կը տարածէր ընակիհների վրայ և ոչ ոք չէր համարձակի դիպչել նրան:

Կենդանապաշտութիւնը ծագելում էր սուսնձնապէս հին

(*) Tylor, La civilisation primitive (Նախնական քաղաքակրթութիւն)

ճգիւզոտում: Կոկորդիլոսը, կատուն, եզր (Մնեխասիա) և շատ արիշ կենդանիներ սուրբ էին համարում: Այդտեղ արդէն պէտք է տեսնել զուտ սնեսսական պատճառներ՝ պաշտամունքների հիմքում:

Լեօբրօկի ասելով, Սիրիի օտակները և սամօլէղները երկրպագում են արջին, որ ամենաճգորն է իրենց ծանօթ կենդանիների մէջ: Դրանով է բացատրւում այն հետաքրքրաշարժ իրողութիւնը՝ որ շատ վայրենիներ, կենդանիներին սպանելուց յետոյ ներումն են խնդրում նրանցից (*): Սամօլէղները, ասում է Տալլոր, արջին սպանելով, ներողութիւն են խնդրում և սպանելու մեղքը ձգում են սովորաբար սուսների վրայ:

Կենդանապաշտութիւնից և բոլոր միւս նախնական պաշտամունքներից աւելի հետաքրքրական է իր էութեամբն ու հետեանքներով — մեռելապատեութիւնը (Necrolatrie), որ ամենց կարծիքով արմատն է բոլոր նախնի հաւատալիքների, նախնիքովի, բնապաշտութեան:

Բացատրենք նրա էութիւնը:

Խորհրդաւոր և անբարենկի է նախամարդու համար ոչ միայն շրջապատող բնութիւնը, այլ և իր սեփական էութիւնը: Նրա աչքի առջև մեռնում է իր ընկերակիցը: Ինչպէս բացատրէ նա այդ զարնուրելի երեւոյթը... Նա չի բմբւնում բնական մահը: Նա դեռ հաւատում է, որ զա միայն ժամանակաւոր անդալույթիւն է, նա հաւատում է, որ շունչը կամ հողին (**), անջատուկ է մարմնից, արիշ տեղ է գնացել, բայց

(*) J. Loebbock, les origines de la civilisation (բաղաքակրթութեան սկիզբները)

(**) Դրեթէ ամէն տեղ «հողին» կամ «երկրորդ եւր» պատկերացում է նիւթեղէն, թէև աներևոյթ, մարմնի կերպարանքով նա նմանեցւում է ծուխի, գոլորշիի, ստերի: Այդ աներևոյթ հողին է կեանքի սղբիւր — պատճառը Այս կէտում վայրենու փիլիսոփայութիւնը չի տարբերում 19րդ դարի կիսում թագաւորող բիօլոգիական վարդապետութիւնից, որ յայտնի է ալիտալիզմ) սնունով (vitalisme)՝ սրա համբնմատ՝ բոլոր կենդանի մարմինների մէջ կեանքի սղբիւրը կազմում է մի առանձին, աներևոյթ սղբ — կենսական ոյժ:

պիտի վերադառնայ . . . Չէ՞ որ երազի մէջ եւս նա յաճախ դի-
տակ է, թէ ինչպէս իր «միւս կողմ» անջատուելով, թափառել է
ուրիշ տեղեր, ապա նորից վերադարձել: Բայց ահա դիտելը
կազմալուծւում է . . . Այլ եւս չի օգնում նախկին բացասարու-
թիւնը . մա՞ր երազ չէ: Եւ արամաբանում է վայրենին, որ
հոգին թուել է մի ուրիշ աշխարհ, հանդերձեայ աշխարհ . . .
Այնտեղ նա ունի նման գոյութիւն, նման կարիքներ: Այնտեղ
նա չարունակում է ուտել, խոնկ, զւարճանայ, սրտորդու-
թիւամբ պարապել, զէնք վարժեցնել . . .

Անըզբեկմանային կեանքը ներկայիսի շարունակութիւնն
է . . . Ահա թէ ինչու մեռելին կերակուր են տալիս դամբարանի
վրայ և նրա հետ թաղւում են իր զէնքերը, դարդարանքները:
Պատուասները, ասում են, մի քանի օր շարունակ մեռելի բե-
րանը կերակուր են դնում, հաւատալով, որ նա դեռ զգայուն
է: Հին նորվեգիացին մեռնելուց յետոյ ասնում էր իր հետ իր
ձիերը, նաւերը, փող ու զգեստ, Շատ ժամանակ չի անցել,
ասում է Տայօր, երբ ճաղօնացին պարտքով փող էր վերց-
նում, որպէսզի մեռնելուց յետոյ հանդերձեայ կեանքում մեծ
տոկոսով յա մճարէ:

Մեռելը սէւաք սենի միւս աշխարհի մէջ՝ նաև մարդ ըն-
կերակցիցների . . . Այդտեղից առաջանում է մարդկային զոհերի
արիւնտ ու համառարած սովորութիւնը: Մեռելի հետ վայրե-
նիները թաղում էին յաճախ նրա կնոջ, գերիներին, նայնիակ
ազգականներին, թաղում էին սղջ-սղջ, կամ թէ նախ կտո-
րում էին ու այնպէս թաղում: Ասիական արեւելքի մէջ — վկա-
յում է Տայօր — թագաւորի մաճան ժամանակ պրում էին
300-400 մարդ: Մարիօ Պօյօ հռչակաւոր ճանապարհորդը,
13րդ դարում տեսել է հարաւային Հնդկաստանի մէջ նոյնանը-
ման սովորութիւն: 17-րդ դարում նա արբասկտում էր նաև
ճապոնիայում: Նոյնը վկայում են որովճական կուսապաշտութեան
հինուուրց առասպելները: Իսկ բրահմանական Հնդկաստանում
մարդկային սղջակէզները սովորական երեւոյթ էին մինչև 19-րդ
դարի սկիզբները: Անդլիական արբասկտութիւնը միայն վերջ դրեց
այդ ստակալի արարողութիւններին . . .

Կոտորում էին այրիներին, գերիներին, հպատակներին,
հաւատալով որ նրանց «սուերները» պիտի ուղեկցին հանգուց-
եային:

Աշանայում, թագաւորը մեռնելու միջոցին՝ նրա ազգա-
կանները խեղազարի սէս վաղվզում են փողոցները և հրացանի
մե բռնում ամէն մի հանդիպողի: Այնուհետև հանդիսաւոր
կերպով մորթնաւում են հազարաւոր գերիներ: (*) Մեկսիկացի
սաճարներում, վրայում է Մաքս Միւլլեր, տարեկան մարդ-
կային զոհերի թիւը հասնում էր մի-ժամանակ 100,000-ի . . .
Ի՛նչ ի՛նչէս որ եղևնազործութիւններ չեն կատարել վայրենու-
մանկական արամաբանութեամբ՝ յանուն կրօնական բիրտ հա-
ւատալիքների . . . Սակայն համեմատեցէք դրանց հետ այն դա-
րաւ որ մարդակերութիւնը, որ կատարել է ամբողջ պա-
մութեան ընթացքում, «բարձր», «քաղաքակիրթ» կրօնների
անունով: Միմիայն Սոլանիայում քրիստոնէական «սրբազան»
հաւատաքննութեան զոհերի թիւը հասնում է 300,000-ի! Պատ-
կերները շատ էլ սարբեր չեն . . .

Ընդհանրապէս հաւատում են, որ մեռելների հոգիները
ներշնչւած են լինում չար դիտաւորութիւններով, ուստի և
չստ տեղերում զոհեր են մատուցանում նրանց՝ ոչ թէ յարգան-
քից, այլ միայն նրա համար, որ չկուրացնեն նրանց վնասակար
բնազգները:

Համարեա բոլոր ժողովուրդների մէջ մի առանձին, հոգա-
տար պաշտամուտքի աւարկաց կն եղել ընաանիքի մեռած
նախնիները: Իրանց հոգիները կամ բարի են կամ չար: Կամ
հովանաւորում են իրենց յանորդներին, կամ թէ ձգտում են
վնասել նրանց: Այդ պատճառով և նրանց մեծարում են,
աստուծացնում: Նրանց դամբարանների շուրջը զոհեր են
մորթւում, այլ և այլ ծէսեր են կատարւում:

(*) Letourneau, Evolution religieuse (Լէտուրնօ, Կրօնական էւօլու-
ցիոն):
Աշանայները սարում են անկախ կեանքով հիւս, Աւստրալիայում
Քեռ սոյսր եւս նրանք փհիշիզի շրջանում են:

Անագին էր այդ ուշագրտու պաշտամունքի դերը նախնական գերդաստանում: Եւ ոչ միայն վայրենութեան, նեխանութեան ժամանակներում, այլ եւ քաղաքակրթութեան ու քրիստոնէութեան շրջանում: Յունաստանի եւ Հռոմի մէջ ամէն միտոն ունէր իր յատուկ պաշտամունքը, որի առարկան լինում էր աստուածացրած մի նախահայր: Եւ սեղանը, որի վրայ գո՛ն էին մատուցանում այդ վերջինին, ոչ այլ ինչ էր, բայց եթէ մի գերեզման: Մէկ տոն, մէկ օճախ, մէկ աստուած, մէկ գերեզման: Կրօնը նրանցում էր գերդաստանի անդամներին՝ պաշտել մշտնջենապէս իրենց նախահօրը, որ առաջինն է թագուել գամբարանի տակ, եւ սերունդները իւրաքանչիւր սարբի պէտք է խմբէին գերեզմանի շուրջը՝ հագուց հացկերպի անելու: (*) Քրիստոնէութեան յաղթանակը անգամ վերջ չգրեց այդ համատարած սովորութիւններին:

Նախնիքների պաշտամունքը (Le culte des ancêtres) բնկերարանութեան մէջ նեատարբարական է նաեւ մի ուրիշ տեսակէտով: Սպենսերի ասելով, նա մեծ դեր է խաղացել միսհեծան բնապետութեան ծագման պրոցեսում:

Երկիւրը մի հօրը սաղմիկի, մի ներսը նրամանատարի գերեզմանի առջև — ասում է անգլիացի մեծ բնկերարանը — այդ երկիւրը մղել է մարդկանց դէպի սպօխէօզ, սովպիլ է նրանց ասուածացնել այդ հօրին, յաճախ նրան սիրաշահելու, զինքնախանելու նպատակով: Երբ պատերազմների ու նաճումների չնործիւ, ջիր ու ցան մարդկային գանգաւորները համախմբելով ի մի են ձուլել՝ ներսը — աստուծոյ պաշտամունքն էլ բնդիսանալի է, սարածուկ ամբողջ հասարակութեան վրայ եւ աւանդարար անցել սերունդներին: Այդտեղից — երկու հետեանք մէկ՝ որ հօրը նրամանատարի յաջորդը, որ գահակալում է հօր մահից յետոյ, հոչակում է իրրեւ հաղորդակից հօր ասուածալին բնութեան. մէկ էլ՝ որ նա, այդ յաջորդը, իր գահարկութիւններով հայր — աստուծոյ աջակցութիւնն է ստանում: Իսկ զրանից բլխում են անսահման յիւզօրութիւններ, քաղաքա-

կան շէֆը, իրրեւ աստուծոց առաջացած կամ ուղղակի նախնանամութիւնից սահմանւած՝ դառնում է թէ օրիշուում ու իրականութեան մէջ բացարձակ սեփականուստ իր բոլոր հպատակների եւ նրանց գրաւած բոլոր հողերի: Երբ այդպիսով, երկրի նրամանատարը ստանձնում է անսահման իշխանութիւն, երբ «աստուածային ծագման» գօրութեամբ այդ իշխանութիւնը հոչակում է սրբազան ու անբռնարարիկ եւ ամէն մի ձգտում նրա դէմ՝ բացարձակ սրբապղծութիւն, երբ միահեծան պետը կ' աստուած է կ' նրամանատար, — այն ժամանակ նա բնականաբար միացնում է իր անձի մէջ իշխանութեան բոլոր ձեւերը, այն ժամանակ նա դառնում է կ' գերազօյն գաստար կ' եկեղեցու պետ... Այդպէս է ծագում արտօլիտիզմի կամ միահեծան բնապետութեան ճշմարիտ տիպը:

* *

Ինչ տեղ է բռնում նախնիքների պաշտամունքը եւ բնդանրապէս մեռելապաշտութիւնը՝ կրօնի փիլիսոփայութեան ու էւօլիւցիայի մէջ: Անա այդ հարցն է, որ մեծ տարածացնութիւնների տեղիք է ստալիս գիտնական աշխարհում:

Սպենսերի համար անվիճելի է, որ մեռելների պաշտամունքը սկիզբն է, աղբիւրը կրօնական բազմաստեղակ հաւատալիքների: Բնապաշտութիւնը չէ, նրա կարծիքով, կրօնական էւօլիւցիայի չուկէսը, այլ մարդապաշտութիւնը: Առաջինը նեատեանք է վերջինի:

Գիտնական Գօբլի դ'Ալվիլիա նեուեւախ է ասում իր նրջանաւոր աշխատութեան մէջ (L'Idée de Dieu d'après l'Anthropologie et l'Histoire) (Աստուծոյ գաղափարը, համաձայն մարդարանութեան ու պատմութեան):

«Կրօնը երկու արմատ ունի. 1. — բնապաշտութիւն (ուրիշ խօսքով՝ անխիղճ կամ բոլոր մարմինների անձնաւորում) եւ 2. — մեռելապաշտութիւն: Հնարաւոր է, որ սրոչ տեղերում մէկը կամ միւսը առաջինը լինի եղած: Բնապաշտութիւնը ստալիս է աստուծոյ գաղափարը, իսկ մեռելապաշտութիւնը — հանդերձեալ կեանքի գաղափարը»:

(*) Տես Fustel de Coulange. La cité Antique (Հին հունացիքը):

Մի չարք նշանաւոր կրօնագէտներ— Լիպպերտ, Մօկկ, Հիննինգ և մասամբ նոյնիսկ Մաքս Միլլէր՝ Սոլեմսերի հետ միասին չեղաւոր են մեռելապաշտութեան կամ հոգեպաշտութեան (Seelenkult) ահագին կարեւորութեան վրայ, իրրութիւնը հաւատալիքների մայր-պատճառի:

Եթէ ստուգւի այդ վերջին միտքը, եթէ կրօնագիտական յետազոյ ուսումնասիրութիւններն ևս գան հաստատելու, որ շիրաւի, ամէնից առաջ մարդը պաշակ է իր նմանին, որ մարդապաշտութիւնը ամենաշին իրողութիւնն է, աւելի չին, քան բոլոր միւս պաշտամունքները, որ նրանից է առաջացել անիմիզմը, բնապաշտական բոլոր հաւատալիքները, — ապա գրանով պիտի պարզւին շատ ու յազրաւ ճշմարտութիւններ կրօնական փոխափոխութեան մէջ. զրանով պիտի ճշդուի սմանց կենթադրութիւնը՝ թէ կրօնը սկզբից մինչև մեր օրերը էսպէս նոյնն է մնացել, թէ նա մարդու պաշտամունքն է սկզբից մինչև վերջ... (*) Դրանով պիտի ջրւի և մարքսիստական թէօրէտիկոսների այն էական յայտնութիւնը՝ թէ իրր-կրօնի սկզբնական շրջանը եղել է անհրաժեշտաբար զուտ բնապաշտութիւն, բնութեան ուժերի ստուածացում, իսկ մարդապաշտութիւնը իրր թէ յետոյ, շատ յետոյ է եկել, երբ քաղաքակրթութիւնն սկսել է սարածուկ, երբ մարդիկ, շնորհիւ արդիւնագործութեան միջոցների զարգացման, սկսել են խզել բնութեան հետ, ազատուկ նրա կապանքներից, երբ ուրիշ խօսքով, մարդու արժէքը, հասարակական ազգակների արժէքը, բարձրացել ու շեշտուկ է բնութեան կոյր ուժերի դիմաց... (**)

Այդ միտքը արդէն à priori սխալ է, անսարակոյ. մարդը իր նմանին պաշտելու համար, չի սպասել, որ արդիւնագործութեան միջոցները կատարելագործւին, որ նա սկսէ յաղթահարել բնութեան ուժերը, որ մարդկային արժէքը բարձրա-

(*) Մենք կը տեսնենք, որ քրիստոնէական միաստուածութիւնն ևս ուրիշ բան չէ, բայց եթէ մարդ-աստուծոյ պաշտամունքը:

(**) Տես մարքսիստ Lüttgenau-ի գրած քը՝ Natürliche und soziale Religion (Բնական և Հասարակական կրօն):

նայ այդ բնութեան հանդէպ, այլ ամենաշին ժամանակից ի վեր նրա պաշտամունքի առարկաների շարքում եղել են նաև մարդ-էակներ, թէկուզ մի սազմիկ-հերոս, մի առաջնորդ, կամ մի կախարդ... Այդ հարցերին մենք դեռ ևս կը վերադառնանք:

Այն, լազմութիւն են այն կրօնագէտ-հեղինակութիւններ, որ ընդունում են մեռելապաշտութեան և մասնաւորապէս նախնիքների պաշտամունքի առաջնութիւնը, նութիւնը: Նրանից են առաջանում, ասում է Հիննինգ, հոգեւ պանծութեան գաղափարը, զոհարելութիւնների և ազօթքների սովորութիւնը:

«Այն իրողութիւնը — ասում է Մօկկ — որ վայրենին դիտում է քամին, ջրերը, ամպերը, լեռներն ու ծառերը, իրր նշատուրած, կենդանի էակներ՝ այդ իրողութիւնը բղխում է հոգիների (մարդկանց) պաշտամունքից»:

«Բոլոր առաապիները, զիցարանութիւնները, բոլոր աստուածութիւնները բղխում են հոգիների հաւատալիքներից — այսպէս է յայտարարում և Լիպպերտ: Իսկ հօշակաւոր լեզուարան-կրօնագէտ Մաքս Միլլէր նոյն իսկ միաստուածութիւնը դուրս է բերում նախնիքների պաշտամունքից:

«Վայրենի զուլուսների մօտ, ասում է նա, աստուածը կոչւում է Ունկուլունկուլու, որ նշանակում է նախապապ: Անշուշտ, իւրաքանչիւր գերդաստանն ունի իր յատուկ Ունկուլունկուլուն: Բայց վայրենին արամարանում է, որ բոլոր մարդկանց համար պէտք է գոյութիւն ունենայ մի ընդհանուր Ունկուլունկուլու, որը, բնականաբար, ստանում է հետուր, անյայտ, խորհրդաւոր մի էակի կերպարանը զուլուսի կրեւակայութեան մէջ: Մարդկային միտքը աւելի և աւելի զարգանալով — եզրակայնում է Մաքս Միլլէր — համարեա բնական անհրաժեշտութեամբ պէտք է ընդունել, որ գոյութիւն ունի բոլոր հայրերի մի ընդհանուր հայր (ein Vater aller Väter), մարդկութեան մի Արարիչ(*)...»

Վերջապէս, մեռելապաշտութեան թէօրիայի պերճախօս և

(*) Տես Lüttgenau, յիշատակած գիրքը:

կարող փաստարան է անգլիական մեծ փրկատիպ, Հերրերտ Սպենսեր, որ երկարորէն ծանրանում է նախնական հաստատութիւնների վրայ, իր հոյակապ աշխատութեան մէջ («Սոցիոլոգիայի հիմունքները») :

«Մեռելները հոգիները, որոնց զօրութեան մէջ նախնական մարդը սահման չի ձանաչում, ներկայ են ամէն տեղ : Նրանցով է բացատրւում ամէն մի անակնկալ փոփոխութիւն, ուստի նրանց գոյութիւնը միշտ հաւատարի է : Ոչ մի ուրիշ պատճառ այդ փոփոխութիւնների համար ծանօթ չէ նախամարդուն, ուրեմն, մեռելների ոգիները սլփալ լինեն պատճառ... Եթէ քննենք մարդկային ցեղերի, հասարակութիւնների, ազգերի հաւաքայթը (agrégat), կը գտնենք բազմաթիւ ազատույններ՝ որ գրեթէ բոլորը, եթէ ոչ բոլորը՝ տարաամ կամ որոշակի հաւատում են մեռելի «երկրորդ ես» (le double) շարութեանը» (*)...

Սպենսերի հասկացողութեամբ, բոլոր սպասուակ պաշտամունքները՝ կենդանիների ու բուսերի, արեւի ու աստղերի, ջրերի, հնչուսը և անչունչ մարմինների, մի խօսքով, ամբողջ աշխարհն կոչւում «բնական կրօնը», անմիղմը, և ամէն կրօն առհասարակ բղխում է միեւնոյն արմատից — նախնիքների կամ, աւելի ընդհանուր ասած, մեռելների պաշտամունքից :

Ֆլետչիզմի ու կուպաշտութեան չրջանում մեռելների հոգիներն են, կամ նրանց «երկրորդ ես»-երը, ուրուականները, որ բնակութիւն են հաստատում զանազան մօմեանների, փայտ, ու քարէ մարմինների մէջ : Նոյն մեռելների հոգիներն ենք տեսնում — ասում է Սպենսեր — և կենդանիների պաշտամունքին մէջ : Բազմաթիւ ժողովուրդներ, Աֆրիկացում, Ասիայում ու Ամերիկայում, հաւատում են, օրինակ, որ օձերը, որոնք գաղտնաբեր յաճախում են մարդկանց բնակարանները և երկար ժամանակ ապրում են այնտեղ — որ դրանք հորագաս ննջեցեալների հոգիներն են, որ գալիս են այցելութեան իրենց յետնորդներին : Ուստի և մեծարում, պաշտում են օձը

րին, ինչպէս մեծարում են և որոշ տեսակի մողաներին, միջատներին ու թռչուններին : Այդպիսով կենդանիները գիտւում են իբրև կերպարանափոխւած նախնիքներ Մեռած մարդկանց հոգիները, ենթադրաբար, անցնում են կենդանիների մէջ : Չղջիկը և բուն համարւում են շատ ժողովուրդների մէջ՝ թեւաւորւած ոգիներ... Դա, Սպենսերի կարծիքով, ասպինքայն է դէպի դեւերի ու հրեշտակների հատկացողութիւնը :

Այդպիսով բոլոր հաւատալիքները, ամբողջ բնութեան պաշտամունքը, ասում է Սպենսեր, հանդիսանում է մի աւանձին ձև նախնիքների պաշտամունքի, որը, աւելի քան բոլոր միւս հաւատալիքները, կորցրել է իր ինքնատիպ բնույթութեան արտաքին գծերը : Քաջքուկներ, անչուսա, կան Սպենսերի օրիգինալ բացատրութիւնների մէջ, բայց յամենայն դէպս, թէօրին մեծ է, պատկառելի, ինչպէս առհասարակ սպենսերեան բոլոր թէօրինները, և նա ունի հաւանականութեան խոշոր բաժին :

Այն միլիօնաւոր անբեւոյթ ոգիներն, ուրեմն, որ վխտում են նախամարդու շրջապատում, ոչ այլ ինչ են, բայց եթէ մեռելներէ հոգիներ : Նրանք բնակութիւն են հաստատում մօտակայ անտառներում, քարանձառներում, լեռների կատարներում : Չէ՞ որ գիշերը երազի մէջ նրանք երեւում են կենդանի մարդկանց, յաճախում են նրանց բնակարանները, խօսում են նրանց հետ...

Մեռելների ուրուականներով լցւում են տարեր ու ձորեր, նախապաշարւած և զարհուրած երեւակայութիւնը ամէն տեղ տեսնում է նրանց : Նրանք դեւեր են, կենդանի մարդկանց տանջող ոգիներ : Ամէն մի անտառ ու ծառ, ամէն մի ժայռ ու աղբիւր, ամէն մի կիրճ ու ձոր՝ իր գեւերն ունի : Անհամար առասպելներ երկրագնտի բոլոր ծայրերում՝ դեւ-ուրուականների մասին... Աւստրալիայի անտառներում դեւերը սուլում են ծառերի սողաթիւնների միջից, պարզում են ձուքերը՝ ճամբորդներին բռնկու համար, մոլորեցնում են ճամբորդին... Այսօր իսկ, քաղաքակրթութեան շրջանում, երբ մեզ պատահում է անցնել գիշեր ժամանակ խիտ անտառի կամ գերեզմա-

(*) Principes de Sociologie

նառան միջից, — մի անորոշ սարսուռ ենք զգում: Դա, հաւանօրէն, աւանդական երկիւղն է մեռելների հոգիներից կամ դեւ-ուրեականներից:

Զարմանալի ոչինչ չկայ, որ այդ բարբարոս հաւատալիքները մղել են մարդկանց ամենուրեք՝ կախարհութեան գիրկը: Պէտք է զննաթափ անել դեւ-աստուածներին, մարդկանց այդ աներևոյթ թշտամիներին, սէւաք է աղղել նրանց վրայ, փոփոխել նրանց տրամադրութիւնը: Կախարդները միայն ունին այդ ոյժը: Նրանք ունին հաղորդակցութիւն սգիների հետ, թափանցում են նրանց մաքերը և չկարգայնում են նրանց, յաճախ մարդկային զոհերի միջոցով... Կախարդները, այդ խաւար ու խեղճ ժողովուրդների հատկացողութեամբ, կարող են մեկնել ետազր, կարող են հեռացնել համաճարակները և այլն և այլն: Որքա՞ն նմանութիւն մեր ժողովուրդների այսօրւան իրականութեան հետ... Այդ հանդիսաւոր թափօրները, երաշտի և այլ ընական աղէտների միջոցին, կղերի բարձրատիճան ներկայացուցիչների զեկավարութեամբ, խաչ ու խաչվառով և զանազան մատուցներով, սրնոցով պարբերաբար յիմարացնում են մեր ժողովրդին, — այդ լէզիօնները փաշխների ու երազահանների՝ սրնոց այդքան պատկառանքով, երկիւղածութեամբ ականջ են դնում մեր դաւաճներում, այդ համատարած թափամանները, այդ բիրտ ու գուեհիկ, մարդկային բանականութիւնն արատաւորող մտապաշտութիւնները, սրնք այնքա՞ն յիշեցնում են նախապատմական մարդկութիւնը...

Կախարդները հին ժամանակներում ակղ-ակղ ներկայացնում էին առանձին քրմական դասակարգ, կաստա, կազմակերպւած որոշ երաշխով, աստիճաններով: Դա կղերական դասակարգի պատմական սկզբնաւորութիւնն է: Այսօրւան կղերը էտաղէս նոյն վաղեմի քրմական դասակարգն է, էւօլյուցիայի ենթաթարկւած: Թէ՛ հնում և թէ՛ այսօր նրա էական առաքելութիւնը միևնոյնն է — նա բարեխօս-միջնորդ է մեր, հասարակ մահկանացուներին և աստուածների միջև... Եւ վատ միջնորդ քանի որ չը նայած նրա յաւիտենական բարեխօսութիւններին՝ անհնում ենք, այնուամենայնիւ, մեր թշուաւ երկրագունդը

մշտապէս ենթակայ ամէն տեսակ աղէտների ու արհաւիրքների...

*
**

Այժմ, մի վայրկեան ընդհատենք կրօնական էւօլյուցիայի մեր ուրազիծը և հետաքրքրենք մի կարեւոր խնդրով. արդեօք բոլոր ժողովուրդները ունեցել են այդ բազմատեսակ հաւատալիքներն ու պաշտամունքները... Կրօնի համալսարանային լինելու կամ չը լինելու հարցն է որ կուզենք շոշափել, բայց միայն շոշափել: Խնդիրը յիսկաւար կերպով պարզւած չէ սոցիօլոգների համար: Կրօնի գաղափարը խիտ առաձգական է և նրա որոշումները՝ բազմատեսակ, իսկ միւս կողմից ճանապարհորդների վկայութիւնները վայրենիների մասին յաճախ կցկատը են, հակասական: A priori, կարծես ոչ մի կտակածի սեղիք չը պիտի լինի, որ կրօնական զգացումը այս կամ այն ձևով յատուկ է բոլոր անգիրի և ժամանակների մարդկային համայնքներին: Չը նայած ներկայական տարբերութիւններին՝ մարդը ժարդ է աշխարհագրական բոլոր գօտիների վրայ, մասաւորապէս նոյն հոգեբանութեամբ և ենթակայ նման ուժերի աղղկցութիւններին...

Եւ այնուամենայնիւ, ոմանց թւում է, թէ կան անկրօն ժողովուրդներ: Սէյրանի Վեկլլա կուզւած բնակիչների մասին պատմում են մի քանի ճանապարհորդներ, որ նրանք բոլորովին գուրկ են կրօնի: Գաղափարից: Ոչ կուսք, ոչ պաշտամունք, ոչ ձէս ևւ աղօթք: Երբ նրանց հարցնում էք աստուածութեան մասին, պատասխանում են՝ «Ուր է այդ աստուածը, որ ժայռի տակ, որ ծառի վրայ, երբէք մենք չենք անել աստուծուն (*): Սիր Զօն Լեօրթօի կարծիքով, Կաֆրները և Հօստենտօսները ակզմագարծութեան մասին գաղափար չունին: Բայց դա դեւ կրօնի խաղաւ րանցակայութեան նշան չէ: Ըստ Տալլօրի և նոյն Լեոուրնօյի՝ այդ ցեղերի մէջ կրօնի զգացումը համուծ է minimum-ին, նապագայն չափին:

(*) Letourneau, Evolution religieuse.

Յայտնի միսիօնար ճանապարհորդ Վօֆֆա Նեուեկայն է պատմում Կաթոլիկների անկրօնութեան մասին .

«Շատ տարիների ընթացքում ես աշխատեցի զանեկ նրանց մէջ կրօնի սրեւէ գաղափար — բայց սպարդիւն : Ասեկ նրանց , որ դոյութիւն տնի մի Արարիչ , տէր երկնքի և երկրի , խօսեկ նրանց հետ Յարութեան Անմահութեան մասին՝ միեւնոյն է թէ առասպելներ պատմեկ , աւելի անհեթեթ , քան թէ իրենց ծիւղեկի հեքեաթները սուխճների , բորենիների ու չնագայերի մասին . . . Նրանք սիրով տկանջ կը դնեն ձեզ , միայն թէ տաք նրանց ծիսախոտ կամ մի ուրիշ բան , ի վարձատրութիւն իրենց կորցրած ժամանակի . . . Մենք ճգնում էինք խօթեկ նրանց գլխի մէջ Ստեղծագործութեան և Նախախնամութեան մեծ ճշմարտութիւնները , բայց և միշտ միեւնոյն պատասխանն էինք ըստանում . Makahélo! (Ստւա է) :

«Նրանք մեր խօսքերը ըսում են ուշադրութեամբ և պատկասանքով — ասում է հուշակաւոր Լիվինկիսօն Բեչուանա կոչւած աֆրիկական վայրենիների մասին — բայց հէնց որ ծունկ ենք չօքում ազօթեկու , մենք նրանց այն աստիճան ծիծաղելի ենք երևում , որ անվերջանալի քրքիջ է բարձրանում նրանց մէջ» :

«Ինչ տարբերութիւն կայ իմ և այս կենդանու միջև — հարցնում է Մօֆֆային Բեչուանայի մի վայրենի . իր շուն վրայ մտանացոյց լինելով . դուք ասում էք , որ ես անմահ եմ . ինչու չպէտք է անմահ լինի և իմ շունը , իմ եղբ . . . Երբ մեռնում են , տեսնում էք հողիները . . . է՛ , ուրեմն էլ ինչ տարբերութիւն կայ մարդկանց և կենդանիների մէջ : Տարբերութիւնը գտցէ այն է միայն , որ մարդը նենգութեան մէջ գերազանցում է կենդանուն» . . .

Բեչուանաները իրենց վայրենի տրամաբանութեամբ դժուար կացութեան մէջ կը դնեն 20-րդ դարի փիլիսոփայատոււածարաններին :

«Մենք ձեր Աստուծուն օգնութեան կոչեցինք . — ասում էին Գրէնլանտացիք քրիստոնէսութեան առաքեալներին — մենք նրա օգնութիւնը խնդրեցինք ամէն անգամ , երբ հրանդ էինք

կամ սպրտտախ միջոց շունէինք : Բայց ոչ մի նշանից չի երևում , որ նա լսելիս լինի մեր աղերսանքը . . . Աղօթեցէք այնպէս , որ ձեր Աստուծը ուտելու բան տա , մեզ և ուզան հրանդութիւններից : Մեր ուզածը այդ է . ինչ վերաբերում է մեր հոգուն , կարծում ենք , որ նա լաւ է այնպէս , ինչպէս որ կայ» . . . (*)

* *

Էւոլյուցիան սուսջ է գնում : Բազաքակրթութեան ընդհանուր աստջաղիմութեան հետ մարդկային միտքը կամացկամաց նորանում է , փոփոխւում են և կրօնական հաստատութիւնները — ոչ այնքան էութեամբ , որքան ձեւով : Սկզբնական շրջանում ոգին , պաշտամունքի աւարկան , կծկերտ է , նա դեռ չի գանազանւում նիւթից , նա "շունչ" է , "արիւն" է : Բայց մարդկային տրամաբանութիւնը փոքր ինչ սուսջ է գնում , այդ ոգին հեղհեղեղ նորանում է , աբստրակտ , վերացական կերպարանք է ստանում : Նա անտեսանելի է , թագնւած իրերի ու երեւոյթների ետեւում , անկախ նրանցից :

Փոփոխւում է և հանդերձեալ աշխարհի գաղափարը : Սկզբներում այդ աշխարհը շատ մօտ էր կարծւում — մտակայ մի լիս , մի այր , մի անտառ : Բայց որքան աւելի է զարգանում վայրենու միտքը , այնքան աւելի է հեռանում հանդերձեալ աշխարհը : Հողիները միշտ վեր , միշտ դէպի բարձր են պանում , դէպի երկնային տարածութեան անցյալ , անդրազոյն սահմանները : Այնտեղ են գտնում նրանք իրենց յաւիտենական հանգիստը : Դրա հետ միասին փոփոխւում է և անդրշիրման կեանքի բարձրումը : Սկզբներում , ինչպէս տեսանք , այդ կեանքը զխոււում էր իրրեւ ներկայի սոսկ կրկնութիւն : Մեռելները շարունակում էին սպրել երկրաւոր , նիւթական կեանքով : Սակայն , հեղհեղեղ երկու կեանքերը տարբերում են և նրանց միջև անդոււնդ է ձգւում . . . Պատճառը . . .

Պատճառը այն է՝ որ բարոյական նկատմներ սխտւում են արդէն մեծ դեր խաղալ : Բազաքակրթութիւնն աստջաղիմում

(*) Letourneau, Evolution Religieuse

է, հասարակութիւնները կազմակերպում են, իրենց յատուկ օրէնքներով, գրեւթ կամ անգիր իրաւագրքերով: Իրաւունքի և պարտականութեան գիտակցութիւնը զարգանում է համայնքների մէջ, իրենց փոխադարձ յարաբերութիւնների աշխարհում: Դրա հետ զարգանում է անխուսափելի կերպով՝ նաև պատժի ու վարձատրութեան գաղափարը: Այդ գաղափարը իրական աշխարհից անդրադառնում է հանդերձեայ աշխարհում. . . տնային և Դժոխքի և Արքայութիւն: Դժոխքն իր սարսափներով մեղաւորների համար, արքայութիւնն իր հրապուրչի հետանկարով՝ անմեղների համար. . . Ինչպէս տեսնում ենք, հասարակական էւօլիցիայի սննետանիքը ըմբռնումը տեղ տեղ կարող է արգասաւոր լինել նոյնիսկ կրօնի փիլիսոփայութեան մէջ:

Հասարակական ընդհանուր էւօլիցիայի հասանքում կրօնի գաղափարը երկու տեսակ ձգտումն է ցոյց ստելիս:

1⁰ Մի կողմից նա ձգտում է դէպի, այսպէս ստամ, ընդհանրացումն ու միակերպութիւն: Կրօնը սկզբներում բաժանական էր, — այսինքն մասնատուրեւած, կղզիացած բաժանբաժան համայնքներուն մէջ, առձի, գեներ և ցեղի մէջ: Կրօնի ձևերը համապատասխանում էին հասարակական տիրող վիճակին: Ան ժամանակայ մարդկութիւնն ևս, այսպէս ստամ, բաժանական էր. նա գոյութիւն ունէր ցիրուցան, փոքրիկ ու հակամարտ համայնքներով, որոնք յաճախ պատերազմ էին մղում իրար դէմ: Եւ հէնց այդ պատերազմը ժամանակի ընթացքում, աստիճանադար, ի մի ձուլեց — զօրավարների նւաճողական, բռնաւոր քաղաքականութեամբ — այդ անթիւմանը համայնքները, կազմակերպեց հասարակական մեծ մարմինները. և այդպիսով հնարաւորութիւն սուեց կրօնին ևս՝ չարժեւել, զարգանալ աւելի ընդարձակ հօրիզօններում: Նախկին ցրուածութիւնն ու հակամարտութիւնը մեղմանում է, և հեղհեղձեց՝ ցեղերի, ազգերի կազմակերպման հետ՝ յայնանում են որոշ աստածների, պաշտամունքների տիրապետութեան շրջանները:

2⁰ Միևնոյն ժամանակ կրօնների զարգացման ընթացքում միշտ աւելի և աւելի շեշտում է այսպէս կոչւած ակնօ-

պօսեփիզմը, այսինքն աստածների մարդակերպ լինելը: Այդ գիծը որոշ չափով, յատուկ է եղել նոյն իսկ ամենահին շրջաններին (ինչպէս փաստեցինք նախորդ էջերում). միշտ ևս ամէն տեղ վարենիները ակննսուրեյ են ընութեան ուժերը կամ կենդանիների և կամ աւելի յաճախ մարդկանց կերպարանքով: Որոշ չափով անարօպոմօրֆիզմ, ուրևն, եղել է կրօնական զարգացման բոլոր շրջաններում, բայց, բնականաբար, աստածների «մարդանման» գիծը քաղաքակրթութեան առաջխաղացութեան հետ պէտք է միշտ աւելի զարգանար, աշխատանքի, գեղարւեստի, գիտութեան, փիլիսոփայութեան զարգացման հետ. բնականաբար, պէտք է միշտ աւելի փառարանէր մարդկային հանձարը, պէտք է նա դառնար աւելի ջերմ պաշտամունքի առարկայ: Նոր բան չէր ստեղծում կրօնական էւօլիցիայի մէջ, այլ հինն էր շեշտում աւելի որոշ ու ցայտուն գծերով:



Բազմաստածութիւնը երևան է գալիս պատմութեան բնմի վրայ հէնց անորօպոմօրֆի, մարդակերպ պատկերով: Նրա դասական, տիպիկ ներկայացուցիչն է հելլենական բազմաստածութիւնը: Կրօնը այդտեղ սերտ կապ ունի գեղարւեստի հետ: Հելլենների գեղարւեստական երկնքի տակ աստածները պատկերացնում էին մի մի մարդկային իղէպ: Արամազդը, գերագոյն աստածը և աշխարհի տէրը, Ոլիմպեան գաղաթին իր գահի վրայ բազմած մի հզոր իշխան էր, Ապօլլօնը՝ գեղատեսիլ մի պատանի, արևատաղէտի խանդավառութեամբ, ձեւին բռնած մի քնար կամ աղեղ, ճակատը զարդարւած լուսապակով, Էրօս—սիրուն հաճոյալի մանուկ էր, Աֆրօդիտէ—սիրարորոք կին, և այլն:

Բազմաստածութեան նոյն սխալմը, տարբեր անուններով անցաւ յասագայում Հուօմ:

Բայց, անտարակոյս, թէ յոյներ և թէ հուօմայեցիք, ունեցել են դրանից առանջ, նախաքաղաքակրթական շրջանում նոյն կոպիտ հաւատալիքներն ու պաշտամունքները, որ մենք

տեսանք Աֆրիկայի, Ամերիկայի ու Աւստրալիայի վայրենեան-
րի մէջ :

Կրօնի էւօլուցիան համարեա ամէն տեղ նման է ընթացել
ընդհանուր գծերով , բայց կրկնում ենք , նա չի ընթացել ա-
մենուրեք կանոնաւոր թափով , հաւասար արագութեամբ :
Հաւաստողիքների այս կամ այն սիստէմը այս կամ այն երկրի
մէջ տիրապետել է համեմատաբար աւելի վաղ կամ աւելի
ուշ , նայեա՞մ հանգամանքներին : Իսկ այդ հանգամանքները
— բազմատեսակ , բարդ , խճճւած , յաճախ անմեկնելի . . .

Այդպէս , օրինակ , Հնդկաստանում զեւ սասնեակ դարեր
Քրիստոսից առաջ ծագելու՞մ էր համաստեւածային , պանթէյիս-
մի կրօն , բրահմինիզմը , որ ունի 100 միլիօն երկրպագուներ
ևւ որ կրօնների էւօլուցիայի մէջ ներկայացնում է դօզմային
տեսակէտից աւելի բարձր աստիճան , քան թէ հելլեն-հեթա-
նոսական կամ նոյն իսկ քրիստոնէական անարօպօսթօրֆիզմը :
Ինչպէ՞ս , ինչ պայմաններում է ծնունդ տուել այդ օրիգինալ
սիստեմը — առ այժմ որոշ պատասխան չկայ . . .

Բրահմանիզմի մէջ չկայ աստեւածների անձնաւորումն : Մեծ
Ամբողջը միայն գոյութիւն ունի , իրրե նիւթ ու կարօգութիւն :
Մեծ ամբողջը — դա վերացական մի գոյութիւն է , որ ամէն
բան պարփակում է իր ծոցում , նման Սալինօզայի արեղերական
«Մուրտանցին» : Նա ինքը գերագոյն աստեւածութիւնն է , բո-
լոր արարածների հագին , բոլոր գոյութիւնների ազրբուր :

Բրահմանիզմից առաջուցաւ մի այլ պանթէիստ , համաստ-
ւածային կրօն , Բուդդայականութիւնը , որի ծագումը նոյնպէս
խորատուղւած է դարերի գիշերի մէջ ևւ որը այսօր ունի մօտ
կէս միլիարդ (500 միլիօն) դաւանողներ , աւելի քան քսուորդը
երկրագնդի սմբողջ ազգաբնակութեան :

Այդ երկու կրօններն ալ յանկարծակի չեն բուել հնդկական
հողի վրայ . նրանք երկարատեւ էւօլուցիայի արդիւնք էին :
Այնտեղ ևւ գարերով թագաւորել են բնապաշտական բիրտ
ձեւերը ևւ մարդակերպ բազմաստեւածութիւնը : Ինդրա՞ արե-
զակի աստեւածն էր , Վարունա՞ երկնքի , Ագնի՞ կրակի , Եամա՞
ստորերկրեայ աշխարհի , ևւ այն : Արակապաեսութիւնը , ոմանց
ենթադրութեամբ , առաջացել է արեզակի պաշտամունքից , ու-
րովհետեւ կրակը դիտել է իրրե խորձրդանշան արեգնային
աստեւածութեան : Նոյն ծագումն ունէր , բոտ Մաքս Միլլերի ,
կրակապաշտութիւնը նին Պարկաստանում և ուրիշ տեղերում :

ՄԻԱՍՏԻԱԾՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Որքան աւելի է զարգանում կրօնական գիտակցութիւնը
մարդկային հասարակութիւնների մէջ , այնքան աստեւածները
քչանում են թւով : Որոշ կարգի աստեւածներ — Երկինք , Ա-
րեզակ ևւ այն — ամենամեծ տեղն են գրաւել ժողովուրդների
հաստալիքների մէջ : Այդպէս , օրինակ , Երկինքը , իրրե բո-
վանդակումն բնութեան բոլոր երեւոյթների , իրրե ազրբու-
անձրեւի , որոտի ու կայծակի , լոյսի ու ջերմութեան , եղել է
որոշ չրջանում գերագոյն աստեւածութիւնը բազմաթիւ ժողո-
ղովուրդների համար — եգիպտացոց , անապատի արարների ,
թափառական մօնղոլների , չինացոց , հնդկացոց , հելլենների ,
հոնների ևւ այն : Երկինք-աստեւածը կոչւում էր նին Եգիպտո-
սում Ամոն , Բաբելոնում՝ Էլ , Իլու , արարերէն՝ Իլահ (կամ
Ալ-Իլահ , յետոյ եղաւ Ալլահ) , յունարէն՝ Զեւս , չինարէն՝
Թիէն , մօնղոլերէն՝ Թեւգրի , հոններէն՝ Թանգլի : (Էդ - Հարտ-
ման) :

Արեզակի պաշտամունքն ևւ տեսնում ենք ամենաշին ժա-
մանակներից ի վեր տարածւած երկրագնդի այլ ևւ այլ կողմն-
քում : Արեզակը — միակ բուստու էակն է երկնային համաստե-
լութեան մէջ , առաջնակարգ ստեղծագործող ոյժ , բուսական
ևւ կենդանական աշխարհի սնուցանող է . . . Զուր չէին հնդկա-
կան Վեդաների մէջ անւանում նրան Պրազապաի , այսինքն
աւր բոլոր կենդանի արարածների :

Արեւի պաշտամունքը տմանք բացատրում են աշխարհա-
գրական , ուրիշներ , ինչպէս , օրինակ , Տայլօր , դուա սեհեսա-
կան պասնաոներով : Տայլօր վերագրում է այդ պաշտամունքը
մարդկային համայնքների պարապմուցի տեսակին : Որտորո-
թեամբ պարապող ցեղերը այնքան պէտք չունին արեւի , որ-
քան երկրագործութեամբ պարապողները : Երկրագործ ժողո-
վրդի համար արեզակը կենտարբ է , ամէն հարստութեան
ազրբուր : Բայց կայ ևւ այն՝ որ նոյն Արեզակը կարող է ևւ

յափշտակել այդ հարստութիւնները (երաշտահար անել) ու մահ բերել երկրագործին... (*) Ենթադրում են, որ հէնց այդ կինսարար ու միանգամայն կործանիչ ազդեցութիւնների պատճառով Արեգակ-աստուածը շատ տեղերում բաժանուէլ է մէկ բարի եւ մէկ չար աստուածութեան: Առաջացել է այն դուալիզմը, երկուութիւնը, որ մենք տեսնում ենք, օրինակ, հին Եգիպտոսում, բայց որի դասական վայրն է Պարսկաստանը: Բազմաստուածութիւնը յետ է մղուել, ճանապարհ բանալով դուալիզմի, երկաստուածութեան համար. տիրապետող, գերակշռող աստուածութիւնը բաժանուէլ է, այսպէս ասած, երկու հակամարտ, անտաղօնիստ հաստածների. Օգիրիս եւ Տիֆօն՝ Եգիպտոսում, Որմիզդ եւ Ահրման՝ Պարսկաստանում, մինը լույսի եւ բարութեան, միւսը խաւարի եւ չարութեան աստուածը, մշտնջենական հակառակութեան եւ սրայքարի մէջ են... Սա մեզ յիշեցնում է, անչուչա, նախամարդու երկուակայած բարի ու չար ոգիներին, բայց այնտեղ դեռ շատ կոպիտ էր բմբունու մը:

Այդպէս, գրեթէ բոլոր բազմաստուածեան սխառեմների մէջ ժամանակի ընթացքում աստուածներից մինը բարձր, գերիշխող դիրք է գրաւել: Դա ճակատագրական ձգտումն է՝ դէպի մօնօթէյիզմ, միաստուածութիւն: Մի տեղ, ինչպէս ասացինք, այդ բարձրագոյն աստուածը երկինքն է, մի այլ տեղ արեգակը եւ այն: Հնդկական Ինդրան (Արեւ-Աստուածը) տիեզերքի թագաւորն է, կենդանիների եւ մարդկանց տէրը: Առանց նրան ոչինչ է աշխարհը: Եգիպտական Օգիրիսը գերազանցապէս բարի եւ լուսաստորիչ աստուածն է: Պարսկական Որմիզդը Արարիչ է, ամենակարող, ամենազէտ: Հելլենների Արամազդը սիմուլեան աստուածների թագաւորն է, բոլոր աստուածները՝ աստուածք:

Դա մի անսակ աստուածալետական նախապետութիւն է, երարչի, (hiérarchie), որ հաստատուում է երկնքում՝ նման այն ֆալսֆական երարժիին որ ընկերային զարգացման ընթացքում հաստատուել է երկրիս երեսին: Ինչպէս որ թագաւորը իրեն օժանդակ է ունենում բազմութիւ իշխաններ, վստ-

աւրներ եւ այն, նոյնպէս գերագոյն աստուածը կամ երկնային թագաւորը ունենում է իր հրամանատարութեան ներքոյ մի շարք կիսաստուածներ:

Եւ, ինչպէս որ աւստական զարգացման ընթացքում աստիճանաբար աճում է սիւղէրէնի, գերիշխանի ազդեցութիւնը, որ սկզբնեւում համարեա սոսկ անանական էր. ինչպէս որ այդ գերիշխանը կամաց-կամաց կենսործնացնում է բոլոր աստորդելիները իր անձնաւորութեան մէջ եւ ի վերջոյ խաղաղ նսեմացնում է միւս իշխաններին, վաստայներին, դառնում է բացարձակ, միաեծան պե՝ ճիշտ նոյն պրոցէսը մի զարմանալի զուգընթացութեամբ կատարում է եւ երկնքում աստուածների աշխարհում:

Եւ առաջ է գալիս միաստուածութիւնը: Երկնային միապետութիւնը այդպիսով կարելի է դիտել, իբրև անդրադարձումն երկրաւոր միապետութեան:

Այդ «անդրադարձումը» մեզ կրկին յիշեցնում է Մարքսի թէօրիան, որի առթիւ, հարկ է, վերջապէս, փոքրիկ բացատրութիւն տալ:

Մարքսի թէօրիան՝ անտեսական կամ պատմական մասերիալիզմը՝ յաւակնութիւն ունի լուսարանելու կրօնների ծագումն ու էությունը, ինչպէս որ նա յաւակնում է պարզել փիլիսոփայական մտքի զարգացումը եւ առհասարակ ամբողջ պատմական պրոցէսը— պարզել անտեսական օրէնքներով, արդիւնարեւական ուժերի զարգացումով եւ այն:

Ընդունելով հանդերձ այդ թէօրիայի պատմական արժէքը, իբրև մի նոր տեսութեան՝ որ եկաւ չեչտեչու ճիշտական գործօնների մինչ այն գրեթէ արհամարհւած դերը մարդկային հասարակութիւնների զարգացման պրոցէսում, պէտք է խոստովանենք զրա հետ միասին, որ այսպէս անւանւած «բարձրագոյն գաղափարաբանութեան» մէջ (la haute idéologie), կրօնի եւ փիլիսոփայութեան բարդ ու կնճառախնդիրներում՝ այդ թէօրիան միանգամայն անբաւարար է, անձեռնհաս: Նրա հեղինակները ժամանակ էլ չեն ունեցել

(*) Tylor. La civilisation primitive

զրադէկու այդ կարգի մարզանքներով . փիլիսոփայութեան ու կրօնի պրօբլէմներին նրանք մեծ մասամբ մօտեցել են . իբրև սիրողներ , ուստի և նրանց տւած բացատրութիւնները՝ յախուեն , շտապ եզրակացութիւնների կնիք են կրում :

Ուսուցիչների թողած պարասպր լրացնել ձգտեցին աշակերտները— Կառուցիկ , Լաֆարգ , Լիւտզենաուեայն , — որոնք աշխատեցին կիրառել սնտեսական մատերիալիզմի մեթօտը կրօնական պէս-սպէս երևոյթիների աշխարհում :

Էնգելսը տեղ է արդէն բանաձևեր իր նշանաւոր աշխատութեան մէջ : Ահա նա .

«Կրօնը ոչ այլ ինչ է , բայց եթէ ֆանտաստիկական անդրադարձում մարդկանց գլուխների մէջ այն արտաքին ուժերի , որոնք տիրապետում են նրանց սոօրեայ կեանքին , — անդրադարձումն՝ որի մէջ երկրաւոր ուժերը գերերկրաւոր (überirdische) ուժերի բնաւորութիւն են ստանում : Պատմութեան սկզբներում նախ և առաջ բնական ուժերն էին անդրադառնում . . . բայց շուտով նրանց քով երևան են գալիս հասարակական ուժեր , որոնք թւում էին արդէկանց նոյնքան օտար և սկզբում նոյնքան անբացատրելի , տիրապետում էին նրանց՝ նոյնպիսի կարծեցեալ բնական անհրաժեշտութեամբ , ինչպէս և բնութեան ուժերը : Երևակայական էակները , որոնց մէջ սկզբում անդրադառնում էին բնութեան խորհրդաւոր ուժերը դառնում են ալգոլիտով , հասարակական սոսորդելիներ , սուրբիբուսներ , դառնում են պատմական ուժերի ներկայացուցիչներ . . . իսկ զարգացման աւելի հեռուոր աստիճանի վրայ բարձրագոյն աստեածների բնական ու հասարակական բոլոր աստիբուսները միացւում են մէկ ամենակարող աստեածոյ մէջ . . . որը ինքն ևս անդրադարձումն է վերացական մարդու : Այդպէս ծագեց միաստեածութիւնը» : (*)

Քիչ յետոյ էնգելս մասնանիչ է անում այդ հասարակական ուժերը . դրանք են , սնտեսական յարաբերութիւններ , արդիւնագործութեան միջոցներ , սնտեսական ճգնաժամեր

եւայն : Հեշտ ու սէմպլիսա (պարզունակ) լուծումն՝ մի նոկալական պրօբլէմի . . .

«Հասարակական կացութեան վրայ իշխող ուժը ասորանքային արդիւնագործութիւնն է , — ստեւ է աւելի որոշ կերպով մի ուրիշ մարքսիստ , Ֆրանց Լիւսգենաուե (*) : Նա ծանրանում է ապրանքի ֆէտիշային , խորհրդասոր բնաւորութեան վրայ , որ արդէն յայտարարել էր Կարլ Մարքս իր «Կապիտալ»ի մէջ : Ապրանքը , թէպէտև մարդկային աշխատանքի արդիւնք՝ ստանում է անբարձեցիկ , միատիկական (խորհրդասոր) կերպարանք և իշխում է մարդկանց վրայ : Մարդու ուղեղը վերապրում է նրան գերզգայնական յատկութիւններ . այդպէս օրէնակ , Լիւտզենաուեի վկայութեամբ , դրամը աստեածացւում էր հոգեայելիների մէջ» :

Նոյն մտքերը յաճախ անտիտիս կրկնում են մարքսիստական գրախնտութեան մէջ : Բացատրութիւնը օրիժինայ է , ինքնատիպ , բայց հեռու համոզիչ լինելուց : Մի քանի սիմպլիսա ու թեթե խորհրդաժութիւններով՝ ապրանքի , արդիւնագործութեան ու սնտեսական ճգնաժամերի մասին՝ չեն լուծել կրօնի ահագին հարցերը : Արդեօք բրանժանների պանթէլիզմը կամ Իսրայելի միաստեածութիւնը նոյնպէս ապրանքային արդիւնագործութեան կամ ուրիշ հասարակական ուժերի անդրադարձումներ են : Եւ ինչո՞ւ այդ անդրադարձումը մի տեղ (Հրէաստանում) կատարւում է մարդանման (անորօգօթօրֆ) միաստեածութեան կերպարանքով , մի այլ տեղ (Հնդկաստանում)՝ վերացական մօնիզմի , մի երրորդ տեղ՝ բուդդայական Նիրվանայի ձեւով եւայն . . .

Ահա խնդիրներ , որոնց լրջօրէն ու գոնացուցիչ կերպով պատասխանեց՝ դիւրին բան չէ : Մենք կարող ենք տեղմարքսիստական թէօրիոյի համաձայն , որ երկնային միտակտութիւնը — դիցուք քրիստոնէական միաստեածութիւնը — անդրադարձումն է երկրաւորի . բայց դրանով դեռ չբացատրեցինք միաստեածութեան էութիւնը : Մենք կարող ենք համաձայնել , որ կրօնը — դիցուք դարձեալ նոյն քրիստոնէութեան

(*) Fr, Engels, Herrn Eugen Dührings Umwälzung der Wissenschaft

(*) Natürliche und soziale Religion

թիւնը — հոմաշխարհային դարձաւ այն ժամանակ, երբ ապրանքային արդիւնագործութիւնը, առևտուրն և հաղորդակցութիւնը բաւականաչափ զարգացել էին, բայց դա դեռ չի նշանակում, թէ այդ առևտուրն ու արդիւնագործութիւնը պատճառ են քրիստոնէութեան տարածման (նրանք միայն նրպատող պայմաններ են)։ Եւս առաւել՝ այդ գործօններով դուք չէք բացատրի քրիստոնէութեան դժգոյնական էութիւնը, ինչպէս որ չէք բացատրի առևտրով ու արդիւնագործութեամբ մատերիալիզմի, իդէալիզմի, պոսիթիւիզմի հինաւուրց փիլիսոփայական վարդապետութիւնները։ Վերջապէս, և թէ մեռելապաշտութեան հիպոթեզը վերջ ի վերջոյ յաղթանակէ կրօնական գիտութեան առաջ — որ հաւանական է — և թէ հաստատուի, որ իրօք սկզբից ի վեր մաշիւր հոգիին է պաշտամունքի առարկայ եղել, որ նա է անձնաւորել ընտելեան այլևայլ ուժերի մէջ, որ մի խօսքով մեռելապաշտութիւնը կամ մարդապաշտութիւնն է բոլոր այլազան հաւատալիքների բուն աղբիւրը — ապա այդ դէպքում էնգելսի և ուրիշ մարքսիստների տեսութիւնը զուտ բնական կրօնի մասին (պատմութեան սկզբներում) ապա մարդարանական, անհրաժեշտ իսկական կրօնի մասին (պատմութեան ընթացքում) — այդ տեսութիւնը դժուար կը դիմանայ քննադատութեան։

* *

Մարքսիզմը, անշուշտ, կրօնի մէջ ևս, ինչպէս արդէն չէտեսցինք նախնիների էջերում, կարող է սեղ-տեղ կիրառութիւն գտնել. — թէկուզ հէնց հին Եգիպտոսի ու այլ երկիրների կենդանապաշտութեան և ուրիշ հաւատալիքների մէջ. և դր, կատուն, կոկորդիլոսը հայն սրբացրում էին, դուտ, ի հարկէ, սնեխական պատճառներով։

Ներքոսի արդաւանդ աւազանում՝ եղը, երկրագործ ժողովուրդի հարատւութեան գլխաւոր գործիքն էր. կատուն էլ ոչնչացնում էր վնասակար միներին եւ այլն։ Յիշենք և արեգակի պաշտամունքը, որ անգլիացի Տայօր, դեռ Մարքսից ու էնգելսից առաջ, վերագրել է մարդկանց պարապմունքների եղանակին։

Տարակոյս չկայ, որ կրօնները և մանաւանդ նրանց էտիկան, բարոյախօսութիւնը ազգում են հասարակական տիրող պայմաններից։ Մովսիսական «մի՛ գողանար» պատիրանը չէր կարող ի հարկէ ձեւակերպել մի այնպիսի ժամանակում, ուր ամէն ինչ համայնական սեփականութիւն էր (այդպէս էր գրեթէ ամէն սեղ պատմութեան սկզբնական շրջաններում)։ — այդ տեսակ պատիրանները, որ պահանջում են յարգել մարդկանց սեփականութիւնը, կարող էին, անշուշտ, դրել միայն քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանների վրայ, երբ հին, քայքայւած համայնական սիստէմի աւերակների վրայ թագաւորիկ էր արդէն մասնաւոր սեփականութեան ուժերը։

Բայց մարքսիստների տնտեսական մատերիալիզմը, կրկնում ենք, չարաչար կազում է, երբ նա յաւակնում է լոստաբանելու բարձր կրօնների ծագումը, նրանց դժգոյնին կերպարանքը։ Դժգոյնը առհասարակ փիլիսոփայութիւն են և, մանաւորապէս, քրիստոնէական միաստածութեան դժգոյնը չափազանց ազգւած է նախաքրիստոնէական փիլիսոփայութիւնից։ Իսկ փիլիսոփայութիւնը, ինչքան էլ եռանդ թափեն մարքսիստները, չի վերածւի սնեխական պայմանների. և Մարքսի ծանօթ յայտարարութիւնը՝ թէ ճիւղական կեանքի արտադրութեան ձեւը պայմանաւորում է հոգեկան կեանքի պրոցէսը, (*) չի աղաւսնում փիլիսոփայութեան վերաբերմամբ։ Անհնարին է և մինչև օրս մարքսիստները չեն կարողացել բացատրել փիլիսոփայութեան դարաւոր էւօլյուցիան, նրա այս կամ այն վարդապետութիւնը՝ տնտեսական, արդիւնաբերական պատճառներով։

Մարքսի թէօրիան կազում է և այն դէպքում, երբ ուզում է բացատրել մեծ, հոմաշխարհային կրօնների տարածումը, (քրիստոնէութիւն, մահմեդականութիւն, բուդդայականութիւն)։ Նա մեղանչում է իրականութեան, ճշմարտութեան դէմ, կամենալով այտուտ ամէն բան վերածել դասակարգային յարաբերութիւնների, ազքատութեան, զանգւածների տառապանքներին, պրօտարիացման և կոմունարով ջնջել, իրբե-

(*) K. Marx, Zur Kritik der politischen Oekonomie.

ինքնուրոյն գործօն, այն մեծ, անդիմադրելի սլո՛ր՝ կրօնական անխառն յափշտակութիւնը, գաղափարական կատաղի ֆանատիկոսութիւնը՝ որ մղել է դարերից ի վեր այնքան մարդկանց, հաւատացեալներին դէպի բարձր անձնագոծութիւն, դէպի դժոխսային շարչարանքներ, դէպի խարոյկ . . .

Ոչ մի անտեսական-արդիւնաբերական խաղ չի կարող մեկնարանել առաջին քրիստոնեաների այն անօրինակ, այն խօրական յափշտակութիւնը ընդ գաղափարով՝ որ մզում էր ն բանց դէպի զանգւածային յօժարակամ նաճատակութիւն, որ առաջ բերեց մի շտեմուած, ողբերգական էպօպէ: Ամէն մի փորձ՝ կիրաւելու անտեսական մատերիայիցմը այդ տեսակ երեւոյթների աշխարհում — չարաչար սլոխի վիժէ:

Կրօնական բնոյթ ունեցող բազմատեսակ շարժումների մէջ — ինչպէս Սոցալկրաց արչաւանքները, Ռէֆորմատիօնի (Սոցիալականութեան) մուտքը, Նոյնիակ դրանից առաջ Եաննուսի ձեւնարկած մեծ հերձուածը — այդ տեսակ շարժումների մէջ դեռ կարելի է որոշ տեղ տալ անտեսական գործօններին, արդիւնաբերութեան, սեփականատիրութեան պայմաններին, գասակարգային յարաբերութիւններին, բայց միանգամայն բրտնադրօսիկ ու կամայական է թւում, երբ Կարլ Կաուցկին ճիշտում է նոյն անտեսական, գասակարգային պայմաններին վերածել անգամ այնպիսի երեւոյթներ, ինչպէս միջնադարեան միտախցիցմը (խորհրդագաղաչութիւն) և քրիստոնէական ճիշտնողութիւնը կամ ասկետիզմը: Որքան քաջաշուկ կայ Կաուցկու այս սողերի մէջ, որ գանում ենք նրա «Սոցիալիզմի պատմութեան» էջերում:

«Երբ հնադարեան հասարակութիւնը կործանուեց, բնկաւ, այն ժամանակ նրա գիտութիւնն ևս սկսեց բնկնել: Մարդիկ միշտ աւելի և աւելի փախչում էին իրական աշխարհից — որի գծում ու խղճովի կերպարանքը ճնշում էր նրանց — փախչում էին դէպի անգրիրական, երեւակայական, միտախկական աշխարհը, որ նրանք կարող էին կերպարանաւորել իրենց կարիքների համաձայն: Այնտեղ, ուր մարդիկ յուսահատուած են իրենց սեփական անձից, այնտեղ նրանց սլոխի օգնէր գերբնական էակների սլո՛ր»: (*)

(*) Die Geschichte des Sozialismus.

Կեանքն անտանելի է, լի ցաւերով, տառապանքներով: Ուստի և մարդիկ, զրկւածները, հարստահարւածները երեսէին դարձնում այդ կեանքից և աղաւինում էին անդր-իրականին, գերբնականին . . .

Ահա ձեզ մի բացատրութիւն — ոչինչ չատղ և միանգամայն բունագրօսիկ: Նոյն եղանակով մարքսիստներից ոմանք բացատրել ենուզում նաև առաջին քրիստոնեաների մասսային, տանջայի և յօժարակամ զոհողութիւնները . . .

Ինչու, սակայն, մեր ժամանակներում թշւատների, հարստահարւածների մէջ չեն նկատուած միտախցիցմի (*) ու ճիշտնողութեան երեւոյթներ: Չէ՞ որ այսօր էլ այդ թշւատները, կեանքից դժգոհները — լէզէօններ են:

Կաուցկին նախատեսում է այդ առարկութիւնը և «ղուրս է սահում» հետեւեալ խօսքերով:

«Այն զեղուն, յորդառատ միտախցիցմը, որ բնթանում է ձեռք ձեռքի տւած ճգնութեան հետ խորթ է ժամանակակից պրօլէտարիատին: Այսօր ամէն մէկը, որ կոչը չէ ժամանակի նշանակների դիմաց՝ տեսնում է, որ սոցալզան պատկանում է պրօլէտարիատին, որ բոլոր միւս գասակարգերը միշտ աւելի և աւելի բնկնում են՝ սօցիալական արժէքի, քաղաքական իշխանութեան, իմացականութեան և բարոյս կան ուժի տեսակէտից: Այսօր ինքը իրականութիւնն է, որ խոտտանում է պրօլէտարիատին յաղթանակ և խոտտանում է այնքան աւելի բարձրաձայն, որքան աւելի խոր է ուսումնասիրուած այդ իրականութիւնը և որքան աւելի յստակ են երևան գալիս այսօրեան հասարակական զարգացման տնայեցեցերը, ճիշտումները: Գիտութիւնը, որ իր կոչումն է դարձնում ճշմարտութեան անակնած հետազօտութիւնը — այսօր նա

(*) Միտախի սովորաբար կոչում են այն անանկուսիս քրտուարած մարդիկ, որով երեւակայում են, քի իրեմի ուղղակի յարաբերութեան մեջ են Ասուծոյ հետ, մի ևսակ մեքիմ բուսաւորութեան անկուսում են Ասուծոյ հոլքիւնը, նրա խորհուրդները: Այդպիսի մարդիկ ստեւարակ փախչում են հասարակական կեանքից, նրաժարում են կենսական վաշիվներից և խորատուզում են հակաբարձ մտախցուցութեան ու փակսասիկական գտանցանկների մեջ:

ծառայում է միայն պրօլետարիատի շահերին . այդ դասակարգն է միայն , որ շահագրգռւած է ճշմարտութեան հետազոտութիւնով . . . Ճիշդ է , այսօր վերափոխ ծաղկում է միատիցիզմը , անդրերկրային ուժերի կարօտը , բայց նա ծաղկում է ոչ պրօլետարիատի , ոչ կոմունիստների մէջ — նրանք դարձել են իրականութեան փիլիսոփաներ , մատերիալիստներ — այլ ունենոր դասակարգերի մէջ , որոնք գգում են , որ գալիս է իրենց վերջին ժամը» :

Անա այսպիսի բռնադրօսիկ , ծայրայեղօրէն լաւատես յայտարարութիւններով է , որ մարքսիզմի ամենահեղինակաւոր Հարդապիստներից մէկը ձգնում է լուսարմնել միատիցիզմի ու ձգնութեան մի ժամանակ համատարած երեւոյթը :

Այդպէս ուրեմն , եթէ վերջին երեք դարերի ընթացքում կապիտալիզմի արտադրած արեւմտեան պրօլետարական զանգւածների մէջ չէին տարածւում միատիցիզմն ու ձգնութիւնը , (չքնաշած այդ զանգւածների սոսկալի թշւառութեան — նիւթական մաււոր ու հոգեկան) — դրա պատճառը , բառ կառուցիւ ա՛յն է , որ պրօլետարիատը և առհասարակ աշխատատաւոր , իրաւազուրկ մաստաները «գիտակցել են» միշտ (գուցէ նոյնիսկ 17րդ , 18րդ դարում) , որ սպազան իրենցն է , որ գիտութիւնը իրենցն է , իրենց գասակարգային շահերին նրւիրւած . . .

Քաշքշուկը այնքան ակնհերւ է , որ Հարմեր նոյնիսկ ծանրանայ : Ապագայ յաղթանակի գիտակցութիւնը ոչ թէ 17րդ , 18րդ , 19րդ , այլ նոյնիսկ այսօր 20րդ դարի սկզբում գեւկաղմում է արեւմտեան աշխատաւոր զանգւածների հաղիւմիայն 4—5% -ի սեփականութիւնը . . . Որքան , ուրեմն , անհիմն լաւատեսութիւն և կամայական բացատրութիւններ . . .

Բոլոր ցաւը նրանում է , որ վարդապետական միակողմանիութեւնը ուզում է անպատճառ ժխտել կրօնափիլիսոփայական որոշ հոսանքների ուրոյն , աւտօնօմ , գոյութիւնը , ուզում է անպատճառ վերածել ամէն բան առանց բացատրութեան , նոյնիսկ փիլիսոփա-հոգեբանական յատուկ երեւոյթ-

ները՝ տնտեսական ազդակին , նիւթական արտադրութեան ձևերին , դասակարգային յարաբերութիւններին : Ուրիշ խօսքով՝ մարքսիստական գօգնատիզմը ուզում է զօնով ենթարկել կեանքը իր նախորդած բանաձևերին , եթէ անգամ իրականութիւնը իր բարդ կիւճիւններով ու կլեկններով բացարձակապէս բմբոստանայ այդ բանաձևերի դէմ :

Շարունակինք մեր տեսութիւնը և փոքր ինչ կանգ առնենք կրօնական էւօլիցիայի վերջին շրջանի — միաստածութեան վրայ : Մենք տեսանք , թէ ինչպէս ամեն սեղ բազմաստածեան սխտանների մէջ , աստածներից մէկը միշտ աւելի և աւելի գերիշխող դասնալով՝ նշմարւում էր ձգտում , անդեկնց՝ դէպի մօնօթէիզմ կամ միաստածութիւն :

Ո՛րտեղ և ի՛նչ պայմաններում է ծնունդ առել մօնօթէիզմը — պարզ , դրական վկայութիւններ չկան : Ոմանց սակով նա երևան է եկել առաջին անգամ Հրէաստանում , ուրիշների սակով՝ կրօնական այդ սիստէմի առաջին ձևը պէտք է փնարել Բաբելոնում :

Հրէաստանի մէջ մենք տեսնում ենք միաստածութիւնը Մոփսէոսի օրով : Մինչ այն՝ Իսրայելի զաւակները դաւանում էին նոյն կողիս հաւատալիքները , որոնց մասին խօսեցինք : Ժամանակի ընթացքում Եհովայի պաշտամունքը գերիշխող դարձաւ : Եհովա կամ Եհանօ դարձաւ իսրայելի միակ աստածը : Ֆոթորկի և անձրևւի Աստածն էր նա , երկնային գահի վրայ բազմած , նման հեղինների Չէփսին : Հրեկէն փայլի , լափող , հրեհնօղ կրակի լուսավառ աստածն էր :

Որտաը նրա ձայնն էր , քամին նրա չունչը , լոյսը նրա զգեստը : Նա մարդու կերպարանք ունէր , կատաղի ու ցաւկառ . նրա մոլեգնութիւնը յաճախ մարդկային զոհերով էին տոնքում : Մե՛ծ էր , ամենակարող , նա հրամայում է և արեգակը կանգ է առնում , ծովը երկու մասի է բաժանւում : Ամբողջ բնութիւնը՝ նրա քմահաճոյքի առարկայ : Իսրայելի սանձարձակ ինքնատիրութիւնն է , որ ցուում է Եհովայի մէջ — նկատում է Ֆօլքերախ : Բռնակալ էր Եհանօ , նա պահանջում

էր անպայման հնազանդութիւն, հակառակ դէպքում կր նիւթէր ամենածանր աղէտներ: Նա պահանջում էր որի անցկացնել անհաւատներին (Այդ գիծը յետոյ անցաւ Իսլամի բարոյախօսութեան մէջ): «Մի՛ չնիր, Մի՛ գողանար» և այլ պատերազանները վերաբերում են միմիայն հաւատացեալներին: «Մի՛ չնիր քո հաւատակիցների վերաբերմամբ», իսկ անհաւատներին բնաջինջ անել — ասել է՝ ասուածահաճոյ գործ կատարել:

Մի խոշոր թերութիւն ունէր Ենոփան. նա «տիեզերական» էր: Նա դեռ խրաջէրացոյ ազգային ասուածն էր: Բայց անհետզհետէ քաղաքակրթութիւնը նորանոր նւաճումներ է անում և զրա հետ միասին կրօնը կամայ-կամայ զուրս է գալիս նեղ ցեղային շրջանակներից, դառնում էր միջազգային: Այդպէս և զաւ Մովսիսականութեան անմիջական յաջորդ՝ Քրիստոսնեութիւնը: Քրիստոսի օրով Ենոփան ստացաւ տիեզերական բնաւորութիւն: Յիսուս Նազովրեցու ասուածը՝ նոյն Եսօնն է, մարդկային կերպարանքով, աւելի վերացական, աւելի մեծ, գերբնական վեհութեամբ, աւելի կատարկազորուած: Նա ամենազոյ է, ամենազէս և ամենաողորմած:

Քրիստոնէութիւնը...

Չնայած Ռընանների և Ետրաուսների ասուածը հասարակութիւն մինչև օրս դեռ միութեան մէջ են այդ մեծ կրօնի առաջին սկզբնաւորութիւնները, ինչպէս և նրա հիմնադրի անձնական կեանքն ու գործունէութիւնը: Մի բան միայն պարզ է. Քրիստոնէութիւնը մեծ փոխառութիւններ է արել նախնիթաց կրօններից՝ թէ դօգմային և թէ բարոյախօսական տեսակետից: Յունաստանը իր փիլիսոփայական հանձարներով, Եգիպտոսը, Պարսկաստանը, անգամ Հնդկաստանը, ուղղակի կամ անուղղակի ազդել են այդ նշանաւոր կրօնի վրայ: Արեւելքի և Արեւմուտքի ամուսնութիւնից առաջ եկաւ նա, որպէս մի անսակ սինթիզ, համադրութիւն, որ վիթխարի, տիեզերական հոսանքի պէս հեղեղեց մարերը: Նա հաստատեց ամուր, բիւրեղացած դօգմեր, սահմանեց ամէն տեղ կղերական դասակարգեր, կատաներ: Հարածեց գիտական-փիլիսոփայական

մարզանքները, բռնացաւ ազատ մտքի վրայ: Կրօն ու եկեղեցի ծաւալեցին միահեծան տիրապետութիւն — երկնային և երկրաւոր: Հերձաւոր դարձաւ մի զարնուրելի խօսք: Մի հար փիլիսոփայութիւն ծնունդ առաւ, քրիստոնէական ոգով տագորւած, և տարածեց Ալեքսանդրիայից դէպի Աթէնք ու Հոօմ. մի փիլիսոփայութիւն՝ էպպէս կրօնական, ասուածաբանական: Գիտութիւնը, հասարակական խնդիրները դուրս քշեցին նրա շրջանից. կրկնային թագաւորութեան հագար և զաւ այդ նոր իմաստասիրութեան միակ ասարկան:

Որքան ջատագովեցին այդ կրօնը, դարերի բնթացքում, բայց և որքան նա զուրկ է ինքնուրուշուութիւնից: Այն որոշ զուայիզմը (երկուութիւն), որ գոյութիւն ունի Քրիստոնէական սիստեմի մէջ, — փոխառութիւն է Պարսկաստանից: Ստոնան, որին Յիսուս խաւարի թագաւոր է անւանում, Պարսից Ահրմանի ընդօրինակումն է: Քրիստոս ասուածորդին աշխարհ է եկել՝ փրկելու մարդկութիւնը խաւարի տիրապետութիւնից և յաղթահարելու ստոնանցին: Ճիշդ նոյն հաւատալիքը՝ Պարսկաստանում. Որմիզդը, յոսի ասուածը, վաղ թէ ուշ պիտի յազիթէ Ահրմանին:

«Տիեզերական փրկչի» գաղափարը մենք գտնում ենք զեռ Բուդդայական Նիրվանայի մեջ (*): Երբորդութեան գաղափարը ևւս հանդիպում ենք հնդկական (Բրահմանիզմի) և Եգիպտական կրօններում. բայց նա արծարծուած էր և նախաքրիստոնէական փիլիսոփայութեան մէջ՝ մանաւորապէս Ֆիլիսոս անունով հրէա փիլիսոփայի գրւածքներում, (Jean Jacques Gourd, Դասախօսութիւններ):

(*) Երկուութիւն. — Բուդդիզմը ասում է, որ վիշտը այս աշխարհի գոյութեան անբաժան հետեւանքն է, որ ցանկութիւնը վշտի ազդելն է, որ այս ցաւոտ ու տանջալի դոյութիւնը մի հսկայական պտորանք է, եւ լեւզիծն, որ ալդ պտորանքը ևւ ցանկութեան պտածուած տիեզերական վեշտը կարող են դադրել... Նիրվանայով, այսինքն ներկայ ցնարկան դոյութեան ջնջումով («Նիրվանա») բաւուցի նշանակում է շունչի կտտուեալ բացակայութիւնս նա վերջ պիտի դնէ տիեզերական շարժման մետամերֆօզին, մշտնջինաւոր ծնունդներին, փորձութիւններին և տաւաւորանքներին, մի խօսքով, կեանքի անդադրում ու խօլական ելեւէջ-

Ինքնուրոյնութիւնը բացակայում է եւ բարոյախօսական վարդապետութեան մէջ: Ճգնաւորութիւն, խնամարձութիւն եւ նման իրը՝ առաքինութիւններ քարոզել են նոյն Հնդկաստանում եւ ուրիշ տեղեր: Քրիստոնէութեան գլխաւոր, կարողինալ առաքինութիւնն է — Սէր:

«Սիրի՛ր քո մերձաւորին» — ահա հուշակաւոր հրամայականը, որ հնչեց մեզնից քսան դար առաջ, հաւասարութեան ու եղբայրութեան նշանաբանների հետ, եւ որ ունեցաւ մեծ, համաշխարհային նշանակութիւն, իրրեւ մի վեհ, համամարդկային սկզբունքի ծանուցումն, — թէպէտեւ նրան միժախեւած էր ամուլ մնալ Կանտի «վճռական հրամայականների» պէս, թէպէտեւ նա դարերի ընթացքում մի նշանախեց անգամ չբոխեց մարդկանց դատակարգային յարաբերութիւնները, չբռնկեց գերի, սարուկի, սրբոխարի տառապանքները...

Քրիստոնէական բարոյախօսութեան մէջ կան, իրաւ է, կէս — կօմմունիստական, հակաբուրժուական գբութիւններ: Ո՛ր պիտի ահարկու շանթեր էին արձակում — կեղեցու հայրերը հարստութեան դէմ... «Աւելի գլխութեամբ բռնար կ'անցնի սակցի ծակով, քան թէ հարուստը կը մտնի երկնային բարայութիւն»: «Երանի աղքատաց — զի նբանք մ'ըայն կ'արժանանան նոյն արքայութեան»: Ըստ Մատթէոսի աւետարանի՝ Յիսուս ասել է մի ունեւոր երիտասարդի. «Եթէ կ'ուզես կատարել լինել, գնա՛ ծախիր քո բոլոր ունեցածը եւ բաժանիր շքատարներին»: Յիշենք, վերջապէս, որ առաջին քրիստոնէականները հիմնել էին բողոքական համայնքներ կօմմունիստական

ներին երբ այդ հսկայ պատրանքը, այդ տանջալի արձայնութիւնը կը վերանայ, այն ժամանակ կը տիրէ խիտական, լիտկատար իրականութիւնը, համայնապարփակ ու անշարժ մի գոյութիւն — Նիքոլանտան (A. Fouillée, Histoire de la Philosophie): Այդպէս է, որ պիտի փրկւի տիեզերքը յաւերժական տառապանքներից... եւ այդ Նիքոլանտային, այդ անէպոման հասնելու համար, Բուդդան կոչ է անում մարդկանց՝ հրաժարել խաղաւածէն ցանկութիւնից, արմատախիւ անել սպրեւու ամէն իրձ...

Այս սարսափելի թեզիսները պերճախօս կերպով արժարժեցին 19րդ դարի յուսետիս փիլիսոփայութեան մէջ, որի գլխաւոր ներկայացուցիչներն են՝ Եօպէն Ծառուէր եւ Հարաման:

(համայնապարփակ) հիմքերի վրայ. մտնաւ որ սեփականութիւն չէր ճանաչում քրիստոնէաների այդ նախնական համայնքներում. ծագում էր մի տեսակ պարզ, նահապետական կօմմունիզմ, որ անշուշտ, բողոքական լաւ կողմեր ունէր, բայց որ չէր կարող տեսական լինել: Գեղեցիկ սկզբունքները զարուսեցին անտեսական էւօլիցիայի գաժան օրէնքներին եւ կամայկամայ օղբ ցնդեցին:

Ինքը քրիստ. վարդապետութիւնը հետեւողական չեղաւ նոյնիսկ թէօրիստում: Կան ուրիշ կէտեր նրա մէջ («Տո՛ւր կարբինը կայսեր» եւ այլն), որոնք ուղղակի հակասում են կօմմունիզմին, հաւասարութեան եւ եղբայրութեան: Յամենայն դէպս, քրիստոնէութիւնը, յանձին իր նեղնակաւոր փաստաբանների, վաղուց ի վեր նւիրագործել է գոյութիւն ունեցող սեփականապարփակ, դաւախարդային յարաբերութիւնները: Այդպէս, միջնադարեան սխօլաստիկայի պարագլուխ եւ կաթոլիկ քրիստոնէութեան աշխարհահասակ ջատագով Թոմաս Ակվինացին հանդիսաւոր կերպով նւիրագործում էր գերութեան սխտեմը, համարելով այն՝ ասուածային Կաթիժ մարդկանց մեղաց հաւաւ... Նոյն ձեւով հուշակել է եւ կրօն յախտեանական բատարագումը՝ տգամարդուն, եւ այլն:

Սիրոյ քարոզը եւս նոր չէր: Բուդդիզմը քրիստոնէութիւնից դեռ շատ առաջ սրբագործել էր սրբութեամբ կամ այլ սիրութեան դրացումը: Բուդդան քարոզել էր սէր, անձնութեան լիակատարութիւն ու ողորմաբերութիւն՝ ոչ միայն դէպի մարդիկ, այլ եւ դէպի կենդանիները:

Միւս կողմից, պէտք է նկատել, որ քրիստոնէութեան

(*) Բարեբախտաբար, չը նայած այդ խոր հակասութիւններին — դուրսէ հէնց շնորհիւ նրանց — Քրիստոսի կրօնը կարելի է լինում հարկել առմէն ձեւով, յարմարեցնել նոր գաղափարներին ու հասանքներին ճեղքերական սիրոյ եւ հաւատարմութեան սկզբունքը — թէկուզ թէօրիստայէս միայն հուշակեւած — հնարաւորութիւն է տալիս յարմարեցնելու այդ կրօնը ժամանակակից այսպէս կոչւած («հաւասարական վարդապետութիւններն» (Théories Egalitaires) մտածաւարայէս լինելիւարութեան սոցիալիզմին:

հիմքում կան էգոիստական, հասկան չարժատիվներ: Եզրայրու-
րութիւնն է քարոզում սարգսոյ վարձատրութեան խոստում.
ներով (երկնային դրախտով) ու գժսիքի սպասնալիքներով...
Այդպիսով Քրիստոսի հրահանգած սէրը մաքուր, անազարս չէ:

Բայց կայ մի ուրիշ ծանրալիչութեան թերստնէական
սիրոյ վարդապետութեան մէջ. վերջինը հիմնւած է ոչն
սէրի վրայ, որ պիտի տաճուի գէպի Քրիստոս: Հրահանգւում է
է սիրել Քրիստոսին եւ նրա հայր Աստուծուն, որը իր սրղուն
դճարերից է մարդկանց փրկութեան համար: Ով որ սիրում է
Քրիստոսին, արժանի է Աստուծոյ սիրոյն. իսկ ո՛վ որ չի սի-
րում նրան — նորվում է... Այդ սեղից առաջնում է ան-
ազօնիզմ, հակամարտութիւն քրիստոնեաների եւ ոչ-քրիս-
տոնեաների միջև... Աստուծոյ իսկական դաւաններն են միայն
առաջինները... (*)

Այդպիսով սէր եւ հաւատ հանդիսանում են, իրրեւ
միանգամայն հակադրա կառէգօրիններ: Սէրը տիեզերական
է, նա խորութիւն չի գնում հասարակացի եւ անհատափ
միջև: Իսկ հաւատը, բնդհակառակը, անհամբերաց է, նեղ,
սարամեղձ, նա ճնշումն է գործ գնում մարդու խղճի վրայ,
նա խորչում է «անհատաներից», յաճախ հարձում է նրանց:
Այդպէս է եղել մինչև օրս: «Սէրը ինքնին անհատա է, իսկ
հատա՞ անսէր» (Die Liebe ist an sich ungläubig, der
Glaube aber lieblos) — Ծայրբախի այս նշանաւոր խօսքը,
անշուշտ, խորունկ ճշմարտութիւն է պարունակում: Մանկատ-
կանութիւնը նախնի գարերում ջնջւում էր գեապիւրներին հրով
ու սրով, իսկ քրիստոնէութիւնը ջնջւում էր «անհատաներին»
հերձածներին հաղածանքով եւ գժսիքի բոցերով: Որպիտի ու-
նագործ արչաւանք: Հէնց որ Քրիստոնէութիւնը դադրեց հա-
լածական լինել, նա ինքը գարձաւ հաղածոյ... Յիշեցէ՛ք միջ-
նադարեան քամնիկի խորոյկները, Զօրգանս Բրունսնիերի եւ
Հուսերի մարտիրոսական մահը: Յիշեցէ՛ք հատուաքննութեան
սարսափները: Միտիան Կարլոս V-ի թագաւորութեան ժա-

մանակ, մօտ 100,000 «հերետիկոսներ» ջնջւել են դահճների
ձեռքով Հոլանդիայում: Հապա Սպանեայում եւ ուրիշ երկիր-
ներում...

Քրիստոնէական բարոյախօսութեան մէջ՝ մեծ սեղ է բըր-
նում եւ հաւակերպութեան քարոզը, որ ճիշդ է, նորնպէս
փոխաւում է Հնդկաստանից, բայց առանձնապէս շեշտւում է
Քրիստոսի վարդապետութեան մէջ: Մի շարք պատերաճներ
կան միանգամայն հակահասարակական բնոյթ ունեցող: Այդ-
պէս, օրինակ, «չարին չարով չը դիմադրելու» նշանաւոր հը-
րահանգը, որ դարձել է Լեւ Տօլստօյի սոցիալ-քաղաքական
դաւանանքի կենտրոն-գաղափարը: Այդ սեւակ պատերաճները
կը մնան կատարեալ անճեթեթութիւն մեր աշխարհում, քանի
դեռ գոյութեան կռիւր օրէնք կը լինի ամէն մի անհատի,
դասակարգի, ազգի ու պետութեան համար: Իսկ երբ կը գան
Քրիստոնէական խոնարհութիւն ու համակերպութիւն քարոզե-
լու բանաւորի ճանկերում գարարեալ գոհերին, — դա արդէն
կը լինի յանցադորձութիւն:

*
*

Ինչ է քրիստոնէական միաստամութեան էութիւնը: Իս-
կապէս, միաստամութիւն, մծծթէրզմ, բառի բացարձակ
մտքով չըկայ: Ինչպէս արդէն յիշեցինք, մի որոշ երկութիւն
մնում է միշտ — Աստուծոյ եւ Ստամանայի երկութիւնը: Բայց
կայ աւելին: Կայ նոյն իսկ սղուբալիզմ, մի տեսակ բազմաստ-
ւածութիւն միաստամութեան մէջ: Կայ «երրորդութեան»
վարդապետութիւնը, որի համեմատ քրիստոնէութեան մեկ աս-
ւածը իրօք բաղկացած է երեք տարրեր աստամներից. Հայր,
Որդի եւ Սուրբ Հոգի: Դրանք երեքն էլ ուրոյն մարդանման
աստամներ են, ինչպէս հնդկական յայնսի երրորդութիւնը —
Բրահմա, Վիշնու, Սիւվա:

Հայր, որդի եւ Ս. Հոգի: Հայր-Աստուածը «արարիչն է
երկնքի եւ երկրի»: Որդին ինքը Քրիստոսն է, Աստուծոյ հա-
րազատ դաւակր: Իսկ Սուրբ Հոգին — մի չափազանց խորճրդա-
ւոր էակ, որ իջել է Ս. Կոյսի վրայ եւ առանց որ եւ է փոր-
ւորութեան կնթարկելու նրա կուսութիւնը, աշխարհ է բերել

(*) L. Feuerbach, Das Wesen des Christenthums (Քրիստոնէութեան
էութիւնը):

Յիսուս Աստածարդուն . . . Աստածարանները գարերի բնիկաց-
քում անթիւ խորազննին մարդանքներ են կատարել, — բայց
այդ երեք անձնաւորութիւնների փոխադարձ յարաբերութեան
հարցը մինչև օրս մնացել է և միշտ էլ կը մնայ մութ, անբա-
րբանելի :

Կայ մի չորրորդ աստածութիւն — ինքը Աւեր Կոյսը,
Մարիամ Աստածածինը, որի պաշտամունքը բնդ գրկում է ա-
հագին մասը քրիստոնեայ մարդկութեան :

Աւերացիք, վերջապէս, այն անձամար սրբերի պաշտա-
մունքը, որ սարածուած է ամբողջ քրիստոնեայ աշխարհում,
սուրբեր՝ սրանց ասջեւ գարերից ի վեր խառնել են ծխամ, եր-
կրագագում են, ազօթում ու ազերում, ինչպէս մի տեսակ
աստածների . . . Եւ այն ժամանակ, ակնհերե է, որ յիրաւի
քրիստոնէութիւնը միաստածութիւն է միայն քեօրիայում
միայն տեսականի և ոչ գործնականի մէջ :

Ինչ է այդ միաստածութեան թէօրիական էութիւնը :

Դա ոչ այլ ինչ է, բայց եթէ Քրիստոսի կամ Մարգ - Աւ-
սուծոյ պաշտամունքը: Աստուծոյ յատկանիչները — սէր, իմաս-
տութիւն, սգորածութիւն ևւայն — սոսկ մարդկային յատ-
կանիչներ են: Իր սեփական էութիւնն է, որ մարդս գնում է
Աստուծոյ մէջ, իր սեփական յատկանիչներն են, սրանցով նա
օժտում է «Գերազդին էակին»: Չէ՛ սր, եթէ մարդկային յատ-
կութիւններ հասնենար Աստած, նա չէր էլ կարող ազդել մարդ
կանց վրայ, չէր կարող գոճացում սոյ նրանց կարիքներին :

Աստածային էութիւնը, ուրեմն, նոյն մարդկային էութե-
թիւնն է, միայն մարբում, սպասում անձատական մարդ
չըջատմեներից, թերութիւններից: Մարդս անկասար է և մ
մանակաւոր — Աստած կատարեայ է, անվերջ, յախան
կան: Մարդ ևւ Աստած — երկու բուեաներ :

Աստածային բնութիւնը էապէս մարդկային բնութիւնն
է, Աստուծոյ մարդեղութիւնը ի գէմս Քրիստոսի, ոչ այլ
է, բայց եթէ նրա (Աստուծոյ) մարդկային բնութեան կոնկրե-
գրացական մարմնացումն :

Լուրվից Ֆոյերբախ ասաջինն էր, որ մերկայրել
«Քրիստոնէութեան էութեան» մէջ՝ աստածութեան այդ մար-

կային բնութիւնը: Մարդս ասարկայացնում է Աստուծոյ մէջ իր
սեփական էութիւնը ևւ պաշտում է այն՝ աւանց գիտակցելու,
որ իր սեփական էութիւնն է պաշտում . . . (*) Յեա նա-
յնք . . . Կրօնական էւօլուցիայի սկզբնական շրջանի մէջ չենք
տեսնում արդեօք նման երեւոյթ: Այն հազարաւոր ուրական-
ները, սրանք վիստում էին նախամարդու երեւակայութեան
մէջ՝ արդեօք մարդկային հագիներ չէին . . . Այդպէս է գոնէ
յարասարում մեւկապաշտութեան թէօրիան: Թերեւս, ուրեմն,
շախագանցութիւն չի լինի սոսկ՝ որ իր երկարատեւ բնա-
շըջման բնիկացքում կրօնը լուս էւրբեան մնացել է անսե-
փոխ: Մարդու հագին է, նրա էութիւնն է՝ պաշտման ասար-
կայ . . .

(*) L. Feuerbach, Das Wesen des Christenthums

Գ Լ ՈՒՆ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԲՆԱՇՐՋՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՆԱԽ ՔԱՆ ԴԱՐՎԻՆ

Աստածաշնչի ոգիւր.— Եղիսակաւորութիւնը սիեզերական շինի մէջ.— Գիտութիւնը և «Կերթականը».— Մեծափիգիսայի խնդիրները գիտութեան սուշու.— Բնութեան օրկեմները և սեղծագործութիւնն ex-nihilo.— Ոյժ-նիւր կամ սիեզերական Սուրբանց.— Մոկիզմի վարդապետութիւնը.— Երեսպարտութեան ռանիքներ՝ Մօրչոս և Փօիւս.— Միս և ուշիւր.— Մի է անբողք բընութիւնը.— Natura non facit saltus.— Բնական սեղծագործութիւն կամ Էւօլյուսիօն.— Երագոյն բնագիտութեան սկզբնաւորութիւն.— Լիկեկ և Կիւլի.— Կասասոփայի թորիւն.— Կարլիկիզմի կախարհապետներ.— Կիւրիս, Սիկե, Կաւարի.— Տեսակների ծաղման պրօքիւր:

Գրիտանէական աստածարանութիւնն էր, որ Նիմուկիով Հին Կտակարանի մեկնութիւնների վրայ, արծարծեց գերբնական արադագործութեան ոգիւր, շեշտեց սնննաւորւած ու միանեման Աստուծոյ գաղափարը, որ դուրս է և բարձր է Բնութիւնից, որ ստեղծեց է Տիեզերքը ոչնչից, ստեղծեց է մարդուն փոշիից, որ յօրինեց է բնութեան օրէնքները, որ կարող է փոխել նրանց, քանզեղ, վերջինեղ ստէն բան՝ իր կամքի ու քմանածոյքի համաձայն:

Եւ այդ ոգիւր երկար դարեր թաղաւ սրեց մարդկութեան գիտակցութեան վրայ... Թաղաւորեց՝ չընայած իր կապիտ ու միամիտ պարտեակութեան, չընայած իր սնկապ ու երկրան արամարանութեան, սրի հանդէպ այսօրւան և բազայի պատանին գարնանքով թօթուած է ուսերը և հարց տալիս.

— Աստուծ է ստեղծեղ արեզերքը, հազա սօլ է ստեղծեղ Աստուծուն...

Իօզմն իշխեց ուրիշ, նման, ազգակից վարդապետութիւնների հետ, սրովհետե սլէտք էր մի ելք գտնել հակապահան ու խորհրդաւոր լարիքիւնից, սրովհետե հարկ էր սրել լուծուած սաղ արեզերական ստեղծածներին, մի շարք տանջող ու կնճաւ «խնչու»-ներին: Հարկ էր բացատրել այն նրաչայի

ժամացոյցը, այն հոյակապ մեքանիզմը, ուր արեւմ է այնքան կարգ ու ներդաշնակութիւն, ուր ամէն ինչ թւում է նրպատակաւոր, ուր ամէն բան — ստեւ մի տեսակ նախասահմանեղ ու զգութեամբ — մըււմ է դէպի սնդուլ կատարելագործում: Եղատակաւորութեան զոյգութիւնը արեզերական կատարելագործութիւն մէջ եղեղ է միշտ ևւ այսօր ևւ շարունակում է լինել աստածարանների ու մեծափիգիկների մտահոգութեան ստարկան ևւ նրանց պատճառարանութեան ամենազլխաւոր նեցուկներից մին:

Վիթիւարի ժամացոյցը սլէտք է սննեայ և մի անտար, գերբնական ժամագործ... Այդպէս խորհեցին դարեր շարունակ ևւ այդ ժամագործին անուն տւին — Աստուծ:

ժամանակը քայլեց, սակայն: Գիտութիւնը և մասնաւորապէս բնագիտութիւնը հեղձեակ գարգացաւ ևւ մարդկային միտքը կամայ-կամայ սթախեց իր բազմադարեայ լէթարգիական մրափից, իր մերկ ազխաութիւնից՝ բնութեան երեւոյթների ևւ օրէնքների նկատմամբ: Աստակների, գերբնական հաւատարիքների մշուշը փարատեց ստաթնամարտը ևւ դարեւրով թարաւտօ, խեղաթիւրւած ճշմարտութիւնը դրեց իր տարերի վրայ:

Հոկայական աշխատանք էր սլէտք՝ այդ փրկարար սթափումը ստաջ բերկու համար: Երկու մեծ գործօններ հոգային այդ անհրաժեշտ աշխատանքը. մի կողմից՝ առարկայական (օրժեկտիվ) գարգացման պրօցէսը, կամ ուրիշ խօսքով՝ հասարակական էւօլյուսիօնը, խթանւած անտեսական ու սղ ազգակներից, միւս կողմից՝ երկարալական (օրժեկտիվ) պրօցէսը, մեծ մարդկանց, մեծ գիտական հանձարների գործունէութիւնը, նրանց հարապէս իմացականութիւնը, նրանց կատարած գիտերքը, նրանց հազարգած գարիք:

Արադագործութեան վարդապետութիւնը փոխարինեց էւօլյուսիօնի, կամ Բնաշնչման վարդապետութեամբ:

Գիտութիւնը, ամենօրեայ մանրազննին փորձի վրայ հաստատած գիտութիւնը, դուրս փանեց հետազօտութեան դաշտերից գերբնականը, հրաւեր, աւասպելը, հրամարեց «աստ-

զու թեամբ, նա ձուլւած է Ոյժի հետ: Նիւր և Ոյժ կազմուած են անբաժանելի մի էութիւն: Դուալիզմ, երկութիւն չրկայ այդ սեղ. սեր կայ նիւթ, այնտեղ կայ ոյժ, կայ ևս չարժում. մին կ'ենթադրէ միւսի անհրաժեշտ ներկայութիւնը, կամ թէ, աւսնք Գեօթէի լեզուով. «Նիւթը երբէք սուսնոց այժի, ոյժը երբէք սուսնոց նիւթի չեն կարող գոյութիւն ունենալ ևս գործել»:

Եւ ամբողջ օրեկերքը իր բիւրասը ու սյուսան կրեւոյթներով այդ սկզբնական ուժ-նիւթի (կամ Սուրսանցի) բնաչըման արդիւնքն է, հետեւագէտ, այդ օրեկերքն ևս — չնչուսը թէ անչունչ, օրգանասը թէ անօրգան, գործարանասը թէ անգործարան — կազմում է մի անխզելի ամբողջութիւն:

Այդ է մօնիզմի հոչակուսը վարդապետութիւնը, որի հանձարեղ փիլիսոփայական արժարձոցն էր Սպինոզա 17րդ դարու մէջ. մեր ժամանակում նրա հեղինակասը ներկայացուցին է բնազխութեան ու բնափիլիսոփայութեան աշխարհում՝ Ենայի համարարանի մեծանուն պրօֆէսոր, գերմանացի էրևսր Հեկկել (*):

Մի է ամբողջ բնութիւնը, մի է ամբողջ օրեկերքը: Ամէն բան միեւնոյն Ոյժ-Նիւթի արտայայտութիւնն է, միեւնոյն հիւլէների ու մօլէկուլների մի յայտնի դուզասրումը: Այդպէս է և կեանքը... Ֆիզիօլօգապէս (բնափոստարար) ասում՝ կեանքը ոչ այլ ինչ է, բայց եթէ, նիւթի յատկանական շրջանասումը, իսկ մահը ոչ այլ ինչ է, բացի թէ, արդ շրջանա-

(*) Մօնիզմ (անոյնանադաշտութիւն) կոչում է այդ վարդապետութիւնը այն պատճառով որ կ'ուզէ վերածել բնութեան բոլոր երևոյթները մէկ-միայնակ սկզբունքի, մէկ-միայնակ էութեան — **Ոյժ-Նիւթի կամ Սուրսանցի** Ոմանք կոչում են այն՝ **մասեիալիզմ**, նիւթապաշտութիւն: Ոմանք էլ (մեծիւղի) անունով կոչում են նաև լուծակիզմը, սպիրիտուալիզմը և այլն, քոր արավազծօրէն հակառակ են նիւթապաշտական մեծիւղին: Վերջինի հակառակորդ սխառէմներ են և՛ գուալիզմ, պլուրալիզմ և այլն, ոյժը ընդունում են մի քանի տարբեր սկզբունքներ — նիւթ, ոյժ, ոգի, գաղափար և այլն:

ու թեան անմահութիւնը» — արգպէս է ասում մատերիալիզմի ամենահամազուած սահվիրաներից մինը — Մօլկոս: (*)

Այդպէս — ևս միտք: Նա սերտ կերպով կապւած է ուղեղի մօլեկուլային ասանձնադասուկ շարժագութեան հետ: «Աւսնոց ֆօսֆօրի չկայ միտք» — բացականչում է նոյն Մօլկոզօր. Ohne Phosphor kein Gedanke!... Ինչ ֆօսֆօրը ուղեղի բազալից տարրերից մինն է:

Մատերիալիզմի մի այլ մօլեզին սահվիրայ, Կարլ Ֆօլս(**) աւելի ևս խոսացնում է մաքի այդ դուս նիւթական ծագման հիւլօթէզը, արտասանելով իր յայտնի և սուր դարձւածը.

Միտքը և ուղեղը նոյն փոխադարձ յարաբերութեան մէջ են, ինչպէս լեզին և լեզրը, մէզն ու երկիամունքները: Ուրիշ խօսքով՝ միտքը բղխում է ուղեղից, ինչպէս լեզին լեզրից կամ մէզը երկիամունքներից...

Բառացի կերպով չենք կազմ, ի հարկէ, բնուանիլ այդ նշանասը ֆրազը, որ ժամանակին մեծ ազմուկ լարուցեց աստուածարանների բանակում և որի առաջին անգամ գործածութիւնը վերագրում են ֆրանսիացի փիլիսոփայ Կարաւնիսին: Մարդկային մաքի, հոգեկան գործունէութեան կամ գիտակցութեան ծագումն ու բնթայքը հոգեբանութեան ամենամեծ և աւելզւածացին կնճխն է, որ դժւար է լուծել այդքան սրարդուակ, սխեղիստ ձևով: Ինքը Ֆօլսան ևս ընդունում է, որ դա մի «կոպիտ արտայայտութիւն» է լամենայն դէպս նրա կարծիքով՝

«Ամէն մի քիչ-չատ մտածող ու հետեւողական բնախող անպարնան պիտի դայ այն հասկացողութեան՝ որ մարդկային բոլոր այն բնուանակութիւնները, որնոց սովորաբար հոգեկան գործունէութիւն անունն են տալիս, մեր ուղեզային կազմի ֆունկիսիօններն են» (պաշտօնաւարութիւնը)...

Միտքը չի բղխում ուղեղից, ինչպէս մէզը երկիամունքներից: Սակայն, տարակոյս չկայ, որ — ինչպէս ասացինք — մրա-

(*) J. Mofeschott, Kreislauf des Lebens (Կեանքի շրջակիծը)
(**) Նախկին պրօֆէսոր Ժրնէվի համալսարանի, վախճ. 1895-ին:

քի, գիտակցութեան երեւոյթը սերտօքէն շարկապարսա՞ծ է ուղեղացին սրաշոճնափարութեան հետ. տարակոյս չկայ և ոչ ոք չի կարող ժխտել, որ ուղեղը մասածղութեան օրգանն է և կենդրոնական օրգանը, որ առանց այդ օրգանի՝ գիտակցութիւնը գաղարում է, որ նրա միտակցով, նրա մի ջնջին բնկարը ջրատեղով, անգամայտ ծեղով՝ յաճախ ջրատում. խնդրաթիւրում է մարդու բովանդակ մտաւոր կեանքը, չքանում է մտածելու, սրամարանելու կարողութիւնը, խաւարում է հոգին:

Իմացականութիւնը, վերրուժող, բննադատող, համազրոյ ու հակազրոյ իմացականութիւնը (*), երեւան է եկել կենդանական զարգացման երկայնաձիգ անդուխի մի յայտնի առիճանի վրայ — մարդու մեջ: Ինչպէս է նա երեւան եկել, ուղեղացին մասնիկ երի ինչ հրաշալի խողերով է առաջացել մեքի առաջին շղթ, իմացականութեան, հակազրոյ գիտակցութեան առաջին փայտափայտ մարդ-էակի մէջ — գա, կրկնում ենք, տակաւին առեղծւած է, նոյնպիսի մի առեղծւած, որպիսին է կեանքի ծագումը:

Բայց, յամենայն դէպս, ընդունում ենք, չենք կարող չընդունել, որ այդ գիտակցութեան, այդ իմացականութեան կենդրոնանիւտը, նրա բնակավայրը Ուղեղն է, որ արտօքայ ուղեղի՝ չիք իմացականութիւն, որ նիւթեղէն հիւլէների շարժումներինց դուրս՝ չկայ միտք, ինչպէս որ չկայ կեանք նոյն նիւթեղէն պրոտօպլազմից դուրս:

Թէ մէկ և թէ միս սարսափալում — թէ կեանքի և թէ մարքի ծագման առ այժմ մութ, անխմանալի պրօպէսում — անհնարին է ընդունել օրգանիզմի և ուղեղի մէջ որ և է այլ սկզբունք, որ և է այլ ոյժ, որ լինի տարբեր նիւթից, որ և է վերացական կամ գերբնական էութիւն, որ աղբիւր լինի կեանքի ու մարքի (**):

(*) Մենք խօսում ենք բննադատող ու հակազրոյ իմացականութեան մասին, քանզի իմացականութիւնն ընդհանուր առմամբ յատուկ է նուազ կենդանիներին:

(**) Այդպէս, օրինակ, վիտալիստները (vitaliste) սնդում են, որ կայ մի խորհրդաւոր ուժի, մի անքննելի կենսական ոյժ (force vitale), որ միանգամայն տարբեր է նիւթից, որ շունչ է առլիս անդգայ նիւթին, կեանք է հաղորդում օրգանիզմին...

Այդպէս, օրինակ, նիւթը ամեն տեղ է, տիեզերքի բոլոր ծայրերում և նրա զարգացման բոլոր պղպան կիւլջներին վրայ: Ոչ մի տեղ — որեւէ խրամատ, որեւէ անջրպետ՝ տիեզերական այդ անդուլ էւօլիւսիօնի մէջ: Ոչ մի տեղ չըկայ որ և է այլ տարր, որեւէ սկզբունք, գոյութիւն, որ լինի տարբեր այդ նիւթից կամ այդ նիւթեղէն ոյժից, որ գայ միջամակու այդ վերջինի յախանական շարժումներին:

Չկայ այն վիճը, անանցանելի խրամատը, որ ստատածական մտածողները և ամէն կարգի սպիրիտուալիստները (*) կամայականօքէն ձգել էին մարդ-էակի և չըջապատող բնութեան միջև, հաշակելով այդ մարդուն, իրեն մի առանձին, արտօնուոր ստեղծազարծութեան ծնունդ: Չկայ բայցարձակ սահմանագիծ անօրգան և օրգանաւոր աշխարհների միջև, բայց ու կենդանու, անասունի և տաւնի միջև... Մենք այդ կր փաստենք յետազայում: Մարդկութիւն, անասնութիւն, բուսականութիւն՝ կապում են անխղիւ կապերով, և բոլորն էլ ձուլւած են միեւնոյն վիթխարի տիեզերական Սմարտջի հետ, համարարիակ Սուբստանցի հետ: Ամէն տեղ — նոյն նիւթը և նիւթեղէն շարժումը: Բնութեան փոխանցումների յաջորդական փոխերի մէջ միանգամայն արդարանում է հաշակաւոր Շվեյգ-բնագէտի, Լիննէի խօսքը՝

«Natura non facit saltus»
 «Բնութիւնը ստիւններ չիանում»:

* * *

Արարչազարծութիւն — այն: Բայց — բնական արարչազարծութիւն: «Ստեղծումի» թէօրիան տեղի աւելց «Էւօլիւսիօնի», բնաւորական թէօրիային: Իրօք ոչինչ չի ստեղծւում, այլ եղածը (Նիւթ-Ոյժը) զարգանում է, յեղաշրջւում, ձեւափոխւում: Տիեզերական Սուբստանցը կամ նիւթ-Ոյժը շարժւում է յաւիտենօքէն, ներքին յարակոյ պատճառականութեան (causalité) զօրութեամբ, շարժւում է տարբերայնօքէն և կուրօքէն, առանց որեւէ նպատակի գիտակցութեան: Ոչ մի այլ ոյժ չի կա-

(*) Ոգեւորաշա

քող մխել արդ երկաթէ, ճակատագրական շղթայի մէջ: Ոչ մի գերբնական, քմահաճ ազդակ, ոչ մի բանասոր Ենօրա, ոչ մի Արամազդ չի կարող խախտել այդ վիթխարի շղթան, չի կարող խզել երևույթների այդ ճակատագրական ընթացքը: Անձրևը թափուում է, որովհետև մթնոլորտի մէջ հաւաքուում ու խտանում են գոյորչները: Հրաբուխը ժայթքում է, որովհետև գետնի խորանկ արգանդի մէջ մթերուում են պայթուցիկ գազային զանգւածները: Մահը վրայ է հասնում, երբ մարմնի մէջ կատարուում են ֆիզիոլոգիական լայանի փոփոխութիւններ: Փայքը խորտակուում ու ցած է գորբում, որովհետև ջուրը, անձրևը սաշել, փորփորել են նրա խորանկ ծաղրերը... Ոչ մի նախահնամուժիւն չի կարող կանխել այդ բնական սրատահարները, որ կատարուում են երկաթէ անհրաժեշտութեամբ, որոշ օրէնքների անդխնադրելի և անդրդւելի գորութեամբ:

Ոյժնիւթը, Սուբստանցի անդուլ շարժման, կամ բնաշրջման, կերպարանափոխման մէջ է (transformation), և շարժելու համար՝ նա պէտք չունի մի նախազարկի, մի առաջին խթանի, լծակի: Բացարձակ անշարժութիւն երբէք չի եղել: Նիւթը շարժուում է ինքնիւրեւ, շարունակ ստեղծագործելով, արաագրելով իր սնունդն ծոցից նորանոր ձեւեր, նոր գոյութիւններ: Ստեղծագործող սովը կամ պատճառը նոյն Նիւթի մէջ է, նոյն Սուբստանցի մէջ: Եւ այդ ներքին, յարակայ պատճառը անդադար չինում է ու քանդուում, վերափոխ չինում, ստեղծագործում... մի կայր, բնազդային, ճակատագրական մղումով:

Ամբողջ ժամանակակից գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը հիմնուած են, այդպիսով, շարժականութեան կամ դինամիզմի (dynamisme) սկզբունքի վրայ: Էւօլյուսիօնիզմը կամ բնաշրջման վարդապետութիւնը դառնում է առանցքը ամէն մի գիտական հետազոտութեան ու աշխարհայեցութեան:

Կանգ առնենք այդ մեծ ու արգասառ վարդապետութեան վրայ, որ կազմում է ժամանակակից գիտական-փիլիսոփայական հաւատամքը, որ եկել է տապալելուրորը հինաւուրց կուսքերն ու պաշտամունքները և որ... ծանուցել ու հաստատուել է մի սող-

պալի երկունքից յետոյ, անբաւ ճիգերով ու կատաղի պայքարներով:

Չկայ ուեկի մեծ ուեկի ծառայուն, համայնապարփակ բնականաբարու, քան էւօլյուսիօնի, բնաշրջման գաղափարը: Նա էւպէս XIXրդ դարու ծնունդ է, թէև արմատները մէկ քանիորդանում ենք արդէն նախորդ դարերի, մասնաւորապէս, XVIIIրդ — մէջ:

Շփեղ Լիննէյ հիմնեց 18րդ դարի վերջերում նորագոյն բնադիտութեան գոյրոյր, հաստատուած էմպիրիզմի (empirisme), այսինքն փորձնական ուսումնասիրութեան վրայ: Նա սահմանեց մի յարմար դասակարգումն (classification) բնութեան տեսակների մէջ. թէև չինծու, արեւտական՝ այդ դասակարգումը մեծապէս գլխապնում էր ուսումնասիրութեան գործը և պատկանելի ծառայութիւն մատուցեց գիտութեան: Նա գտաց այլազան տեսակները (espèces) և համախմբեց նրանց՝ տարրեր սեւերի մէջ (genres):

Լիննէյ, այնուհետև, փորձեց պատասխան տալ մեծագոյն և կրճատուոր հարցին — ինչ են այդ լիւրաւոր տեսակները, ինչպէս են նրանք առաջացել և ինչից... Եւ նրա պատասխանը հետո չգնաց ժամանակի հաստատելքներից:

Տեսակները — ասաց նա — կենդանական և լուսական տեսակները գոյութիւն են ունեցել միշտ, ի սկրքբանէ անխ... Ստեղծել է նրանց անվախճան էակը... Ինչպէս է ստեղծել — յայտնի չէ... յամենայն դէպս այդ տեսակները անվախիս են, մշանջնասոր, յախտնական: Կեանքն ևս ստեղծել է Արարչի ձեռքով...

Ստատածուշնի դօզմն է այդ... Սակայն Լիննէյ դրա հետ միասին յայտարարեց ժամանակակից էւօլյուսիօնիզմի հիմունքներից միւր, դատելով մարդուն ոչ միայն միւս կենդանիների աշխարհում, այլ և մարդանման կապիկների ցեղի մէջ: Մարդկութիւնը, այդպիսով, հանդէս է դալիս, որպէս մեկ տեսակ, մէկ ճիւղաւորութիւն այդ կապկային ցեղի: Եւ դա ինքնին մի խոշոր նորութիւն էր, թէև միայն տարտամ կերպով ու հարեւանցօրէն ծանուցուած:

«Տեսակները կայուն են, անփոփոխ» — այդպէս էր հին աշխարհայեացքը, հին գօզմը. այդպէս էլ նա շարունակեց մինչև 19րդ դարը :

Այդ գօզմը գտաւ յետագայում աւելի հզօր ու հեղինակաւոր մի պաշտպան ի դէմս ֆրանսիացի բնագէտ Կլավիէի, համեմատական կազմախօսութեան հիմնադրի: Նա գրառեց բրնադիտութեան մի այլ կարևոր մասնաճիւղով — ֆիկալոլոգիայ (paléontologie): Նա հետազօտեց երկրային կեղևի յաջորդական շերտաւորումների մէջ անյլշատակ դարերից ի վեր թաղւած կենդանիների մնացորդները, գտաւ, որ նրանք խիստ տարբեր են մեր ժամանակի կենդանիներից. և այդ տարբերութիւնը այնքան աւելի մեծ է, որ օտան աւելի խոր են բնկած հողային շերտերը, այսինքն որքան աւելի հեռու են այն նախնական ժամանակները, երբ ապրել են այդ կենդանիները:

Դա արդէն մի նշանուոր յայտնութիւն էր: Սակայն այդ ճիշտ գրութիւնից Կլավիէն եկաւ մի սխալ և անհեթեթ եզրակացութեան: Նա յայտարարեց. «Բոնի որ ամէն մի հողային շերտի մէջ քարայած կենդանու տեսակը տարբերուած է այն տեսակներից, որոնք մնացել են այդ շերտից վերև ու ներքև ընկած շերտերի մէջ», բոնի որ մենք երբէք չենք տեսնում, որ միևնոյն անասնական տեսակը երևան գայ երկու իրար յաջորդող շերտերում. — ապա ուրեմն եղել են ստալդագործութեան արքեր արջաբնակներ, որոնք յաջորդել են իրարու և որոնցից իւրաքանչիւրը ունեցել է իր ասանձնացատու կենդանական և բուսական աշխարհը (ֆլորա և ֆաունա):

Ստալդագործութեան այդ տարբեր շրջանները առաջացել են, Կլավիէի կարծիքով, չորհիւ պարբերաբար տեղացող կատասթրօֆների, բոնի ու աւերիչ յեղաշրջումների (cataclysmes): Ամէն անգամ, երբ կատասթրօֆը վրայ է հասել, կործանել է գոյութիւն ունեցող բոլոր կենդանիներն ու բոյսերը և այնուհետև սկսել է ստեղծագործութեան մի նոր շրջան, բարբոսին նոր, կենդանական ու բուսական տեսակներով: Նորէն ծլել ու ծաղկել է կեանքը... Բայց այդ շրջանն ևս յախտանական չի եղել. նորէն վրայ է հասել ճակատագրական աղէտը և ամէն բան սակի ու վրայ արել: Եւ այդպէս — անվերջ:

Անա Կլավիէ հռչակաւոր «կատասթրօֆային թէօրիան»: Որքան նմանութիւն Աստուածաշնչի մեկնութիւններին: Յիշեցէք Ջրհեղեղի ծանօթ հիպոթէզը... Ջրհեղեղի որ իբր թէ եկել է հին ժամանակում տակն ու վրայ արել աշխարհը, խեղդել, ոչնչացրել ամէն ինչ... Նոյեան տապանը միայն հանուել է Արարատի գլուխը, ուսկից յետոյ լիջել է ստորոտները և դարձել նոր կեանքի ու մարդկութեան որօրան:

Ամենահին ժամանակից ի վեր մարդկութիւնը միամտօրէն հաւատացել է այդ հսկայական ու համատարած աղէտներին, կատասթրօֆներին: Ինչն է ներշնչել նրան այդ չեղած առասպելների գաղափարը:

Ներշնչել են, անտարակոյս, պարբերական հեղեղները, երկրաշարժը, հրաբխային ժայթքումները: Նրանք եղել են տեղական, սահմանափակ, մի որոշ երկրում, մի յայտնի միջավայրում: Բայց վաղեմի մարդկութեան խոսքն միտքը և բացավառ երեւակայութիւնը սիրով ընդհանրացրել է կատասթրօֆի զարհուրանքը...

Եղել են, ուրեմն, ստեղծագործութեան տարբեր շրջաններ — ասում է Կլավիէ: Կործանուել ու վերաստեղծուել են այդ տարբեր աշխարհները՝ պարբերական աղէտներով, վերիվայրումներով:

Ինչ է այդ վերիվայրումների պատճառը:

Բնական երեւոյթները չեն, յամենայն դէպս — այդպէս է պատասխանում Կլավիէ: Ոչ անձրեւը, որ անդադար քերում է լեռնային բարձունքները և քշում հողային զանգւածը դէպի ստորտը, ոչ դետերն ու վտակները, որ անընդհատ առաջ են քշում այդ տը, ոչ զետերն ու ամբարում ծովերի և լճերի մէջ, ոչ հրաբուխները, որ կատաղի ժայթքումներով փոփոխել են երկրի մակերեւոյթը, — ոչ մէկը այդ բնական ոյժերից չէր կարող, ըստ Կլավիէի, պատճառ լինել վերոյիշեալ համայնաշինջ կատասթրօֆների: Այդ ուժերը չափազանց դանդաղ են գործում — ասում է նա:

Կատասթրօֆի պատճառները «բնական չեն»... Ուրեմն,

նրանք... գերբնական են: Եւ յիրաւի Կիւլիէն օգնութեան է կոչում հրաւեր, ապաւինում է ամենակարող Ենօվային:

Արդարեւ, միայն հրաշքով կարելի էր «բացատրել» այդ առասպելական, միանգամայն հակաբնական կործանումներն ու վերասակզծումները: Իսկ այնտեղ, ուր հրաշքն է սկրսւում, գիտութիւնը դադարում է:

1830 թւին լոյս տեսաւ անգլիացի Լայլլի Երկրաբանական նշանաւոր աշխատութիւնը, (*) որ պերճախօս հերքումն էր Կիւլիէի օղէտաշունչ և գերբնական գաղտփարներին: Լայլլ ցոյց տուց, որ Երկրի մակերևոյթին և նրա խորունկ շերտերի մէջ կատարւած հսկայական յեղաշրջումները սուսջացել են ոչ թէ յանկարծակի սասանումներով ու կատարութեանը, այլ դանդաղ, ստորձանարար, զուտ բնական սլոյթի շնորհիւ — անձրեւի, գետերի ու հեղեղասանների, երկրաշարժի ու այլ սովորական գործոնների գարաւոր ու անհասնում գործունէութեամբ: Նա հաստատուց, որ այդ գործունէութիւնն ամէն օր ու ամէն վայրկեան կատարւում է և Երկայուն — աննկատելի կերպով — մարդկային աչքերի ստջեւ. գետերը հեղահեղ փորփորում են իրենց հուններն ու եղերքները: Ծովերը քանդում ու փոփոխում են շարունակարար իրենց ափերը. սասցային չղթաները մշտնջենարար հասում են ու աճում, նմանապէս փորելով ու փոփոխելով իրենց չրջափայրի գծադրութիւնը: Եւ այդ ամենօրեայ մանրիկ փոփոխութիւնները հեղահեղ բազմանայով ու ամբարկելով, սուսջ են բերել հազարուոր դարերի ընթացքում վիթխարի յեղաշրջումներ երկրագունդի մակերևոյթին: Այդպէս է կազմուել աստիճանարար երկրի կեղևը իր բարձրաբերձ կատարներով ու անդնդախոր ձորերով: Միայն դրա համար... պէտք է երևակայել ընդարձակ ժամանակամիջոց, գրեթէ անհունութիւն: Այդերի, Հիմարայայի ու Կորդիլիէրի լեռնային դանդաճները մէկէն ի մէկ դուրս չեն նետուել երկրի հրահեղուկ արգանդներից, այլ յառաջացել են մեծ մասամբ երկրային կեղևի փոքրիկ, աննկատելի բարձրացումներով:

(*) Lyell, Principles of Geology

Միաժամանակ, հնէագիտական յետադայ խուզարկումները եկան ժխտելու Կիւլիէի յայտարարութիւնները մարդու ծագման մասին: Երբեք, ասում էր նա, չը պիտի գտնուի ոնէ կապ մարդու և կենդանիների միջև, երբեք չը պիտի գտնուին երկրային շերտերի մէջ նախամարդու կամ մարդանման կապիկների մնացորդները:

Եւ սակայն, Կիւլիէի մահից յետոյ զանուկցան՝ թէ այդ վերջինները և թէ նախապատմական մարդու կայծքարի դործիքները, վերջապէս, գտնուցան նաև գետնի խորքերում մարդկային գանդեր, որ նուազ դարգացած, ստորագտակի են ժամանակակից գանդերից:

Այնուամենայնիւ, կատարութեային վարդապետութիւնը գիւ Երկար ժամանակ կանգուն մնաց, շնորհիւ այն մեծ հեղինակութեան, էր վաստակել որ Կիւլիէն բնագիտական աշխարհում:

Միւս կողմից, սակայն, կամոց-կամոց աճում էր և ընդգրկող իր էւօլյուսիօնիստների փաղանդը. շեշտւում էր հեղահեղ էւօլյուսիօնիզմը, բնաշրջման վարդապետութիւնը: XVIII դարու վերջերում նա արդէն արել էր շօշափելի քայլեր: Գեօթիէն, գերմանացի մեծ բնաստեղծը, ծանուցել էր գաղտնաբեր իր մէկ քանի ուշագրաւ բնագիտական ուսումնասիրութիւններով: Երանցից ամենայայտնին խորագրւած է «բոյսերի կերպարանափոխութիւնը» (*): Այդտեղ Պատուտի հանձարեղ հեղինակը մասնացոյց է լինում բնաշրջման թէօրիայի հիմնական սկզբունքի վրայ, նա ցոյց է ապիւ բոյսերու մեջ այն հիմնական օրգանք, որից, ստատիճանարար զարգանալով ու կերպարանափոխելով, սուսջ է եկել ամբողջ բուսական աշխարհը իր շուրջ բազմօրինակութեամբ: Այդ օրգանն է, ըստ Գեօթիէի — սերեւը: Այդտեղ, անուշա, սխարում է բարաստ հեղեղ, սակայն ճիշդ է նրա հիմնական միաքը: Եթէ այն ժամանակ խոշորացոյցը համասարած բարեք լինէր, Գեօթիէն նրա օգնութեամբ կարող էր թերեւս աւելի խոր թափանցել բոյսի կազմութեան մէջ և կը տեսնէր որ հիմնական և մըշ-

(*) Die Metamorphose der Pflanzen. հրատարակւած 1790 թւին:

տընջննապէս կերպարանափոխուող օրգանն է բջիջը (cellule),
և որ տերեւն էլ նրանից է առաջացել:

Յայտնի է նաև Գեօթէի ձեւակերպած «գանգի ողնային
թէօրեան»: (*) Նա հետազօտեց ու գտաւ, որ մարդկային և
առհասարակ կենդանական գանգը ուրիշ բան չէ, բայց եթէ
սակրային մի գանգուած, որ բաղկացած է նոյնպիսի մասերից,
ինչպէս ողնաշարը: Դրանից հետևում է այն՝ որ գանգն ևս
նոյն ողնաշարի մի սկզբն է: միայն ժամանակի բնթացքով
բարդացած ու կերպարանափոխուած:

Կենդանի, եռանդուն մասնակցութիւն ունէր Գեօթէ իր
ժամանակի բնագիտական հետազօտութեանց, մասնաւորա-
պէս բնաշրջման գաղտնիքի արծարծման մէջ: 1830 թւա-
կանին պայթել էր Պարիզի մէջ Յուլիսեան Յեղափոխութիւնը
և միաժամանակ տեղի ունէր նոյն Պարիզում հանդիսաւոր,
հրապարակային բանակաւ ժօֆրուա Սէնտ-Իլէրի և Կիւ-
վիէի միջև. առաջինը՝ բնաշրջման թէօրիայի պաշտպան,
երկրորդը՝ անշարժութեան ու գերբնականութեան գաղափա-
րի: Յուլիսեան ապստամբութիւնը երկրորդ անգամը — Մեծ
Յեղափոխութեան օրերից ի վեր — ցնցել էր ամբողջ Եւրո-
պան... Սակայն ձերուների Գեօթէին շատ աւելի կը հետաքրք-
րէր ու կ'ալեկոծէր գիտական վիճաբանութիւնը, նրա հետե-
ւանքը: Թէ որքան մեծ էր այդ տեսական հետաքրքրութիւ-
նը 81-ամեայ բանաստեղծի մօտ, վկայում է գիտնական Սօ-
բէի հետևեալ անեկզօտային պատմածքը.

«Երկուշարթի, Օգոստոս 2-ին (1830) Յեղափոխութեան
լուրը հասել էր Վայմար և ընդհանուր իրարանցում էր ա-
ռաջ բերել: Գնացի Գեօթէի մօտ. և նա խիղջն բացահայտեց
ինձ գիժմաւորելով. «Նը, ի՞նչ կը խորհիք այդ մեծ անցքի
մասին, հրաբուխը ժայթքել է և ամէն ինչ բոցավառուած է»:

— Այո, պատասխանեցի ևս, սարսափելի պատմութիւն
է, սակայն ի՞նչ կարելի է յուսալ այսպիսի պայմաններում,
այս տեսակ մինիստրութեան օրով. դուցէ կը քշեն այժմեան
իշխանական գերդատտանը և գրանով ամէն բան կը վերջանայ:

(*) Wirbeltheorie des Schädels

— Ինձի այնպէս կը թւայ, բարեկամ... թէ մենք զիրար
չենք հասկընար. իմ խօսքը Յեղափոխութեան մասին չէ, այլ
այն գիտական հանդիսաւոր ընդհարումի՝ որ տեղի ունեցաւ
պարիզեան ձեմարանի մէջ Կիւվիէի և Սէնտ Իլէրի միջև,
բաղմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, չնայած արող
արձաւիրքներին: Խնդիրը մեծ է և շատ ծանրակշիռ»:

Սօբէ, ի՞նչ տակ կուզէ, շարած կը մնայ այս խօս-
քերից:

Յիշատակենք Գեօթէի մի այլ ծառայութիւնը, որ աւելի
մեծ կարեւորութիւն ունի կենդանական աշխարհի բնաշրջման
տեսակէտից: Բոլոր կենդանի մարմինների մէջ նա գտնում էր
երկու հիմնական մղիչներ (Trieb), կամ երկու բնաղդ, մինը
փոփոխիչ ու առաջդիմական, միւսը պահպանողական. մինը
կենարոնախոյս, միւսը կենարոնածիզ: Առաջինը մղում է
մարմինները դէպի անդուլ փոփոխականութիւն, դէպի ան-
ընդհատ զանազանաւորումն ու յատաճդիմում: Երկրորդը՝
ձգտում է պահպանել մարմինների մէջ նրանց էական գծերը:
Երկու ուժերից առաջինը պիտի կոչւի Դարմինի օրով յար-
մարեցումն (կամ պատշաճեցում, adaptation), երկրորդը՝
ժառանգակաճութիւն (hérité): Երկու ուժերը, կարելի է
ասել, դարձան անկիւնաքար էւօլյուսիօնիզմի, կամ բնա-
շրջման վարդապետութեան:

Գեօթէն, վերջապէս, ծանուցեց մի այլ նշանաւոր միտք:
Բոլոր կենդանի մարմինները, ասաց նա — ձկներ, սողուն-
ներ, թռչուններ, կաթնասուններ և նրանց բոլորի գլուխը
կանգնած մարդ-էակը — ունին փոխադարձ, ազգակցական կապ,
բոլորն էլ առաջացել են միեւնոյն նախատիպարից, մի սկզբը-
նական օրգանիզմից, առաջացել են աստիճանական կերպա-
րանափոխութեամբ: Գեօթէ կ'ենթադրէ, որ նոյն սերտ ազ-
գակցութիւնը գոյութիւն ունի նաև բոյսերի ու կենդանիների
միջև, քանի որ — ասում է նա — սաղմնային վիճակում
բոյսն ու կենդանին հազիւ կը տարբերւին իրարից: Այս ու-
շագրու վարկածն ևս պիտի շեշտւի յետագայում, գարմինա-
կան մտածողների կողմից:

Էււօլյուսիօնիզմի պատմութեան հետ սեբա աննշութիւն ունի մի այլ գերմանացի գիտնական — Օկէն: Նա յայտարարեց, որ բոլոր մարմինների կենսական երեւոյթները բխում են միևնոյն նախնի պարզ քիմիական բաղադրութիւնից, որ նա անւանում է նախալորձուց (Urschleim): Դա եւս մի տաղանդաւոր և արգասաւոր յղացումն էր. այսօր, այդ նախորդձուցը կոչւում է գիտութեան մէջ պրօսօլլազմ կամ սալմանիք: Բառի փոխառութիւն է միայն տեղի ունեցել. գաղափարը նոյնն է: Օկէն պնդում էր, որ այդ սկզբնական լորձուցը, որից ծնունդ է առել համայն կենդանի աշխարհը, մի կէս-ամառ և կէս-հեղուկ սպիտակօքսիգեն զանգւած է, որ իր հերթին ծնանդ է առել ծովերի անդունդներում անօրգանական, անկենդան նիւթից: Այս էլ «ինքնարեւ ծնանդի» (génération spontanée) տեղծւածային գաղափարն է, որ պիտի շեշտել քիչ յետոյ ֆրանսիացի Լամարկի գրած քննութեմ և որ աւելի հանդամանօրէն պիտի արծարծէ գերմանացի Էրնստ Հէկկել:

Լօրենց Օկէն յայտարարեց և այն՝ որ ծովի խորքերի մէջ ծնանդ անող նախորդձուցը — կամ ժամանակակից բաւբառով, պրօսօլլազմը — բնդւանում է նախ և առաջ մանրադիտական փափօնիւնների ձև: Այդ փշիւնները (vésicule), նա անւանեց ջրանցի (infusoire): Դրանք ամենապարզ, ամենանախնական մարմիններն են և իւրաքանչիւր կենդանի կամ բոյս բաղկացած է այդպիսի անհաշիւ փշիւններից:

Դարձեալ մի ճիշտ յղացումն: Փոփոցէք «Ջրածձի» տնունը, կոչեցէք «բջիջ» — և դաք կրտսնաք նորագոյն կենսաբանութեան ամենանշանաւոր թէօրիաներից մինը — բըջիջային քեօրիան (théorie cellulaire) որ հիմնեցին 19րդ գաւրու 30-ական թւերին երկու գերմանացի՝ Շլայդեն և Շվան: Եղբոր կենդանի մարմինները, բոս այդ տեսութեան, ներկայացնում են՝ կամ պարզ բջիջներ, կամ թէ բջիջների կուտակներ:

Եւ նորագոյն հետազոտութիւնները պարզեցին, որ բջիջի բաղադրութեան ամենատեղական տարրն է պրօսօլլազմը (սաղմանիւթ) կամ Օկէնի լեզուով՝ նախորդձուցը:

Հրապարակ կիսն և մի շարք ուրիշ եւոլյուսիօնիստներ, ի թիւս անոնց — Դարվինի պապը: Իւրաքանչիւրը մի մի դիւտով, մի մի ինքնատիպ յղացումով հարստացրեց բնաբջիջման նորածիլ գաղափարը և այդպիսով պատրաստեց հոգը՝ գալց մեծ ու յայթական վարդապետութեան համար:

Գիտնականների այդ երկայնածիլ շարանի մէջ ամենախոշոր դէմքն է — ֆրանսացի Լամարկ(*): Նա էր, որ լուրջ փորձնական հետազոտութիւններով հիմքը դրեց էւոլյուսիօնիզմի բոյն ու բեղուն աշխարհայեցութեան: Այդ մեծ մարդը, որ իր ժամանակին բնաւ չգնահատուեց, իրօք բնաբջիջման վարդապետութեան երկու խոշոր հիմնադիրներից մէկն է և այսօր նրա անունը փշատակւում է ամենուրեք Դարվինի անւան հետ գրելի է հաւասար պատկանանքով:

1809-ին էր, որ Լամարկ հրատարակեց իր յայտնի բնափիլիսոփայական աշխատութիւնը, (**), ուր առաջին անգամը հանդամանօրէն արծարծում էր այսպէս անւանւած «ծաղման վարդապետութիւնը»: (***)

Ֆրանսիացի գիտնականը դրեց հրապարակի վրայ բնափառութեան ամենահրատապ խնդիրները:

Ինչպէս են արդեօք առաջացել կենդանի էակների բաւբաւոր ու այլազան տեսակները (espèces): Ինչպիսի պայմանների մէջ, ինչ ուժերի ու գործօնների շնորհիւ... և միշտ արդեօք եղել է այդ անխափսձան այլազանութիւնը, միշտ արդեօք գոյութիւն են անեցել այդ անհամար տեսակները՝ նոյն ձևերով, յատկանիշներով, նոյն չափերով ու գոյներով...:

Եւ համարձակ պատասխանում է — ո՛չ:

Տեսակները մեզ թւում են անխափս, մշտակայուն (fixes) այն պահաւով միայն՝ որ մենք նրանց գիտում ենք

(*) Jean Lamarck, 1744-1829 թ.

(**) «Philosophie Zoologique» խորագրով (կենդանաբանական փիլիսոփայութիւն):

(***) Théorie de la Descendance, ծաղման կամ — որ միևնոյնէ — բնաբջիջման վարդապետութիւն: Նրա մի ուրիշ անունն է transformisme.

չատ կարճ ժամանակի , արխնքն մարդկային կեանքի տևողութեան ընթացքում : Իրօք նրանք — այդ սեսակները — փոփոխել են միշտ և այսօր եւս փոփոխուում են յարաժամ , մեզ համար աննշմարելի կերպով , փոփոխուում են միջավայրի , ապրելաձևերի , կլիմայի , օդային մթնոլորտի և այլ բազմաթիւ գործօնների մշտնջենական ազդեցութեան տակ :

Անհնարին է և անհեթեթ՝ մեսակայութեան վարկածը : Անհնարին է ենթադրել , որ բուսական աշխարհի այդ բերաւոր նմուշները , այդ ծառերն ու ծաղիկները , անասութեան ու ասունութեան այդ անհամար ճիւղաւորումները — ողնաւոր ու ողնազուրկ — միջատների , ձկների , սողունների թռչունների և կաթնասուն էակների միլիոնաւոր ձևերը — որ նման են և տարբեր միանգամայն — բարձրագոյն կենդանիների այդ ուշագրաւ տիպարները , կապկային այդ զարմանալի , մարդանման տեսակները , մարդկային այդ այլատարազ բուսաները , ցեղերը , — անհնարին է ենթադրել , թէ նրանք բուրբն էլ եղել են ի սկզբանէ . նոյն ձևով ու կազմութեամբ , թէ բոլորն էլ միեւնոյն տարիքն ունին և թէ ոչ մի էական փոփոխութիւն չեն կրել անցեալի մէջ , չեն կրում և ներկայում :

Ճշմարտութիւնը — հակասակն է , ասում է Լամարկ : Ճշմարտութիւնը յարատեւ փոփոխութեան մէջ է . այլազանութիւնը չէ եղել միշտ , — նա առաջ է եկել կամոյց-կամոյց , աստիճանաբար : Միլիոնաւոր տեսակները չեն եղել միշտ , — նրանք գոյացել , ծնունդ են առել մէկ կամ մի քանի սկզբնական տեսակներից և այլազանուել են հետզհետէ :

Ահա այդ խոշոր թեզիսներն է շօշափում Լամարկ : Տեսակները տարբեր տարիք ունին — ասում է նա : Նրանք զարգացել են յաջորդաբար և ունին միայն յարաբերական , ժամանակաւոր մշտնջենաւորութիւն : Այս սկզբնական փոքրաթիւ տեսակներն եւս չեն եղել միշտ , կեանքի հրաշալի երեւոյթը չի առաջացել մոգական գաւազանի մի հարւածով , գերբնական մի ներշնչումով , այլ ծագել են զուտ բնական , ֆիզի-

քօ-քիմիական ուժերի գործակցութեամբ , աշխարհ են եկել նոյն մեծագործ տիեզերասփիւռ Նիւթից :

Ամենէն սկիզբը . . . ծնունդ են առել միայն ամենապարզ , ամենաատորին էակները — բուսական և կենդանական -- ապա հետզհետէ առաջացել են աւելի բարդ մարմինները : Կենդանի էակների զարգացողական այդ ընթացքը երկրադնդի վրայ չի կատարւել վիթխարի աստանումներով , կատասարօֆներով , այլ նա եղել է մի անընդհատ , շարունակական պրօցէս , գործողութիւն : Կեանքի սոսկ ֆօզիոլոգիական մի երեւոյթ է , և բոլոր կենսական երեւոյթները առաջ են գալիս նոյն մեքենական , ֆիզիքօ-քիմիական պատճառներից , — պատճառներ՝ որոնք յատուկ են գործարանաւոր , օրգանաւոր նիւթին : Ամենապարզ , ամենաատորին կենդանիները աշխարհ նիւթին : Ամենապարզ , ամենաատորին ինքնաբերաբար (generatio spontanea) . ինքնաբեր ծնունդ , արխնքն մի ծնունդ , որ չի գալիս ձուկց . այլ անկենդան նիւթից . . .

Լամարկ հաւատում է , որ բնութեան սրբանդի մէջ տեղի է ունենում այդ ինքնաբեր կամ անմիջական ծննդաբերումը , որի մասին մենք զեւ կը խօսենք յետագայում :

Բնութիւնն ինքը , ասում է Լամարկ , ստեղծում է — տարբութեան , խոնաւութեան , երեքտրականութեան օգնութեամբ — կենդանի էակի կազմակերպութեան առաջին գծերը , ստեղծում է նրանց այնպիսի զանգւածների մէջ , ուր բնաւ չկայ կեանքի հետք . . .

Կայ ուրեմն , ըստ ֆրանսիացի գիտնականի , ուղղակի , անմիջական սերումն — անկենդան (1) բնութիւնից : Միայն թէ բնութիւնը ծնում է այդ կազմակերպ միմիայն կենդանական կազմակերպութեան ուրազիծը :

La nature, à l'aide de chaleur et de l'humidité ne crée directement que des ébauches de l'organisation.

(1) «Անկենդան» բառը սէտք է հասկնալ յարաբերական իմաստով միայն , քանի որ (սանշունչ) բնութիւնն եւս , ինչպէս փաստեցինք նախորդ գլխի մէջ , յուստեանական շարժումի մէջ է : Անկենդան ներկայ պարագայում կը նշանակէ անօրգան , անգործարան : Այդպէս են հողը , հանքը , ջուրը և այլն :

Լամարկ հաւատում է, որ, օրինակ, պարզ ջրաննիւններ, ինչպէս նաեւ ամենապարզ բոյսերը, ջրամուսը (algue) առաջ են եկել ազդակի բնութեան, այսինքն անօրգան նիւթի, սեբումով: Մեր նախնիքները, ասում է Լամարկ, կարծում էին, թէ սրգերն ու միջամները ծնունդ են առնում նպաստաւոր տեղերում... այլ եւ այլ փաստ նիւթերից: Օրինակ, նեխած, ասորբայուժւող միւր իբր թէ ինքնին ծնում էր սաղմեր և գրանցիլիբր թէ գոյանում էին ճանները: Այդ սխալը մերկայցրեց, ունկայնում է Լամարկ, և այնուհետեւ ասացին, թէ «ամէն կենդանի մարմին յառաջ է գալիս ձախց...» Մտխոյն այդ պնդումն եւս սխալ է, բոտ Լամարկի. սխալ է նրանով որ չափազանց ընդհանուր է... Սխալ է, «որովհետեւ նա գտնոց է անում այն անմիջական սերունիները, որ բնութիւնը կատարում է բուսական եւ կենդանական զարգացման սանդղակի սկզբում... Les générations directes, opérés par la nature au commencement de l'échelle, soit végétale, soit animale. (1)

Վաղ թէ ոչ — յարում է մեծ գիտնականը — բնութեան խոր և ուշադիր հետազոտողները պիտի ընդունեն այդ վարկածի ճշմարտութիւնը...

Մենք կը տեսնենք թէ սրպիտի մօլեւանդ հաւատով գերմանացի մեծագոյն բնագէտը, Հէկկէլ, պիտի պաշտպանէ այդ «ինքնարեւ ծագման» վարկածը, Լամարկի «մօնազ» բառի տեղ սրգեգրելով «մօնէր» բառը (առաջին պարպագոյն մարմինների անունը):

Բնութիւնը — ասում է Լամարկ — կը գործէ քայլ առ քայլ, աստիճանաբար: Պէտք է եզկ հսկայական, աներևուկայելի ժամանակամիջոց, սրպէս զի նա — այդ բնութիւնը — գարգայնէ, ի լոյս ընծայէ այնպիսի բարդ կենդանական ախպարներ, ինչպէս փիղը, բնձուղարը, կոպիկը և մանուսնդ — մարդը: Երկրային կեղեւի ուսումնասիրութիւնը, նրա մէջ գտնուած հազարաւոր պէս-պէս էակների մնացորդները սերձախօս վիաներ են բնութեան այդ անհուն, աստիճանական գործունէութեան. նրանք վկայում են և այն թէ ինչ անսահման

հնութիւն ունի մեր երկրագունդը... Մի քանի հազար տարիներով չէ, որ կը չափւի այդ հնութիւնը — ինչպէս որ կը պնդէ Աստուածաշունչը — այլ միլիոնաւոր տարիներով...

Չկայ բնա խրամատ բուսական և կենդանական թագաւարութեան միջև, չկայ բնա անշարեւ, անանցանելի սահմանազիծ: Բոյսերն եւս ունին գրգռականութիւն (irritabilité), ինչպէս ասորին մանրիկ կենդանիները. կեանքը այդ վերջինինչպէս ասորին մանրիկ կենդանիներն է... Բոյսն եւս սնում է, ների մօտ սոսկ զրգոսականութիւն է... Բոյսն եւս սնում է, չնչում ու աճում է, սերում ու բազմանում է. բոյսն եւս հետեւապէս կենդանի էակ է:

Բոյս — անասուն — ասուն...

Էւօլյուսիօնը անընդհատ է եզկ, շարունակական: Մարդը կամ անասունը այդ էւօլյուսիօնի անծայր շղթայի ամենազրկերջին և ամենտարտաբայ օղակն է, բնութեան շարձած կատարելագործման ծայրագոյն աստիճանը: Բնութիւնն է բուսականագործել մարդուն և ոչ ուրիշ, գերբնական ու խորհրդաւոր սր մի էակ:

Որամատ չկայ, սահմանազիծ չկայ սղնաղուրկ և սղնաւոր կենդանիների միջև, չկայ այդպիսին նաեւ սղնաւոր էակների այլ և այլ սեւերի, բնասնիքների ու տեսակների միջև: Չկան, սողուններ, թռչուններ, կաթնասուններ — կտարած Չկան, սողուններ, թռչուններ, կաթնասուններ, այնքան զիւրին են այնքան սերտ ազդակցական կապերով, այնքան զիւրին է տեսնել նրանց միջև աստիճանական փոխանցումները... Եւ անուկ նրանց միջև աստիճանական փոխանցումները...

Ապա Լամարկ անցնում է մի այլ կարեւոր խնդրի: Ինչ ուժերի ազդեցութեամբ է, որ կենդանիների մարմինները փոփոխուում են անհամար դարերից ի վեր, գարգանում են «բնաշրջում» աստիճանաբար:

Եւ պատասխանում է. Ստիւրալթիւն, վարժութիւն, միջավայր. սնա այդ ուժերը:

(1) Philosophie Zoologique, I vol. p. 66

Աստիճակները — մի հսկայ գործոն: Նա ստեղծում է մարդկանց մէջ «երկրորդ բնութիւն»: Նա ստեղծել է կենդանիների մէջ նոր նոր օրգաններ, գործարաններ (այսինքն մարմնի այլևայլ մասեր): Օրգանները չեն, որ ծնունդ են տալիս կենդանի էակի առանձնայատուկ սովորութիւններին ու ընդունակութիւններին, այլ ընդհակառակը, սովորութիւններն են, ապրելու եղանակն է, միջավայրի պայմաններն են, որ ժամանակի ընթացքում ձեւաւորել, կազմակերպել են կենդանական մարմինը, նրա օրգանների թիւն ու ձեւը, նրա այլևայլ հակումները:

Սովորութիւնները կախումն ունենչը պատուով միջավայրից, կեանքի, ապրուստի պայմաններից:

Միջավայրը — մի այլ հզօր ու ծանրակշիւ գործոն. կարելի է ասել՝ մայր ազրիւրը բոլոր գործոնների ու ազդեցութիւնների:

Միջավայրերը այնքան տարբեր են երկրագնդի տարբեր կէտերում... Եւ նրանք ազդում, ներգործում են կենդանիների օրգանների վրայ տարբեր եղանակով. մի անգ, կեանքի պահանջների հրամայական թերադրութեան տակ՝ գործածւում, վարժւում ու զարգանում են սրոյ օրգաններ, մի այլ անգ՝ կեանքի տարբեր պահանջները, ընդհակառակը, նըւազեցնում են, ջլատում սրոյ օրգանների պաշտօնավարութիւնը և ի վերջոյ անդամալուծում են այդ օրգանները: Եւ միջավայրի ու սովորութեան արտադրած այդ փոփոխութիւնները ժառանգաբար անցնում են սերնդէ սերունդ:

Փոքր ինչ աւելի պարզարոնենք, Լամարկեան դարձւածներով իսկ: Աշխարհագրական, կլիմայական միջավայրերը կենթակայ են նմանապէս՝ փոփոխութեան: Ամբողջ Եւրոպան մի ժամանակ ծածկւած է եղել սառցային հսկայ, համայնատարած զանդւածների տակ... Միջավայրը փոփոխւելով փոփոխւում են և նրանց սահմաններում ապրող կենդանիների պահանջները: Վերջինները ստիպւած են յարմարեցնել իրենց օրգանները նոր կենսական պայմաններին ու պահանջներին, ստիպւած են փոփոխել այդ օրգանները, աւելի յաճախ գործածել կամ վարժեցնել նրանց մի մասը, երբ այդ ձեւնաւոր, օգտակար

է, և ընդհակառակը, նւազեցնել միւս օրգանների գործածութիւնը, երբ նրանք դառնում են այլևս անօգուտ ու սակորդ ապրելու համար...

Գարվին պիտի ասէ. «գոյութեան կուխն դիմունալու համար»:

Կարիքը, կեանքի պահանջը ծնեցնում է յաճախ նոր օրգաններ... Երկար դարերի անդուլ ճիգերով. այդ նոր անհրաժեշտ օրգանները, չնորհիւ յաճախակի գործածութեան ու վարժութեան, զօրանում են հետզհետէ, զարգանում են ու հասնում պատկառելի չափերի:

«... De nouveaux besoins ayant rendu telle partie nécessaire, ont, par une suite d'efforts, fait naître cette partie et ensuite, son emploi soutenu, l'a peu à peu fortifié, développé et a fini par l'agrandir considérablement» (1)

Դրա մի փայլուն օրինակը — ընձուղսն է (girafe):

Ո՞վ չի տեսել այդ երկայնավիղ հսկային կենդանաբանական պարտէզների մէջ: Կաթնասուն կենդանիներից ամենախոշորն է, ամենաբարձրը: Ինչո՞ւ է հասել նա այդ անսովոր չափերին, ինչո՞ւ է նրա հասակը այն աստիճան բարձրացել և վիզը այնքան այնպեղակօրէն երկարել...

Միջավայր, սովորութիւն, վարժութիւն — յիշենք լամարկեան պատճառների շարանը: Ընձուղսը ապրել է Աֆրիկայի խորքերում, ուր բնութիւնը գրեթէ բոլորովին չորցած է, խոտ չբուս: Եւ խոտի բացակայութիւնը ստիպել է նրան՝ կերակրել միշտ ծառերի տերեւներով, իսկ սրանք բարձր են... Տերեւները պոկելու և կանկուտ համար՝ կենդանին ստիպւած է եղել շարունակ երկնցնել իր վիզը, ճիգ է թափել ըստ կարելուցն բարձր հասցնելու իր դուռնը: Եւ անապոյ շարունակական և դարաւոր ճիգերի չնորհիւ՝ ընձուղսի վիզը այն աստիճան ձգւել, երկարացել է և նրա հասակը այնքան բարձրացել...

Նման յեղաշրջում կրել է և մարդը: Սառցինք արդէն, որ ըստ Լամարկի, նա մի սոսկ օղակ է կենդանական էւօլյուսիօնի անհատնում չլթայի մէջ: Ֆրանսիացի գիտնականը դուրս

(1) Philosophie Zoologique, II vol, p. 222-223.

է բերում մարդուն կապիւնման բարձրագոյն կենդանիներից : Այստեղ եւս , միջավայրը , կեանքի յարածուն եւ յարախոսիտ պահանջները ստիպել են երբեմնի չորքստանիին՝ փոխել , «յարմարել» , միշտ աւելի և աւելի շտկել իր իրանը , ուղղահայեաց զիրք բռնել և քայլել ուղղահայեաց . կեանքի անողք պահանջները ստիպել են նրան միտժամանակ՝ դառնալ աւելի և աւելի հաղորդական , հասարակական (sociable , gesellig) : Մարդ-կապիկները կամ թէ կապիկ-մարդիկները կենդանական աշխարհի մէջ աւելի ուժեղ և ազդեցիկ լինելու համար , ապրել են միշտ աւելի և աւելի խոշոր համախմբումներով , հորդաներով : Եւ այդ նախնի հորդաների մէջ սերտ փոխադարձ հաղորդակցութեան պահանջը արտադրել է խօսուն , յղաւոր լեզուն (langage articulé) : Անասունից առաջ է եկել ասունը : Լեզուի հնարձիւ գորգացել է ուղիղը , արհապատութեան մեծագոյն և հրաշալի գործիքը : Այդ յատկութիւնների զօրութեամբ մարդն ստացել է — դարձեալ անթիւ գարերի յամբընթաց էւօլյուսիօնով — միանգամայն գերիշխող զիրք ամբողջ կենդանական թագաւորութեան մէջ : Բայց այդ մասին հանդամանօրէն — դեռ յետոյ :

Իր ժամանակին բնաւ չը գնահատուած , գրեթէ խաղաւ մուսայւած՝ Լամարկ դարձաւ յեազայայում գիտութեան ամենափայլուն աստղերից մինը : Նրա գաղափարների շարժը կազմակերպուել է այսօր երիտասարդ գիտնականների մի մեծ դպրոց , որ կոչուած է Նեո-լամարկեան (Նոր-լամարկեան) :

Ժան Լամարկ հիմնեց «ժագման վարդապետութիւնը» . բայց այդ վերջինը լիովին յաղթանակեց միայն կէս դար յետոյ , երբ գիտական-հասարակական միջավայրը աւելի պատրաստ ու արամաղիւր էր սրբեգրելու այդ մեծ վարդապետութիւնը : Նրա յաղթական աւճիրան և հանճարեղ ձեւակերպողն էր՝ անդլիտցի Չարլզ Դարվին :

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր ՈՐ Դ

ԴԱՐՎԻՆ ԵՒ ԴԱՐՎԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բնագիտական սարսկը դարվինեան տնտի մեջ.— Լամարկ և Դարվին.— Վերջինի առակութիւնները.— Տիտանեան աշխատակից և հազարիս բարեխոյճութիւն.— Աշխարհաշրջիկ ուղևորութիւնը.— Երիտասարդ Դարվինը Բնութեան ծոցում.— Վերադարձ և կրկնացում.— Արեւեսական ընտրութեան» փորձեր.— Կենդանիները ընտանի փնտհում և վայրենութեան մեջ.— Վարդապետական ձեւակերպումը.— «Բնական ընտրութիւնը գոյութեան կռիւ մեջ».— Մարդու փարկածը.— Ժառանգականութիւն և յարմարում.— Գոյութեան կռիւ պահանջները.— Բնութիւնը մի հսկայական մարտադաշտ.— «Յարմարողներ» յարմարակ.— Անասնական ազդեականութիւն.— Փորձիկը դարվինեան քիտիայի շուրջը.— Բնագիտութիւններ և յարձակումներ.— Նոտէ կրօնը և աստուածաբանները.— Գիտական աւարկութիւններ.— Դարվինի սեւեան փառքը.— Նեո-լամարկեանները.— Մարդու ծագումն առիւ.— Իճեպիս և երեւան կիկ ստալիս կենդանի կակները.— Դարվինը «ստիցմարմութեան» մասին :

Ո՛վ էր այդ գարմանայի մարդը , որին աշխարհը աւեց իրաւամբ վերանորոգչի , Ռէֆօրմատորի մեծ ախաղապ և սրի մասին ատում են չափազանցարար , թէ նա . . . «լուծեց ըստ ինդիւրների ինդիւրը» :

Սովորական , աամիլային հասկացողութեամբ , նա այն գիտնականն է , որ ծանուցած է , թէ «մարդը կապիկից է առաջացել» . . .

Արդպէս չէ , սուկայն . Դարվին չի արել այդպէս ծանուցում .

Բնագիտական ազանդը սահմային էր Դարվինների գերգոտասանում : Նշանաւոր բնագէտ էր Դարվինի պապը , Էրազմ Դարվին , որ Գէօթէի , Լամարկի և այլոց հետ ծագման թէօրիայի նախակարասականներից է : Բնագէտներ էին և այդ պապի հայրն ու կրքայրը :

Բայց համաշխարհային և անջնջկի հոչակ վտտտակեց

միայն էրազմի թուր, Չարլզ Դարվինը (1809—1882 թ.): Նա աւելի մեծ դարկ տւեց բնագիտութեան բոլոր ճիւղերին, քան որեւէ ուրիշ գէմք: Երկու խոշոր ծառայութիւններով է, որ նա անմահացաւ գիտութեան մէջ:

1) Նախ՝ աւելի ընդարձակօրէն եւ խորասէս հիմնաւորեց բնաբանական գաղափարը, որ արդէն հռոմէական կերպով ծանուցել էր Լամարկ:

2) Երկրորդ՝ նա ներկայացրեց իր յստակ տեսութիւնը, որով բացատրում էր, թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս, ինչ ուժերի շնորհիւ է, որ կատարել է եւ կատարւում է բնութեան զրկւած տեսակների անվերջ փոփոխութիւնը, այսպէսնուսմը:

Անհուն աշխատանք էր պէտք Դարվինին՝ իր այդ մեծ տեսութիւնը հիմնաւորելու համար: Եւ նա կատարեց այդ աշխատանքը հազւագիւտ տոկոսնութեամբ ու բարեխղճութեամբ:

Տարբեր էին երկու հանձարները — Լամարկ եւ Դարվին — իրենց խառնածքով, մտայնութեամբ ու մեթոդով: Մինը Ֆրանսիացի, միւսը Անգլիացի... Լամարկ արագ ու հապտապ ըմբռնում է եւ ծանուցանում իր հսկայ ընդհանրացումը, կրթիչներով սակաւամիւ փաստերի վրայ, այժ ասլով երեւակայութեան եւ համազրոզ, փիլիսոփայական դատաւութեան: Դարվին, նախ քան նոյն կերակայութիւնները հուշակելը, աշխատում է երկար, անդուշ, ամբարում է փաստեր: Իր անդրաշնիկ, յեղաշրջող գործը հրատարակելէ առաջ, նա հաւաքեց փաստերի, դիտողութիւնների, իրողութիւնների մի ամբողջ լիւ: Եւ այդ լիւն էր, որ այնքան համալիչ, աշխարհանւած հանգամանք տւեց նրա ուսմունքին — Դարվինականութեան:

1831-ին, աւարտելով Կէմբրիջի համալսարանը, զեռ ընդամենը 22 տարեկան, նա սկսեց մի խումբ տուրիստ-հետազօտողների հետ աշխարհաշրջիկ ուղեւորութիւն «Beagle» նաւի վրայ, որ բրիտանական կառավարութիւնը զրկւած էր գիտական ու գործնական նպատակներով հետազօտութիւններ կատարելու Հարաւ-Ամերիկայի հարաւային մասերում:

Այդ նշանաւոր պտոյտը, որ նոր դարաշրջաւս պիտի

բայ անէր զիտութեան մէջ, տւեց ամբողջ հինգ տարի: Եւ հինգ տարի շարունակ Չարլզ Դարվին ուշի ուշով դիտում էր բնութիւնը, ուսումնասիրում էր կենդանիների եւ բոյսերի բաղմերանգ տեսակները բնութեան ազատ զրկի մէջ, ժողովում էր «փաստեր»:

Վերադարձին՝ արդէն իսկ չղացած էր բնաշրջման գաղափարը, սակայն չը շտապեց: Որքան էլ պարզ, աներկրայելի էր նրա աչքում այդ գաղափարը՝ այնուամենայնիւ, պատասխանատւութեան զգացումը թող չաւեց երկատարադ գիտնականին ծանուցանելու իր կերակայութիւնները, նախ քան խորունկ ու բազմակողմանի լուսարանութիւնը:

Եւ այնուհետեւ, հինգ տարի եւ նա նոր փաստեր ու դիտողութիւններ ժողովեց: Ապա 18 տարի էլ աշխատեցաւ իր ամբարած իրողութիւնները լուսարանելու եւ սխտեմի բերելու համար:

1831 - 1859...

Ամբողջ, ուրեմն, 28 տարւայ անխոնջ, քրանաջան, ծայրայեղօրէն խղճամիտ աշխատանք... Եւ միայն 1859ին էր, որ Դարվին հրատարակեց իր հիմնական աշխատութիւնը — «Տեսակների ծագումը», «On the Origine of species»!

Ռումբի պէս պայթեց նա ամբողջ արեւմտեան աշխարհի վրայ... Դարեր շարունակ ստուածարանութեան սին ու խոպան դօքտորները կերակրել էին մարդկութիւնը Հին ու Նոր Կտակարանի հակադիտական աւատակներով, իսկ վերջին 30 տարին՝ Կիւլիէն էր հաստատել մտքերի վրայ իր միահեծան փրկապետութիւնը, իր գերբնական վարկածներով, կատաստրոֆային, անկայուն բանդագուշանքներով... Այժմ անարբիտանական կղզիներից գալիս էր նոր Մեռեան, գալիս էր նոր աւետարանը, որ կոչւած էր բուսն, առնական հակահարւածով փոթորկելու խեղդուկ, սարկացուցիչ միջնորդը, փարատելու մտքերի եւ հողիների վրայ ծանրացած արեւելեական աղջամուղջը...

Աշխարհաշրջիկ իր ճամբորդութեան ընթացքում Դարվին

զարմանքով դիտում է կենդանական տեսակների անսահման այլազանութիւնը: Նա տեսնում է, թէ ինչպէս հիւսիսից զէպի հարաւ յաջորդում են իրարու՝ կենդանիների ու բոյսերի հարեւան, յարմանան տեսակները, որ նման են և տարբեր միանգամայն... Եւ մտածում է, որ նրանք բոլորը, հաւանականորէն, առաջացած են մէկ ընդհանուր ու նախնական սիպարից:

Ինչպէ՞ս, սակայն...

Վերադարձին՝ գիտնականը կզգլանում է Լճուօնի շրջակայ անդորրութեան մէջ և սկսում է ամենայն եռանդով ուսումնասիրել ընկալի կենդանիները, ուսումնասիրում է մասնաորայէս — և Երկար տարիների ընթացքում — ընտանեցրած աղաւնիների անհամար տեսակները, որ այլևայլ կողմերից ուղարկում են ընտղէտին, համեմատում է նրանց իրար հետ:

Անազին տարբերութիւն՝ այդ բոլոր տեսակների միջև: Տարբեր են նրանք՝ իրենց գոյնով, մեծութեամբ, կառուցի ձևւով, անգամ կրակքով, տարբեր են և սովորութիւններով: Եւ այդ ընտանեցրած տեսակների տարբերութիւնը անհամեմատ աւելի մեծ է, քան վայրենի տեսակներինը: Այնուամենայնիւ, չընայած այդ անազին տարբերութիւններին՝ Գարվին հաստատում է, որ նրանք բոլորը (ընտանի աղաւնիների այդ անհոշիւ տեսակներ) սերւել, առաջացել են միևնոյն նախատեղարից, մի ընդհանուր սկզբնական տեսակից, (որ կոչւում է *columbia livia*) — առաջացել են մարդու մեթոդիկ նպատակաւոր ազդեցութեան տակ:

Այդպէս և — բոլոր միև ընտանի կենդանիներն ու մշակւած բոյսերը՝ իրենց ճոխ, անսահման բազմօրինակութեամբ: Արախիսի հսկայ այլազանութիւն: Մի մի ընդհանուր նախատեղարներից կ'առաջանան և ընտանի ձիերի, չների, կատաների, ճագարների և ուրիշ կենդանիների պէս-պէս տեսակները:

Ինչպէս են նրանք առաջացել: Ո՞վ է այդպէս փոփոխում նրանց — արագօրէն և անվերջօրէն...

Հարկաւ — մարդկային ձեռքը: Մարդն է ազատօրէն

ընտրում բոյսերն ու կենդանիները, զուգաւորում ու բազմացնում՝ իր ցանկացած եղանակով, իր որոշ նպատակներով: Հարկաւ, այդ այլազան ընտանեցրած տեսակները զարձեայ բնութեան ստեղծագործութիւն են, թէպէտև առաջացած արեւսական ընկալութեամբ: Մարդը չի ստեղծագործում նրանց: Մարդը միայն փոփոխում է ազատօրէն միջավայրի պայմանները, անուցանում ու աճեցնում է կենդանի էակները միշտ նորանոր պայմաններում և Գրա շնորհիւ փոփոխում է անվերջօրէն այդ կենդանի էակների ձևը, կազմը, գործարանները և այլն: Բոլոր այդ ընտանի տեսակների նախահայրերը ծնւել են, անշուշտ, զարձեայ վայրենութեան մէջ, ազատ բնութեան ծոցում և անյիշատակ ժամանակներում. ապա կամայ-կամայ մարդը աջողել է ընտանեցնել նրանց և փոփոխել սերնդէ սերունդ, իր գորաւոր ու յեղաշրջող ազդեցութեամբ:

Բոյսերի մշակութիւնն ու կենդանիների ընտանեցումը այնպիսի հսկայ առաջադիմութիւն են արել, որ կարելի է շատ կարճ ժամանակամիջոցում, ընդամենը մի քանի տարում, սկսել, արտադրել — արեւտասկան ընտրութեամբ — բոյսի կամ կենդանու բոլորովին նոր տեսակներ:

Եւ շատ սրբոյ է այդ արեւտասկան ընտրութիւնը: Մեծ դժուարութիւն չէ մի հմուտ, բանիմաց այգեպանի համար ձեռք բերել որևէ ծաղկի կամ պտղի քանի մը տեսակներ: Մեծ ճիգեր պէտք չեն ձիապանին՝ ստանալու համար ձիու մի քանի տեսակներ՝ միևնոյն նախատեղարից: Ինչպէ՞ս կընէ կրկրագործը, երբ կուզէ ձեռք բերել զիցուք ոչխարի բաւազոյն տեսակը, ամենանուրբ բրդով: Նա ամենայն խնամքով կընարէ հօտի մէջ այն ոչխարները, որոնք ունին նրբագոյն բուրդ: Եւ կը սերէ միմիայն դրանց — այդ ընտիրներին: Նոր ծնունդների մէջ զարձեայ կընարէ ամենանուրբ բուրդ ունեցողները և զարձեայ կը սերէ: Եւ նոյն գործողութիւնը շարունակելով մի քանի սերունդի տարածութեան վրայ՝ անսահմանապարսկ կը ստանայ ի վերջոյ իր ցանկացած արդիւնքը, — կը ստանայ ոչխարի մի տիպ, որ միանգամայն տարբեր է նախատեղարից:

Այդքան հրաշալի սրբիւնքներ է սաղիս մարդու նպատակաւոր գործունէութիւնը, նրա արեւատական եւ գիտակցական ընտրութիւնը: Խոտորումները փոքր աւ փոքր կուտակելով, խտանալով և ժառանգաբար փոխանցելով սերունդէ սերունդ՝ առաջ են բերում վերջի վերջոյ խոշոր, ահագին հետեւանքներ:

Մարդկային գիտակցական գործունէութեանը զօրաւոր սատար է լինում այն մեծ բնազգը, այն զարմանալի ու համատարած ոյժը, որ կոչւում է ժառանգականութիւն: Այգեպանը, անասնաբոյժը նրա վրայ են յենում իրենց արգասաւոր գործունէութիւնը: Նրանք սերում, զուգաւորում են կենդանական նմուշները, զեկալարելով բնութեան այն երկաթի օրէնքով, որի համեմատ՝ սովորաբար «նմանը ծնում է նմանին», կամ — սամկական արտայայտութեամբ — «ինձորը իբժառայ հետու չի բնկում»:

Բայց կայ և հակամարտ ոյժը — փոփոխականութիւնը, յարմարումը: Նմանը ծնում է նմանին — այո՛, բայց ոչ բացարձակապէս նմանին: Մենք տեսնք արդէն երկու ուժերը՝ երկու հիմնական բնազդները Գէօթէի մօտ: Երկուսն էլ վերածւում են վախճանական ընտելեան մէջ՝ գործարանաւոր նիւթի ֆիզիքական-քիմիական յատկութիւններին: Փոփոխականութեան կամ յարմարումի բնազդի զօրութեամբ՝ բոյն ու կենդանի մտքմիները, իրենց չըջապատող պայմանների ազդեցութեան տակ, ձեռք են բերում իրենց անհատական գոյութեան ընթացքում նորանոր առանձնայատկութիւններ, որ նրանք բնուէն ժառանգել իրենց ծնողներից: Շրջապատող միջավայրը, այսինքն օդային մթնոլորտը, անունդի սրայմանները, արեւի լոյսը, շագն ու ցուրտը, զհամի սրայտութիւնը, սպա հազարուոր կենդանի գրայիները, թշնամիները՝ ու բարեկամները, զիշտաիչներն ու մակարոյժները, — այդ բոլորը ազդում է շարունակաբար իւրաքանչիւր մարմնի վրայ: Նրա ներքին նիւթի չըջանաւորութեան ու փոխանակութեան վրայ, և այդպիսով փոփոխւում է յաւերժօրէն մտքմիները կազմը: Փոփոխւում են մտքմիները, որպէսզի յարմարին միջավայրի յարափոփոխ պայմաններին, որպէսզի ապրին:

Այդ պատճառով է, որ երբէք երկու անհատամարմիններ թացարձակապէս, կատարելապէս չեն նմանում իրար: Ծնող և զաւակ միշտ յայտնի չափով տարբեր են լինում: Միւսնայն հօրից ու մօրից ծնած կզբայրներն ու քոյրերը, անգամ երկուսրեաները կատարելապէս նմանութիւն երբէք չեն ունենում: Նոյնիսկ մօր արգանդի մէջ գործում է շարունակ յարմարումի, փոփոխականութեան ոյժը. մօր ընդունած սնունդը տարբեր կերպով է ազդում իր արգանդի երկուորեակներից իւրաքանչիւրի վրայ: Նոյն երեւոյթը — անասունների մէջ՝ չունը, խոզը, կատուն ծնում են մի քանի ձագեր միանգամից և բոլորն էլ տարբեր են լինում իրենց այս կամ այն յատկութիւններով, որը մեծութեամբ, որը հասակով, գոյնով և ոյժով: Այդպէս — ամբողջ բնութեան ծոցում: Նման և տարբեր — միանգամայն . . . երկու տերու չէք գտնի, որ նման լինէին բացարձակապէս: Բայց և ծնունդը առհասարակ նմանում է ծնողին, չունը երբէք չի ծնի կատուէ և կատուն չի ծնի նապաստակ: Կրկինք նախկին բանաձեւը. ժառանգականութիւնը (նմանութիւնը) էապէս պահպանողական ոյժ է, իսկ փոփոխականութիւնը կամ յարմարումը — առաջադիմական:

Պարզ է, որ երկու ուժերն էլ հաւասարապէս անհրաժեշտ են մարդուն, երբ նա իրեն նպատակ է դնում կատարելագործել անտիճանաբար ընտանի կենդանիների և բոյսերի տեսակները:

Այդպէս է կատարւում արեւատական ընտրութիւնը: Դարվին, աստյինք, երկար տարիներ ուսումնասիրեց իր ձեռքով իսկ կատարեց այդ ընտրութիւնները և ստանալով սպէկուլյիչ հետեւանքներ, ձեռք բերելով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում բազմաթիւ տեսակներ, ճոխ և այլազան իրենց նորանոր առանձնայատկութիւններով — արցուկ իրեն:

Արդեօք չի՞ կատարւում նման երեւոյթ ազատ բնութեան մէջ . . . Չկայ արդեօք այդտեղ ևս ընտրութիւն: Չբկան այդտեղ ուժեր, որոնք կր փոխարինեն մարդկային նպատակաւոր, գիտակցական գործունէութեան:

— Կան, պատասխանեց նա: Եթէ մարդը կարող է իր գանձութեան համեմատ փոխոխել կենդանիների ու բույսերի ականքները, սպա բնութեան մէջ ևս տեղի ունի մտաւորակ նման գործունէութիւն: Տարբերութիւնը նրանում է միայն, որ մարդկային ուժերը գործում են զիսակցաբար, մինչդեռ բնութիւնը գործում է կուրծեն, ճարտարական անհրաժեշտութեամբ: Կայ բնական բնօրոյութիւն (natural selection) ինչպէս որ կայ արեւտականը:

«Փոյրութեան կռիւ» անունից Գարդին (struggle for life- կռիւ ապրելու համար), — այն կոչը այժմ, որ ազատ բնութեան ճոյզում փոխարինում է մարդկային ձեւերին, մարդու գիտակցական գործունէութեան: Փոյրութեան կռիւն է պատճառ, որ բովանդակ կենդանական աշխարհը մշտապէս կերպարանափոխում է, յեղաշրջւում, մշտապէս զարգանում են ու բարձրանում մի անփերջ շարք կենդանիներ ու բույսեր, մինչդեռ ուրիշ բազմաթիւ շարունակներ մարում են, անձեռաւնում ժամանակի անզուրպ ալիքների մէջ:

«Փոյրութեան կռիւ» զարգաբար Գարդին առկ է հաշարկաւոր անտեսազէւ Մարրուսից (նայնպէս անգլիացի), որ օր-նորով է այն իր «ազդարտակշտական ինտրոյակի» (1) մէջ:

(1) Անգլիան իտպոր արդիւնաբերութեան դասական հոյրերն է, և այնտեղ ամենից շուտ ծայր տակն նորագոյն արդիւնաբերութի ձեռնարկ հակադրութիւնները Մի կողմից՝ հարստութեան ու պերճանքի լուսներէ, միւս կողմից (ժողովրդային, աշխատատեղական գործունէների մէջ)՝ թշուառութեան ու ստատակայնի անգլանդները... Այդ խորունկ հակադրութեան ձեռնարկ տակն — Անգլիան մշտ անկեր տալը — դասակարգային նորագոյն բազիստներին և անգլիացի անտեսողները, բնականորոպ, գաղտնի գոյացին ու ազդարարեցին սոցիալական այդ հակադրութեանց արհարայի ինտուր, արձանագրեցին իրենց բնականաբար զգալիութեան կռիւ պատճառները:

Մեկը անգլիական բուրժուազայի այդ մտածողներից — քանտոնայ Մարթալ — յայտարարեց 19րդ դարու սկզբներում իր մի տարրարկ գրութեան մէջ, թէ մարդիկ ստանում են անհամեմատ աւելի արագ (կերպարանափոխական սրբաբնութեամբ. 1. 2. 4. 8. 16. 32. 64...), քան այլուստի միջոցները, որոնք ստանում են թուրքանոսական արդիւնութեամբ. 1. 2. 4. 6. 8. 10. 12. 14... և այլն: Հետեւորոպ, ըստ Մարթալի, բնութեան

Այդ փոխառութեան ստիւի, անա թէ ինչ էր գրում ինքը Գարդինէ, էրնոտ Հէկկելին, 1864 թ. հոկտեմբեր ճին:

«Մի քանի տարի շարունակ, ասում է նա, ես չէի կարողանում բացատրել ինձ այն զարմանալի երևույթը՝ թէ ինչպէս բուսական ու կենդանական տեսակներից իւրաքանչիւրը անբնական լաւ ուսումնասիրել է իր կեանքին, մրջմտաբար պայմաններին: Երկրորդ, լարեւմ մասում է կիւ Մակայն ևս անբնական լաւ ուսումնասիրել է անասունների կեանքը, նրանց սովորութիւնները, որ արդէն նախապատրաստում էր բնագունելու «գոյութեան կռիւ» զարգաբար: Եւ երբ մի բախտաւոր զիպրամով ձեռքս ինկաւ Մարթալի զիպրը «ազգայնաբարութեան մասին», այն ժամանակ ես էլ չգողայ բնական բնութեան ու գոյութեան կռիւ զարգաբար, իբրև պատճառ տեսակների փոխոխանութեան»:

Գարդին, որ բնութիւնը մի հակապական մտրապաշտ է Միլիանա օր մանր ու խոչոր մարմիններ գտնում են մշանջե-

սեղանի ստեղծեց չկայ ըստ մարդկային ձեռնարկու համար — և այդ պտտածառով բնութիւնն ինքը իբր թէ ասմանել է մի շարք կանխիկ միջոցներ, որոնցից են՝ թշուառութիւնը, պատեխարը, համաձայնութեան կայն ևս այդ պատեխարը Մարթալի կարծիքով պիտի շարունակեն, եթէ միայն մարդիկ, մարդուրդները իրենք միջոցներ ձեռք չառնեն անհամապիտիկ ուղիներով... ամասնական մտածարութեամբ Այդ հրահանգն է առկա բուրժուազայի փաստական Մարթալու, ևս այդ իրաւոր ազգում է նա, բնականորոպ, ոչ պերճանքի մէջ լուրջազ ճարտարա գտնակարգերին (որոնք պէտք չունեն ստճմանակելու արդիւնաբերութեանց, քանի որ ունին ստպրուստի միջոցներ) բազմաթիւ սեղանդների համար) — Մարթալի այդ ճնայրական իրաւոր սզդում է աշխատարար և աստապող ընդհանրութեան:

Ընկերակրական վարդապետութիւնը չաւտով խորակեց, ի շարք այլ անհեթեթութիւնների, նաեւ Մարթալական այդ դրսւնցունքները: Նա հաստատեց, որ բնութեան ճոխ սեղանի շարք տեղ կայ ըստ մարդկանց համար, պայմանով միայն՝ որ հարթիւն սոցիալական պիտի են ու անդունդները, որ հաստատութիւնը թաղարտէ մարդկանց միջեւ, որ գրամազուրեւ ու արդիւնաբերութեան բայց միջոցները ստանան ընդհանուր սեփականութիւն, ևս բայց մարդիկ աշխատել ու արտադրելն, միտքան ճիշդով շահագործելն բնութեան անասուն գտնները...

նական փոխադարձ ընդհարումների մէջ, յաղթում են, յաղթում են: Յաւախանական կոխ. է զեւոնի տակ և նրա կրեւին, ծովերի ու սփկանների մէջ, անգամ օդային մթնոլորտում: Մտէ՛ք երկրի խորքերը. այնտեղ թանձր մթնոթևան մէջ բոյսերի արմատներն են իրարու դէմ մաքառում— կռիւ է յանուն մտանդի ու գոյութեան: Բննեցէ՛ք ջրային մասերի, միկրոսկոպային կաթիլը— այնտեղ կուռւմ են ջրածծիները և կոտորում են իրար՝ մտանդի համար: Մի բայ, որ ասրեկան հազարուոր սերմեր է արտադրում, ապիպում է մաքառելու ուրիշ նոյնանման կամ այդտեսակ բոյսերի դէմ, որոնք արդէն բանկ, ծածկիկ են դեպիք:

Բոլոր, կենդանին կուռւմ են հազարուոր ազդեցութիւնները դէմ — ցրտի, շոգի, սովի, կրաչափ և այլն — կուռւմ են իրենց մտանդը հալթայթելու և գոյութիւնը չհչուսելու համար, կուռւմ են, որովհետեւ ծննդաբերումը նրեչաւու է, իսկ ապրուստի միջոցները համեմատաբար սակաւ: Անասնաման տոտաութեամբ սնչանում են սերմեր ու սաղմեր, որովհետեւ ամէնքը չունին հնարաւորութիւն բեղմնաւորելու, զարգանալու, որովհետեւ ամէնքի համար չը կայ յուս, չը կայ օդ և մտանդ: Զարգանում է միայն համեմատաբար փոքրիկ մար, բնութիւնը նպաստաւորում է ամէնուրեք — թէ բուսական և թէ կենդանական աշխարհի մէջ — միմիայն փոքրութիւն էակների զարգացումը, նրանց՝ որոնք համեմատաբար լաւ են զինւած, ուրիշ խօսքով՝ նրանց՝ որոնք ամենից աւելի լաւ կը յարմարին իրենց շրջապատող միջավայրին, իրենց դաժան գոյութեան պայմաններին...

Կռիւ՛ գոյութիւնն արահուփելու համար, կռիւ՛ սերունդը բազմացնելու համար... Եւ այդ կռիւր — տամ է Դարվին — այդ մրցումը տաննապետ կառավարի ու արհարալի է միևնույն շնասկի կենդանիների մէջ... որովհետեւ ապրում են նրանք նոյն պայմաններում, բաժանում են միևնոյն մտանդը, բնութն են միևնոյն դեպիք, բնակավայրը: Այդ բուսն ու սննդապրում մրցակցութեան մէջ վնասող գործոն հանդիսանում են այն փոքրիկ, անհատական տարբերութիւնները, այն թեթեւ,

հազիւ նշմարելի յատկանիչները, որոնց հարձիւ միևնոյն անասնական տեսակի մէջ, մի կարգ անհատներ զերակրոււմ են, յաղթում ու գուրս մզում իրենց մրցակից ցեղակիցներին:

Երեւոյեղէ՛ք բնութեան մի անկիւն, մի անասն, կամ մի գաշտավայր, ուր ապրում է գալիերի մի ցեղ: Նրանց մտանդը խոտածարակ կենդանիներն են, որոնց ճանկում ու յոյստում են նրանք, մերթ ոյժով, մերթ ճարպկութեամբ ու խորամանկութեամբ: Երեւոյեղէ՛ք, որ այդ խոտակեր անասնների սե է տեսուր — զիցուք այժեամբերը — նոյն միջավայրում բազմանում է տարածւում, իսկ միւս խոտակեր տեսակները նուազում են այս կամ այն պատճառով: Գալիերի գոյութիւնը այնուհետեւ, ուրեմն, կախած կը լինի այն հանգամանքից, թէ որքան յաճողութեամբ նրանք կ'սրան արտադափ աշծեաններին, որ նրանց (գալիերի) համար ամենագոյն արմն են: Բնակութեամբ, սոյք գալիերի մէջ միմիայն երակն շուն կուռնուն ապրելու, որոնք կ'ուսնանան ամենէն սրտըստ ստրեր և ամենամեծ ճարպկութիւն ու ճկունութիւն: Միմիայն երակն կ'ազանային իրենց սերունդը, ժառանգաբար փոխանցելով նոյն նպաստաւոր յատկութիւնները: Այն ինչ՝ միւսները զուրկ լինելով այդ յատկութիւններից, պիտի մեռնին հեղձեալ:

Յաղթողները, ուրեմն, անպատճառ ամենէն ուժեղներն են, ոչ էլ ամենէն յաղթանգամները: Մի մակարդծ, մի պարզիտ, որ ամուր կուռչած է կենդանական կամ բուսական սե է որդանիլովի և անյոյ ծծում է նրան, ապրում նրա հաշտով, — նոյնպիսի «յաղթող» է գոյութեան կռիւ մէջ, ինչպէս մի փիղ կամ մի վագր: Մի արծիւ, որ սրտան աչքերով չափում է ընդարձակ ասարածութիւններ և զահաւլէ՛մ սրտոյքներով ճանկում է իր զոճերը — աւելի ուժեղ չէ նոյն գոյութեան կռիւ համար, քան մի բու, որ չի տեսնում, պէտք էլ չունի աչքերի, քանի որ ապրում է գիշերային խուարի մէջ:

Կախում — միջավայրին յարմար իլն է: Եւ կենդանի մարմինները ամեն ժամ, ամեն վայրկեան յարմարում են այդ մի-

ջալաչրի մշտափոփոխ պայմաններին և զրոս համար իրենք ևս շարունակ փոփոխվում են, «բնաշրջում» : Մանրիկ, չնչին փոփոխութիւնները բազմամտով, կուտակելով, առաջ են բերում — մի շարք դարերից ու սերունդներից յետոյ — նոր ձևեր, օրգանական նոր տեսակներ, որ ամբեր են նախա- արկարկից : Նոր տեսակներ՝ ընդհանրապէս աւելի բարդ, և աւելի կատարելագործւած :

«Յարմարումի» պահանջը այնքան ուժեղ ու հրամայա- կան է, որ մի շարք կենդանիներ ընդունում են անգամ ի- բնեց չրջապտտի գունաւորումը : Այդպէս, օրինակ, բեւեռա- յին ձիւնապատ երկրների բազմաթիւ կենդանիներ ընդունում են ձերմակ գոյն, ձուլում են ձիւն հեռ, որպէս զի աննշ- մարիկի գտնան իրենց թշնամիների համար : Այլ կենդանի- ներ, որ բնակւում են սնապատների մէջ, ստանում են զի- դին, աւաղային գոյն :

Մի ստեղծի, օրհասական մտքառում... Եւ վա՛յ յաղ- թւածին — հնչում է բնութեան անողորմ ճիշդ : Ով որ պատ- չած գէնք չունի կուկու համար, անդունդ է գնում և ամ- բողջ սերունդով բնաջինջ լինում, իսկ ով տանում է յաղթա- նակը, այսինքն ով որ կարողանում է յարմարել, փոփո- խելով իր օրգանները, հակադրելով միջավայրի հարստնե- րին — նա էլ աճեցնում, բազմացնում է իր սերունդը և ա- պահովում նրա հեռաւոր գոյութիւնը :

Այդպէս է ձուլուել անասնական ազնւականութիւնը (Ասիւճն ու արծիւր, հարկաւ, «ազնւական» են մակարոյժի ու բուխ հանդէպ) : Այդպէս է կատարել ժամանակի աննու- նութեան մէջ կենդանիների ու բոյսերի անտանման յառաջ- դիմութիւնը, «սլոզրէսը» սկզբնական ջրածճիւրից մինչև մարդը :

„Thus, from the war of nature, from the famine and death, the most exalted object which we are capable of conceiving, namely, the production of the higher animals, directly follows: (1)

«Այդպիսով — եզրափակում է մեծ անգլիացին իր թեւա- ւար ու քնարաչունչ վերջարանի մէջ — բնութեան պատերազ- մից, սովից և մահից՝ ուղղակի հետեւում, ծնունդ է առ- նում ամենալուսեմ երեւոյթը, որ մենք կարող ենք պատկերա- ցընել, այն է բարձրագոյն կենդանիների ստեղծագործումը...»

Այս է անա Դարվինականութեան կնախեր : Այդպէս ուրեմն, բոլոր ներկայումս գոյութիւն ունե- ցող անասնական և բուսական տեսակները սուղացել են — ստաթիանորար բնաշրջելով — նախնական սակաւութիւ տի- պոսներից և այդ բնաշրջումը, այդ աստիճանական էւօլիւ- սիօնն ու կատարելագործումը բացատրելու է բնական ընտը- ղութիւնով : Վերջինը կատարում է գոյութեան կուլի, անդուլ ու կատարի մրցման միջոցով : Իսկ այդ անեղ մրցումը, այդ անողոք, բնաջինջող գոյամարտը բլխում է այն իրողութիւնից՝ որ բնութեան մէջ ծննդաբերող բուսական ու կենդանական սողմերի թիւը անհամեմատ աւելի մեծ է, քան սպրտաթի միջոցները, և որովհետեւ բոլորի համար անանդ չըկայ — սուսի քիչերը միայն կ'ապրին ու կը բազմանան : Անթիւ դա- րերի այդ բնաշրջման հասանքի մէջ գործում են անընդհատ երկու ոյժ . մինը՝ առաջադիմական է և կոչւում է յարմա- րումն, միւսը՝ պահպանողական է և կոչւում է ժառանգա- կանութիւն : Սերունդները անհասնում չարքերով, անվերջ ձեւաւորութիւններով յաջորդում են իրարու, ժառանգարար սալով միմիանց որոշ տեւողական յասկութիւններ և միեւնոյն ժամանակ անդադար խոտարելով սկզբնական արկարկից, անդադար կերպարանափոխելով :

Մի ճշմարիտ փոթորիկ յարուցին Դարվինի բնափոխու- փայական թեղիտները : Ամենուրեք յուղեկցին կրքերը և տե- ղաց բանակութեան, թեր և գէժ վերլուծումների տարափը : Անգուստ, մոլեղին թշնամութիւն՝ մէկ կողմէն, բուսն, ան- վերապահ խանդավառութիւն միւս կողմէն :

Ամէնէն աւելի փոթորկուեց, բնականորար, թէօրոջների, ստուածարանների աշխարհը : Նրանք խիստ և վճռականու- րէն հակամարտ դիրք բռնեցին դէպի նոր, գիտական վարդա-

(1) Ch. Darwin, „On the origine of the species“, 1861 Թ. էջ 525.

պատուութիւնը և ընդդիմադրեցին նրան՝ կրօնի, Աստածաշնչի պատգամները: Պատգամներ՝ որոնք — տեսանք արդէն — չեն կարող դիմանալ լուրջ, բանաւոր քննադատութեան: Կրօնի և գիտութեան հակամարտութիւնը թափով շեշտեց Դարվի- նի առաջին ծանուցումներից ի վեր և այնուհետև միշտ ա- ւելի սրեց, բորբոքեց... Երկու հակոսմանների հաշտու- թիւնը այլևս անհնարին էր:

Առարկութիւններ նոր թէօրիայի դէմ լուեցին նաև գիտ- նականների բանակից: Քիչ յետոյ կը յիշենք նրանցից մի քա- նիսը: Այսօր բաւական սուտարացի է այդ առարկութիւն- ների շարանը: Ասել չէ, ի հարկէ, թէ Դարվինիզմը հնացել է արդէն, մաշեւել ու կորցրել է իր գոյութեան իրաւունքը: Դարվին, այդ համատ, գերազանցօրէն շիտակ մարդը, չէր էլ յաւանքել, թէ իր թէօրիան լիակատար, բացարձակ ճշմար- տութիւնն է: Գիտական ճշմարտութիւններն ևւս ենթակայ են էւօլյուսիօնի, բնաչրջման: Նրանք զարգանում, կատարելա- գործում են աստիճանաբար, քայլ առ քայլ, հանգրւան առ հանգրւան: Հնարաւոր է, որ «Բնական ընտրողութեան» տե- սութիւնը բաւարար չը լինի, ինչպէս այդ վաղուց յայտարա- րել է էւօլյուսիօնիզմի հայակապ փիլիսոփայ և ջերմ դարվի- նական Հերքերտ Սպենսեր: Հնարաւոր է, որ նա սպազա- յում լրացել, փոփոխել: Բայց եթէ անգամ նա երբ և իցի փոխարինուի մի այլ թէօրիայով — ասում է պարիզեան ակա- նաւոր գիտնական Դըրլամ (1), որ Դարվինիզմի քննադատնե- րից մինն է — այնու ամենայնիւ Դարվինի անունը յաւիտե- նական, անմահ կը մնայ, հէնց այն պատճառով, որ նա կեն- դանի էակներն հրաշալի յարմարեցումը բացատրել է սակ բնական ուժերի խաղով, ուր չըկայ ոչ աստուածային միջամ- տութիւն, ոչ էլ ս ևւ է մետաֆիզիկ, բնագործնական մի վար- կած:

Գլխաւոր առարկութիւններից մինը դարվինական թէօ- րիայի դէմ վերաբերում է մի քանի բարդ, կատարելագոր-

ւած օրգաններին: Ինչպէս բացատրել բնական ընտրողու- թեամբ այնպիսի կնճռոտ մեքանիզմների, գործարանների ա- սաջացումը, ինչպիսին է, օրինակ, աչքը, ականջը բարձրա- գոյն կենդանիների մօտ:

Դարվին նախատեսել էր այդ առարկութիւնը, և, չընա- յած լուծման գծւարտութիւններին, յայտարարել է, որ այնու- ամենայնիւ, դարձեալ իր թէօրիան է, որ կարող է յայտնի չափով լոյս տրուել այդ կնճռի վրայ: Անհնարին ոչինչ չկայ ենթադրելու, որ ամենագարդ աչքն իսկ կազմակերպւել է, աստիճանաբար փոփոխւելով, կատարելագործւելով, աստի- ճանաչար անցնելով այլևայլ «հանգրւաններ», վաստակելով միշտ նորանոր մասնիկներ, որոնցից իւրաքանչիւրը օգտակար է եղել կենդանական տեսակների համար, նրանց գոյութեան պայքարի մէջ: Բնական ընտրողութիւնը, որ մի կոյր, ճա- կատագրական ոյժ է, որ չըխաէ գործել սրտը դիսաւոբութիւն- ներով, հասցնում է ամենամեղատար, ամենագարդ օրգաննե- րը ամենակատարեալ վիճակի, հասցնում է անգիտակցաբար, մեքենաբար:

Տէլէօլոգիայի (նպատակարանութեան) պաշտպանները պըն- դում են, թէ կենդանի էակի իւրաքանչիւր օրգանը «սակզ- ւած» է յայտնի դիտաւորութեամբ, նպատակով, անպատճառ որեէ պաշտօն կատարելու համար. աչքը — տեսնելու համար, սկանջը — լսելու, ձեռքը — բռնելու ևայլն: «Նախախնա- մութիւնն է այդպէս սահմանել»,...

Բայց որ նախախնամութիւնը այդ սրտագոյում ոչ մի դեր չունի, դրան սպաջոյց՝ այսպէս կոչւած «նախատարբա- կան օրգանները» (organes rudimentaires), որ գանոււմ են զանազան կենդանիների մէջ և ոչ մի պաշտօն չեն կատարում: Կան աստիճանիկ կենդանիներ, որ աչքեր ունին, բայց չեն տեսնում: Ապրելով ու գործելով գետնի մթին խորքում, նրանք միանգամայն ընտելացել են իրենց միջավայրին, աչ- քերը ծածկւած են անթափանցիկ քօղով ևւ արեւի լոյսը եր- բէք չի մաներ նրանց մէջ: Այդ կենդանիների աչքերը աւե- րել կը... իրենց գոյութեան պայքարի մէջ նրանք տեսնե-

(1) Yves Delage, Les Théories de l'Evolution,

յու պէտք չեն զգար: Ուրեմն «Նախախնամութիւնը» մուրբեղ է նրանց ուշքեր տալով...

Կան միջտաններ կղզիներէ վրայ, որ զուրկ են թեւերից: Հարց է արւում. արդեօք Նախախնամութիւնն է դժբաղդացրել այդ խնդներին, գրկելով նրանց թռչելու բախտից... Բայց այստեղ եւս Նախախնամութիւնը բնաւ զարծ չունի: Այդ միջտանների համար բարեբախտութիւն է թեւ չունենալը: Եթէ ունենային, պէտք է թռչէին, բարձրանային օդ, բայց... չէ որ կղզի է քամին կարող է մղել նրանց դէպի ծով և այնտեղ նրանք պիտի կորչէին: Միջտանները, ուրեմն, զարձեպ յարմարել են իրենց միջավայրին, կիսաքի սրայմաններին: Գոռութեան կուր մէջ ձեւնաւ է եղել նրանց թեւ չունենալը, ուստի եւ նրանք չեն զարգացրել իրենց թեւերը: Ահաւաստի պարզ ու բնական բացատրութիւն:

Նոյն կերպ բացատրելի են մի շարք ուրիշ երեւոյթներ: Ինչու օձը, մողէսը մէկ հաս թոք ունեն, իսկ միւսը չկայ, կամ սաղմնային վիճակի մէջ է: Պտաճաւն այն է, ըստ զարգիւնիդմի, որ այդ կենդանիները դարերի ընթացքում յարմարելով սերնդէ սերունդ իրենց կենսական սրայմաններին, միշտ աւելի և աւելի ձգւել են, երկարացրել իրենց մարմինները և այնքան են նեղցել, որ այլևս անհարկն է եղել երկու թոք պահել: Գործնապէս, գոյսութեան կուր մէջ շահաւէտ է եղել ի տեղի երկուսի, ունենալ մէկ հատ թոք, և աւելի մեծ, զարգացած: Ուրեմն, մի թոքը շարունակ վարժեցրել են, միւսը ոչ: Մինը զարգացել է միւսի հաշտով:

Ուրիշ մի շարք աւարկութիւններ եւս կան, ձեւակերպուած Սպինսերի, Նէօ-Լամարկեանների և այլոց կողմից: Հետո կը տանէր, եթէ մի առ մի կանգ ասնէինք բոլորի վրայ(*):

(*) Մենք մի կողմ թողնեք և մի շարք ուրիշ կենսաբանական խնդիրներ, որոնց մէջ կարեւորագոյնը՝ ժառանգականութեան խնդիրն է: Մենք միայն հարեւանագորէն շօշափեցինք այդ խնդրերը, առանց սակայն կանգ առնելու այն բազմաթիւ թէօրեանների վրայ որ գոյութիւն ունին նրա շուրջը: Նոս ուրիշ հարցեր եւս կան (օրինակ, «սեռական ընտրութիւնը»), որոնց վրայից սահմանձ ենք անցնել, սպասելով և յուսալով, որ յետագայում մեր կենսաքի սրայմանները հնարաւորութիւն կը տան ընդարձակելու ներկայ ուսումնասիրութեան ծաւալը:

Ոմանք — և ամենից առաջ Հերքերա Սպինսեր — անբաւարար հոչակեցին բնական ընտրութիւնը, ուրիշները անբաւարար գտան «գոյութեան կուր», չեղանցին, որ բոյս-կենդանական էւօլյուսիօնի սրոյէսի մէջ՝ «կուր» հետ միասին ոչ նուազ կարեւոր դեր է խաղում համեմատելու բեան զործօնը... Կենդանի էակները ոչ միայն կուր են մղում, ոչ միայն հալածում ու ջնջում են փոխադարձաբար, այլ և շարունակ հաւախըմբում են, միանում այդ կուրը զի բացնելու նպատակով, կազմում են ընկերութիւններ (sociétés animales), սրասերազմի գտա գտա, հակամարտ բանակներ: Այդ ընկերային բնագրը կը հասնէ իր բարձրագոյն սրայայտագութեանը՝ մարդ-կենդանիների մէջ: Դարվինն եւս չեղան էր այդ կարեւոր իրողութիւնը, բայց բաւականաչափ չէր գնահատել:

Յիշենք այն մի քանի գլխաւոր ստորկութիւնները, որ ձեւակերպում է Նէօ-Լամարկեան զարգը:

Մի քանիսը այդ զարգի ներկայացուցիչներից, միտելով Դարվինի ծառայութիւնները, սնդում են, որ Լամարկ արդէն իր միջավայրի քերիայով (la théorie du milieu) աւել է միակ բանային կենդանական բնաշրջումի մեկնաբանութեան համար: «Միջավայրը ինքն արդէն փոխախում է յաւերժօրէն... նորանոր կարիքների, պահանջների մղումի տակ»... «Լը Գանսիկ, առաջնակարգ Լամարկեաններից մէկը, այսօրէս է յայտարարում իր Les limites du connaissable գրքածքի մէջ:

«Տեսակների ծագումը» աշխատութեան յարուցած խանդավառութիւնը երկար ժամանակ արգելում էր տեսնելու, թէ որքան թերի էին դարվինեան մեկնութիւնները: Այնու ամենայնիս, վերջ ի վերջոյ նկատեցին այդ և ապշանքով տեսան, որ Լամարկն արդէն վաղօրոք աւել էր բանային մեկնելու համար այն, ինչ որ չէր մեկնել Դարվինը»...

Կրկնում ենք, Դարվինի վարդապետութիւնը, անագին լոյս սփռելով հանդերձ կենսաբանական աշխարհի վրայ, դեռ ամէն բան չի լուսաբանում այդ աշխարհի մէջ, դեռ կարօտ է լրացումների: Ինքը մեծ վերանորոգիչը — այնքան զարգացել էր յայտարարութիւնների մէջ — առում է մի տեղ:

«Ինչո՞ւ շատ քան մուր կ' (սեռակների ծագման) խնդրում... եւ դա բնազարմանադի չի, ի նկատի ունենալով մեր խորունկ ցիցխարխիւն՝ մեզ շրջապատող կակների փոխադարձ շարաբերոտքեան մասին... Ո՞վ կարող է բացատրել րե ինչու մեկ սեռակը (կենդանիների կամ բոյսերի) ստաց կ գալիս մեծ քանակով եւ սարածուռ մեծ չափերով, միևիդեռ մի ուրիշ սեռակը, առաջինի մոտ ազգակիցը, հազազիս է եւ սահմանափակում ենք սարածուռքեան փայ... Այնուամենայնիւ — րեւ շատ քան սակախի մուր է եւ դեռ երկար ժամանակ մուր կը մնայ, եւ չեմ կասկածում — երկարատե ու խնամոն ուսումնասիրութիւնից յետոյ — որ... սեռակները սնկոտիտի չեն, որ միևեռնոյն ցեղի պատկառնող սեռակները առաջացել են ուղիղ գծով մը ուրիշ, ստիտարար մարած, սեռակից... Վերջապէս, եւ հաւուզած եմ, որ բնական ընտրութիւնը գիտաւոր միջոցն է եղել, երե ոչ միակը, կենսամեղերի փոփոխութեան»...

Բայց, Լամարկեան սեսուլթիւնն եւս միանեծանօրէն չի կարող բացատրել օրգանական կեանքի բոլոր կիճուտ երեւոյթները: Միջավայրի և մարգանքի թէօրիան մեծ կշիռ ունի, անտարակոյս, սակայն փորձեցէ՛ք բացատրել սոսկ մարդանքով՝ օձի թունաւոր ատամի գոյացումը... Խիստ արամարանական և հաւանական է մարգանքի հիպօթեզը՝ ընծուղի վերաբերմամբ: Բայց կարող էր օձի սովորական ատամը, ստախճանարար մարգէլով, դաւնայ բուճաւոր, ձեռք բերել մի փոքրիկ խողովակ, որի միջից հոսում, իջնում է թոյնը...

Թւում է թէ այդ անհամեմատ աւելի զօրուոր է դարվինեան բացատրութիւնը, աւելի ճշմարտանման է կնթաղել, որ օձի այդ թունաւոր ատամը երեւան է եկել, իբրեւ մի պարզեւ բնական կոյր ընտրութեան, իբրեւ մի զէնք գոյութեան կուր համար:

Անկարելի է լամարկեան հիպօթեզով, այսինքն սոսկ մարդանքով բացատրել և մի շարք նոր օրգանները, զործարանների ծնունդը: Երբ կան արդէն որս շրջաններ, նրանց կարելի է աստիճանական մարդանքներով փոփոխել, բնաշրջել, կատարելագործել. բայց մարդկով, չեն կարող ստեղծել նոր օրգաններ:

Լամարկ մի անգ ասում է, թէ երբ կեանքի փոփոխուող

պայմանների աղբեղութեան սոսկ կենդանի էակը պահանջ է զգում նոր օրգան ստեղծելու, նա «ձգտում է ստեղծել այդպիսին և ի վերջոյ ստեղծում է»:

Սակայն, այդ պնդումն եւս թւում է բռնազբոսիկ: Դրուար է ըմբռնել, թէ ինչպէս կենդանու ներքին ձգտումը կարող է նրա մէջ նոր զործարան ստեղծել — լսողութիւն, տեսողութիւն ևն.: Միւս կողմից, այդ վերջին հիպօթեզն արդէն սարքեր է առաջինից (մարդկու-չմարդկու հիպօթեզից) և մտցնում է դուալիզմ, երկուութիւն լամարկեան տեսութեան մէջ, մինչդեռ դարվինական տեսութիւնը մեկ է, ամբողջ և ներդաշնակ(*):

Յամենայն դէպս, աւելի ճիշտ ու արդար կը լինէր՝ երկու մեծ գիտնականներին — Լամարկին և Դարվինին — դիտել ոչ իբրեւ հակառակներ, այլ փոխադարձ լրացուցիչներ, երկուան էլ հանճարեղ ու արգասաւոր: Երեք տարի քրանից առաջ, 1909ին լրացաւ յիսուն տարի այն օրից, ինչ աշխարհ է եկել Դարվինի անմահ ու անդրանիկ գործը — Տեսակների ծագումը: Եւ նոյն 1909 թւին մի ուշադրաւ դուալիզմութեամբ լրանում էր 100 տարի այն օրից, ինչ հրատարակել է Լամարկի նոյնպէս անմահ ու անդրանիկ աշխատութիւնը — Կենդանաբանական փիլիսոփայութիւնը: Վերջինի երախտազէտ հայրենիքը արձան կանգնեցրեց իր արժանաւոր դուակին, պարիզեան Jardin des Plantesի մէջ: Արասանուկին հանդիսաւոր ճառեր, խօսեց նշանաւոր ֆրանսիացի կենդանագիտաւոր ճառեր, խօսեց նշանաւոր ֆրանսիացի կենդանագիտաւոր ճառեր — որ իր ըմբռնումներով շատ մօտ է լամարկեանութեան — և ասաց ի միջի այլոց հետեւեալը.

«Լամարկ—Դարվին! երկու դիմերը ոմանք հակադրում են, համեմատում, իրեւ երկու մրցակից եր ոյնակական խաղերի կրկնում, որպէս զի վննն, րե որքն պիտի է սալ ստալոտրեան արմաւենին»:

(*) Լունկէվիչ, «Հինը և նորը բնաշրջման թէօրիայի մէջ», «Ռուս-սկոյէ Բօգատսովօ» հանդէսում:

«Անկի սողաւ կը լինէր՝ դիտել կրակն, որպէս երկու մարտիկներ միմե-
կոյն զարտաբար յարքանակի համար:

«Գարվիմ շատեղեց ընաշրջան զարտաբար, բայց նա նշքրիս մեակերպեց
այն, մշակեց, հիմնաւորեց վաւերական տակաւնի հսկայական ֆակտոր-
որոնց մէջ իր սեփական դիտարարիւնները մեծագոյն տեղն են բռնում: Առանց
նրան ընաշրջան զարտաբար (լատարիկան զարտաբար) կ'ուրեւնար, հարկաւ,
ընկիր գիտնական կողմնակիցներէ միայն մի փոքրիկ շրջանակ: Ենորհիւ նրա,
բոլոր ընդդիմադրիւնները յարքանարեցին, այլ եւս չըկան ընթացներ:

«Պայտար էջողիցիօնիսներէ (ընաշրջական) եւ հակաէջողիցիօնիսներէ՝
միջեւ՝ վերջացած է: Կայ միայն պայտար՝ նեո-լատարիկաններէ եւ նեո-դար՝
վիկեաններէ միջեւ — եւ բոլոր այդ ստրածայնութիւնները մտցնել չըսան նը-
րանց համաձայնութիւնը հիմնական զարտաբարներէ մէջ: Երբ Լատարկ սոյ-
րեր այսօր, նա քերեւս կ'ընկուներ դարվիկեան բացատրութիւնը ընաշրջութեան
մասին, եւ դա ընաւ չէր նշարեցներ նրա սեփական մեծութիւնը:

«Լատարիկ տուած յոճեան մէջ (ընաշրջան կենտի մասին) չի ամփոփ-
ւած բովանդակ ճշմարտութիւնը, նոյնը կաւելի և սակ եւ Գարվիկի յոճեան
մասին: Առաջարկել են որիչ մեկնութիւններ եւս, պիտի առաջարկին այսու-
մէջ խաւարուի: Բայց մի մի մասնիկ իւրաքանչիւրից կ'արդիւ կը յարստելի-
եւ այդ մասնիկներէ կը ստեղծի բովանդակ ճշմարտութիւնը:

«Ինչ են նշանակում այդ վարտումները, այդ վիճերը... Մեր բոլորիս
փրայ ճախրում է, առանց մարկու, Լատարիկ մեծ զարտաբար, յարտանում
է եւ անեւանութեանը ճակնաճ Գարվիկի մեծ դիմելը... Բաւական է, լը
հակարկեմ այլ եւս այդ երկու հանձարներին... Թողնեմ իւրաքանչիւրին իր
փառքը...»

* * *

Միմիայն սեփական գիտողութիւններէ անսպառ սղաշարը
չէ, որ ամուր կերպով հիմնաւորել է զարվինիան թէօրիան:
Կան եւ գիտութեան, բնագիտութեան նորագոյն ճիւղերը՝ հա-
մաժամական կադմաթոսութիւնը, հնէաբանութիւնը(*) (pa-

(*) Հնէագիտութիւնը բնագիտութեան այն ճիւղն է, որ վերաբերում է
կենդանների ու բոյսերի մեռած մնացորդներով, որոնք գտնուում են երկ-
րի խորունկ ծալքերի մէջ:

léontologie) եւ մանաւանդ սաղմնաբանութիւնը (embryologie):
Սյդ վերջինը անմիտակի և չտիպազանց ուշադրաւ փաստել է
բերում ի հաստատութիւն Գարվինականութեան: Նա ցոյց է
տալիս այն սերտ, սղագակցական կապը, որ գոյութիւն ունի
կենդանական բիւրաւոր տեսակների ու ցեղերի միջեւ, ինչպէս
նաեւ մարդու և անասունների միջեւ: Ինչ է սաղմնաբանու-
թիւնը:

Նա ուսումնասիրում է բուսական և կենդանական սաղ-
մերը, իրենց ատտիճական զարգացման մէջ: Նա ցոյց է տա-
լիս սղաժառ, աներկբայելի ձևով, որ կայ հրաշալի ներգաշ-
նակութիւն, մի կողմից՝ կենդանական սաղմի այդ ատտիճա-
նական զարգացման, միւս կողմից՝ երկրագնդի վրայ յաջոր-
դաբար առաջացած բոյսերի ու կենդանիների երկայնածիգ
չղթայի միջեւ: Ուրիշ խօսքով, կենդանի անհատի սաղմնային
զարգացումը (բնաշրջումը) ընթանում է զուգանաբար ամ-
բողջ կենդանական տնով հնէագիտական զարգացման հետ:
Անհատի զարգացումը միայն կարճ ու սրտորտ կրկնութիւնն է:
Ամբողջ ցեղի (պոպուլյան սամբողջ շղթայի) զարգացման:
Աւելի պարզեմ:

Մարդս իր անհատական գոյութեան սկզբում մի պարզ
ձու է, մի փոքրիկ բջիջ: Նոյն բանն է ներկայացնում ամէն
մի անասնական մարմին, որ ծնունդ է առնում սեռական
բեղմնաւորման ճանապարհով: Մարդկային ձուն իր տեսքով
շատ նման է միւս կաթնասուն կենդանիների ձուերին, իսկ
բարձրագոյն կաթնասունների ձուից նա սնչով չի տարբե-
րում: Կապիլի ձուն չի տարբերում մարդու ձուից, մար-
դունը — ձիու կամ շան ձուից: Տարբերութիւնը յետոյ է
պարզուում, ատտիճանական էջողիսիօնի ընթացքում:

Ատտիճանաբար բնաշրջելով, կենթարկելով զանազանա-
որման (differentiation), մարդկային սաղմը անցնում է այն
բոլոր փուլերը, որ անցել են արդէն նրա անասնական նա-
խնապրերը անյիշատակ ժամանակներից ի վեր, միլիոնաւոր
տարիների ընթացքում: Արդարեւ, մարդու սաղմի զարգաց-
ման մէջ կայ մի փուլ, մի շրջան, որ անցնում են և ատտիճ-

ձկները, այսինքն, մի շրջան, ուր սպառազայ մարդը թաղարկին ձկան կերպարանք ունի: Յետոյ այդ ձկանման մարդկային մարմինը, աւելի եւս զարգանալով, ընդունում է աւելի բարձր, երկակենցաղ սրտաբանների կերպարանք. ապա, աւելի ուշ, շարունակ ընաչըլելով, կերպարանափոխուելով, անցնում է կաթնասունների այլ և այլ ստորձանները, մինչև որ ստանում է մարդկային պատկեր: Նոյն ստորձանական կերպարանափոխումներն է կրում ամէն մի բարձր կենդանու սաղմը — մի փղի, մի կապիկ, մի առիւծի ևն.:

Արդ, երկրագնդի պատմութեան մէջ՝ մենք տեսնում ենք մարդու հեռաւոր պատկերի նոյն յաջորդական շարանք. ձկներին յաջորդել են երկակենցաղ կենդանիները, որոնց յաջորդել են սաղմին ու բարձր կաթնասունները:

Մարդ-էակը, այդպիսով, ընդամենը մէկ տարւայ մէջ կարում է այն հսկայ տարածութիւնը, այն անհասն շրջանները, որ իր պատկերը — այսինքն, ամբողջ մարդկային ցեղը — անցել են միլիոնաւոր տարիների մէջ: Միլիոնաւոր տարիներ են պէտք եղել, որպէս զի մարդկային ցեղը ստաջանայ, ծնունդ տաւէ անսանական տեսակներից. իսկ երկխան, որ մօր արդանդի մէջ սկզբում մի անկերպարան պրօտօպլազմ է, մի աճեւ նախանիւթ (երկրագնդի տաալին ընակիչներն եւս եղել են նոյն վիճակում), երկխան ընդամենը մի տարւայ մէջ մարդկային կերպարանք է ստանում... Երկու զուգահեռակների ներդաշնակութիւնը ակներեւ է և չափազանց հետաքրքրական:

Այդպիսով, սաղմնաբանութիւնը ինքնին արդէն սահմանում է ամենասերտ ազդակցութիւն մարդու և անասունների միջեւ... Սակայն, բաւական չէ այդ կրօնի, Աստուածաշնչի, ստեղծագործութեան ջատագովները աւելի ակներեւ, աւելի բազմաթիւ փաստեր են պահանջում՝ ասունի և անասունի այդ «սրբապղծող ազդակցութիւնը» հաստատելու համար: Դարվինականութիւնը ընդ առաջ զնայ այդ պահանջներին ևս:

Մարդու ծագման մասին Դարվինը շատ ուշ հրատարակեց իր փաստերն ու հայեացքները: Եւ այն — դիտմամբ: Արդէն իսկ «Տեսակների ծագումը» մի ահաղկն ու «shocking» անակնկալ էր ժամանակակիցների համար, մանաւանդ Անգլիոյ կրօնամոլ ու բարեպաշտ հասարակութեան համար: Մեծ ընդդէմը համբերեց, սպասեց ամբողջ 20 տարի եւս, անգաղար աճեցնելով իր փորձերի ու դիտողութիւնների պրակը և միայն 1871 թւականին լոյս ընծայեց իր հոնձարի փառահեղ արդատիքը

— ՄԱՐԳՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ

Սակայն նախ քան անցնելը այդ հսկայ պրօբլէմին, հարկ է շոշափել մի այլ կնճիւ, որի մասին հարեւանցօրէն խօսել էինք նախընթաց էջերում:

Ինչպէս են ծնունդ առել այն առաջին որդանիւզները, այն նախնական, պարզ, տարրային մարմինները, որոնցից, ըստ Դարվինի, առաջացել է — աստիճանական խոտորումներով, այլազանումով — ամբողջ կենդանի աշխարհը:

Ինչպէս է պատասխանում այդ մեծ հարցին՝ ինքը Դարվին:

Իր անդրանիկ աշխատութեան մէջ նա տալիս է այդ խոշոր ինդըլին մի արտաւայ պատասխան, որ հակասում է իր աշխարհայեցողութեան ոգուն, իր ամբողջ մտածողութեան: Նա վերջացնում է յիշեալ զէրքը — Տեսակների Մագումը — հետեւեալ տողերով.

«There is grandeur in this view of life with its several powers, having been originally breathed by the Creator into a few forms, or into one»...

«Մի ինչ որ գիւտութիւն կայ կեանքի այդ ընդունումի մէջ — կեանքի իր մի շարք կառուութիւններով (արսայայտութիւններով) — որ Արարիչը ի սկզբունք անկեղծ է մի քանի մարմինների կամ քի միակայն մեկի մէջ:»

Ահաղկն ազմուկ յարուցեց, բնականաբար, այդ ֆրազը: Աստուածաբանները զբանով իսկ պայքարեցին Դարվինի դէմ, Աստուածաբանները զբանով իսկ պայքարեցին Դարվինի դէմ,

կամեցան ջրել ամբողջ վարդապետութիւնը . . . Սակայն, պարզեց յետագայում որ դարվինեան այդ դարձածը իր նշանաւոր գրքի վերջում եղել է մի սոսկ մանեօլր, մի հնարք, որ նպատակ է ունեցել՝ ճանապարհ հարթել յեղափոխական վարդապետութեան համար՝ Մեծն Բրիտանիոյ մոլիւտնդ եւ կրօնատուն աշխարհի մէջ . . . Լուգվիզ Բլեխները հետ ունեցած մի զրոյցի մէջ, անցեալ դարու 60ական թւականներին, Դարվին յայտնել է, որ ինքը բնաւ չի հասկանում «Ստեղծող» բառը աստուածաբանների իմաստով, որ ինքը գտւում էր արեւիզմ (սպաստուածութիւն) եւ մերժում է պոլտոնական քրիստոնէութիւնը :

Աստուածա խիս ու աւանդապաշտ Անգլիայի մէջ, յիրաւի, դժուար էր մէկէն ի մէկ, ջինջ ու բացարձակ ձեւով աբուսյայանկ այն բոլոր եզրակացութիւններն ու ճշմարտութիւնները, որ տրամաբանօրէն հետեւում էին դարվինական տեսութիւնից : Պէտք էր դործել կամոց կամաց, քաղ առ քաղ : Պէտք էր տատիճանարար վարժեցնել, ընտելացնել հասարակութիւնը աշխարհադրոյդ նոր դադափարներին :

Գ Լ ՈՒ Խ Զ ՈՐ Ր ՈՐ Դ

Տ Ի Ե Զ Ե Ր Ք Ի Ծ Ա Գ ՈՒ Ս Ը

Կեանքի ծագման հիպոթեզը սերս կապ ունի սիեզերքի կացութեան հետ. — Աստուածունչ եւ գիտութիւն. — Կանս-Լապլասեան քեօրիան. — Նախնական Քաօսը, իբրեւ ճնող երկրագնդի եւ բոլոր այլ մոլորակների. — Ապացոյցներ. — Տախթեան ահումը դէպի երկրի խորքերը. — Հրաբուխներ. — Երկրագնդի կենսօրը՝ հրանեղուկ մի գանգաւ. — Տրամաբանական մի բռիչք. — Նոյն հրանեղուկ վիճակում եր երբեմն ամբողջ սիեզերքը. — Ուշագրաւ վկայութիւններ. — Մեքթօրներ եւ Արեգնային գանգաւ. — Նիւրք սիեզերական Անհունի մէջ. — Նոյն բիւիական սարերը ամենուրեք. — Մարսեան ջրանցքները եւ մի քանի խորհրդածութիւններ. — Նախնական ամպագաւնը (Ia Nebulense) եւ նրա հաւանական եւօլլուսիօնը. — Զգողութիւն եւ վանողութիւն. — Օղակներ եւ Կոռնուս. — Արեգակի ծագումը բոս Ֆայի. — Զերմութիւնն ու յոյսը՝ իբրեւ արդիւնք նախանիւքի խսացման. — Արեգակի պտուղներ եւ նրա վերջնական խաւարումի հեռապակները, — Տիեզերական ուրիւնք :

Ինչպէ՞ս են ծնունդ տակ առաջին կենդանի էակները : Ինչպէ՞ս է ծագել աստասարակ կեանքը :

Դարվին չգրադէպ այդ ինդրով : Նա գուցէ դիտէր,

որ ամէն մի գիտական հետազոտութիւն այդ ահաւոր կիսմիջնորջը՝ անցոյց է, գրեթէ աննպաստակ:

Կեանքի ծագման խնդիրը, այնուամենայնիւ, չը մնաց ընդ միշտ անչօշտփելի: Ուրիշ գիտնականներ, ներշնչուելով գարվիներան վարդապետութեամբ, փորձել էին ձեւակերպել և և հիմնաւորել վերին աստիճանի ուշագրու վարկածներ, հիւսիսներ կեանքի ծագման պրօպէմի շուրջ: Եւ ամէնէն առաջ — էրնս Հեկկել, գերմանացի մեծ, աշխարհահռչակ բնագէտը:

Ի՞նչ է կեանքը, ինչպէ՞ս է նա երևան եկել, սողմնաւորւել այն անդրազոյն ժամանակներում, որոնց հետաւորութեան մասին գաղափար անգամ չենք կարող կազմել:

Եւ այդ հարցը անհնարին է շօշափել, ասանց գէթ հարեւանցօրէն ծանօթանալու երկրագնդի եւօլիւսիօնի հետ, առանց պարզելու — գիտութեան հաւանական վարկածներով — թէ ինչպէ՞ս, երկրագնդի ի՞նչ տեսակ պայմաններում է հնարուոր եղել կեանքի առաջին սաղմը:

Որովհետեւ... այդ կեանքը միշտ չէ եղել, այդ սաղմը, կենսանիւթը միշտ գոյութիւն չէ ունեցել, այլ երբ եւիցէ, ժամանակի անհունի մէջ, ծնունդ է առել և սուս գարգացել, բեղմնաւորուել:

Որովհետեւ... երկրագունդը եղել է մի ժամանակ հրահեղուէ մի զանգւած, ուր ոչ մի սաղմ, ոչ մի կենդանի էակ չէր կարող ապրել:

Ինչո՞ւ էր նա հրահեղուէ, սրտեղից էր առաջանում այդ վիճակը:

Մենք կանգնած ենք այդպիսով ամենամեծ, տիեզերական պրօպէմի առջեւ. —

Ինչպէ՞ս են ծագել բոլոր այդ մարտակներն ու համաստեղութիւնները...

Ընդունել Աստուածաշնչի միամիտ թեղիսները, պնդել որ Արարիչն ստեղծել է մին միւսի ետեւից, մի քանի օր այ մէջ

այդ հսկայ աշխարհները, — սակ է սպաւինել հրաշքին, գերբնականին, սակ է՝ հրաժարուել գիտական մեկնութիւնից:

Ասացինք արդէն, որ մենք կարող ենք ընդունել միայն տիեզերքի զուտ բնական ստեղծագործութիւնը: Ասացինք նաեւ, որ ոչինչ չըկայ անշարժ ու կայուն, որ ամէն ինչ, ողջ տիեզերքը յուսանական շարժման մէջ է, հոսանքի մէջ է, որ հետեւապէս... «ստեղծագործութիւն» բառի տեղ՝ լուսազոյն է գործածել ընտրջում, էւօլիւսիօն (*):

Պասրուս չեն ստեղծուէլ այդ այլազան աշխարհները, այդ անհամար մարտակները, այլ առաջացել են սկզբնական ու յաւերժական նիւթի զանդաղ կերպարանափոխումով, բնաշրջումով:

Ի՞նչպէս, սակայն:

Մեզ պատասխան տալիս է մի թէօրիա, ստաղարաշխական-փիլիսոփայական մի տեսութիւն, որ պատկանում է Էրկու հսկայ մտածողներին՝ գերմանացի Կանցին (**), և ֆրանսիացի Լապլասին (**): Թէօրիան կոչուում է Կանց-Լապլասեան:

Ի՞նչ է ստում նա:

Արեկազը, մարտակային բովանդակ համակարգութիւնը — երկրագունդ, լուսին, աստղեր են. — առաջացել են, կազմակերպուել զանդաղ, աստիճանաբար, անհաշիւ դարերի ընթացքում: Նրանց բոլորի մայր-աղբիւրը եղել է սկզբնական զաղային, ամպնման զանգւածը (Nébulouse) — տիեզերական զանգւածը: Ամէն բան, մի ժամանակ — անհունօրէն ու աներևակայելիօրէն հետաւոր մի ժամանակ — լուծ-

(*) Կայ եւ transformisme բառը (փոխակերպութիւն, կերպարանափոխութիւն) որ ոմանք գործածում են, իբրև նոյնանիշ էւօլիւսիօնի:

(**) Immanuel Kant — Աշխարհի ամենամեծ փիլիսոփաներից մէկը (1724—1804):

(***) Pierre Laplace, 1729—1827:

ւած է կղել այդ նախնական ամպածեւ ու վիթխարի Գաօսի մէջ :

Մի խիզախ ու հսկայ յղացում... Ինչպէ՞ս ծնւեց այն վիլիստովայի, գիտնականի ուղեղի մէջ : Ի՞նչ հիմքեր ունի այդ աճազին հիպոթէզը, ենթադրութիւնը... Հիպոթէզները ընդունելի են, երբ չեն հակասում արամարտութեան օրէնքներին և ներդաշնակ են նաև վորձի, զխտողութիւնների կզրակացութեան հետ :

Արդ, փորձն արդէն, մեր մոլորակի սահմաններում, մեր ամենօրեայ զխտողութիւնները կրկրի կողմի վերաբերմամբ, չափազանց հրահանգիչ են և քաջալեր այդ հիպոթէզի : Այդ փորձը ցոյց է տալիս անգամ խոսքան, մակերեսային մտածողներին, որ երկրի խորքը հրահեղուկ վիճակի մեջ է և որ կրկրային կեղևը, որի վրայ մենք տալում ենք բիւրաւոր կենդանի էակների հետ, մի բարակ ծածկոյթ է միայն՝ հսկայական սփեղէն կորիզի շուրջը :

Արդարև, քանի ունիլի խորն ենք իջնում գետնի տակ, այնքան աւելի է աճում տաքութիւնը. իւրաքանչիւր 100 ոտնաչափ խորութեան վրայ այդ տաքութիւնը աճում է մօտաւորապէս մէկ աստիճանով : Աղբիւրները, շատրուանները որ դուրս են ժայթքում կրկրի խորերից, մասնում են յաճախ տաքութեան բարձր աստիճաններ, երբեմն նրանք կուսցող ջուր են թափում գետնի մակերևոյթին : Վերջապէս, մենք սկսանաւես ենք հրաբխային երեւոյթների... Ժամանակ առ ժամանակ կրկրի խորունկ ծոցից դուրս է վիժում եւուն լավան, քարի ու այլ նիւթերի հարւած, հրահեղուկ զանգւածը :

Այդպիսով, ոչ մի ստրակոյց չի մնում, որ մեր մոլորակի խոր արգանդի մէջ բոլոր նիւթերը գտնուում են այդպիսի հրային վիճակում : Իսկ այդ հանդամանքը ներշնչում է ծանրակշիւ հետեւութիւններ : Մարդկային միաքր արամարտնօրէն կզրակացնում է, որ մի ժամանակ ամբողջ երկրագունդն է ներկայացրել այդպիսի վիճակ, որ նա կղել է մի լուսավառ և հրավառ գունդ, և այդ գունդը անդաղրում պտտուել

է ախեղրական Անհունի մէջ, շարունակաբար արձակելով ու կորսնցնելով իր տաքութիւնը, շարունակաբար խտանալով ու ամրանալով :

Բայց մարդկային արամարտութիւնը չի կանգ առնում այդանդ, նա պանում է ունիլի հետուն, իր ընդհանրացման կարողութեամբ, և յայտարարում է — նոյնքան հետեւողակա նօրէն — որ մի ժամանակ ամբողջ սիեզերէն է ներկայացրել նոյնպիսի հրեղէն մի զանգւած աներեւակայելի, անչափելի մի գունդ, որից հետո՞հետէ — ախեղրական շարժման, շրջման (rotation) ու ձգողութեան օրէնքներով — ծնունդ են առել արեղնային հօր սիտակմները(*)... :

(*) Աստղագէտներից ոմանց կարծիքով՝ այսպէս անւանւած «կաթնային ուղին» (Voie lactée), որ նշմարում ենք պարզ, աստղազարդ կրկնքի վրայ, ոչ այլ ինչ է. բայց եթէ մի ուշադրաւ մնացորդ, որ յիշեցնում է ախեղրական նիւթի այն առաջին շրջանը, այն նախնական ցրիւ, հօսը, ամպանքման վիճակը :

Եթէ ճիշտ է Կանտ-լապլասեան թէօրիան, եթէ ճիշտ է որ մեր արեղնային ամբողջ համակարգութիւնը առաջ է եկել նախնական Մառախլային Զանդւածից, ապա ուրեմն արեղակը և իր շուրջը պտտող մոլորակները — ի շարս նրանց՝ և կրկիրը — պէտք է ունենան միեւնոյն քիմիական բաղադրութիւնը... և արդարև, այդպէս է : Գիտական մի շարք հետազոտութիւններ, որոնց վրայ չենք կարող ծանրանալ այստեղ, ի միջի այլոց սպեկտրալ (լուսապատկերային) վերլուծումը, ցոյց են տալիս, որ Արեղակը պարունակում է քիմիական բաղմաթիւ տարրեր, էլէմենտներ, որոնք գտնուում են մեզ մօտ, կրկրի մէջ : Յիշենք միայն մի քանիսը. — կրկաթ, արճիճ, նիկկել, սակի, պղինձ, արծաթ, նաարիում, բարիում, սկլիւմինիում, ցինկ, ջրածին, ամիսածին ևւն. : Դա մի ուշադրաւ ապացոյց է կրկրի և Արևի, այսպէս ասած, «ընդհանուր ծագման» :

Բացի այդ, կայ մի հրաշալի երեւոյթ — օլերեւոյրը կամ

Հետեւենք այդ հոյակապ էւօրիւսիօնին:

Ահա նախնի քառք: Ամուր նիւթեր տակաւին չկան: Չկան նոյն իսկ հեղուկներ: Նիւթը ամենուրեք գազային է, նոսր, միզանման: Մի անհուն մառախլազունք, որ իր մէջ

մէթօր (météore), որին մեզնից շատերը եղել են երբ ևիցէ տկանատես: «Վայր ընկնող աստղերը»... Ժամանակ առ ժամանակ երկնային անեղր տարածութեան մէջ յանկարծակի երեւան է գալիս հրեղէն, բոցավառ մի «վիշապ», սլանում է նետի պէս, գահավիժում դէպի երկիր, թողնելով մի երկայն պոչ իր հետեւից: Այդ չքնաղ երեւոյթը տեսում է մի վայրկեան միայն... Մէտէօրն է, որ ընկնում է... Մի անագին դանդաժ, որ գալիս է, յայտնի չէ, ո՞ր տեղից, նետում է խօյական արագութեամբ ու թափով երկրազնդի որ և է խորշ, և տակաւին վառ, չիկացած, մխուժ է գեանի մէջ:

Եւ անա այդ զարմանալի, երկնային «քարերը» ևս շատ քան ունին մեզ ասկու տիեզերքի, մասնաւորապէս մեր երկրի ծագման մասին: Ոմանք — Լապլաս, Հոմբօլտ և ուրիշներ — պնդում են, որ դրանք լուսնի հրաբուխներից գուրս ժայթքած նիւթեր են, նետուած այնպիսի կատաղութեամբ, որ այլ ևս չեն կարող վերադառնալ լուսնին, այլ ընկնում են երկրի վրայ, վերջինիս աւելի ուժեղ ձգողութեան չնորհիւ: Ուրիշները կարծում են, որ մէտէօրը գալիս է տիեզերքի լայնածաւալ ծոցից, որպէս մի բեկոր այս կամ այն տիեզերական մարմնի, կամ սրպէս փոքրիկ մոլորակային գանգաձիկ, որ շարժւում է Անհունի մէջ և երբ չափազանց մօտենում է երկրին, գահավիժում է դէպի նա:

Կարեւորը, հետաքրքրականը այն է, որ այդ մէտէօրները, մարդկային հետազօտութեան ենթարկւելով, մասնում են նոյն էական բաղադրութիւնը, նոյն քիմիական տարրերը, ինչ որ մեր երկրագունդը: Այդ ևս պերճախօս մի ապացոյց է կանոն-լապլասեան թէօրիայի ստուգութեան:

Եւ ո՞վ գիտէ, դեռ ուրիշ ինչ կայ տիեզերքի անհամար

պարփակում է բոլոր տարերքները, — բոլորը: Գունդը անշարժ չէ և ոչ էլ բացարձակապէս միապաղաղ, միազանդ: Ուրիշ խօսքով՝ նիւթը բաշխւած է տիեզերական Անհունի ծոցում ոչ համաչափ, ոչ հաւասար թանձրութեամբ: Նա (նիւթը) անդադրում շարժումի մէջ է և այդ նախնական քառում: Նիւթեղէն մասնիկները շարժւում են մշտնջենապէս, դործում

մոլորակների վրայ և այդ բիւրաւոր աստղերի, որոնք այնքան մանր են թւում մեր աչքին, որովհետեւ չափազանց հեռու են մեզնից, լայց որոնք թերեւս մի մի վիթխարի արեգակներ են՝ իրենց շուրջը սաւառնող անհաշիւ մոլորակներով...

Չափազանց հետաքրքրական է, օրինակ, մեր դրացի մոլորակը — Մարսը (Mars — որի ծաւալը $\frac{1}{7}$ մասն է երկրի ծաւալի. նա անում է իր պաշտք Սրեգակի շուրջ՝ 687 օրում): Աստղադիտական հետադիտակը նշմարում է Մարսի վրայ նոյն ծովերն ու ցամաքը, նոյն ամպերն ու մառախլաւորները, կլիմայական փոփոխութիւնները, նոյն ջրային գոլորշիները միջնալոտում, որ դիտում ենք մեր երկրի վրայ: Նշմարում են — ի խոր զարմանս մարդկութեան — նոյն իսկ հոյակապ ջրանցկներ, որ ծածկում են, ցանցապատում Մարսեան մակերևոյթի քառորդ մասը... Կան արդեօք այդ բոլորի հետեւ... կենդանի արտաձենք, բոյսեր, անտառներ, անասուններ և ասուններ... Գիտութիւնը իր արդի միջոցներով տակաւին անկարող է պատասխանելու այդ հարցին. տակայն, հետազօտութեան միջոցները հետզհետէ կտտարեկազմւում են օդային նաւարկութեան զմայելի գործիքների հետ, և ապագան — աստղաբաշխութեան լայնածաւալ ու խորհրդաւոր աշխարհի մէջ — թերեւս վերադառնում է զարմանահրաշ անտակնկախներ...

Թէօրիապէս, անհատնական ոչինչ չըկայ ենթադրելու կեանքի գոյութիւնը Մարսի ու այլ մոլորակների վրայ, եթէ այնտեղ ախրկ են և ախրում են նոյն էական պայմանները, ինչ որ մեզ մօտ, երկրի վրայ:

են յաւերժօրէն պտոյտքներ : Աւելի խիտ և զօրուոր զանգաւծ-
ները ձգողութեան օրէնքի ուժով(*), քարչոււմ են դէպի իրենց
աւելի թոյլերը :

Նիւթը կամաց կամաց խտանում է, կենարանանում, տեղ-
տեղ կազմում է խոշոր կծիկներ, սրունք ժամանակի անձայ-
րածիր հոսանքի մէջ՝ կազմում են ձգողութեան հզօր կենարոն-
ներ(**) : Կազմակերպւել են այդ անագին ու հրեղէն կենարոնների
հանդէպ — նոյն յաւերժական շարժման քուրայում — ուրիշ
փոքրիկ (համեմատաբար փոքրիկ, բայց դարձեալ հսկայական)
կորիզներ, աւելի ճիշտ՝ օղակներ, որ սկսել են շրջան անել,
պտոյտ գալ ստալիներէ շուրջը, իրենց հերթին միշտ աւելի
և աւելի խտանալով :

(*) Զգողութեան օրէնքի գիւտը (La loi de la gravita-
tion universelle) սրտհանում է անգլիացի աշխարհահռչակ
գիտնական Նիւտոնին (Newton, 1643—1726) : Նա էր,
որ առաջին անգամ ծանուցեց և հաստատեց, որ մարմնակ-
ները և բոլոր մարմինները, խոշոր ու մանր, քարչում են փո-
խադարձաբար — անգամ ամենահեռաւոր տարածութեան վրայ —
որ կայ տիեզերքի բոլոր մարմինների միջեւ փոխադարձ ձգո-
ղութեան ուժ և այդ համապարօտ ուժի շնորհիւ է, որ իւրա-
քանչիւր մարմնակ կամ գիտաւոր ատող (նաև երկրագունդը)
մնում է անշեղ իր ճամբուն վրայ, իր ընթացքի մէջ՝ Արեգա-
կի շուրջը : Այդ նոյն երկաթէ օրէնքի շնորհիւ է, որ երկրի
վրայ բոլոր մարմինները ցած են դրւում դէպի գետին,
հէնց որ զրկւում են յենարանից, հէնց որ ձգւում են իրենք
իրենց (օղի մէջ նետւած մի քար կամ մի սլլ առարկայ) : Զգո-
ղութեան օրէնքը դործում է նոյն իսկ իւրաքանչիւր մարմնի
փոքրիկ մասնիկների միջեւ : Դա կենդրոնածիգ ոյժն է (force
centripède) . բայց կայ նաև հսկայաւոր ոյժը — վանողականը,
կենարոնախոյսը (force centrifuge) :

(**) Ասենք միջանկեալ որ ձգողութեան ուժի և նիւթե-
րի աստիճանական խտացման շնորհիւ է ստալացել տիեզերքի
մէջ հսկայական ջերմութիւնը և լոյսը :

Ինչպէ՞ս են զատուել այդ օղակները(*):

Երկու ուժ — հիմնական ու համաաարած, լրարու հսկա-
մարտ և իրարու լրացուցիչ — գործել են անդադար քաօսային
Անհունի մէջ : Մինը արդէն մենք տեսանք — ձգողական ոյժն
է, կենտրոնածիգ ուժը, որ ձգտում է միշտ աւելի մօտեցնել
պտաւող մասնիկները վիթխարի ամպագնդի կենարոնին և այդ-
պիսով միշտ աւելի խտացնել ամպագունդը : Միւս, հսկա-
մարտ ուժը կոչւում է վանողական կամ կենտրոնախոյս . նա
ձգտում է, ընդհակառակը, հեռացնել նոյն կենարոնից իր
շրջապատի (périphérie) մասնիկները, պտաւել, ցրւել,
չպրտել : Աստիճանական խտացման պրօյէսի մէջ համոււմ է
մի վայրկեան, երբ — հասարակածային (equatorial) եղբի վրայ —
կենարոնախոյս ուժը գերակշռում է, այն ժամանակ տիեզերա-
կան յաւերժապտոյտ գունդի մէջ, նրա կենարոն-կորիզի շուր-
ջը զատւում է նոր ամպածեւ մի օղակ, որ սկսում է նմա-
նապէս պտոյտ գալ : Նա պտաւում է միաժամանակ նախկին
Մայր-կենարոնի և իր սկիական ստանցքի շուրջը : Պտաւում
է և յարածամ թոնձրանում :

Մայր-կենարոնը արեգակն է, իսկ նորակազմ մարմինը՝
ապագայ մոլորակը(**) :

(*) Օղակները լիտիտար շրջաններ չեն, ինչպէս և մո-
լորակային գնդերը (երկրագունդ ևն.) բոլորովին կոր չեն,
այլ աւելի ձուլածեւ, ստիպուցած երկու բեւեռների վրայ :

(**) Մի այլ մեծահռչակ սատղագէտ, Ֆայ, այսպէս է ըմ-
բանում արեգակի ծագման խորհրդաւոր ընթացքը .

Նախնական քաօսային Զանգուածը, որից ծնունդ է
աւել աշխարհը, մօտաւորապէս կոր էր և միապաղաղ : Նա
բունւած էր թոյլ ու դանդաղ, ոլորտապտոյտ շարժողու-
թեամբ : Այդ առաջին կանոնաւորւած շարժումներից գոյա-
նում են օղակներ, որ պտաւում են յայտնի ուղղութեամբ,
մի կենարոնի շուրջը — կենարոնի՝ որ մնում է երկար ժամա-

Նոյն ձևով ծնունդ են առել այլ բազմաթիւ մոլորակներ և նրանց արբանեակները: Նոյն ձևով— երկրագունդը: Նրանք բոլորն էլ եղել են իրենց սկզբնական շրջանում մի մի ամ-

նակ դասարկ... Յետոյ է, որ աստղը պիտի դայ տեղաւորւելու այդ դասարկ կենտրոնում: Օղակներից իւրաքանչիւրի մէջ շղթայազերծւած մասնակի պտտաքնները (tourbillon, յորձանք) ասորբալուծում են նրանց — այդ օղակները — առանց սակայն փոփոխելու շարժման ուղղութիւնը: Հասնում է մի վայրկեան, երբ ամենաուժգին յորձանքները, քարշկլով ու կլանելով միւս, աւելի թոյլերը, նրանից մէկը ի վերջոյ բլուսնում է օղակի տեղը և այն ժամանակ վերջինը դառնում է զնդածեւ մի զանգւած, որ պտտւում է առանցքի շուրջը: Այդպիսով առաջ է դալիս նոր մոլորակը:

Գանդա՛ղ է կատարւում այդ ծնունդը: Անցնում է նա երկարատեւ մի շրջան, ուր նրա մէջ պարունակւած չիտթ ասորբերը խառնում են, կենտրոնանում... Միւս կողմից, ասորբերի հոծ մասնիկները, որոնց վիճակւած է ամէնէն առաջ հալուել, լուծուել և ամէնէն շատ ջերմութիւն արտադրել, դալիս են բանելու մոլորակի կենտրոնական մասը, որ երկաթ ժամանակ մնում է հրատապ ու լուսավառ:

Սիւստի կազմաւորման համեմատաբար առաջացած այդ վայրկեանին է, որ Թայ կլննշնչմարէ Արեգակի առաջին ուրւադիծը: Հազիւ կազմակերպւած այդ Քաօսի կենտրոնում կըզան, կը հաւաքւին այլ և այլ ծայրերից այն բոլոր նիւթերը, որ չեն մտած օղակներու մէջ, չեն կլանւած մոլորակներէն, — և այդպիսով կը գոյանայ կեղրոնական մի զանգւած, հսկայական արամազծով:

Ապագայ Արեւն է դա... քայց սակաւին ազօտ, ամգոյն վերջարոյսի պէս, երկար ատեն գրեթէ անզօր ճառագայթելու, լուսաւորելու և տաքցնելու: Ուրւադիծը, սակայն, կը գօրանայ հեղհեռէ, աճիցնելով անդադար իր ձգողական կարողութիւնը, քաշկլով դէպի իր գիրկը նոր-նոր նիւթեր

պաճեւ օղակներ, այսպէս աստեղով ու խառնուով, դարձելն մի մի զնդեր (Կառնոս կոչուած մոլորակը (Saturne) մնացել է նոյն օղակածեւ վիճակում... յիշեցնելով մոլորակային բնաշրջումի այն նախնական հանգրուանը: Ինչո՞ւ է, սակայն, մնացել այդպէս...):

Այդպէս է առաջացել — ուրիշ բազմաթիւ սիստեմների հետ — մեր արեգակը և իր շուրջը պտտող մոլորակների ամբողջ թափօրը:

Անդուլ շարժման ու թանձրացման պրոյէկտում արձակւել է հրէշաւոր քանակութեամբ ասքութիւն(*) : Նիւթը յայտնուել է

տիեզերական անզոր ասորածքներից, խառնուով ու սկզմըւելով աստիճանաբար, կազմակերպելով կամայ կամայ իր հրեղէն ու ճարակող հոսքը... Այն ժամանակ արեգնային ճաշճանչները սկսում են թափանցել և մեր երկրի, մեր փոքրիկ մոլորակի թանձրախիտ մթնոլորտը... Մինչ նոյն երկրի մակերեսային — իր ասքութիւնն իջած լինելով 30 աստիճանից վար — պատրաստւում էր հիւրնկալելու կեանքի առաջին սողմերը... (Faye, Sur l'Origine du Monde):

(*) Աստղագէտները այդ արձակւած ջերմութեան քանակի համեմատ՝ հաշոււ են մտաւորապէս Արեգակի սարիէր: Ուրիշը Տօման յայտարարում է, որ Արեգակը ներկայ ուժով լոյս ու ջերմութիւն կարող էր արձակել ոչ աւելի վաղուց քան 15 միլիոն տարուց ի վեր (William Thomson, Les hypothèses cosmogoniques): Իսկ երկրաբանների կարծիքով, այդ ահագին թիւն անգամ բուսական չէ. նրանք բարձրացնում են մինչև 20 միլիոն տարի:

Ուրեմն, մօտ քսան միլիոն տարի է անցել այն անզորազոյն ժամանակաշրջանից, երբ Արեգակը սկսել է արդի չափով լոյս ու ջերմութիւն արտադրել... Այդպէս է վկայում երկրային կեղևի ծալքերի մէջ մթերւած կենդանական մնացորդների անհուն պաշարը — կենդանիների, որսնք, հարկաւ,

աստիճանաբար իր երևք գրութիւնների մէջ . գաղալին վիճակից նա անցել է հրահեղուկ (feuerflüssig) կամ լավային վիճակի և ապա անցել է իր պինդ , ամուր գոյութեան շրջանը (Ստեպան , ոչ ամենուրեք : Հրահեղուկ զանգւածի վիճակ ունի սակաւին լոյսի ու ջերմութեան այն անսպառ աղբւրը , որ մենք կոչում ենք Արեգակ : Նոյնպիսի մի զանգւած է — ինչպէս արդէն ասացինք — մեր երկրի խորունկ կեդրոնը . . .) :

* * *

պարտ են հղել իրենց գոյութիւնը արեգնային ջերմութեան ու լոյսին . . .

Արեգակի ջերմութեան չափը անցնում է մարդկային նրեւակայութեան բոլոր սահմանները . ուստի և , չնայած անազնորէն բարձր ճնշումին՝ ոչ գազերը և ո՛չ միտաղային գոլորչիւնները չեն կարող վերածել հեղուկի : Ստեպան նրանք չեն էլ մնար զուտ գազային վիճակում : Յամենայն դէպս , այդ գազերը չափազանց խտացած են և մօտենում են հեղուկանման վիճակի :

Շատ բան տակաւին մութ է մնում մեզ համար՝ Արեգակի ներքին կազմի ու էությունի մասին : Ինչպէս յայտնի է , կան բիծեր Արեգակի վրայ , զոր ոմանք հակւած են բացարեւու իրրեւ արդէնք նրա սեղ-սեղ սառչելուն : Ուրիշներ այլ կերպ կը բացատրեն այդ բիծերի գոյութիւնը : Այսպէս թէ այնպէս՝ շնորհաւոր ու անվիճելի իրողութիւն է , որ Արեգակը , չնայած իր անագին , աներեւակայելի սաքութեան , պաղում է ասիւնանաբար , արծակելով շարունակ իր կենսատու ճատագայթները , և . . . զատապարտւած է վերջի վերջոյ խաղա խաւարելու . . . Բայց այդ խաւարումը կը հասնի միլիոնաւոր , տասնեակ միլիոնաւոր տարիներից յետոյ : Արեգակը դեռ կը փայլի անհաշիւ ժամանակներ , գրեթէ անվերջութիւն . . . Իսկ նրա մահից յետոյ՝ մեր աշխարհը կը գանձ թերեւս այլ աղբիւրներ լոյսի ու ջերմութեան , որ անհրաժեշտ նախապայմանն են կեանքի . . .

Այդպէս անա կը բացատրեն տիեզերական շէնքի ծագումը Կանտ և Լապլաս և նրանց հետ գիտական աշխարհը : Մի պարզ թէօրիա — և հոյակապ՝ իր պարզութեան մէջ : Մի բացատրութիւն՝ որ պիտի պահպանէ իր ուժն ու արժէքը . . . Վինչեւ մի նոր թէօրիայի ձեւակերպումը , որ պիտի գայ , թերեւս , լրացնելու , կատարելագործելու , նոր լոյս տիւեղու այդ անագին կիճօի վրայ . . . Յամենայն դէպս , աւելի քան մի դար է արդէն , որ կանգուն է Կանտ-Լապլասեան տիեզերահայեացքը : Երկու հանձարները փորձեցին լուսաբանել աշխարհի ստեղծագործութիւնը զուտ բնական պատճառներով : Իրենց խիզախ հետազոտութիւնների մէջ՝ նրանք բնաւ պէտք չունեցան գերբնական ներշնչումների և գերբնական ազդակների : Իրենց ներհուն բանականութեամբ՝ նրանք չափեցին Տիեզերքի անծայրածիր ուղիւնը և ոչ մի տեղ չգտան Ենություն կամ մի ուրիշ «Ներկային Հրամանատարի» սոււերը . . .

Ամեն տեղ , տիեզերական Անճունի բոլոր ծայրերում , տարերային ոլորտայթների և խօշական յարձանքների մէջ՝ նոյն նիւթն է — Ուժ-Նիւրը — նոյն Սուբստանցը , որ գործում է իր անգույ ու սիթմային շարժումներով , ձգողութեամբ ու վանողութեամբ (attraction-répulsion) , որ Բարում է և հրում , հաւաքում է և ցրում , Բանդում է ու վերաւիճում . . . Նոյն սիթմն է դա , որ շեշտում է և կենդանի , շնչաւորւած տիեզերքում , ե՛ւ ծովերի , ուղիւնների պարբերական ծիւանքներում , և մարդկային-ընկերական կենցաղի սլլազան աշխարհներում . . . Ձգողութիւն և վանողութիւն , համերաշխութիւն և կռիւ , պարուկով-սլլասիրութիւն և էզօիզմ-հաստիքութիւն . . . Նոյն սիթմն է , որ գործում է յաւերժօրէն ամէն մի գոյութեան , ամէն մի ստեղծագործութեան խորունկ հիւքերի մէջ . . . Ձգնք , սակայն , իմաստասիրական-ընկերարանական հրապարիչ խորհրդածութիւնները և վերադասնանք մեր նիւթին :



Գ Լ ՈՒ Խ Զ Ի Ն Գ Ե Ր Ր Ո Ր Դ

Կ Ե Ա Ն Ք Ի Ծ Ա Գ ՈՒ Մ Ը

Ե Ի

Ն Ե Պ Տ ՈՒ Ն Ե Ա Ն Շ Ե Ր Տ Ա Ի Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

Երկիրը՝ մի բեկոր «մառախլային զանգւածի».— Երկրային կեղեւի գոյացումը.— Ջուրը՝ իբրեւ հիմնապայման կեանքի ծագման.— Ինչպէս է յայտնել սարրական կենսանիւրը (պրօսօպլազմը).— Դարձեալ Ասււածառունչ եւ գիսուքիւն.— Հիպօթեզներ.— Generatio spontanea կամ ինքնաբեր ծնունդ.— Պաստօրի փորձը եւ յաղթանակը.— Փասս չկայ.— Էրնոս Հեկկէլ եւ «ածխածնի քօրիան».— Կրիստալ եւ Մօներ.— Ինքնաբեր ծագումը՝ իբրեւ սրամաքանական հնարաւորութիւն.— Հիպօթեզը՝ բնզունելի եւ ոչ ժխտելի.— Կեանքը կարող էր ծագել սիեզերքի հնագոյն շրջանում, անօրգան նիւթերից.— Կեանքի հիւղաւորումը.— Բոյս եւ կենդանի.— Սահմանագիծ չկայ.— Երկրի խորհրում.— Հնէագիտութիւնը՝ ամուր նեյուկ Դարվինականութեան.— Ինչպէս են գոյացել նեպսունական շերտեր.— Հինգ շրջան.— Կենդանի էակների ուժագրաւ յաջորդականութիւնը.— Մարդկային կմախքներ չորրորդական շրջանում.— Ենթադրական մարդ-կապիկը:

Մի մտորակ — և մեր Երկրագունդը: Զատուել է նա անհամար դարեր առաջ նոյն վիթխարի արեգնային Մայր-Զան-

զւածից, սրտուկէ և սեղմել կաստիճանարար, թանձրացել է և արձակել իր ջերմութիւնը, սպաղել է հեղհեղ մակերեսային վրայ, — և այդպիսով առաջ է եկել պինդ կեղեւը (*), որի վրայ սպրում ենք մենք և որի սակ, գեանի անանց խորքերում՝ զանուում է հրահեղուկ, մշապորրոք կորիզը, կեղրոնը:

Երկրի մթնոլորտը՝ սոսորւած գոլորչինների թանձր մառախուղով, ուսկից հողիւ հող թափանցում են արեգակի թոյլ ճառագայթները: Մառախուղը արդիւնք է կողերի աստիճանական խառնման: Խառնում են իրենց հերթին այդ գոլորչիներն եւս — և անձրեւը առատօքէն սկսում է մտղել երկրի վրայ: Ջուրը երեւան է դալիս երկրային մակերեսային — ջուրը, որ լոյսի ու տաքութեան հետ հիմնական պայմանն է կեանքի ծագման...

Եւ անա մենք՝ միւս՝ ծանրակշիւ ու դժւարին լնդրի հանդէպ:

(* Գիտնականները, ինչպէս տեսնք, փորձել են հաշուել մօտաւորապէս երկրի սարիքը: Ուիլեամ Տօմանի կարծիքով անցել է ոչ սրակաս քան 20 միլիոն տարի այն ժամանակից, երբ երկիրը սկսել է սնդանալ, ամբանալ իր մակերեսային վրայ, այսինքն երբ սկսել է գոյանալ երկրային կեղեւը: Դա ծայրագոյն միջնառնն է. բայց այդ թիւը կարող է շատ աւելի մեծ լինել, նա կարող է համեմել, ըստ Տօմանի՝ 400 միլիօնի: Ուրիշ գիտնականներ 90ից մինչեւ 200 միլիոն տարիներով են չափում երկրագնդի ծերութիւնը:

Փորձել են չափելու նաեւ — որոշ սուկաների հիման վրայ — երկրային կեղեւի հաստութիւնը: Ոմանց կարծիքով, 2-3, կամ յամենայն դէպս 5-6 մղոն խորութեան վրայ վերջանում է արդէն ամուր չերար և սկսում է հրահեղուկ զանգւածը: Ուրիշները պնդում են, որ այդ ամուր կեղեւի հաստութիւնը 15ից մինչեւ 20 մղոն է: Այդ վերջին կարծիքը միշտ աւելի հաւանական է դառնում (Neumaur, Geschichte der Erde):

կենդան նիւթերի — չորս քիմիական ստորերի — առանձնա-
յատուկ միաւորումով :

Ըստ երևոյթիւն , արտաւոյ մի վարկած . . . Չէ՞ որ շա-
տանց ընդունւած մի իրողութիւն էր , որ ձուից դուրս չկայ
կեանք , որ ամեն մի կենդանի էակ բոլորում է ձուից . . .

Ճիշտ է սակայն , որ հնում , խմատասէր և գի-
տուն մարդիկ — ինչպէս օրինակ , Արխատտէյ — հաւատում
էին անձնող ծագման հիւղօթէզին : Հաւատում էր և Պլու-
տարք , որի կարծիքով Եգիպտոսի հողը ինքնարկրաբար մկներ
է արտադրում : Հաւատում էին շատ ուրիշները :

Անգլիացի մի քահանայ , Նիդիւս անունով , առաջին
փորձն արւած գիտնականորէն հաստատելու ինքնաբեր ծա-
գումը : Մտի կտորներ , կամ թէ ուրիշ օրգանաւոր , փտած
մնացորդներ փակելով սաքցրած կճուճների մէջ , — նա կարճ
ժամանակից յետոյ ստանում էր կենդանի էակներ այդ կճուճ-
ներում : Պիւֆոն և ուրիշներ սղաշարանեցին Նիդհամը :
Բայց վերջինիս գէժ շուտով հանդէս եկաւ Իտալիայում մի
այլ հոգեւորական , Սպալլանցանի անունով : Սա հերքեց Նիդ-
համի փորձը , սնդկով , որ անհրաժեշտ է կճուճների մէջ օդը
աւելի սաքացնել , մինչև 100-130 : Ինքը Սպալլանցանի կրկ-
նեց փորձը այդ վերջին եղանակով և կենդանի էակներ շա-
տաջայան :

Փորձեր արին մի շարք ուրիշ գիտնականներ ևս , յայտ-
նի կենսարան Շվան , սպա Հէյնօլց , Կլոս Բերնար , Շույցէ ,
Դուշ ևն . . . որոնք բոլորն էլ ինքնաբեր ծագման հակառա-
կորդներ էին և արամողիք էին սղաշարանելու Սպալլանցա-
նին , սակայն , չէին կարող բմբունել դործի բուն գազանիքը :
Նրանք միայն եղբակացնում էին , որ թարմ օդի մէջ կայ ինչ
որ անյայտ մի սկզբունք , մի թագնւած ուժ , (ինի դա մի նուրբ
գաղ , թէ քիմիական մի անձանօթ բաղադրութիւն) , որ մտի
վրայ ներգործելով , կենդանի էակներ է արտադրում նրանից :
Իսկ սրանց հակառակորդների համոզումով այդ անյայտ ուժը
հէնց մտի մէջ է թագնւած : Երկու կողմն էլ յամառարար կը
սնդէին իրենց ասածի վրայ :

Պէտք էր բացատրել մպորութիւնը , պէտք էր ստույգ
փորձի ճանապարհով երեւան հանել թագնւած , «անյայտ ուժը»
և նրա ուր լինելը : Եւ ահա 60ական թւականների սկզբում
Ֆրանսայի գիտական Սկադէմիան յանձնարարում է «ճիշտ ու
որոշ փորձերով աշխատիլ լոյս սփռելու ինքնաբեր ծագման
խնդրի վրայ» :

Այն ժամանակ հանդէս եկաւ հուշակաւոր Պաստոր , որի
փորձերը ծանօթ են աշխարհին : Նա վերցրեց հում բամբակի
մի առանձին տեսակը , որ լուծւում է ալքոլի և եթերի մի
խառնուրդի մէջ , ղեակղեց նրա փոշին ապակեայ փոքրիկ
խողովակում և օդ ներմուծեց : Օդի մէջ գտնուող մանրիկ ,
միքրօսկոպիկ փոշիները կրան ու մնացին բամբակի թերերի
վրայ : Այնուհետև ալքոլի ու եթերի խառնուրդի մէջ լու-
ծելով , Պաստորը թողեց հանգստանալ 24 ժամ . բոլոր օդա-
յին փոշիները իջան յատակի վրայ : Ապա չորփայրեց հեղու-
կը և ղնելով խոշորացոյցի տակ , նշմարեց յատակին նստած
փոշիների վրայ մանրիկ , ձուածու կաղմակերպւած մարմին-
ներ (corpuscules organisés), որոնք յիշեցնում էին բջիջների
(cellules) կորիզը :

Ինչ ևն արդեօք ներկայացնում դրանք — ինքս էլ չգի-
տեմ , առում է Պաստոր : Բայց այդ փոքրիկ մարմինները
կարելի է համեմատել ամենապարզ էակների սաղմերի հետ :
Նրանք գտնւում են , զբնին , ահաղին առատութեամբ օդա-
յին մթնոլորտում : Անձրեւի ժամանակ ջրային կաթիլները ցած
են գլորում նրանց , և այդ պատճառով անձրեւից յետոյ օդը
վնում է պարզ ու թափանցիկ : Որքան աւելի էք բարձրա-
նում օդի մէջ , այնքան աւելի է քչանում այդ սաղմիկների
թիւը : Բեղմնաւորւում են նրանք մինչև 120° տաքութիւնը ,
որից անցած՝ դադարում է բեղմնականութիւնը :

Ուրեմն այդ սաղմիկներն են , որ օդից ներմուծելով
օրգանական նիւթերի մէջ , ծնունդ են տալիս ջրածնիներին և
ուրիշ պարզ կենդանիներին : Դրանք են ուրեմն , օդի մէջ
եղող այն «անյայտ ուժը» (*) :

(*) Pasteur, «Sur les corpuscules organisés qui existent dans l'at-
mosphère».

քումը, խառնութիւնը: Եւ սպառ Հէկիէլ համեմատում է կրիստալն ու Մօսկերը:

Աճման հիմնական երեւոյթը նոյնն է երկու մարմինների մէջ, արմատական տարբերութիւն չկայ: Երկուսն էլ ձգողութեան օրէնքի շնորհիւ, քաշում են դէպի իրենք շրջապատող միջավայրից այլ և այլ նիւթեր և իւրացնելով այդ դրսի նիւթերը, մեծացնում են իրենց ծաւառն ու զանգւածը: Բաւական չէ այդ. երկուսն էլ թէ կրիստալը և թէ մօնէրը զատում են դրսի նիւթերի մէջ միմիայն այնպիսի բաղադրութիւններ, որոնք անհրաժեշտ են իրենց աճման համար: Օրինակ, երբ մի բարդ հեղուկի մէջ հալւած գրութեամբ զբաշուում են զանազան աղեր և երբ սկսում են շոգիացնել հեղուկը — ամէն մի ջնկ աղի տեսակը ջնկ ձևի կրիստալ է կազմում, և գոյացած բոլոր կրիստալները զանազանում են ձևով ու մեծութեամբ:

Մենք չենք բմբռնում, ասում է Հէկիէլ — թէ ինչու է կատարում այդ երեւոյթը և ինչպէս է կատարում: Դա հանելուկ է, կ'ուզէք հրաշք անւանեցէք: Սակայն մենք բնաչենք ստորակուտում, որ զուտ մեքենական օրէնքներ են դեկալարում կրիստալների ծնունդն ու ձևը: Իսկ եթէ այդպէս է, միթէ՞ աւելի մեծ հրաշք կը համարի սկզբնական պարզ, կամազուրկ մօնէրի ծնունդը անկենդան, կամ անօրգան հեղուկի մէջ, ինքնարերարար (իրօք անհրաժեշտարար, ձախատագրական օրէնքներով) . . . Ինչպէս որ կրիստալի ծնունդը չենք բմբռններ, այնպէս էլ չենք կարող լսացատրել մօնէրի ծագումը:

Մենք չենք հասկանում, թէ ինչու մի որոշ թիւ ատօմներ սոսիաճնի, թիթւածնի, աղօսի և ջրածնի այս կամ այն կերպ միաւորւելով, առաջացնում են կենդանի էակ: Բայց կասկած չկայ, որ այդ դէպքում եւս նոյն մեքենական օրէնքներն են գործում:

Անշուշտ — շարունակում է Հէկիէլ — ամենատեղեւորական էակները, որ առաջին անգամ կեանք են տարածել երկրագնդի վրայ, նման են եղել այդ անկերպարան, հօփօէն մօ-

նէրներին, որոնք շնորհիւ զուտ ֆիզիկո-քիմիական ուժերին, նիւթի մօլեքուլային շարժառեւիտիւնը, ծնունդ են տուել նախնական ծովում (Urmeer), նման այն կրիստալներին, այն հրաշալի բիւրեղներին, որոնք դոյանում են այսօր իրենց մայրհեղուկի մէջ . . . Ծնւել է մօնէրը, իբրև հասեաւանք չորս անհրաժեշտ քիմիական տարրերի միաւորման, և սկսել է բաղմանալ ու տարբերուել նախնական ծովի մէջ:

Նախնական ծով . . . Միլիոնաւոր տարիներ առաջ էր այն. այն ժամանակ այլ էին սոցյալմաները — ասում է Հէկիէլ, ծովի ու միջուորտի սրպիտութիւնը, անտարակոյս, շատ տարբեր էր սոցյալման վիճակից: Այնուհետ, այդ նախնական միջուորտում հսկայական առատութեամբ տարածւած էին, հաւանօրէն, սոսիաճնի միաւորումներ զազային գրութեամբ (*) քունի որ կրկրի խորունկ շերտերի մէջ զանաւում են այսօր քարածուխի անսպաս հանքեր . . . Երկնային մակերեւոյթը առջողջապէս ծովով պատած՝ շատ միակերպ պէտք է լինէր: Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ երբ տարբերութիւնը իջել է այնքան, որ առաջին անգամ կենսունակ պրոտօպլազմը, շարժուն էակները կարողացել են ծնունդ առնել — կարելի է ենթադրել, որ նրանք ծնւել են ամուսուրեք նման եղանակով, հնչին տարբերութեամբ:

Անթիւ, իրարից հաղիւ տարբերուող, մօնէրներ կարող են այն հետաւոր նախապատմական շրջանում միաժամանակ գոյացած լինել: Եւ միայն փոքր առ փոքր, երբ կեանքի պայմանները սկսել են փոփոխութեան ենթարկւել, երբ երկրի մակերեւոյթի բարձրանալն ու իջնելը զանազան կէտերում տեսական տարբերումներ է առաջ բերել, այն ժամանակ մօնէրներն եւս ենթարկւել են զանազանաւորման (differentiation), ժայթքել է մի անսելի կախ գոյութեան համար, որը բնաձինջ

(*) Այդ հանգամանքը ծանրակշիւ կարեւորութիւն ունի, քանի որ Հէկիէլ վերագրում է կեանքի երեւոյթը **աճուածնի** մի առանձին բնութեանութեան, որի շնորհիւ քիմիական այդ տարբեր մասում է ուրիշ տարրերի հետ բաղմանատեղի ու բարդ միաւորումների մէջ:

Արեւի մօնէրի բազմաթիւ տեսակները, շտտերն էլ յաղթանակել են ու բազմապիսի սերունդը...

Այսպէս է արամաբանում Հէկկէյ: Նա բնառ չի կատարած — և նրա հետ շատ ուրիշ գիտնականներ ևս — որ երբ եւ իցէ, անյիշատակ անցեալի մէջ մօնէրը ծնունդ է տակ անօրգան, «անկենդան» նիւթից և որ զբանով ծագումն է տակ կեանքի երեւոյթը:

Եզրափակենք: Թէ որքան հաւանականութիւն ունի մեր բերած հիպոթէզներէից իւրաքանչիւրը — ընթերցողն ինքը կարող է արդէն եզրակացնել: «Ինքնաբեր ծագումը», անտարակոյս, ամենից աւելի է հաշուում մարդկային բանականութեան պահանջների հետ:

Մենք անտանք, որ նա իրողութիւն չէ: Մեր օրերում բնագիտութիւնը անխնայ դուրս է նետում իր շրջանից այն ամէնը, ինձ որ փորձի, ստոյգ գիտողութեան վրայ չէ հիմնւած: Սակայն, գիտութիւնը կարող է ընդունել այս կամ այն հիպոթէզը ժամանակաւորապէս: Նա բնդունում է այնպիսի հիպոթէզներ, որոնց միջոցով կարելի է բացատրանել այս կամ այն երեւոյթը և որոնք ներդաշնակ են մեր գիտած բոլոր ուրիշ երեւոյթների ու օրէնքների հետ: Եւ մի միտայն լայն փաստական հիմնաւորութիւն ստանալով է, որ նրանք դառնում են քօրիս: «Ծագման թէօրիան» կամարկի օրով սոսկ հիպոթէզ էր. Դարվինի օրով նա դարձաւ թէօրիս: Կանտ-բապրասեան արեղերածնութիւնն անգամ, թէեւ ունի բազմաթիւ փաստեր իր հիմքի մէջ, ընդունում է գիտութիւնից, ժամանակաւոր կերպով, իբրև մի տեսութիւն, որ ամէնից աւելի լատ է բացատրում արեղերական շէնքի ծնունդն ու էւօլյուսիօնը: «Ինքնաբեր ծագումն» ևս ժամանակաւորապէս կարող է ընդունուի, ո՛չ իբրև թէօրիս, այլ իբրև à priori կառուցած մի հիպոթէզ (մի օգտակար հիպոթէզ, որ լոյս է ախուս կեանքի ծագման մեծ կնճռի վրայ), ո՛չ իբրև փաստ, այլ իբրև հաւանականութիւն:

Կեանքը սկիզբ առաւ: Կենդանի էակները աճեցին, բազմացան ու տարածուեցին երկրագնդի շուրջը: Կեանքի սղբի-

րը մեզ համար անըմբռնելի եղանակով (առ այժմ անըմբռնելի) ճիւղաւորւեց երկուսի՝ կենդանական ու բուսական աշխարհներին:

Ինչո՞վ է տարբերում բոյսը կենդանուց: Առաջին հայեացքից թւում է, թէ տարբերութիւնը հիմնական է. ինչ նմանութիւն կարող է լինել մի կաթնատուն կենդանու և մի ծառի միջեւ, մի կատիկ և մի խնձորենու միջեւ: Կատուն ունի բարդ դորձարաններ, ունի սիրտ, մկաններ և բազմաթիւ այլ օրգաններ, սրմնայից դուրկ է խնձորենին: Սակայն այդպէս չեն դասեր: Պէտք է համեմատել բոյսն ու կենդանին իրենց սկզբնական դուրեւան մէջ, պէտք է իջնուի կենդանական սանդուխի ամենատարբին առաջնաները և այն ժամանակ էլը տեսնենք, որ տարբերութիւնը էական չէ: Տարեք նաև էլը տեսնենք, որ տարբերութիւնը էական մէկին կենդանաբանական երեւոյթին կամ բոլորովին ազէս մէկին կենդանաբանական շարքի մէջ զեւտեղւած՝ ծովասղը, կենդանի սպունգը եւ ամեհապարզ բոյսերը: Անհնարին է, որ նա կարողանայ ջուկը բոյսը կենդանուց: Բոյսն էլ, կենդանին էլ նոյն բջիջը, նոյն քիմիական բազալըութիւնն ունին՝ ածխածին, թթւածին, ջրածին, բազալըութիւնն ունին՝ ծծումբ, ֆօսֆօր ևն.: ազօս, քիչ ևս երկրորդական տարրեր՝ ծծումբ, ֆօսֆօր ևն.: Միեւնոյն պրօթօպլազմն է, շարժուն, կենսունակ, մաշկով պատած, կորիզը ներսում: Նմանութիւնների թելը գեւ շատ հեռու կարող է ձգուի:

Վաղեմի ժամանակներում բոյսն ու կենդանին խիստ կերպով կը դասէին իրարից, իբրև հիմնականապէս տարբեր էութիւններ: Արիստոտէլ կ'ընդունէր «հողի ունեցող կենդանի» և «անհողի բոյս»:

Լիննէ ևս նոյն թիւրիմացութեան մէջ էր: Մեր դարու խոշորացոյցը չնճեց կենդանիների այդ արտօնութիւնը: Յոյցարեւց, որ ո՛չ զգայնութիւնը, ոչ ջղային սխառնն ու գիտակցութիւնը, ոչ շատ ուրիշ բաներ անալոյցման յատուկ չեն կենդանիներին, որ նրանք կամ բոյսերի մէջ ևս գոյութիւն ունին, կամ թէ բացակայում են ամենատարբ կենդանիների մէջ: Իրատամբ, արեւն, շեշտում է ուսու բուսարան Տիմի-

ըխաղէվ, որ «իրօզ չկայ ո՛չ բոյս, ո՛չ կենդանի, այլ մի անբաժանելի օրգանական աշխարհ» («Բոյսի կեանքը»):

Եւ առաջ գնաց կենսաբանական էւօրեւօրօնք մօնէրի վիճակից դէպի ամենաբարձր անասնական ու բուսական տեսակները, առաջ գնաց դանդաղ, աստիճանաբար, համաձայն գոյութեան կուրի և բնական բնօրոյութեան անշեղ օրէնքներին: Բնագիտութիւնը, որ համարեա գոյութիւն չունէր հին և միջին դարերում, 17րդ դարից արդէն սկսեց ծագել: Գտնուեցաւ խոռոբացոյցը, որի կոչումն էր բաց անել մարդու առաջ մի անյայտ աշխարհ, ջրածձկների, մոնէրների, բջիջների հրաշալի աշխարհը: 1675 թւին հղանդացի Լէօփէնհօկ գտաւ խոռոբացոյցի ասկ ջրածձկները (infusoire)*: Աշխարհ դրդաց, սուչեցաւ. ժամանակակիցները հրատարակեցին այդ գիւտը իրրեւ «գիւտայն դործ», իսկ Լէօփէնհօկին հուշակեցին կախարդ, խարեբայ: Խոռոբացոյցի գործածութիւնը դիտւած էր առ հասարակ, իրրեւ անասունում ու աններելի ձևաաբբութիւն: «Աստուած, հարկաւ, զի ուզի որ մարդը երևան հանէ մանրիկ էակների այդ աներեւոյթ աշխարհը, ապա թէ ոչ էլ ինչո՞ւ է նա թագցրել այդ աշխարհը մարդկային աչքերից...»

Թէ որ աստիճան նախապաշարւած էր ժպտութեամբ դեռ անցեալ 18րդ լուսաւոր դարում, վիայում է նուեւեալ դարձալի պատմութիւնը: Մեռել էր մի բժիշկ իր ձամբօրդութեան միջոցին բախարական մի գիւղում: Կղերը արդիւի էր թաղումը, որովհետեւ կախարդ էին կարծում հանգուցեալին:

(*) Վերջերս ճահճայն տեղմից մի փոքրիկ ջրակաթիւ, գետեղեցէք ապակեայ փոքրիկ թիթեղի վրայ և գննեցէք խոռոբացոյցում: Մի գեղեցիկ տեսարան է բացում ձեր առջեւ. ջրային փոքրիկ կաթիլը մի ամբողջ ծով թւում է ձեզ, ուր դէս ու դէն լողում, վազվզում են անհաշիւ մանրիկ էակներ: Շարժուելիւնը ազատ չէ, կամուտը չէ. նա միայն համապատասխանում է շրջապատող միջավայրի գրգռումներին: Պատուալողմի մի մի փոքրիկ փշրանքներ են դրանք, մէկ կամ մի քանի կորկներով:

Գիւղացիք գտել էին նրա մօտ մի ինչ որ խողովակ, երկու ծայրերից ապակիով փակւած (խոռոբացոյց) և երբ ապակիից ներս էին նայել, սարսափով նկատել էին մի անաղին հրէշ, սեւ, մազմազուտ... կարծել էին, թէ դեւ է, որին հանգուցեալը պատկերել է իրեն հետ: Բայց երբ քաջին մէկը սիրտ է անում փշրել խորճրգաւոր գործիքը, ապա ինչ անում, տեսնելով, որ կարծեցեալ հրէշը... մի սովորական լու է (Bommeli, die Thierwelt):

Բնագիտութիւնը հսկայաքայլ առաջ գնաց այնուհետև: Խոռոբացոյցը ոչ միայն բաց արաւ միտքից (*) էակների աշխարհը, այլ և թափանցեց բջիջի ներքին էութիւնը, ուսումնասիրեց նրա շինածքը, պրօտօպլազմային տարրերի դասաւորումը, վերջապէս բջիջի աննդամութիւնն ու բեղմնաւորումը: Հիմնուեց բջիջային բէօրին (**): Բջիջները, որոնցից կազմւած է ամէն մի կենդանի օրգանիզմ, անկախ ինքնուրոյն էակներ են, թէ՛ իրենց ձևով և թէ՛ պաշտօնով: Զուր չէ, որ երբեկիկէն անստուգ է նրանց «տարրական մարմիններ», Վիրխօվը՝ «կեանքի օձախ», Գարվինը՝ «կենդանի միաւորներ»: Ամէն մի բարդ կենդանի մարմին ներկայացնում է մի կազմակերպւած սօցիալական ամբողջութիւն, մի պետութիւն, որի քաղաքացիներն են բջիջները: Ինչպէս ամէն մի պետութեան, այնպէս և ամէն մի կենդանական կամ բուսական մարմնի մէջ՝ բջիջ-քաղաքացիները սրտ չափով և՛ անկախ են անհատապէս, և գտնւում են փոխադարձ կապակցութեան մէջ, հարձիւ աշխատանքի բաժանման սկզբունքին: Հէկիէլ աւելի հետու է ասում համեմատութիւնը: Կենդանու մարմինը — ասում է նա — իր խիստ կեղբոնացումով կարող է ընդունել, որպէս բջիջային մի միապետութիւն, իսկ բայց, որի

(*) Մարմինը (բուսական թէ կենդանական) բազիլացած է անհամար բջիջներից, որոնք տեսանելի են խոռոբացոյցի տակ:

(**) Առաջին հիմնադրերն էր բուսական Շլայտէն, ապա կենդանական աշխարհի վրայ տարածեց այդ թէօրիան կենսաբան Շվան. Վիրխօվ աւելի ընդարձակօրէն դարգացրեց բջիջային թէօրիան:

կեղբոնացումը առկա թույլ է, կը ներկայացնէ բջիջային հասարակապետութիւն: Եւ ինչպէս որ քաղաքական դիտութիւնները վերջում են մեզ մարդկային հասարակութեան աստիճանական կատարելագործումը նախնական վայրենի հորդաներից մինչեւ քաղաքակիրթ մարդկութիւնը, նոյնպէս և կենդանիների աւ բոյսերի, համեմատական կազմախօսութիւնը հաստատում է բջիջային պետութիւնների նոյն աստիճանական պրոգրէսը: Ամենաստորին աստիճանի վրայ կը գտնուին ջրիմուռը (algue) և սունկը, կորախերը և սպունգները, այգանկ գետ կեղբոնացում չկայ, աշխատանքի բաժանումը սազմնային է: Այդ դրութիւնը կը յիշեցնէ մարդկային սկզբնական հորդաները: Հագրա բոլորովին հակառակ կողմը... Էյօլիսթոնի զագութիւն բարձրանում է յաղթանդամ, ճիւղաւորւած ծառը որ մի գործարք բջիջային հանրապետութիւն է և ողնուոր կենդանին, որ ներկայացնում է մի նրաչալի միապետութիւն(*)... Կեղբոնացումը պէտք է անպատճառ կապուի միապետութեան հետ... Չմտնանք սակայն, որ Հէկկէլ գեմմանացի գիտնական է:



Կենդանիներից անցնենք մեռածներին:

Մանենք երկրային կեղևի խորքերը, ուր թաղւած են բերբուր գարբից ի վեր անհայտ կենդանիների ու բոյսերի կմախքները(**):

Գա մի հակայական թանգարան է, ուր տեսնում ենք մեք հետաւոր նախնիքներին, տեսնում ենք, թէ ինչպէս իրարու վրայ յաջորդաբար թափւած շերտերի մէջ պահպանուել է օրգանական աշխարհի ամբողջ ստճամտաւր, կարող ենք տեսի՝

(*) Հէկկէլ «Փորձ բջիջային հողեբանութեան»:

(**) Ինչպէս վերը ասացինք, կենդանական այդ մեռած բեկորներով դառնում է բնագիտութեան այն ճիւղը, որ կոչւում է Հնեարանագիտութիւն (Paléontologie):

մեր մարդկային տնտեսաւոր (Stammbaum, arbre généalogique) որ սկսւում է ամենաստորին կենդանի արարածներից և ճեղքւում է սողունների, թռչունների և կաթնասուն էակների շարքերով մինչեւ հնչակաւոր կապիվարդը, մինչև խօսուն ու կատարելա մարդ-էակը, որի հետքերն ու մնացորդներն ևս գտնում ենք երկրաբանական այդ խորունկ շերտերի մէջ:

Շերտերը կոչւում են «Չրային», «Կետապետական»: Նրանց սկզբնաւորութիւնը պատկանում է այն հետաւոր, անյիշատակ անցեալին, երբ երկիրը աստիճանաբար պաղեցով, սկսել է կաղմակերպուիլ նրա կեղևը իր անհարթ մակերեսովով, իր խորերով ու բարձունքներով (վերջինները, իբրև արգիւնք գետնի մշանջնաւոր փոփոխութիւնների, նրա բարձրացման կամ իջման) և երբ վերից, գոյրչիներով յղիացած մթնոլորտից սկսել է թափուել ջուրը երկրային ցամաքի վրայ, խոկ ջրի հետ երևան են եկել և՛ կենդանի էակները:

Ձուրն է, յիրուի, այն զլիաւոր սողակը, որ իր հեղուկ կամ ամուր դրութեամբ, սրպէս անձրև ու կարկուտ, սրպէս ձիւն ու հեղեղ, քերկ է ու արտել յախաննօրէն երկրի մակերեսովը և գետերի ու հեղեղամաների միջոցով քչիլ հողի զանգւածները դէպի ծովերի ու լճերի անդունդը, ուր և այդպիսով գոյացել են անթիւ գարբի ընթացքում երկրաբանական պէս պէս շերտերը: Եւ նրանց զիտել կարելի է այսօր երկրապնդի այլ և այլ ցամաքային վայրերում, հակադրական աստիճանների վրայ, որոնք մի ժամանակ եղել են ծովի յատակ: Ձուրը տարել է իր հետ ո՛չ միայն հողը, քարը և հաղարաւոր հանքային բազալթութիւններ, այլ տարել է և այդ հողի վրայ ու նրա մէջ սպրոզ միլիոնաւոր կենդանի էակները, քչիլ է նրանց զիտելները, միշտ սորերկով ու ստորբալուձերով իր յորձանքներում, քչիլ է դէպի ծովերի խորքերը, ուր կենդանական այդ գիտելները միւլեկով տիղմային զանգւածների մէջ, քարայնի են ժամանակի ընթացքում, այսինքն փոփոխ օրգանաւոր մասերը — մկանունք, կոչի, սիրտ, թուք, փորտախք ևն — փոխարինուել են հանքային

բազալը բութիւններով(*), մինչ սակրային գոնդւածները — կը-
մախք, գանգ, առամ, եղջիւր, սրտեան, կճեպ, փեռուր,
բոյսերի ճիւղեր ու բուներ են. — մնացել են ընդհանրապէս
անեղծ :

Իջել են, վերջապէս, դէպի ծովի յատակը և այն բիւ-
րաւոր մանրիկ արարածների գիւտները, որոնցով լի է եղիկ
նախածովը : Իջել են ամենից առաջ սղնազուրկ կենդանիները,
մոլլիւսկներ (կակղամորթ) ևն., որոնցից յաճախ մնացել է
սոսկ դրոշմը... Ի՞նչ յողթանդամ շերտաւորումներ են գոյս-
ցել միմիայն կորալներէ գիւտներից (coraille, բուսա, մէր-
ճան) : Ի՞նչ անսպաս քարածխային լեռներ են կազմակերպուել
մեռած, գիւտնացած բոյսերից...

Դուք տեսնում էք այդ հոյակապ ու այլազան թանգա-
րանում, երկրային կեղևի յաջորդական շերտերի մէջ՝ տե-
սակ տեսակ կենդանիներ ու բոյսեր, մի ջոկ տեսակ խրա-
քանչիւր շերտի մէջ... Անհետացել է այդ տեսակը՝ ոչ թէ
անակնկալ մի աղէտի, կասասորոփի շնորհիւ — ինչպէս կիւ-
վիէն կը յայտարարէր — այլ անհետացել է, որովհետեւ չի կա-
րողացել բնդ միշտ յարմարել միջավայրի յարափոփոխ սրտ-
մաններին, չի կարողացել պատասխան տալ «դոյամարտի»
անագորոյն պահանջին... Անհետացել է կենդանական, բու-
սական այս կամ այն տեսակը — երկար դարեր սպրելուց յե-
տոյ — և փոխարինուել մի ուրիշ, աւելի կենսունակ ու յար-
մարեող տեսակով :

Եւ այդպէս, երկրային ամենախոր ծովքերի մէջ թաղւած
են ամենամանր ու սրբազանց կենդանիները, ապա հետզհե-
տէ — դէպի երկրի մակերեւոյթը — գալիս են միշտ աւելի և
աւելի բարդ, այլազան, կատարելագործւած տեսակները : Ամե-
նից ուշ յայտնուում են կաթնասունները, որ ողնաւոր էակներէ
մէջ ամենակատարեալն են և որոնց մէջ է մարդ-էակը :

(*) Կոն սակայն բացառութիւններ. «Մամուլի» կոչւած հսկայ վի-
ղը գտնուել է ամբողջապէս սառած իր սակրներով ու մրսներով Սե-
բիի սառուցներում :

Նեպտունական շերտերի դոյացման պատմութիւնը բա-
ժանուած են երեւակայութեամբ հինգ խոշոր շրջանների,
որոնցից իւրաքանչիւրը ամփոփում է մի քանի ստորա-
բաժանումներ. ամէն մէկը այդ շրջաններից ունեցել է,
ուրեմն, իր յատուկ կենդանիներն ու բոյսերը, որոնց գիւտ-
ները քարացած դրութեամբ գտնուում են այսօր համարատա-
խան շերտերի մէջ : Վերջինները բաղկացած են կաւից, կաւի-
ճից կամ աւաղից, քարածուխից ևն. :

1. Հնագոյն շրջան (âge primordiale)
2. Առաջնական շրջան (âge primaire)
3. Երկրորդական շրջան (âge secondaire)
4. Երրորդական շրջան (âge tertiaire)
5. Չորրորդական շրջան (âge quaternaire)

Շերտերը գոտաւորում են զուգահեռաբար : Յաճախ հան-
դիւլում են երկու շերտերի արանքում կրանիթի կամ խոյ-
տակճի ժայտեր, որոնց մէջ չկան կենդանական մնացորդներ է
հետքեր : Դրանք կազմել են, հաւանօրէն երկրային կեղևի
ամենատալլեմական խաւը և հրաբխային ժայթքումներից յան-
կարծակի վեր են նետուել, ճեղքելով նեպտունական շերտերը :

Հնագոյն կամ նախնական շրջան :

Ամենտիկարատեսն է և ամենահեռաւորը : Նրա տես-
ողութիւնը գերազանցում է մնացած չորս շրջաններինը մէկակող
աւում : Այդ հսկայ ժամանակաշրջանում կազմակերպուել են երեք
ամենամեծ, ամենահեռաւոր, ամենախորունկ երկրային շեր-
տերը (Լալբրեհտոն, Կամբրեան, Սիլուրեան), որոնց հաս-
տութիւնն է — գիտութեան հաշուով — մօտաւորապէս 70,000
ոմանչափ է... Քանի՞ միլիոն տարի է պէտք եղել այդ ահա-
զին շերտաւորումները կազմելու համար... Այդ շրջանի
մէջ սկիզբ է աւել օրգանական կեանք, բոյսերն
ու կենդանիները : Այդտեղ մենք տեսնում ենք ար-
դէն հեռքերը ջրային ամենապարզ կենդանիների ու
բոյսերի, որ կազմել են այդ հեռաւոր շրջանի ֆլորան (բուսա-
կանութիւն) և ֆաունան (կենդանական աշխարհ). եղել են
զրիթէ միայն ջրաբնակ էակներ, լայնատարած ջրխմուռի ու

փամփշտուկի անասուններ՝ մանրիկ, դանկազուրկ կենդանիներով՝ կորաշներով, ծովաատղերով... բայց սակայն չեն եղել սղնաւոր կենդանիներ:

Առաջնական քոջան:

Չկների սիրապետութիւնն է: Կան այսուկ եւս երեք կարգի շերտեր, որոնց մէջ գտնուում են աստօրէն ձկների մնացորդներ: Նշմարուում են նաեւ միջասանների, սողունների հետքեր: Բայց անասնական թաղաւորութեան երկու բարձրագոյն դասակարգերը՝ թռչուններն ու կաթնասունները՝ բացակայում են դեռ: Կան Բարաճուխի աճաղին շերտերը, որ շահագործման անսպաս աղբիւր են ժամանակակից քաղաքակրթութեան համար. նրանք վկայում են հինաուրոյ ժամանակների ճոխ, համասարած բուսականութիւնը, որ անսարակոյս աճել է կլիմայական հրաշալի պայմաններում:

Երկրորդական քոջան:

Թագաւորում են սողունները: Նրանք տարածւած են եղել ամբողջ երկրագնդի մակերևույթին, ցամաքի վրայ և ովկիաններում, նոյն խակ օդային միջնորդրում: Թռչունների կարսպներն են դրանք: Ամենի ծովային վիշապներ, հսկայանորմին թռչկան սողուններ, կէս-քաւաթնոտ, կէս-կոկորդիլոս, 30-35 մեդր երկայնութեամբ, աճաղին տկրաններով թափաւում էին ծովի ու ցամաքի վրայ, սաւաննում էին միջնորդարի մէջ: Այսօրուայ ամենահսկայ փիղն անգամ դաճած է այդ տարօրինակ թռչուն-սողունների հանդէպ: Նրանք ունէին թեւեր և սակայն թռչուն չէին կարող կոչել, ունէին երկայն սրտ ու տկուաներ, բայց սողուններ չէին: Անաստիկ մի ուշադրաւ փաստ՝ թռչունների և սողունների արիւնային մօտ ազգակցութեան: Երկրորդական շրջանի վերջերում հետարգճեակ անհետանում են այդ գործուրելի, հրէշային կենդանիները և աեզի են ապրիս թռչուններին ու կաթնասուններին: Բուսական աշխարհը կազմւած էր ասեղնաւոր կամ կոմարեր անտաններից:

Երրորդական քոջան:

Վարնասունների քաղաւորութիւնն է: Ենթադրում են, որ

մարդն եւս ծնունդ է տուել այդ շրջանի վերջերում, որպէս արդիւնք մարդանման կապիկների կերպարանափոխութեան, բնաշրջման: Երկրի մակերևույթը և կլիմայական պայմանները մեծամեծ փոփոխութիւններ են կրում: Եւրասիական ցամաքը շատ աեզեր աղբաւում է ջրերից: Բարձրանում են լեռնաշղթաները, (թէ սրբա՛ն դանդաղ է կաթարւել այդ բոլորը—ինքնին հասկանալի է), սիրւում է հարուստ ու պայտան բուսականութիւն: Նախկին աճարկու սողունների աեզ՝ երևում են օձերն ու մողէաները, կոկորդիլոսներն ու կրիաները: Յամաքը կարււած էր անհամար ճահիճներով ու հալիաներով, ուր թափաւում էին եղջերուների, անախոյսների և հիպօպոսամների (գետաձի) աճաղին երամները: Կային վաղկան թռչուններ, մի տեսակ նախաշրճեղեղեան ջայլամներ: Պատահում էին միթխարի կաթնասուններ, ինչպէս մասսօգօնը (այժմեան փղի նախահայրը), գինօթերիւմը, որի միայն գլուխը երկու մեար երկայնութիւն ունէր: Բողմանում են այդ շրջանում կապիկային տեսակները. բայց երբ կամայ-կամայ ցուրար վրայ է հանում, նրանք սկսւում են չաւել դէպի Ա. ֆրիկա:

Չորրորդական քոջան:

Սկսւում է մի նոր դարադրութիւն: Մաւղու և քաղաքակրթութեան տիրապետութիւնն է: Կատաղի սանամանիքները տարածւում են գրեթէ ամբողջ Եւրասիայի վրայ: Մարդու հետ միտամանակ ապրում են մամուլը կոչւած փիղը, քարանձաւային արջը (Höhlenbär), հսկայ եղջերուն կայն: Գանւել են — պեղումների միջոցին — անհամար մարդկային կմախքներ՝ այլ և այլ երկրներում: Այդ շրջանը հսկին է համեմատւած ամբողջ նախընթաց պատմութեան հետ և կազմւում է այդ վերջինի տեւողութեան, հազիւ միայն կէս տակար: Բայց և վերջինի տեւողութեան, հազիւ միայն կէս տակար: Բայց և պիտանկանները հաշւում են չորրորդական շրջանի այնպէս, գիտնականները հաշւում են չորրորդական շրջանի տեւողութիւնը մինչեւ 100,000 տարի: Համեմատեցէ՛ք այդ թիւը Աստուածաճշի վկայութեան հետ, որի համեմատ ընդամէնը իբր թէ հինգ-վեց հազար տարի է անցել այն ժամանակից, ինչ աշխարհ են եկել Ագամն ու Եւան...:

Չորրորդական չրջանը բաժանուած է երկու պերիօդի-
 ջրհեղեղեան (diluvial) և յեռ ջրհեղեղեան (alluvial): Երկրային
 բոլոր շերտերի միջին հաստութիւնը հաշուած են մօտաւորա-
 պէս 130,000 սանաչափ: Կարելի է դիտել, թէ մի ամբողջ
 դարու ընթացքում ջրի հոսանքներից ինչ հաստութեան
 տիպով կարող է գոյանալ մի յայտնի միջավայրում, և ըստ
 այնմ հաշուել երկրային կեղեւի պատմութեան ամբողջ տեւո-
 ղութիւնը: Ոմանք առաջարկում են, ինչպէս տեսանք, հա-
 բեւը միլիոնաւոր տարիներ: Թւերը, հարկաւ խիստ յարաբե-
 րական են. մաթեմատիկական ճշգրտութեան մասին խօսք չի
 կարող լինել. երկրի մակերևույթը տարրեր կէտերում տարրեր
 պայմաններ է ներկայացնում: Եթէ դարերի սխալ անգամ թող
 տանք, հաշուել չպէտք է առնել, աչքի առաջ ունենալով, որ
 երկրային կեղեւի սկզբնաւորութիւնից մինչև մեր օրերը
 ամբողջ յաւիտենականութիւն է անցել:

Եւ ահա մեծ, ուշագրաւ հարցը. հնէաբանութեան այդ
 վերոյիշեալ պերճախօս վիպութիւնները անմիտակի ապացոյց
 չեն արդեօք դարվիտական վարդապետութեան, այսինքն
 կենդանի էակների աստիճանական բնաշրջման — սկսած ամե-
 նաստորին ու մանրիկ մարմիններից մինչև խօսուն երկոտա-
 նին... Սկզբնական չրջանի մէջ մենք տեսնում ենք միայն
 ամենապարզ կենդանի էակներ, որոնք եղել են ուրեմն երկ-
 բաղնիքի անդամակի բնակիչները: Նրանք այսօր ևս անհա-
 մար բազմութեամբ լողում են ծովերի ու գետերի խորքե-
 րում: Ապա յաջորդաբար երևան են գալիս երկրաբանական
 շերտերի մէջ տեղի բարձր կենդանիների և բոյսերի կմախք-
 ներ՝ նախ ձկների, ապա սողունների, ապա թռչունների և
 վերջապէս, կաթնասունների, որոնց շարքում և մարդու...

Հինաւուրց կենդանիների այդ մեծած ու բրածոյ (fossile)
 ներկայացուցիչները անխօս վկաներ չեն կենդանական աշ-
 խարհի աստիճանական կատարելագործման, որ կատարել է
 միլիոնաւոր տարիների ու դարերի ընթացքում...

Դեռ երկրի մակերևույթի հազիւ $\frac{1}{1000}$ րդ մասը միայն են-
 թարկած է գիտական հետազոտութեան: Բայց ժամանակի

ընթացքում նա կը տարածւի նաև Ասիոյ, Աֆրիկայի, և այլ
 անձանօթ աշխարհների վրայ, երբ տեղի կը ծաւալուի քա-
 ղաքակրթութիւնը, երբ երկաթագին կը թափանցէ ամենու-
 րեք: Կը գտնւին հեղահեղ կենդանական բրածոյ մարմինների
 նոր-նոր տեսակներ, կը հաստատուի վերջնականապէս կենսա-
 քանական այն մեծ իրողութիւնը, որի անունն է՝ արիւնակ-
 ցութիւն բոլոր կենդանի մասեր ու խոռոչ եակների: Այսօր այդ
 ուղղութեամբ շատ բան արւած է արդէն, բայց դեռ շատ
 աւելի բան կայ անելու:

Չը լուծւած խնդիրներ ակաւից շատ կան: Սակայն և
 այնպէս, չը նայած կենդանաբանական բազմաթիւ օգուկների
 կամ «միջին տեսակների» բացակայութեան, այնուամենայնիւ,
 երջ դիտում էք ամբողջ էւօլիսիօնը նոյն խիտ արդի փոփո-
 խական, սուբյեկտիվ դասակարգումների (classification) հա-
 մեմատ, սկսած միարջիջ էակներից մինչև կենդանական սան-
 դախի բարձրագոյն աստիճանները, — արեւի պէս պարզ ցո-
 լում է ձեր առջև արիւնակցական այն կայրը, որ շղթայում
 է գոյութիւն ունեցող բոլոր կենդանական տեսակները, և
 կոյր պէտք է լինել տեսակների անւարժութիւն կամ հակադար-
 վիտիզմ քարոզելու համար:

Պեղումները անընդհատ շարունակուած են: Նրանք բայ
 արին Նիմաւուրց քարածայրերի մէջ փեշաւուր սոզուկներ
 և երկայն սրչաւոր թռչուններ, որոնք լոյս են տիրում այդ
 երկու տեսակների մօտ աղղակցութեան վրայ: Նրանք տեղի
 մեզ քարացած կապիկների շատ տեսակները Շվեյցարիայում,
 Յունաստանում և արիջ տեղեր. խիտ բրածոյ կապիկների գո-
 յութիւնը վախաւց մխտում էին: Նրանք երևան հանեցին գա-
 նազան վայրերում նախամարդու քարացած բեկորներն ևս,
 որոնք մնացել են ստորերկրեայ շերտերի մէջ ասանակ և գուցէ
 հարիւր հազարաւոր տարիներ տալով: Իսկ բրածոյ մարդու
 (homme fossile) գոյութիւնը աւելի ևս մոլեւանդ կերպով
 մխտում էին Կիւվիէն և իր երկրպագուները:

Գ Լ ՈՒՒ Վ Ե Ց Ե Ր Ր Ո Ր Դ

Մ Ա Ր Դ ՈՒ Ծ Ա Գ ՈՒ Մ Ը

Գարձեալ Աստւածաշունչ եւ գիտութիւն.— Գավիղ Շարաուս.— Կարծեցեալ անդունդը մարդկութեան եւ անասնութեան միջեւ.— Բարձրագոյն կենդանիները եւ ստորագոյն մարդիկ.— Ֆիզիքական, մտաւոր եւ հոգեկան նմանութիւններ.— Ուր է սահմանագիծը.— Հրեւի եւ իր թեղիսը.— Չեռեր եւ ոտքը կապկի մօտ.— Շիւսպանգե, Օրանգ, Գօրիլլա.— Գարլի-նի վաստերը.— Յոյգերն ու բնագոյները կենդանիների աշխարհում.— Ընկերային կեանքը մշտնջենքի մեջ.— Նախամարդը.— Նա շատ անելի ստոր է եղել, իսկ ժամանակակից վայրենիքը.— Գարլիներից մեծ քաղցիչները.— Կարլ Ֆոլս.— Գարլիներից եւ բարոյականութիւնը.— Մարդու մեծատուր նախահայրը.— Homo Aialus.— Խուլ-համբներ եւ մանրագրութիւնը.— Մարդկային նախապատկերներ.— Զրեհեղեղեան կամ սառցային շրջան.— Բարանձաններ եւ կմախֆներ.— Մարդկային ցեղերի գաղթը.— Գօրմեններ եւ Տուսուլիներ.— Գանիական կեօկիեն-մեօղիները եւ շիլեյարական լնաշենները.— Մարդկութեան ենթադրական օրրանը.— Միաճնական իւ բազմաճնական քեօրիաներ.— Յեղերի ծագումը.— Կարճամ, Ֆոլս, Գարլին.— Սեռական ընտրութեան դերը.— Եզրափակումն:

Մարդ-արարածը կարող է միմէ բացատրութիւն կազմել ակեղերական բնաշրջման մէջ... Կարող է նա դուրս մտնել ամբողջ օրգանական զարգացման օրէնքներից: Ոչ մի նիւթ

չկայ այդ ենթադրութիւնն արդարացնող, ընդհակառակը, բոլոր փաստերը նրա դէմ են խօսում: Արդարեւ, չափազանց միամիտ կը լինէր սնդիկ՝ որ էւօլիւսիօնի թիկը ձգւելով նախանական սրբող մօնէշներից մինչեւ կապիկը՝ յանկարծ կարելի է եւ որ մարդը աշխարհ է եկել, իրրեւ մի առանձին (ուշ-բնական) ստեղծագործութեան արդասիք: Այդ վերջին կարծիքն էին դաւանում, ինչպէս տեսանք, փիլիսոփաները եւ գիտնականները մինչեւ էւօլիւցիօնիզմի հաստատուիլը:

Աստուածարանական փիլիսոփայութիւնը, մանաւանդ, ճիշդ է թափել՝ միշտ աւելի եւ աւելի խորացնելու անդունդը, մարդկութեան եւ անասնութեան միջեւ: Գեաւթ, որ նորագոյն փիլիսոփայութեան հիմնադիրներից մինն է, որիչ կերպ չէր ուզում անտանկ կենդանիներին, բայց եթէ «pure machine», զուտ մեքենայ... Սակ նախարարներու չէր, որ կը խօսէր Դէքարթի մէջ, այլ, հաւանօրէն, եւ կօմպօմիսի աստուածը: Եթէ Դէքարթը ընդունէր, որ կենդանիների հոգին եւս անմահ է, ինչպէս մարդունը, դա կը լինէր զարհուրելի «սրբապղծութիւն» 17րդ դարու մէջ, որ կրօնը եւ նրա սպասուածքը կղերը խիստ զօրաւոր էին:

Այսօր եւս կրօնաւորները ձգտում են հաւատացնել ամենուրեք, որ Գարլիների վարդապետութիւնը եւ, մանաւորապէս, մարդու ծագման թէօրիան անաստուած է, անբարոյական... Չէ որ մարդուն... «որսր Աստուած ըստ պատկերի իրում»... Այդպէս՝ ըստ թէօրօգնների: Իսկ այսօրուայ ընկերային գիտութիւնը հաստատում է, որ, ընդհակառակը՝ «մարդն արար զԱստուած ըստ պատկերի իւրում» (*):

Որ մարդը մասնակից է եղել ընդհանուր էւօլիւսիօնին, որ նա եւս պատկանում է կենդանական թաղաւորութեան, որ նա առաջացել է կապիանման կենդանիներից, — այդ ամէնը կայծակի պէս շանթում է բոլոր ուղղափառներին, փոթորկում է քնքուշ, զգայուն սրտերը: Ով որ անաստուած

(*) Տես, մեր առաջին գլուխը կրօնի մասին:

չի գտնուում այդ վարդապետութիւնը՝ գտնուում է այն անձաշակ, ով որ նրա մէջ չի տեսնուում եղեւնափորձ ընդդէմ «գերագոյն Յայնուութեան», տեսնուում է այդպիսին՝ ընդդէմ մարդկային արժանաւորութեան»... Այսպէս է յայտարարուում հռչակաւոր ակէխառ աստուածարան Գալիլիոյ ՆՏՐԱՈՒԱ իր նշանաւոր գրեւածքի մէջ (Der alte und der neue Glaube— Հին և նոր Հուսա) :

«Գարդինի վարդապետութիւնը ակէխառ է, նա ի վերջոյ տանուում զէպի Աբարչի բացասութիւն» — ձայնուում են թէօրոգները: Մենք կ'աւելացնենք, որ ակէխառ է ընդհանրապէս էւօլիւսիօնի թէօրիան, բնաշրջման վարդապետութիւնը, քանի որ նա ասաջնորդուում է զէպի մի միայնակ սկզբունք, մի սուբստանց (Ուժ-նիւթի միութիւնը), որը ինքն իրեն զոյսութիւն ունի և իրմէ դուրս ոչ մի պատճառ, ոչ մի ուժ չի ձանաչուում... Սակայն գիտութիւնը կրօնական հրահանգներով չէ, որ ընթանում է: Նա չի հաստատուում այս կամ այն թէօրիան, ի նկատի տանելով նրա առաջ բերելիք հետեւանքները, այլ ձգտում է զէպի առաջ, առգորւած մէկ միայնակ զապախարով՝ միշտ աւելի և աւելի մտանայ եւստրսուքեան... Եւ իր յայթական ընթացքի մէջ՝ նա տապալում է ամեն մի ապօրինի հեղինակութիւն, հաստատելով ընդմիջում մին միակ գիտութեան ձգտարագոյն հեղինակութիւնը...

«Անդունդը» մարդկային և անտանտական աշխարհի միջև՝ հարթուած է այսօր: Այն բոլոր առանձնաբարութիւնները, որոնցմով հակաէւօլիւցիօնիստ վարդապետները ձգնում են բաժանել մարդուն ուրիշ կենդանիներից՝ նրանք կամ զոյսութիւն ունին այդ վերջինների մէջ ևւս, և կամ թէ բացակայում են ամենաստորին մարդկային հօրդաներում: Խօսք չկայ, եթէ համեմատենք մի Կանա կամ մի Շէքսպիր ամենաբարձր կենդանիների հետ, անդունդ կը տեսնենք մէջտեղը: Սակայն, Կանայից մինչեւ հիմակաւայ ակրիկական Բուշմէնը կամ Պարուսան ևւս՝ ահագին ստորածութիւն կայ: Այնուամենայնիւ, Պարուսաներն ու Բուշմէնները զեւ շատ բարձր են նախամարդուց, որ սպրիկ է մեղնից շատ դարեր առաջ:

երրորդական ու չորրորդական շրջանների մէջ: Նախամարդը — ակիր, թափառական, առանց զէնքի ու զործիքների, բիրտ ու սարս, քարանձառներում կամ ծառերի խուռչներում կուշ եկած, — ահա՛ թէ սրին պէտք է համեմատել անասունների հետ:

Որտեղ է տանսանագիծը: Այստեղ ևւս չկայ նա՛ ինչպէս որ չը կար բոյսի և կենդանու մէջ: Մարդկային և անտանական աշխարհի տարբերութիւնները սրակային չեն, այլ քանակական, էութեան մէջ չեն, այլ աստիճանի: Մարդն ևւս կենդանի է, անստոմիական նման կազմութեամբ, ֆիզիօլոգիական նման ֆունկցիաներով (fonction, պաշտօն): Կենդանին ևւս գիտակից էակ է, նա ևւս կը զգայ ու կը կամենայ, կը յիշէ, կը սիրէ, կ'ատէ, կ'աղերտէ ու կը սպասնայ, այս նոյն իսկ կը պատէ ու յայտնի չափով կը արամարանէ: Կենդանիներն ալ լեզու ունին, կը խօսին իրարու հետ, կ'արտադանիներն ալ լեզու ունին, կը խօսին իրարու հետ, կ'արտադանին իրենց զգացումները, վիշտը, երկիւղը, ուրախութիւնը ևւս: Անհամար փաստեր կան այն բոլոր հեղինակների մօտ, որոնք զբաղել են անասունների հոգեբանութեամբ. բայց մենք չենք կարող երկար ծանրանալ:

«Իր բոլոր էութեամբ մարդս պատկանում է ընդհանուր կենտական աշխարհին. իր մարմինը, ինչպէս և բոյսերինն ու կենդանիներինը, կազմուած է բջիջներից և բջջակոյտերից, իր կենդանիներինը, կազմուած է բջիջներից և բջջակոյտերից, իր զգացողութեամբ և ազատ կամու որ տեղափոխութեամբ՝ նա զգացողութեամբ և ազատ կամու որ տեղափոխութեան մէջ. իր մարմնի մանուած է կենդանական թաղաւորութեան մէջ. իր մարմնի մասերի սրտը կազմութեամբ ու զատաւորութեամբ՝ նա պատկանում է ողնայարաւոր կենդանիներին զտակարգին, մասնաւորապէս կաթնասուններին և աւելի մասնաւորապէս բարձրագոյն կաղկային տեսակներին» (Rolle): Մարդը էտպէս չի տարբերում բարձրագոյն անասուններից, բայց նա իր կատարելագործումով, ֆիզիքական ու հոգեկան կարողութիւններով կանգնած է կենդանական երկարածից սանդուխի գագաթին:

Օկէն հակիրճ ու բնորոշ խօսքերով ստպիւ է մարդուն կարաքիրը. «մարդը ամենամոլեղին գագանն է և ամենանազանդ սրտողը, ամենահպարտ նժոյզը և ամենահամբերա-

ապր էչը , ամենանաւատարիմ չունը և ամենակերծ կատուն , ամենակենանձն փիղը և ամենաանգութ բորենին» :

Լիննէյ , ինչպէս տեսանք , դեռ 18րդ դարու մէջ գետնիկ էր մարդուն միեւնոյն ընտանիքում կապիկների հետ , անւանելով դրանց բոլորին primates , այսինքն , կենդանական աշխարհի պետեր , թագաւորներ : Իրանով արդէն չլէդ բնագէտը առաջին հարւածն էր աւել վաղեմի դատակարգումներին , որոնք կը բաժանէին օրգանական աշխարհը երեք թագաւորութեանց — բուսական , անասնական և մարդկային :

Բայց Լիննէյց յետոյ Բրումներախը նորէն գտանց մարդուն , որ երկու ձեռք ունի միայն (bimane) , միւս կենդանիներից , որոնք ունին չորս ձեռք (quadrumanes) : Կիւլլէզ , ևս ընդունեց այդ բաժանումը :

Եկաւ Հրեյիս և ջնջեց զանազանութիւնը մարդու և բարձրագոյն կապիկների ձեւերի մէջ : Ուսումնասիրելով ձեւերի ու շաների սկիզբներն ու միանները՝ մարդու և կապիկի մօտ անատոմիական կազմի տեսակետից՝ նա ցոյց տուց , որ «չորս ձեւք» անեցօղ կապիկները իրօք նոյնպէս երկու ձեռք ունին , ինչպէս և մարդը : Ծիշդ է , կապիկների մօտ ձեւքի ու սոսի հակադրութիւնը կամ նրանց մէջ եղած աշխատանքի բաժանումը այնքան խիստ ու որոշ կերպով զրծւած չէ , ինչպէս մարդու մօտ : Սակայն , այդ տարբերութիւնը մօրփօրօգիական է (ձեւորանական) և ոչ ֆիզիօրօգիական . մարդկային ձեւքերը համեմատաբար կարճ են , սաքերը երկար : Կապիկների սոսի ու ձեւքը կամ հաւասար երկայնութիւն ունին , կամ թէ ձեւքը դեռ աւելի ևս երկայն է լինում սաքից : Տարբերութիւնը բղխում է սկիզբների ու մշտնների աւանձին կազմութիւնից : Այնուամենայնիւ , զօրիլա կապիկի մօտ սոսի ու ձեւքը նոյնքան են տարբերում , որքան և մեզ մօտ (Հէկկէլ) :

Փօրիլայի և շիմբանգէի ձեւքերը խկական ձեւքեր են , ինչպէս մարդունը , թէ՛ անատոմիական և թէ՛ ֆիզիօրօգիական տեսակետից (Ռօլլէ) : Միւս կազմից յայտնի է , որ մի կարգ չլայրենի ցեղեր գրծ են ածում իրենց սորը , որպէս «չեսին»

ձեւք» : Ինչպէս որ մենք ընդդիմադրում ենք ձեւքի բխամատը միւս չորս մասներին , նրանք էլ զխան սաքի չորս մասերին ընդդիմադրել սաքի բխամատը , այսինքն , նրանք կարող են ծառայեցնել իրենց սօքը , իրբեւ վերցնելու , բռնելու , աշխատելու ձեւք :

Մինչև և խկ բարձր , զարգացած ցեղերի մէջ , յարատեւ դորձադրութեամբ կարելի է վարձեցնել սոսի բխամատը : Նկարիչներ են տեսնում՝ առանց ձեւքի օգնութեան նկարելիս , և ջաթակահարներ՝ սաքով նւագելիս : Վերջապէս , նոր ծնւածները բոլոր ազգերի մէջ իրենց դրութեան տուջին ամիսներում սոսի միջոցով նայնքան դիւրութեամբ են բռնում զգալը կամ մի սաքիչ բան , որքան և ձեւքով : Ապա սրեմն , այստեղ ևս ոչ մի պատճառ չկայ՝ մարդուն զատելու կապիկներից :

Այսօր դիտական աշխարհի մէջ ընդունւած է արդէն Հրքայի(*) եզրակացութիւնը , որի համեմատ՝ մարդուն և բարձրագոյն կապիկներին (կօրիլա , շիմբանգէ ևն .) բաժանող անատոմիկ տարբերութիւնները աւելի թոյլ են , քան այն տարբերութիւնները , որ կան ամենաբարձր և ամենատարին կապիկների միջև : Հրքային եկել է այդ նշանաւոր եզրակացութեան՝ այլ և այլ օրկանների — գանկի , սեղեղի , սո ու ձեւքի ամենախղճամիտ ուսումնասիրութիւնից յետոյ , որ հրատարակւած է դեռ 1863 թւին , իր հանրաժանօթ զրումքում՝ «Մարդու դիրքը բնութեան մէջ» :

Հրքայի , Բրօկայի , Փօխտի , Հէկկէլի և բազմաթիւ ուրիշ ընագէտների ու մարդաբանների վկայութիւններին՝ Դարվին աւերացրեց իր սեփական վատտերի անվերջ շարքը որ հաւաքել էր նոյն աշխարհաշրջիկ ճամբորդութեան ընթացում և հրատարակեց 1871 թւականին իր խոշոր աշխատութիւնը՝ «Մարդու ծագումը և սեռական ընարութիւնը» , որ արամբանական շարունակութիւնն է «Տեսակների ծագման» : Փաստեր՝ որոնք ցայտուն կերպով հաստատում են անասնա-

(*) Huxley, անգլիացի . վախճ . 1895ին :

կան և մարդկային աշխարհների սերտ կապը, միտթիւնը, կենդանիների — մանուսնոց բարձրագոյն կապիկների և մարդկանց անոսմիական, ֆիզիոլոգիական և վերջապէս, նոզկեկան նմանութիւնները :

Թողնենք որ խօսէ ինքը մեծ ընդգէտը .

«Մարդը շինւած է համաձայն նոյն ընդհանուր ախի, կազապարի, ինչ որ և միւս կաթնասունները : Նրա կմախքի բոլոր ոսկորները համեմատելի են մի կապիկի, մի չղջիկի համապատասխան ոսկորների հետ : Նոյն ձեւով են և նրանց մկանները, նեարդերը, արիւնատար անոթները, փարտէրքը են . : Ուղեղն էւս, ամենակարեւոր գործարանը, հնազանդում է նոյն օրէնքին . . . Մարդկային ուղեղի խորքանշխար ծաղր ունի իր նմանը օրանգուքանկի(*) ուղեղի մէջ(**) . . . » :

Շարունակենք պատճառարանութիւնը, ըստ Գարվինի :

Որ սաղմային էւօլիւսիօնն էւս նման է կենդանիների ու մարդու մէջ — այդ արդէն տեսանք . . . Մեծ է այդ նմանութիւնը՝ մարդու սաղմի և միւս կաթնասունների սաղմերի միջեւ :

Նոյն սղդակները — բնական ընարութիւն և գոյութեան կախ — մղկ են մարդու մերձաւոր նախահօրը՝ փոփոխել իր կազմը, յարմարեւ, զարգացնել յատուկ օրգաններ, ձեւք, ուղեղ են . . .

Մեր կենդանական մերձաւոր նախնիքները ապրել են հաւանօրէն համախմբումներով, ընկերութիւններով (այդպէս կ'ապրին գրեթէ բոլոր կենդանիները) :

Ինչպէս մրջիւնների և այլ ընկերական էակների մէջ, այդ տեղ էւս անհատը փոփոխել է, նոր օրգաններ է ստեղծել, զարգացրել, յօգուտ համայնքի ընդհանուր բարեկեցութեան : Այդպէս, օրինակ, զէնք ու գործիք բռնելու և բանեղնելու սովորութիւնը . . .

(*) Բարձրագոյն, մարդանման կապիկների մի տեսակը

(**) Darwin, La Descendance de l'Homme et la Sélection sexuelle, 3me éd. էջ 21

Մարդու մէջ, իրաւ է, աստիճանարար նուազել է ֆիզիքական ուժը, թուլացել են ստամները, երբեմն պազալազ օտքերը, նուազել է և դիւանցկունութիւնը բնութեան խտութիւնների ու հարւածների հանդէպ (ցրտի, սովի են) : Բայց դրա փոխարէն աճել է նրա մօտ խմացականութիւնը . . . Եւ այդ վերջինը նախամարդու մօտ շատ աւելի թոյլ է եղել, քան ժամանակակից ամենայեան վայրենի մէջ (ֆուէջիների, բուշմէնների են) :

Համեմատեցէք մասւոր ու բարոյական կարողութիւնները կենդանիների և մարդկանց : Տեսել են թէ՛ ինչպէս վայրենին զարնում է ժայլին իր հարազատ դասակր և ջախջախում . . . լսի այն պատճառով, որ մանուկը ձեռքից գցում է պոչարով լեցուն զամբիւղը : Դրա հակառակ՝ դիւանք է, թէ ինչպէս ամերիկեան մի կապիկ ամենայն խնամքով քշում է ձանձերը, սրնք գալիս են տանջելու նրա ձագերին : Դիւանք է, թէ ինչպէս մի ուրիշ կապիկ լուանում է ստուի մէջ իր ձագուկի երեսը : Դիւանք է նաեւ — վիպում է աշխարհահոսակ կենդանազէւ-ձանապարհորդ Բրեւեմ — որ կապիկը, կորցնելով իր ձագերին, յաճախ այնպիսի կակիժ է ունենում, որ կամայ կամայ ցուրից հիւժուում ու մեռնում է : Տեսնւած է, վերջապէս, որ ծնողի մահից յետոյ ուրիշ կապիկներ որդեգրել ու խնամել են որբուկներին(*) . . .

Գրեթէ բոլոր բնազդները, զգացումներն ու յոյզերը յատուկ են և կենդանիներին . . . Ինքնապահպանութեան բնազդ, սէր (ծնողական և սեռական), խանդատութիւն (չան սէրն ու խանդատութիւնը զէպի իր աէրը), էգօրգմ և տարրուրգմ, հաւատարմութիւն և նենդութիւն, հպարտութիւն, կրախտազիտութիւն, անձնուրութիւն, բարկութիւն, վրէժխնդրութիւն, քմահաճօք, խորամանկութիւն ու խարդախութիւն, բռնակալութիւն և խմարհատութիւն, արիւթիւն և երկչոտութիւն, ուրախութիւն և տխրութիւն, սարսափ ու մտկոզութիւն, զարմանք ու հետաքրքրութիւն, ապա և ընդօրինակ-

(*) Darwin, La Descendance, էջ 72:

ման նրաչալի կարողութիւն (imitation . . . կապիկների մօտ),
 բնկերական բնազդ, գիտակցութիւն, յիշողութիւն և ուշա-
 գրութիւն, արամարտներու և ընտրելու կարողութիւն են . . .
 են . . . Կայ նաեւ իսկ սեփականութեան գաղափարը (թռչունն
 ու իր բոյնը, շունն ու իր սոսիւրը) : Անգամ գեղեցիկ ու հրա-
 ժշտականութեան զգացումը օտար չէ կենդանական աշխար-
 հին . . . Որ թռչունները անասնման վայելք են զգում իրենց
 երգերով — տարակոյս չկայ :

Կենդանիներն ևս գիտեն բանեցնել գործիքներ : Շիմպան-
 ղէն (բարձր կապիկների մի այլ տեսակը) քար է գործածում՝
 կտրելու և աւակու համար բնկադանման պատմներ : Գա-
 ւաղան ևս յաճախ են բանեցնում բարձրախող կապիկները :
 Տեսել են կատարեալ ճակատամարտներ կապիկային ցեղերի մի-
 ջեւ՝ երկու կողմերն էլ զինւած գաւազաններով . . . Իսկ Հնդ-
 կատանի մէջ փիղը կտարում է իր կնձիթով ծառի ճիւղերը՝
 քշելու համար զինքը չարչարող ճանձերին : Վերջապէս, մար-
 դանման կապիկները շինում են նոյն իսկ իրենց համար ժա-
 մանակաւոր սրբղ կացարաններ . . . Իբրև սպայոց սեփա-
 կանութեան զգացումի գոյութեան՝ յիշենք զարձեայ կապի-
 կին, որ իր ձեռք բերած քարով կաղինները կտրակէ յետոյ՝
 ինձամով թաղցնում է այդ քարը, որպէս զի ուրիշների ձեռ-
 քը չանցնի . . . (այս իրողութիւնը զիւռած է կենդանարանա-
 կան մի սրբակղի մէջ) :

Անշուշտ — յարում է զգուշաւոր և խղճամիտ գիտնակա-
 նը — տարբերութիւնը զարձեայ աճողին է ամենայնպէս վայ-
 բների մարդու և ամենարտար կենդանու միջեւ . . . Սակայն,
 որքան էլ մեծ լինին այդ տարբերութիւնները, — նրանք սա-
 տիճանի մէջ են և ոչ էութեան(*) :

Թողնենք Գարվինին և բերենք էլի մի քանի փաստեր ու
 խորհրդածութիւններ՝ այլ գիտական աղբւրներից :

Նշանաւոր բնագէտ Բիւֆֆոն մի շիմպանզէ ունեւր
 (1790 թ .) երկու տարեկան . ման էր դալիս նա միշտ ուղ-

(*) Darwin, La Descendance, էջ 136:

զանայնոց զիրքի մէջ, անգամ կրը ծանր իրեր կը կրէր :
 Դէմքը միշտ տխուր, լուրջ ու խոճուն . մեկնում էր իր թաթը
 մարդկանց, նստում էր նրանց հետ ճաշի՝ սեղանի առջեւ,
 աւնում էր անձեռոցիկը, սրբում շրթները, դործ էր անում
 զգալ ու պատառաքող, ինքն անձամբ գինի էր անում իր
 բաժակի մէջ, կենաց էր խմում և այլն : Նա այնքան ուժեղ
 զգացմունք էր տածում զէպի մի տիկին, որ զաւազանով
 զարնում էր բոլորին, ով համարձակում էր մօտենալ այդ
 տիկնոջ . . . Մի այլ տեղ շիմպանզէին այնքան էին վարժեցրել,
 որ նաւի մէջ կատարում էր նուստտի բոլոր պաշտօնները :
 Օրինակները կարող են բազմապատուել :

Այս բոլորը ցոյց է տալիս, թէ մինչև որ ստատիկան կա-
 լուղ է կրթիւի ու նրբանալ կապիկի հասկացողութիւնը : Մին-
 չև անգամ հակաէօլիւցիոնիստ Ազասին խոստովանում էր,
 որ նա ոչ մի էական տարբերութիւն չի տեսնում մի երկխայի
 և մի երկխոսարող շիմպանզէի հասկացողութեան մէջ :

Ո՛վ չդիտէ, թէ որքան զարգացած է հոտարակական,
 բնկերային բնազդը (instinct social) որոշ կարգի կենդանիների
 մէջ : Մըջիւնների և մեղուների սրանչելի «հասարակարգը»
 յայտնի է բոլորին : Նրա մասին ամբողջ հաստրներ են գրեւ
 և բազմաթիւ ստատիկներ են տարածել :

Նշանաւոր մըջիւնարան Ջուբեր հռչակում է մըջիւնների
 աշխատասիրութիւնը, նրանց համերայն ու անխոնջ գործու-
 նէութիւնը, նրանց փոխադարձ աջակցութիւնն ու հոգատու-
 րութիւնը, վերջապէս, նրանց արչաւանքներն ու պատերազմ-
 ները : Ամբողջ պետութիւններ են հաստատում այդ մանրիկ
 արարածները, քաղաքներ ու փողոցներ են շինում, կամուրջ-
 ներ են ձգում, կազմակերպում են արչաւանքներ՝ աւարտու-
 թեան համար, կոււււմ են զինուորական կարգապահութեամբ . . .
 Ահա մի կեանք, մի հարուստ ու զարմանալի հոգեկան աչ-
 խարճ, որ հիացնում է բնագէտներին ու մղում նրանց զէպի
 մանրագիտին ուսումնասիրութիւն : Ուսումնասիրել են այդ
 կեանքը Ջուբեր, Ֆորէլ, Լիօրոկի, Ռոմնու և ուրիշներ : Դար-
 վինն ևս խոսում է մըջիւնների մասին դեռ իր անդամիկ

զրուածքի մէջ և ճգնուած է ըմբռնել նրանց սօցիալական բնագ-
 զի գաղտնիքն ու ծագումը: Դիւրին բան չէ... Թօքէլ, բըն-
 նելով մրջիւնի անհատական իմացականութիւնը, աւելի ստոր
 է դասում այն, քան բարձր տղնայարուօր կենդանիներինը և
 ընդունում է, որ սօցիալական բնագոյն է գլխաւոր ազդակը
 մրջիւնների հոգեկան կեանքի: Լէօրօկ դասում է մրջիւննե-
 րին անասնական իմացականութեան (intelligence) բարձրա-
 գոյն աստիճանի վրայ. ուրիմն, աւելի բարձր, քան մարդու-
 նման կապիկներինը:

Արտաբնիկ և գեղեցիկ անձնագոյնութեան բազմաթիւ-
 փաստեր են գիտուած ոչ միայն կապիկների, այլ և շների,
 թռչունների և այլ կենդանիների կեանքում:

Այդ բոլորը մի կողմից: Հասցա միւս կողմից աչքի առաջ
 բերէք զանազան վայրենի մարդկային ցեղեր, սրանց մէջ մտա-
 ւոր ու բարոյական կեանքի ասես նշոյն անգամ չկայ: Հօ-
 թենթօաները և Աւստրալիացի վայրենիները սովի միջոցին լա-
 փում են իրենց կանանց ու երեխաներին: Բայց մարդակե-
 րութիւնը կատարում է և ոչ միայն սովի դէպքում: Էսկիմ-
 մօսը ուրիշ բանի մասին չի մտածում, բայց միայն անվերջ
 ուտակ: Մեռնում է նրա հայրը կամ մայրը՝ նա նրանց հետ
 թաղում է և իր կենդանի գաւաթներին:

Հարու Ամերիկայի մի վայրենի ցեղի առաջնորդ պարծե-
 նում էր, որ իր կեանքում աւելի քան 5000 մարդ է լափել (*):
 Ան բարբ ցոյութիւն չունի շատ վայրենիների լեզուի մէջ.
 Բայց շատերը լեզու էլ չունին: Վայրենիները յաճախ անըն-
 դանակ են լինում ամենաչնչին բնդիւնուացումներին. նրանք
 խօսք չունին արտայայտելու համար «մարդ» «կենդանի»,
 «բոյս», «գոյն» և այլն, թէպէտև ամէն մի կենդանու կամ
 գոյնի համար ունին որոշ խօսք: Նրանց համեմատ կարողու-
 րիւնը չունցնիք 10ից, 20ից: Էսկիմօսը կարող է հաշուել իմ
 գաւաթներին, կը նրանց թիւը հասնում է 6ի-7ի. իսկ երբ
 աւելի ծնակցին կը կորցնէ հաշիւը: Ծառ ցեղերի համար չորս

(*) Letourneau, Science et Materialisme.

թիւը արդէն «չատ» է նշանակում այսինքն՝ անորոշ: Աֆրի-
 կական բուշմենների (bushman-անտառամարդ) սուսապկական
 յիմարութեան մասին վկայում են բոլոր ճանապարհորդները:

Կրօնի հետքերն ևս աննշարկի են շատ տեղերում:
 Մենք արդէն նախընթաց էջերում մէջ բերինք մի քանի օրի-
 նակներ: Պատմում են, որ միտիօնարները Եւրոպայից իրենց
 հետ տարել էին Նոր Կալէդօնիա մի բուլբօզ շուն և սրովհե-
 աւե Նոր Կալէդօնիայի մէջ չկային չորքտանիներ, նորեկ ևս
 բոլորի շունը վայրենիներին թուացել է մի գերբնական էակ,
 բոլորի շունը վայրենիներին թուացել է մի գերբնական էակ,
 մի հրաշք: Կենդանին անասելի սարսափ էր ներշնչել նրանց:
 Եւ ահա, այդ վասնդուօր ու հնաշխարհիկ էակին սիրաշա-
 հելու համար, վայրենիները խորհում են իրար մէջ և սրտում
 են հաշուել նրա հետ: Բնորում են մի պատգամաւորութիւն,
 որ մի օր դալիս է բուլբօզի առաջ, պատգներով ու անու-
 շեղէններով և յայտնում է նրան բարեկամութեան զգացմունք-
 ներ, բնակիչների կողմից ճառ է արտասանում, փոտարանում
 է բուլբօզի զօրութիւնը ևն.:

Այս բոլորը առասպելներ չեն, այլ գիտնական ճամբորդ-
 ների ստուգած իրողութիւններ: Եթէ ընդունում ենք, որ
 երկրորդ առաջնական գեր է խաղում կրօնի ծագման մէջ,
 ապա ի՞նչ տարբերութիւն կայ նոր կալեդօնացի այդ վայրե-
 նիների և Դարվինի շուն միջև, որի մասին յիշեցինք արդէն
 առաջին գլխի մէջ: Դարվինի շունը, որ տեսնելով իր արող
 հովանոցը գետին ինկած և քամու հարածներից տատանւելիս,
 ստորափում է, լարւած գիտում հովանոցը և պտոյաններ զոր-
 ծում նրա շուրջը, մտածելով, անշուշտ, որ մի աներկուցթ
 սղի թագնւած է հովանոցի մէջ և շարժում է այն...:

Ասել ենք նաև, թէ որովհետ անախորժութիւնների են
 հանդիպում քրիտանէտութեան առաքեալները, կը նրանք
 փորձում են քարոզել Աւետարանը վայրենիների մէջ: «Աւե-
 տարան-գոյլի գլխին...»: Քարոզի մէջապը անկողիլը յան-
 կարձ կ'ընդհատէ միտիօնարին. «Այդ բոլորը, ինչ որ պատ-
 մում են, շատ լաւ է, բայց ևս անօթի ևս. հաց կուտան ին-
 ծի, այն թէ ոչ...»: Եւ կիթէ ոչ մէջքը շուս կուտայ և ան-

տաւը կը քաշի՝ սնունդ դանկու համար: Կամ թէ յաճախ համբերութեամբ լսելով միսիօնարի երկար ու բարակ մեկնութիւնները քրիստոնէական կրօնի մասին, վայրենին կը դառնայ իր քարոզչին. «Մենք քեզ այսքան երկար պահանջ դրինք, հիմա սո՛ւր մեր վարձատրութիւնը»:

Չերկարեցնենք: Այդպէս են ժամանակակից վայրենիները: Իսկ նախամարդը, որ ապրել է 100,000 տարի սրանից առաջ, դեռ անհունապէս ցած է եղել այդ արտարներից, իր մտաւոր ու բարոյական կերպարանքով... Բայց թեւ՛ իրողութիւնները մտածել կուտան, որ այդ նախամարդը (homme primitif, Urmensch) հնչին, շատ հնչին տարբերութիւն է ունեցել բարձր կենդանիներից, որ նրա կիանքում երկու արտապետող հոգս է միայն եղել — լափել և չլափել: Այսօր իսկ մի կարգ վայրենի ցեղեր այն աստիճան մօտ են կենդանիներին, այնքան հեռու են մարդկային պատկերից որ մի քանի ճանապարհորդներ հրաժարու՛մ են նրանց «մարդ» անունը սալու: Վայրենիները ընդհանուր առմամբ երեխաներ են՝ օժտւած հասակաւորների ֆիզիքական ուժով:

Մարդու և անասունների նմանութիւնները (անասամիական, ֆիզիոլոգիական եւ այլն) մեր բերած օրինակներով չեն սպառւում, հարկաւ: Այդ նմանութիւնների մասին շատ թէ քիչ ամիսի գաղափար կազմելու համար՝ պէտք է ծանօթանալ Գարվինի, Ֆոխտի, Հրքքլիի, Բելիմէրի, Հէկկելի և այլոյ աշխատութիւնների հետ:

* * *

Ի դէպ, երկու խօսք — նոր վարդապետութեան այդ աստճին և տաղանդաւոր պաշտպանների մասին:

Ֆոխտ, Հրքքլի, Հէկկել, — երեք հշանաւոր մարդիկ, որոնք եղել են Գարվինի նկատմամբ որոշ չափով և՛ ուսուցիչ և՛ ոչակերտ, բայց մանաւանդ ոչակերտ: Նրանք երեքով մեծապէս նպաստեցին Գարվինիզմի յառաջդիմութեան ու տարածման, թէ՛ իբրեւ զուս գիտնականներ, և թէ՛ իբրեւ ժողովրդականացնող: Բայց այդ նոր վարդապետութեան և

մանաւորապէս «Մարդու ծագման» թէօրիայի ամենահամբաւաւոր պրօպագանդիստն էր՝ Կարլ Ֆոխտ (1820-1895 թ.) (Carl Vogt): Նա մէկն էր այն առաջնակարգ գիտնականներից, որոնք հրատարակ եկան Արեւմտեան Եւրոպայի մէջ, որպէս մոլեւանդ առաքեալներ էլ օլիցիօնիզմի և մանաւորապէս «մարդու ծագման» նոր թէօրիայի: Նա այդ գիտնականներից զուցէ ամէնէն զօրաւորն էր: Հետաօրական ձիրքով օժտւած, իբր մարմնացած քարոզիչ, ազխաստօր, նա թուշում էր անիրր մարմնացած քարոզիչ, ազխաստօր, նա թուշում էր անգաղսք Գերմանիայից — Զուիցերլանդ, այնպէս զէպի Ֆրանսիա, ուր այն ժամանակ խոշ էին զրկել գարվինիզմի վրայ և երկու՛մ էին դեռ Կիւլիէյի անունով... Ֆոխտի կարող ծայր որոտում էր ամէն սեղ և աստւածաբանների բանակից թաւաւոր անէ՛ծքներ էին թախու՛մ նրա հասցէին: Ֆոխտի միայն անունը ստրտաի էր սարածել նրանց մէջ: Հարածում էին նրան, որպէս կատաղի մտակրիպատի, որպէս համոզէին նրան, որպէս կատաղի մտակրիպատի, որպէս համոզւած աթէիստի: Նա մէկ անգամն էր այն հշանաւոր երբորւ՛ած աթէիստի: Նա մէկ անգամն էր այն հշանաւոր երբորւ՛ած աթէիստի, որի անունն է՝ Մօլեթօս-Ֆօխտ-Բիլլսեկեր, իրեքն էլ նախ թաղաշտութեան ու աթէիզմի քարոզիչներ, երեքն էլ հանրաժողովրդական իրենց հայրենիքից (Գերմանիայից) բռնակալ կառավարութիւնների ձեռքով... Իսկ Կարլ Ֆոխտ մանիայում մահան դատապարտւելով՝ փախուտ էր տւել: «Cousin germain» (մարդու հօրեղբոր սրդի)... այդ անունով էր կնքել նա բարձր կապիկներին, Շիմպանզէին, Օրանգըին, Գօրիլային(*) և իրեն Ֆոխտին կատակով անս անում էին Affen-Vogt, «Կապիկների Ֆոխտ»... Նրա հրատարակային առնախօսութիւնների միջոցին և

(*) Ասել է՝ կապիկները և մարդը միևնոյն եւրոպական տարածքից են առաջացել (այ թէ մարդը ուղտիկ կապիկից): Ֆոխտը եկել էր այդ համոզմանին դեռ Գարվինից առաջ, 60ական թւականների սկզբներում, համեմատելով մարդանման կապիկներին միկոտցէֆալ (մանրազլուխ) ապուշների հետ և ղեկավարւելով ժառանգականութեան ու աթէիզմի իրողութիւններով:

անգամ համալսարանի մէջ, կղերականները քարեր էին նետում զէպի նրա ամբիոնը, հայճոյանքներն ու սկանդալները անսպասելի էին լինում, յաճախ միջամտում էր ոստիկանութիւնը: Սուլում էին Թոխտին ժընեւի համալսարանում, երբ նա նոր էր սկսել իր դասախօսութիւնները.— նրա ազատ մտածողութիւնը համարում էին սպախանիչ, նրա քարոզած վարդապետութիւնը — Գարվինիզմը և Մատերիալիզմը — հռչակում էին, իրբեւ անարդիչ, անբարոյական: Այդպէս էր ժամանակը... Թոխտ սակայն, անզրպէկի էր... Լսեցէք, թէ այդ անարկու մարդը ինչ շանթալի յայտարարութեամբ էր դիմում իր այն ժամանակուայ կղերամիտ հակաոսկորդներին (1863):

«Եարձրակոչ մոնչիւններն ու կսկծալի ճիչերը յանուն կրօնի ու բարոյականութեան, ուղին ու հեծկոտոցը յանուն վտանգւած հասարակական գոյութեան՝ շարունակում են հնչել: Ուղղափառ եկեղեցիների ամբիոնները և կեղծ բարեպաշտութեան ազօթարանները, ներքին սուսքելութեանց ատեանները և կծնխատօրիաների նախազահական բազկաթօսները թնդում են, բարձրաձայն սրտում այն անյուր եղևնափորձերի մասին, որ մատերիալիստներն ու դարվինականները ուղղում են իրր թէ մարդկային հասարակութեան հիմունքների դէմ: Կրօնաւորները յանդուգն ձակասով ամբիոն են բարձրանում և քարոզում են, «Եթէ —ասում են նրանք — մատերիալիստներն ու դարվինիստները չեն ստաարեր ամէն սեւակ ոճիրներու, այդ միայն բացատրելի է նրանց կեղծաւորութեամբ և ոչ անկեղծ համոզումով»... Թո՛ղ որ իրար անցին և զանալիմէին նրանք իրենց կոյր կատաղութեան մէջ: Նրանց համար անհրաժեշտ է պատժի երկիւղը կամ վարձաւրութեան յոյսը մի ինչ որ հանդերձեալ, կրաղական աշխարհում, որպէս զի մեան նրանք ուղիղ ճամբու վրայ իսկ մեղ կը բաւէ միայն այն դիտակցութիւնը, որ մենք մարդ ենք մեր նմանների հանդէպ և որ բոլոր մարդկանց հաւասար իրաւունքը նշանաբանն է մեր բոլոր գործողութիւնների: Միմիայն մէկ յոյս կը զեկալարէ մեղ — ճանաչել ու յարգել մեր նմանները,

բից, և միմիայն մէկ երկիւղ — արատաւորել մեր մարդկային արժանաւորութիւնը(*)»...

Մինչև վերջին վայրկեանը չէր դադարում նա համալսարանական ամբիոնից կծու, հեզնական ֆրազներ արձակել իր հակաոսկորդ թէլօգդների (ստուածաբանների) հասցէին. նաու գլխի մէջ կրբեք չէր նստում, որ հնարաւոր լինի ստողջ բտեականութեան հետ որ և է կերպ հաչակցել կրօնական հաւատալիքները (**):

(*) Տե՛ս. Carl Vogt, Vorlesungen über den Menschen (Գասախօսութիւններ մարդու մասին):

(**) 1895ին մեռաւ այդ անսովոր մարդը, որին կարճ ժամանակ ունկնդրելու բախտ ունեցանք մի խումբ հայ ուսանողներ ևւս (Գարեգին Սամալ, Յօն. Գաւթեան Ս.Շիւսան, սուգրիս գրողը և ուրիշներ): Որքան էլ նա կրքին ծայրայեղօրէն դօլմալիկ էր իր գիտական-փիլիսոփայական սնդումների մէջ, որքան էլ Թոխտեան մատերիալիզմը ստուսգում էր միակողմանիութեամբ և մի տեսակ չորութեամբ (յիշեցէ՛ք նրա մի կոչաւ արատայտութիւնը. «միտքը բլխում է ուղեղից, ինչպէս մէզը կրիկամունքից»... Տես զըքցլիկա Տրրդ էջը) — այնուամենայնիւ, չէինք կարող առանց խօրին պատկաւանքի ունկնդրել այդ զտրմանալի և զտւամեալ քարոզչին, որ մեծագոյն դէմքերից մինն էր համաշխարհային դիտութեան և ամենամեծ գորգը ժընկվեան համալսարանի... Մի կողմից մտտերիալիզմի և դարվինիզմի հալածական հմայքը, միւս կողմից քարոզչի բարձր շխտակութիւնը, մարդկային կոչման ու արժանաւորութեան նրա վեհագոյն բմբռնումը, վերջապէս յեղափոխական մարտնչողի, մահապարտի և աքտորականի հանդամանքը, — այդ բոլորը ստեղծում էր Թոխտի շուրջը մի անհման փառաստակ, որ դիւթում էր ունկնդիրներին, և

Որն է մեր նախահայրը: Ինչպէս է կազմուած մարդկային ցեղի տոհմաճառը: Եթէ խնդիրը լայն կերպով բնութենք, պէտք է իջնենք մինչև Հէկկէյի մօնէրը... Այդպէս էլ անուած է ինքը Հէկկէյ: Նրա սահմանած սահմանափակ սրմասը մօնէրն է, կատարը՝ մարդը, և երկու ծայր կէտերի միջև՝ անթիւ ճիւղաւորումներ, որ ներկայացնում են կենդանարանական տեսակները: Բայց որոնք մեր ամենամերձաւոր նախնայրը: Նա ոչ Շիմպանզէ է, ոչ Գորիլլա, ոչ Օրանգ և ոչ փիրօն: Մեր իսկական նախնայրը չկայ, մարած է: Մի օր, անսարակոյս, հնէադիտական պեղումները լոյս աշխարհ կը բերեն նրա կմախքը: Այդ խորհրդաւոր նախնայրը, ամենայն հաւանականութեամբ, եղել է և՛ մարդ, և՛ կապիկ, նման

ազատամիտ պրօֆէսորի մուտքը լսարանի մէջ ամէն անգամ սղջունուում էր բաղմամբիւ ուսանողների կողմից սրտի ուժգին արտփունով: Երիտասարդութիւնն էր, հարկաւ, նրա խանդավառ պաշտօնը ու ծախանարողը — և այն էլ մեծ մասամբ օտարերկրեայ ուսանող երիտասարդութիւնը, ուսուիւն, հայ, բուրգար են: Մահից յետոյ կազմինապաշտ և մոլեռանդ ժընէվը իր վերջին յարգանքներն իսկ մերժեց անհնչացած աթէյիտի գիտկին: Տխուր ու անձայն յագարկաւորութիւնը գէպի St-Georgesի գերեզմանոցը, թաղման անշուք թափորը, որին ներկայ էին գրեթէ միայն օտարերկրեայ ուսանողները — այդ ամէնը պայծասօրէն կը ցոյցանէր հալածական վիճակը այդ մեծ հանգուցեպի, որ երկար տարիների ընթացքում մի ճշմարիտ սարսափ էր ստրածկ գերմանական բռնաւորների և ամբողջ նախապաշարած ու անտախապաշտ աշխարհի վրայ... Փամանակը շտկեց սակայն մի քանի անթրաութիւններ — և այսօր ժընէվեան համալսարանի առջև, ամենապատուաւոր տեղերից մէկում, համեատ պատուանդանի վրայ բարձրանում է Կարլ Ֆոխտի ազդու և հմայիչ կերպարանքը: «Es war ein Mann!» կ'տես գերմանացին. «Նա մարդ էր»... Գաղափարները, մեծ, վրկարար վարդապետութիւնները այդպիսի մարդկանցով են առաջ մղուում...

մէկին և միւսին: Նա սպրիկ է երրորդական շրջանի վերջնութեամբ, անեցել է ուղղահայեաց գիրք, ձեռքերի ու սոքերի աւելի մեծ զանազանաւորում, քան Շիմպանզէն, Գորիլլան և այլն:

Բայց նա տակաւին չի ունեցել խօսուց, յօղատը լեզու. նա եղել է աճխօս մարդ (Homo Alalus): Այդ կենթադրութեան համար անվիճելի սպացոյցներ են բերում համեատական լեզուադիտութիւնը և երկխոսների ատիճանական զարգացումը: Մարդը միշտ չի ունեցել խօսուց լեզու, այդ վերջինն ևս կազմակերպել է ատիճանաւորար: Այսօրայ մի քանի վայրերի ցեղերի խօսելու բնդունակութիւնը անտանական վիճակից շատ էլ հեռու չի գնացել: Կան վայրերի հօրգաններ, որ մթութեան մէջ չեն կարող խօսել, արտապայակ իրենց մտքերը, որովհետև նրանք խօսում են, զլխատորապէս ձեռքերի ու մասների շարժումներով: Վերջապէս, նայն իսկ քաղաքակիրթ մարդկութեան մէջ կան անխօս «մարդ-կենդանիներ» — երեխաները, խուլ-համրները և մանրագլուխ ապուշները: Ամենից հետաքրքրականն են մեր ծագումի տեսակէտից՝ վերջինները: Նրանք ծնուած են առողջ, նօրմալ ծնողներից: Գլուխը ամբողջ մարմնի հետ համեատաւոր չափազանց փոքրիկ է, ուղեղի ծաւոլը՝ աւելի փոքրիկ, քան Գորիլլայինը, օրանկինը: Մանրագլուխ ապուշների գիրքը, նրանց գէտքերի արտօյարտութիւնը բոլորովին կապկային են, ձեռքերը անհամաչափ երկայն, սոքերը կարճ ու թոյլ: Գլուխը կապկի գլուխ, ձակաւոր չկայ, բերանը աճողին, քիթը լայն բացւած, այդ բոլորը, — ասում է Ֆոխտ — զարմանալի կերպով յիշեցնում է կապիկներին և զուր չեն շտտերը անուանում նրանց «կապիկ զաւակ» կամ «մարդ-կենդանի»: Մանրագլուխների հողեկան կեանքն ևս կոտարկապէս անտանական է: Նրանք չեն խօսում, այլ կենդանիների պէս միայն անկապ հնչիւններ են արձակում: Մի մի խօսքեր են սովորում, այն էլ ճիշդ թութակի նման: Սեռական կեանք չտաները բնաւ չունին. սեռական մասերը մնում են մանկական վիճակում: Խաղում են ապուշները իրենց մէջ միայն, բայց ոչ ուրիշ, նօրմալ երեխա-

ների հետ, որոնց խաղը չեն հասկանում: Նրանք անընդունակ են իրենց ձեռքերը ծառայեցնելու: Նրանց հետ վարուում են, ինչպէս ընտանի կենդանիների հետ: Նրանց յիշողութիւնն եւս թոյլ է, «գազափար» ստանալու քանի հետքն անգամ չկայ:

Փօխար պնդում է(*), որ մանրագլուխները որոշ տեսակէտով դեռ կենդանիներից էլ ստոր են կանգնած. նրանք գուրկ են ինքնօգնութիւնից, չեն կարող ինքնուրոյն կերպով, սուսնց ուրիշի օգնութեան իրենց ապրուստը հայթայթել:

Կարլ Փօխս մանրագլուխների առաջին պոպոնդաւոր ստեմնասիրողներից էր. նա համեմատեց Շիմպանզէի, մանրագլուխ Իդիօսի (սպուշի) և Նեղրի գանկերը և դասուարեց Իդիօսաներին մարդու և կապի մէջտեղը, հաստատելով, որ իդիօսաները կտրկային աթավիզմի մի երևույթ են, որ նրանց տիպարի մէջ ցուում է մեր նախահայր անխօս-մարդը, կամ մարդ-կապիկը: Եւ Փօխս եզրակացնում է որ մարդն ու կապիկները մէկ ընդհանուր ծագում ունին, այսինքն առաջ են եկել միեւնոյն կենդանական տիպարից:

* * *

Այժմ քրքրենք երկրաբանական վերջին արշիվները կամ արիշ խօսքով, դիմենք նախապատմութեան, որը զբաղւում է մարդու ամենահին հետքերով: Մարդս միայն սրտամութեան աւարկոյ չէ, այլ նաև երկրաբանութեան ու հնէագիտութեան: Չինացիների ու հին Եգիպտացիների պատմական աւանդութիւնները համնում են մինչև 4 կամ 5000 տարի Քրիստոսից առաջ: Միջին Եւրոպայից հաշւում են առաջին դարբից (Հուսիմէական գաղթականութիւն, կայսերական շրջան): Յոյների դրաւոր աւանդութիւնները իջնում են մինչև ութերորդ դարը (Ք. Ա.): Սակայն, ինչպէս արդէն ասել ենք մի անգ, հինգ կամ վեց հազար տարիներով չէ, որ կը չափի մարդու զոյութիւնը երկրիս երեսին, այլ հազարաւոր դարե-

(*) Vorlesungen über den Menschen.

քով, և սլալօտօրօգիան է, հնէագիտութիւնն է, որ գայիս է հաստատելու այդ կարեւոր իրողութիւնը: Բեառոյ մարդու զոյութիւնը, ինչպէս ասանք, հերքում էին առաջներում. չկա՛յ բրածոյ մարդ, բացականչում էր Կիւլիէն, համոզւած, վճականօրէն: Դրանով նա, հարկաւ, ստուածարանների դատին էր նախաստում... Ստուածաշունչը, չէ, կը վկայէ, թէ նախամարդ-Ադամը ստեղծուել է ընդամենը մի քանի հազար տարի առաջ, իսկ մինչև Ադամը՝ իրր թէ բնաւ չի եղել մարդկութիւն: Սակայն, զանազան կէտերում կատարւած պեղումները, Կիւլիէից յետոյ, երեսան հանեցին երկրի խոր շերտերի մէջ մարդկային կմախքների մնացորդները և պարզեցին, որ մարդկութեան սկզբնաւորութիւնը չա՛տ հետուոր անցեալին է պատկանում, որ մարդը սպրեղ է այսպէս կոչւած ջրհեղեղից չըջնում (չորրորդական շրջանի սկիզբը), Մամմութ կոչւած փղի, քարանձաւային արջի և հսկայ, արագավազ եղջերուի հետ...

Հնագէտները բաժանում են ընդհանրապէս նախապատմութիւնը երեք շրջանի — քարի, բրոնզի և երկաթի — համաձայն նախամարդու արտադրած գործիքների տեսակների: Քարի շրջանը իր հերթին երկու պերիօդ ունի. 1. անասն քարի և 2. տաշած քարի պերիօդ: Առաջին շրջանը աւելի հինն է, ամենամախնականը: Նա համապատասխանում է մարդկութեան մոնիական հասակին: «Գիլուպիոյ» կամ ջրհեղեղից շրջանը զուգադիպում է այդ նախնական, անասն քարի պերիօդի հետ: Քաղաքակրթութիւնը իր սպառի մէջ է սպղտեղ. նրա ամենացայտուն չափանիշը աճխասանքի գործիքներն են, որոնք սակաւին բիրտ են, անմշակ: Մարդկային գազափարների բնաշրջումը սերտ կերպով կապւած է այդ գործիքների հետ. քաղաքակրթութեան պատմութիւնը մի զգալի չափով այդ վերջինների պատմութիւնն է: Ջրհեղեղից շրջանից, իրրև կտակ - մասնագութիւն, մնացիկ են մեզ՝ ահագին քարանձաւներ, ուր նախամարդը սպաստան է գտել մասամբ վաս կզանակներից, մասամբ դիշտափչ գազանների յարձակումներից: Հազարաւոր այդպիսի քարանձաւ-

ներ գանւած են Եգիպտոսում, Յունաստանում, Իտալիայում, Շուէյցարիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, նաև Անգլիայում: Նրանց սրտամական աճագին նշանակութիւնը կայանում է նրանում, որ այնտեղ գանւում են մարդկային ոսկորներ՝ այլ և այլ կաթնասուն կենդանիների մնացորդների հետ: Գանւում են առատութեամբ նաև քարէ ու ոսկրեայ գործիքներ, կայծքարից շինւած զէնքեր կաղն: Յիշենք մի քանիսը այդ գիւտերից:

1833 թւին, Բելջիկացի բնագէտ Շմերլինգ, հետազոտելով Լիէժի մօտ գանւող այրերը, գտաւ նրանց մէջ երկու մարդկային գանգ, լսողմաթիւ կայծակնաքարէ գործիքներ, արջերի ու ըսրենիների կմախքների հետ: 1864-74 թւին Ֆրանսիայում յայտնի մարդաբան Լարոտէ հետազոտեց Պերիզոր գաւառի այրերը, գտաւ զէնքեր և ուրիշ գործիքներ անտաշ քարից. գտաւ հողի մէջ՝ եղջերուի կմախային մնացորդներ, կայծքարից շինւած դանակներ, մուրճեր, սղոցներ, սակորէ ստեղծեր, նիւտեր կաղն: Նման քարանձառներ հետազոտւեցին Անգլիայ մէջ: Մի այլ գանւեց Վեզեր գետի ափին, Գերմանիայում, 1868 թւին, ուսկից հանեցին հինգ մարդկային կմախք, զլուխները երկայն, բարձր, ուղիղ ճակատով: Մարդաբանները տալիս են նրանց երկայնագլուխ անունը (dolichocephale): Մի այլ քարայր գանւեց միւնչոյն ժամանակները Բելգիայում, ուր երեւան եկան կարճագլուխ (brachicephale) մարդկանց կմախքներ, բազմաատակ կենդանւոյան մնացորդների հետ:

Երկու մարդկային ցեղերը (race) ուրիմն— երկայնագլուխ և կարճագլուխ— բնակել են ջրհեղեղեան շրջանի մէջ, Եւրոպայում, պարսպիկ են, հաւանօրէն, սրտորդութեամբ, վարել են մի ողորմելի կեանք. սարացոյց՝ նրանց կոշտ ու խոտան գործիքները: Կարճագլուխ ցեղը համապատասխանում է այժմեան ֆիններին, երկայնագլուխը — էսկիմոսներին (*):

Ուրեմն, մարդկութեան առաջին հետքերը Եւրոպայում

(*) A. Kirchhof, Unser Wissen Von der Erde.

սրտականում են «Դիլիվիում»ին կամ ջրհեղեղեան շրջանին (ջրհեղեղ անունը, որ մնացել է նախկին երկրաբաններից, զուտ սրայմանական է. «Նոյեան ջրհեղեղի» խնդիր չկայ այստեղ):

Դիլիվիում... Դա զարձուրելի սառնամանիքների շրջանն է Եւրոպայի մէջ: Մայրապոյն հիւսիսի կենդանիներն ու բոյսերը հասնում էին այն ժամանակ մինչև միջին Եւրոպա, իսկ դա սարացոյց է, որ կլիման շատ ցուրտ է եղել այնտեղ: Սկանդինավեան և Շոտլանդեան լեռներից մինչև Կարպատներն ու Ալպեան դադաթները տարածւում էր հիւսիսային սառնամանիքը: Զիւներ ստուշում էր վիթխարի դանդաճներով, որոնք հանդարտ լողում էին անկար տարածութեան վրայ, հիւսիսային բարձունքներից միշտ զէպի հարաւ: Եւրոպան ներկայացնում էր հսկայական սառցակոյտերի մի անօրինակ տեսարան:

Անտարակոյս, մի չտեսնուած «կատասարօֆ»է ր տեղի ունեցել: Բայց «կիւվիէական» բացատրութիւն չախտի տանք... Այդ կատասարօֆը սրտարտուել է, անտարակոյս, երկար դարերի ընթացքում և զուտ բնական սրտածառներով: Դրանցից մէկը կարող է լինել ցամաքի ու ծովի սրայմանների փոփոխութիւնը, գետնի աստիճանական բարձրացումն ու իջնումը, որոնց շնորհիւ փոփոխւել են յարաբերութիւնները ծովի ու ցամաքի միջև, և այդ երեւոյթը կարող է մեծապէս սողգած լինել ցրտի և ջերմութեան աշխարհազրական բաշխումի վրայ: Ուրիշ սրտածառ եւս կարող է լինել: Այժմեան Եւրոպայի կլիման համեմատաբար շատ բարեխաան է, որովհետև Աթլանտեան օվկիանոսից փչում է զէպի եւրոպական հիւսիս-արեւմտեան կողմերը զօթօերեմ կոչւած ջերմաշունչ հոսանքը, իսկ միւս կողմից Սիրոկիս անւանւած այրող քամին է, որ փչում է Սահարայի արեւակէզ անապատից և տարածւում զէպի հարաւային ու Միջին Եւրոպա:

Եթէ այդ երկու մեծ հոսանքները փոխէին իրենց ուղղութիւնը — դա կարող էր աճագին փոփոխութիւն առաջ բեր

Եւրոպական կլիմայի մէջ: Այդպէս էլ եղել է հաւանօրէն (*): Հաւանական է ենթադրել որ Սահարայի մի մասը ծածկուած է եղել ծովի տակ և որ գոլփշարէմը ջրհեղեղեան չըջանի մէջէն ստարածել իր ջերմութիւնը Եւրոպական եզերքների վրայ:

Դիլիւփուսի միջոցին (որ կոչուած է նոյնպէս սառցային օրջան) մարած կաթնասուն կենդանիներից գտնուած են ներկայումս մամուլը (հոյսփիլ), քարանձաւային վազը, արջն ու բարենին, սնդեղջիւրը և այլն, որ յատուկ են միմիայն ցարա, սառցային կլիմայի: Մամուլի հակոյ մարմինը — սառցինք արդէն — գտնուած է ամբողջութեամբ Արիփի տունըրաներում. նա «գիլիւփի» ժամանակների ծնունդ է անշուշտ «սպացոյց» այն թանձրաշերտ մորթը, որ նա հազել է օրհասկանող սառնամանիքներին յարմարելու համար: Մամուլի մի օրինակը կը պահել այսօր Պետերբուրգի թանգարանի մէջ: Վեց մեթր բարձրութիւն ունի այդ անօրինակ փիղը:

Ասասուրօձը, որքան էլ երկարատեւ, այնուամենայնիւ ժամանակաւոր էր: Երկրային փոփոխումները ժամանակի ընթացքում (հազարաւոր տարիների մէջ) վերջ դրին Եւրոպայի այդ դաժան սառնամանիքներին: Գերմանիան, հիւսիսային ու արեւմտեան Ռուսաստանը և Լեհաստանը այստեղից իրենց կաշկանդող սառցակոյտերի սվկեանից: Եւրոպան նորէն դարձաւ մեղմ ու հիւրընկալ, և զրա համեմատ փոխւեցին նաեւ նրա ֆլօրան ու ֆաւնան, բոյսերն ու կենդանիները: Սկսեց մեծ գաղթականութիւնը: Հիւսիսային ցարա կլիմային ընտելացած կենդանիներն ու բոյսերը, որ սառցային ժամանակներում իջել էին դէպի հարաւ, այժմ, երբ արդէն անցել էին ցրտերը, նորէն քաշուած են հեղեղեալ դէպի իրենց նախկին ընտելացրերը, դէպի հիւսիս, և կամ ապաւինում են բարձր լեաների կատարներին: Այդ է պատճառը որ Ալպեան և Ալանզինաւեան կենդանիների ու բոյսերի միջև մեծ նմանութիւն է նկատուում: Ալպեան նապաստակը տեսնում ենք այսօր

(*) Rolle, Der Mensch.

Ալանզինաւայում, Արիփում և Շօլլանդական լեաներում: Միեւնոյն ժամանակները կենդանիների ու բոյսերի մի այդ գաղթ սկսուած է հարաւից ու արեւելից դէպի միջին Եւրոպա:

Ո՞ր էր և ի՞նչ էր սնուած այդ ժամանակ խորճուած երկոսանին... Մարդիկ ևս, բնատրակոյս, մասնակցել են, այդ ընդհանուր գաղթականութեան: Մարդը ակնհասեալ է եղել Դիլիւփուսի հեղեղների, կենակցել է արագալսող եղջերուի հետ, փախել, պատասխարել է յաճախ՝ մամուլի ու բարենիների հարձանքներից: Կլիմայական փոփոխութիւնները մարդկանց ևս մղել են դէպի Ալանզինաւայի լեաները և Մեծ Բրիտանիայի կղզիները, որ այն ժամանակ կղզի էին, այլ անբոժան շարունակութիւն Եւրոպական ցամաքի:

Մարդու աւաջին մուտքը Եւրոպայի մէջ՝ դժար է սրուել: Յամենայն դէպս, աւաջին գաղթականները եղել են մամուլի, սնդեղջիւրի ժամանակակիցներ, սենեցել են քարէ ու սակրէ սրբոց ու կոպիտ գործիքներ և զուրկ են եղել սակաւին բնաանի կենդանիներից:

Նրանց յաջորդել են ուրիշ գաղթականներ, որոնք արեւմտեան ցեղերից, որոնք առնեցել են աւելի մշակւած գործիքներ և բուսականաչափ հարուստ անտառութիւն: Հետեւել է երրորդ գաղթը դէպի Եւրոպա — խաչնարած ցեղեր — ոչխարների, այծերի, խոզերի հօտերով, բայց գեւ քարէ ու սակրէ գործիքներով, թէև անհամեմատ աւելի մշակւած:

Վերջապէս, ներս են խուժել աւելի քաղաքակիրթ ցեղեր, որոնք բերել են իրենց հետ մետաղների — բրնձի ու երկաթի — գործածութիւնը:

Այս բոլոր գաղաղութիւնները հիմնուած են պոլեոնոլոգիական, հնէադիտական փաստերի վրայ: Ջրհեղեղեան չըջանի քարանձաւները միակ նախապատմական գօղումները չեն: Տաւած քարի կամ նէօլիտական պերիօդից մնացել են անթիւ արձաններ, որ թանկազին ու անսպաս պաշար են մասակարարում նախամարդու կեանքը ուսումնասիրողին: Յիշենք նախ Գոլմեն կոչուած արձանները, ստորերկրեայ գե-

բեղմանոցներ են զբանք, մէկ կամ մի քանի պատանդան-
 ներից, որոնց վրայ յաճախ կառուցւած են հողի աճազին
 բլուրներ: Այդ ձևի սակ' դօրմէնները կոչուած են Տոււուլի:
 Դրանք նոյն կուրգաններն են, որ ստորածուած են հարաւային
 Ռուսիայից դէպի Կովկաս և Ասիայի խորքերը: Գտնուած են
 Դօրմէնների ու Տոււուլիների մէջ բաւականաչափ մշակւած
 կոպիւններ, նեա ու աղիղներ, սրբի եւոյն—գրեթէ միշտ խառն
 մարդկային սակորների հետ:

Յայտնի չէ, սուււուլիների հեղինակները ինչ ցեղի, ուս-
 սայի են պատկանել: Մի ժամանակ նրանց վերագրուած էին
 Կելթերին: Հնագէտներից ոմանք ընդունում են, որ այդ սու-
 րերկրեայ նկուղները ծառայել են իրր ընակարան նախա-
 պատանական մարդուն: Ամեն սեղ նման են Դօրմէնները: Շա-
 տերի մէջ — որ աւելի ուշ քաղաքակրթութեան արդիւնք
 են — գտնուած են բրոնզից, երկաթից, և նոյն խակ սակուց
 չինւած իրեղէններ: Մարդիկ, հաւանօրէն, պարտաւել են որ-
 սորդութեամբ. ընտանի կենդանիների հետքը դեռ չկայ:

Դօրմէններից ու սուււուլիներից յետոյ յիշատակենք Իանի-
 ական Կեօկկեն-Մեօդիեցները (Kjökken-mödding, սակ է' խո-
 հանոցային մնացորդներ):

Նախապատմական ժողովուրդների խոհանոցային թափ-
 թրուէներն զբանք, որ ամբողջ բլրակներ են կազմել ծովի
 եզերքին: Չինրի յիսեղեխիների կմախքներ, ջրային ու ցա-
 մաքային կենդանիների՝ արջի, գայլի, եղջերուի, ծովահորթի
 և պէս պէս թռչունների մնացորդներ: Միակ' ընտանեկրած
 անասունը չունն է: Անհամար գործիքներ սակրից ու եղջիւ-
 րից, կաւէ կոպիտ անօթներ են. են:

Ժամանակագրական կարգով տաչած քարի շրջանից եր-
 րորդ ուչադրու յիշատակարաններն են յնային կառուցւած-
 ները (constructions lacustres), որ աւելի բարձր կուլտուրայի
 արդիւնք են: Առաջին անգամ այդ գիւտն արու ՖերդինանՏ
 Կեյլեր Յիւրիսի լճի ափին (1858 թ.). սեւ, թանձր հողային
 չերտի մէջ՝ նա բաց արու հին օրերի խիտ կարեւոր մի ժա-
 ոանդութիւն. մեծ-մեծ գերաններ, հողէ ստաններ, մարդ-

կային տառմներ ու գանդեր, բազմաթիւ ընտանի կենդանի-
 ների կմախքների հետ. եղ, սչխար, խոզ, այծ, ձի, շուն
 են: Պատեղներից՝ անտասի խնձոր, տանձ, մորի. գործիք-
 ներ ու դէնքեր՝ սակրից, քարից, բրոնզից, երկաթից:

Ինչպէս տեսնուած էք, «լճային» ընակիչները սպրկ են
 նաեւ մետաղեայ շրջանուած: Լճոջանրապէս խիտ բաժանոււմն
 զվար է սահմանել նախամետաղեայ շրջանների մէջ: Ինչպէ՛ս
 և որտեղ է սուււլին անգամ գործածուել մետաղը՝ յայտնի չէ:
 Մեթաղրուած են որ մետաղների գործածութիւնը բերել են
 իրենց հետ աւիական ցեղերը — Կելտեր, Գերմանացիք,
 Ալաւոններ — դեռ ևւո հոօմէական աշխարհակալութիւնից
 սուււլ:

Այս՛, նախապատմական խրոնօլոգիան (ժամանակագրու-
 թիւնը) չս'ա մութ է: Մի բան միայն պարզ է. այն՝ որ հա-
 դարաւոր և սամնակ հազարաւոր տարիներ են անցել, ժա-
 մանակի անհուն ովկիանի մէջ, մինչև որ նախնական
 մարդկութիւնը, գոյութեան արձաւրայի կուէի մէջ իր անգան,
 անասնական վիճակից սասիճանաբար բարձրանալով, հասել է
 մինչև եկիպտական և ասորական կուլտուրայի սասիճանը,
 իսկ այդ սասիճանը սակրաին որչարոյսն է կուլտական քա-
 զաքակրթութեան:

Այդտեղ նախապատմութիւնը վերջանում է և սկսում է
 պատմութիւնը. Այդտեղ անխօս արձաններին աւելանում են
 գրուօր յիշատակները: Սակայն չչտաօրենք:

Մենք խօսեցինք մարդկային տարբեր ցեղերի գաղթա-
 կանութեան մասին դէպի Եւրոպա, բայց չլիչեցինք՝ որտեղից
 էր գալիս թափառական ցեղերի այդ հոսանքը: Ո՛րն է արդ-
 եօք մարդկային սեւի նախնական հայրենիքը, որտեղ է մարդ-
 կութեան պրոնձալի օրրանը... Այդ հարցը մի ուրիշ հե-
 տաքքրական հարց է ծագեցնում. արդեօք մէկ որրան է
 ունեցել մարդկութիւնը, թէ գուցէ նա ծնունդ է աւել երկ-
 րագնդի բազմաթիւ կէտերում: Իսկ այդ երկրորդ հարցը կ'ա-
 սաջնորդէ մեզ դէպի ուսսանների, ցեղերի խնդիրը:

Երկու թէօրիս վաղուց հակասակութեան մէջ են: Միւս-

նական (monogeniste) և բազմամական (polygeniste) : Առաջինի համաձայն՝ բովանդակ մարդկութիւնը մէկ ծագում ունի(*) մէկ կենսուն տեղծագործութեան, մէկ հայրենիք, իսկ այդպէս գեղերը — ձերմակ, սև, դեղին և այլն — միայն պարբեր ստիճաններ են բնաշրջումի : Բազմամական թէօրիան, ընդհակառակը սխալում է որ այդ տարբեր գեղերը ունին բազմաբնուծ ծագում, որ նրանք անկախ են իրարից և հենց ի սկզբանէ կղեր են անկախ ու տարբեր : Այդ թէօրիայի համեմատ՝ մարդկութիւնը ունեցել է մի քանի ծննդավայր :

Երբևէ հակամարդ կողմերն էլ ունին իրենց փաստերը. մարդաբանութիւնը զեռ բուսականաշատի լոյս չի տեսել այդ կեճսի վրայ :

Հէկկէլ և իր հետ շատ օրիշները ընդունում են մի կենթադրական ցամաք «Լեմուրիա» անունով, որ երբեմն կազել է Մատակասիար կղզին Ալյան ու Սումաթրա տախական կղզիների հետ, և որը կղեր է նախամարդու առաջին ծննդավայր : «Լեմուրիա» ցամաքի հիպոթէզը պատկանում է անգլիացի բնագէտ Սկրատերին, որը զբանով կ'ուզէ բացատրել կէս-կապիկների (Lemuriden) նմանութիւնը Մատակասիարի և Հնդկական կղզիների վրայ :

Ենթադրական Լեմուրիան վաղուց անհետացել է, անջատելով իրարից աֆրիկական և ասիական կէս-կապիկներին : Այդ ցամաքի յարմարութիւնը աշխարհագրական դիրքով են բացատրում մարդկային բազմազան գեղերի գաղթը և տարածելը Ասիայում, Աֆրիկայում և Աւստրալիայում :

Միամականների ասելով տարբեր գեղերը առաջացել են միևնույն սկզբնական մարդ-կապիկային տիպարից, բայց երկար դարերի ընթացքում, տարբեր կլիմաների, արիւնային խառնուրդների և օրիշ պայմանների շնորհիւ, փոքր առ փոքր խտտորկ են սկզբնական տիպարից : Այդպէս օրինակ, գիս-

(*) «Մէկ ծագում» ասելով միամականները չեն ընդունիր, որ իբր թէ մարդկութիւնը առաջացել է անպատճառ մէկ զոյգից : Այդպէս պնդում են միայն ստանաճարան-մասնագէտները :

նական կազմի մարդիքով (վերջինս, միամական լինելով հանդերձ, սխալում է նաև որ ամբողջ մարդկութիւնը մէկ զոյգից է առաջացել) ամերիկեան և անգլո-աւսթոն գեղերի խառնուրդից 2-3 դարի միջոցում առաջացել է մի նոր, ձերմակից գեղ — Եանգիները :

Կարգ Ֆոխտ խափառաբերում է դրա դէմ : Միջավայրի, կլիմայի և այլ փոփոխութիւնները, միացած նոյն իսկ խառն ամուսնութիւնների հետ, բառ Ֆոխտի, շատ քիչ ազդեցութիւն ունին գեղերի գոյացման վրայ. կան խորունկ, արմատական տարբերութիւններ հենց ի սկզբանէ : Ինչու չընդունիլ — շարունակում է Ֆոխտը որ Ամերիկայի կապիկներից առաջացել են ամերիկեան գեղերը, աֆրիկական կապիկներից նեղրենիքը, ասիականներից՝ թերևս նեղրիպոսները(*) :

Ֆոխտը, ինչպէս ասենում ենք, չկրմ բազմամական է. նրա համար գեղերի առանձնաշատութիւնները սկզբնական են, մշտապես, անջնջելի : Լսենք և Գարվինին :

«Գիտար է ենթադրել, — ասում է նա, որ մարդկային գեղերը հենց սկզբից գտա ու տարբեր կղամ լինեն : Այնքան մտաւոր ու հոգեկան նմանութիւններ կան բազմատեսակ գեղերի միջև (դեռ մի կողմ թողած բնդհանուր ախտարի նոյնութիւնը) . . . Նոյն գործիքներն ու սովորութիւնները, նոյն զգացումներն ու մտաւոր կարողութիւնները . . . Անհաւանական է, որ այդքան նման յատկութիւններ տարբեր գեղերի մէջ վաստակւած լինեն անկախ, ինքնուրոյն կերպով, այլ, հաւանորէն, նրանք (այդ ընդհանուր յատկանիշները) առաջացել են ժառանգականորէն, տարբեր գեղերի ընդհանուր պոպերից (Darwin, Descendance)(**):

(*) Vogt. Vorlesungen über den Menschen.

(**) Առական բնութիւնը, Գարվինի կարծիքով, մեծ դեր է խաղացել գեղերի գոյացման մէջ : Ինչպէս անասնական, նոյնպէս և մարդկային աշխարհում, կոյ սեռական բնորոշութիւն, որ բնական բնորոշիւն մի տեսակն է : Մարդկային գեղերի տարբեր գոյնը, մազերը, դէմքի զծագրութիւնը, հասակը, ֆիզիքական ու ուղեղական ուժը, զօրեղ ձայնը են. — այդ բոլորը վաստակել են տղամարդիկ, կանանց սիրանալու համար միլամ կուլի մեծ : Այն բոլոր կենդանիների մօտ — ասում

Եզրափակինք: Կենդանորանական էւօլիւսիօնը վերջացաւ: Մօների ծագումով սկիզբ առաւ նա, մարդու ծագումով աւարտեց իր վիթխարի շրջանը:

Աւարտեց. . . մենք այդ ջինք կարող ստեղ: Ինչպէս որ փեղկերքի մէջ անթիւ արեգակներն ու մոլորակները ծնւում, դարգանում ու մեռնում են անասման յախտեանականութեան մէջ, տեղի տալով միշտ նորանոր մարմինների ծագման ու դարգացման, — այնպէս և երկրազնդիս ջնչաւոր արարածները, մարդն ու մարդկութիւնը ևւս նրանց մէջ, ծնւում, սպրում են, մշտապէս աւաջղիմելով ու փոփոխուելով և պէտք է վաղ թէ ոչ դուցէ անճեռանան, տեղի տալով ջնչաւոր էակների նոր ու աարբեր աշխարհներին: Ամէն բան ջբանում է, և միմիայն էւօլիւսիօնն է. բնաշրջման աշխարհաջն և աշխարհաւեր հասանքն է, որ թաւարում է յաւերժօրէն, անսկիզբ և անվախճան: Մարդ-էակը թերեւս վերջին խօսքը ջ փեղկերական ստեղծագործութեան:

Վ Ե Ր Ձ

է Գարվին — ուր որձերը մաքառում են իրարու դէմ՝ էզեւրին տիրանալու համար, տեղի կարողները յողթանակելով իրենք կը սերին ու կը բազմացնեն տեսակը: Կուր մէջ նրանք — որձերը — ձեռք կը բերին նոր, սեռական առանձնայատկութիւններ, նոր դէնքեր, որոնք կ'անցնին ժառանգարար և կ'ամբողջուին որձ սերունդների մէջ, քանի որ ընդհանրապէս գոյութեան կուր մէջ (ուրիշ անճատների կամ տեսակների դէմ) որձերն են հաւալակի պաշտպանողները: Սեռական ընտրութեան ջնորհիւ է, որ կենդանական ջտտ տեսակների մէջ որձերը անճամեմտա տեղի յողթանդամ ու վայելչակաղմ են և օժտւած են այնպիսի դէնքերով ու դարդերով, ինչպէս օրինակ՝ եղջիւրները եղնիկի մօտ, բաշք՝ սուլւածի, խթանաւոր ոտքը և կաատրը աքլորի մօտ են: Թռչունների աշխարհում որձերը ձգտում են գրաւել և դերել իրենց փառանկ փետուրներով, երգեցողութեամբ ևն:

Վ Ր Ի Պ Ա Կ

- էջ Գ (նախաբան), 20-րդ տող. տպւած է՝ Բեկօվէնի. պէտք է լինի Բերնօվէնի:
- էջ 15, տող 30. տպւած է՝ ասպեսական. պէտք է լինի՝ ասկեսական:
- էջ 75, տող 13. տպւած է՝ անասունը, պէտք է լինի՝ ասունը:
- Նոյն էջի ու տողի մէջ տպւած է՝ անճայր. պէտք է լինի՝ ձիգ:

Ն Ի Ի Ք Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ Ը


ՆԱԽԱԲԱՆ	0.
ԿՐՕՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԲՆԱՇՐՋՈՒՄԸ	12
ԲՆԱՇՐՋՄԱՆ ԳԱՂԱՓՈՐԸ ՆԱԽ ՔԱՆ ԳՍՐԳԻՆ	54
ԳՍՐԳԻՆ ԵՒ ԳՍՐԳԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ	79
ՏԻԵՋԵՐՔԻ ԾԱԳՈՒՄԸ	103
ԿԵՍՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ՆԵՊՏՈՒՆԵԱՆ ՇԵՐՏԱՒՈՐՈՒՄՆԵՐ	116
ՄԱՐԳՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ	138



12. 1921
ՄԱՏԵՆԱՇԱՐ Է. Յ. ԴԱՇՆ. Կ. ՊՈՒՍՈՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ

Ինչ է Դարասկարգը. Հեղ. Գ. ՔԱՃԱՆԻ Գլխի 8 Գրք.

Մայի մեկը. (Սպասած) Գլխի 20 զր.



Գ Ի Ն

Թուրքիա 6 Գրքեր
Ամերիկա 30 Անշր
Արևմտահայաստանի 1¹/₂ Ֆրանկ

«Ազգային գրադարան»

NL0150773

